

մայիս

3/64

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

JUSTICE

2026

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2026
N 3 (64)

Գիտական հանդես
Հրատարակվում է 2008 թվականից

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Աշոտ Հայրապետյան - իրավաբանական գիտությունների
դոկտոր, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը

պատասխանատվություն չի կրում:

Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ) սահմանած
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական
հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռախոս՝ 060380686

Էլ. կայք՝ www.ardaradatutyunjournal.com

Հրատարակված է 15.05.2026թ.

Տպագրությունը՝ էլեկտրոնային:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության
և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 162ա

Գրանցման վկայական - N 278.210.03426, գրանցված է ՀՀ արդարադատության
նախարարության պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնի կողմից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Սրբուհի Գալյան ՀՀ Արդարադատության նախարար, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դասախոս:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

- Աշոտ Հայրապետյան** ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի անդամ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դեցեմտ, գլխավոր խմբագիր:
- Արմեն Հարությունյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
- Աշոտ Խաչատրյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
- Արմեն Եսայան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
- Ստեփան Ծաղիկյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Հայ-Ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ:
- Սերգեյ Առաքելյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ ղեկավար:
- Ռուզաննա Հակոբյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավար:
- Ժորա Ջհանգիրյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Գլաձոր» համալսարանի ղեկավար:
- Ռուբեն Ավագյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Մանց» համալսարանի ղեկավար:
- Արփինե Հովհաննիսյան** Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս:
- Աշխեն Սողոմոնյան** Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ:
- Ռաֆիկ Գրիգորյան** Իրավաբանական գիտությունների թեկնածու, «Միգմա լո գրուպ» փաստաբանական գրասենյակի կառավարող գործընկեր:
- Գևորգ Բաղդասարյան** Իրավաբանական գիտությունների թեկնածու:
- Տիգրան Մարկոսյան** Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի անդամ:
- Մուշեղ Բաբայան** Իրավաբանական գիտությունների թեկնածու:

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

| | |
|----------------------------|---|
| Անի Մուրաֆյան | Իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ: |
| Օտարերկրյա անդամներ | |
| Հայկ Կուպեյանց | Իրավաբանական գիտությունների թեկնածու, Լոնդոնի թագավորական քոլեջի դասախոս: |
| Անդրեյ Սկիբա | Ռուսաստանի Դաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեակատարողական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր: |
| Եվգենի Բարաշ | Ուկրաինայի ներքին գործերի ազգային ակադեմիայի քրեակատարողական ծառայության ինստիտուտի պետ, ներքին ծառայության գեներալ-մայոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ: |
| Հենրիկ Լինդերբորգ | Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիժների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր: |
| Նիկիտա Իվանով | Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: |
| Սերգեյ Չերնյավսկի | Ուկրաինայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: |
| Վադիմ Վինոգրադով | Բարձրագույն տնտեսագիտական դպրոցի իրավունքի ֆակուլտետի դեկան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: |

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 5 **ՇՈՒՇԱՆԻԿ ԳՈՒԿԱՍՅԱՆ
ՏԱՐՈՆ ԲԱՆՉՈՅԱՆ**
Իրավաբանական անձի կամ քաղաքացու պատասխանատվությունը իր աշխատողի կողմից պատճառած վնասի համար
- 16 **ՌՈՒԲԻՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՄԻԼԵՆԱ ԱՐՇԱԿՅԱՆ**
Փոխնակ մայրության պայմանագրային կարգավորման հիմնախնդիրները
- 25 **ԱՆԱՀԻՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ**
Ազատության սահմանափակմամբ անձի բրա դրվող արգելանքների չկատարման իրավական հետևանքները
- 37 **ՌՈՒԲԻՆԱ ՄՆԻԹԱՐՅԱՆ**
Քրեակատարողական միջավայրի հակասականությունը անձի բերասոցիալականացման տեսանկյունից
- 45 **ՄԻԼԵՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
Փողերի լվացման և հարակից հանցագործությունների վերաբերյալ վարույթներով փաստական հանգամանքների ապացուցման հետ կապված որոշ իրավական խնդիրներ
- 54 **ՎԻՐԱԲ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ**
Իրավական որակման հիմնախնդիրները գենքի ժամկետանց թույլտվությունների դեպքում
- 63 **ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Արհեստական բանականության համակարգը ծրագրավորողի, արտադրողի և օգտագործողի քրեական պատասխանատվությունը
- 81 **ԵՓՐԵՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
Հակակորուպցիոն ռազմավարությունները որպես հանրային իշխանության մարմիններում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված պետության քաղաքականության իրականացման իրավական միջոց
- 94 **ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ**
Մարդու արժանապատվության բովանդակության կառուցվածքային տարրերի ընկալումը սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության համատեքստում
- 103 **ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**
Հասարակության ներգրավման միջոցներով շրջակա միջավայրի իրավունքի պահպանությունը

ՇՈՒՇԱՆԻԿ ԳՈՒԿԱՍՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունք ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՏԱՐՈՆ ԲԱԽՉՈՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի ուսանող,
Արդարադատության նախարարության «Օրենսդրության
գարգացման կենտրոն» հիմնադրամի փորձագետ

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԿԱՍ
ՔԱՂԱՔԱՅՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԻՐ ԱՇԽԱՏՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՏՃԱՌԱԾ
ՎՆԱՍԻ ՀԱՍԱՐ**

Սույն հոդվածի շրջանակում քննարկվում են աշխատողի պատճառած վնասի դեպքում արտապայ-
մանագրային պատասխանատվության ընդհանուր պայմանները, վեր են հանվում, դելիկտային պատաս-
խանատվության կիրառման համար անհրաժեշտ հատուկ պայմանները, քննարկվում է փաստացի աշ-
խատանքային հարաբերությունների առկայության դեպքում պատասխանատվության կիրառման հնա-
րավորության հարցը, անձի՝ որպես աշխատող որակման չափանիշները: Ուսումնասիրության արդյուն-
քում բացահայտվում են գործող իրավակարգավորման և իրավակիրառ պրակտիկայի որոշ բացեր, հիմ-
նավորվում է, որ աշխատողի պատճառած վնասի դեպքում արտապայմանագրային պատասխանատվու-
թյան առաջացման համար բավարար չեն միայն դելիկտային պարտավորությունների ընդհանուր պայ-
մանները, այլ անհրաժեշտ է նաև հատուկ պայմանների առկայություն: Առանձնահատուկ ուշադրություն
է դարձվում աշխատանքային հարաբերությունների ձևական և փաստացի բնույթի տարբերակմանը:

Հոդվածում հիմնավորվում է, որ Քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածը պետք է դիտարկել
որպես տուժողի շահերի պաշտպանությանն ուղղված նորմ, որը չի բացառում աշխատողի անձնական
պատասխանատվությունը:

Բացի այդ, քննադատվում է գործող կարգավորումը, ըստ որի՝ փաստացի աշխատանքային հարա-
բերությունների ճանաչման պահանջով դատարան դիմելու իրավունք ունի միայն աշխատողը: Առաջարկ-
վում է այդ իրավունքը տրամադրել նաև վնաս կրած երրորդ անձանց՝ ապահովելու նրանց իրավունքների
լիարժեք պաշտպանությունը և սահմանափակելու գործատուների կողմից պատասխանատվությունից
խուսափելու հնարավորությունները: Հոդվածում հիմնավորվում է, որ եթե վնասը պայմանավորված է ինչ-
պես աշխատողի հակաիրավական վարքագծով, այնպես էլ գործատուի կողմից վերահսկողության կամ
աշխատանքի կազմակերպման պարտականությունների խախտմամբ, ապա այն պետք է դիտարկել որ-
պես համատեղ պատճառված վնաս:

Հիմնարարներ - Գործատուի պատասխանատվություն, աշխատողի կողմից պատճառած վնաս, ար-
տապայմանագրային պատասխանատվություն, փաստացի աշխատանքային հարաբերություններ,
պատճառահետևանքային կապ:

Ներածություն

Արտապայմանագրային պատասխանատվու-
թյան համակարգում կարևոր և առանձնահատուկ
տեղ է զբաղեցնում իրավաբանական անձի կամ
քաղաքացու պատասխանատվության ինստիտու-
տը իր աշխատողի կողմից պատճառված վնասի
համար: Սույն թեմայի արդիականությունը
նախևառաջ պայմանավորված է այն հանգաման-
քով, որ ինչպես քաղաքացիական օրենսդրության
շրջանակում, այնպես էլ դատական պրակտիկա-
յում դեռևս չի ձևավորել միասնական մոտեցում տվ-
յալ ինստիտուտի կիրառման առանձնահատկու-
թյունների հարցում:

Մասնավորապես, հստակեցված չեն աշխա-

տողի կողմից պատճառված վնասի դեպքում ար-
տապայմանագրային պատասխանատվության
պայմանները և դրանց դրսևորման առանձնահատ-
կությունները, անձի՝ որպես աշխատող որոշման
չափանիշները, այն հարցը, թե արդյոք այս դեպ-
քում վնասի հատուցման պահանջը պարտադիր
պետք է ներկայացնել գործատուի դեմ: Բացի այդ,
բացահայտված չեն աշխատողի կողմից պատ-
ճառված վնասի դեպքում պատասխանատվության
հարցերը փաստացի աշխատանքային հարաբե-
րությունների համատեքստում:

Արտապայմանագրային պատասխանատվու-
թյան պայմանները՝ աշխատողի կողմից պատճա-
ռած վնասի դեպքում

www.aradadutyjournal.com

Պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման պայմանները այն պարտադիր ընդհանուր իրավական պահանջներն են, որոնց առկայությունն անհրաժեշտ է իրավախախտումը կատարած անձի նկատմամբ քաղաքացիաիրավական պատասխանատվության համապատասխան միջոցների՝ սանկցիաների կիրառման, այսինքն՝ վնասի հատուցման պարտավորությունը դնելու համար:

Այս պայմանները դեռևս առկա են եղել հռոմեական իրավունքում, որտեղ որպեսզի արարքը համարվեր դեղիկտ և տուժողի ու դեղիկվենտի միջև առաջանար պարտավորական իրավահարաբերություն, անհրաժեշտ էր մի քանի տարրերի միաժամանակյա առկայություն²:

Վերոնշյալ ընդհանուր մոտեցումները իրենց արտացոլումն են գտել նաև ներպետական դատական պրակտիկայում:

Մասնավորապես՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի կիրառման համար (իրավաբանական անձի կամ քաղաքացու պատասխանատվությունն իր աշխատողի պատճառած վնասի համար) անհրաժեշտ է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածներով նախատեսված վնասի հատուցման ընդհանուր պայմանների առկայությունը³:

Հարկ է նշել, թեև քննարկվող հարաբերությունը իր էությանը դեղիկտային հարաբերություն է, սակայն դրա առանձնահատկությունն այն է, որ այն սերտորեն կապված է աշխատանքային հարաբերությունների հետ, ուստի դեղիկտային պարտավորությունների առաջացման ընդհանուր պայմանների առկայությունը ինքնին բավարար չէ պատասխանատվություն կիրառելու համար:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Իրավաբանական անձը կամ քաղաքացին հատուցում է իր աշխատողի, ինչպես նաև օրենքով սահմանված Կազմակերպությունը՝ իր կողմից օրենքով սահմանված կարգով կամավոր աշխատանքում ներգրավված կամավորի կողմից աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) կամ կամավոր աշխատանքի շրջանակներում օրենքով սահմանված պարտականությունները կատարելիս պատճառված վնասը»:

Անդրադառնալով սույն դեպքում հակաիրավական վարքագծի դրսևորման առանձնահատկություններին, հարկ է նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի համատեքստում կարևոր է ոչ միայն հակաիրավական վարքագծի առկայություն, այլև այն, որ այդ վարքագիծը դրսևորված լինի աշխատանքային, ծառայողական, պաշտոնեական կամ օրենքով սահմանված այլ համապատասխան պարտական-

ությունների կատարման ընթացքում: Այսինքն՝ քննարկվող հարաբերություններում հակաիրավական արարքի առկայությունը բավարար չէ ինքնին պատասխանատվություն կիրառելու համար: Անհրաժեշտ է նաև, որպեսզի այդ արարքը գտնվի աշխատողի աշխատանքային գործառնությունների իրականացման ոլորտում և դրսևորվի այն ժամանակ, երբ աշխատողը կատարում էր իր աշխատանքային պարտականությունները կամ գործում էր դրանց շրջանակներում:

Հակառակ դեպքում, եթե անձի հակաիրավական վարքագիծը դրսևորվի աշխատանքային հարաբերությունների գոյության պայմաններում, սակայն որևէ կապ չունենա նրա աշխատանքային պարտականությունների կատարման հետ, սպա այդպիսի վնասի հատուցման պարտականություն չի կարող վերագրվել գործատուին և պետք է գնահատվի ընդհանուր դեղիկտային կանոններով: Այս մոտեցումը բխում է ոչ միայն տվյալ ինստիտուտի ընդհանուր տրամաբանությունից, այլև անմիջականորեն արտահայտված է օրենսդրի հետապնդած նպատակում:

Այսպես, օրենսդիրը գործատուի պատասխանատվությունը պայմանավորում է նաև վնաս պատճառող հակաիրավական վարքագծի գործառնության կապով՝ աշխատանքային պարտականությունների կատարման գործընթացի հետ: Հետևաբար, սույն հարաբերություններում հակաիրավական արարքի գնահատումը պետք է իրականացվի երկաստիճան մոտեցմամբ: Նախ՝ անհրաժեշտ է պարզել, թե առկա՞ է արդյոք օրենքի, այլ իրավական ակտի կամ անձի սուբյեկտիվ իրավունքի խախտում՝ գործողության կամ անգործության ձևով: Այնուհետև պետք է պարզել, թե արդյոք այդ խախտումն իրականացվել է աշխատողի կողմից իր աշխատանքային պարտականությունները կատարելիս, թե ոչ: Միայն այս երկու հանգամանքների համակցված առկայության դեպքում է հնարավոր խոսել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի իմաստով այնպիսի հակաիրավական վարքագծի մասին, որը, արտապայմանագրային պատասխանատվության մյուս պայմանների հետ, կարող է առաջացնել վնասը հատուցելու պարտականություն: Ուստի կարելի է եզրակացնել, որ աշխատողի վարքագծի հակաիրավականությունը տվյալ հարաբերություններում պետք է դիտարկել ոչ թե մեկուսացված, այլ նրա աշխատանքային գործառնությունների համատեքստում:

Ուշագրավ է այս տեսանկյունից Միացյալ թագավորության Լորդերի պալատի կողմից 1942 թվականին քննված գործը⁴, որը վերաբերում էր այն հարցին, թե արդյոք գործատուն կարող է պատասխանատվություն կրել իր աշխատողի անփութությամբ կատարված գործողության համար, եթե այդ գործողությունը կատարվել է աշխատանքային

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պարտականությունների կատարման ընթացքում: Լորդերի պալատը նշել է, որ գործատուի փոխարինող պատասխանատվությունը առաջանում է այն դեպքում, երբ աշխատողի գործողությունը կատարվում է նրա աշխատանքային պարտականությունների իրականացման ընթացքում:

Դատարանը ընդգծել է, որ անհրաժեշտ է տարբերակել երկու իրավիճակ.

1) Աշխատողը կատարում է գործողություն, որը կապված է իր աշխատանքի հետ, և դա կատարում է անփույթ կամ սխալ ձևով,

2) Աշխատողը կատարում է գործողություն, որը ընդհանրապես կապ չունի իր աշխատանքային պարտականությունների հետ: Եթե գործողությունը կապված է աշխատանքի հետ, ապա գործատուն պատասխանատվություն է կրում, նույնիսկ եթե աշխատողը գործել է անփութորեն:

Այս գործի շրջանակում ձևակերպել են նաև մի քանի կարևոր իրավական սկզբունքներ.

1. Փոխարինող պատասխանատվության սկզբունք, այն է՝ գործատուն պատասխանատվություն է կրում իր աշխատողի գործողությունների համար, եթե դրանք կատարվել են աշխատանքի ընթացքում:

2. Աշխատանքային պարտականությունների շրջանակ, այն է՝ գործատուի պատասխանատվությունը առաջանում է այն դեպքում, երբ վնասը պատճառող գործողությունը տեղի է ունեցել աշխատանքային գործունեության ընթացքում:

3. Անփութության համար պատասխանատվություն, այն է՝ նույնիսկ եթե աշխատողը գործել է անփութորեն կամ սխալ ձևով, գործատուն կարող է պատասխանատվություն կրել, եթե գործողությունը կապված է աշխատանքի հետ:

Այժմ անդրադարձ կատարենք վնասի և պատճառահետևանքային կապի դրսևորման առանձնահատկություններին չՉ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի համատեքստում: ՉՉ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի շրջանակում, օրենսդիրը, կիրառելով «աշխատանքի շրջանակներում օրենքով սահմանված պարտականությունները կատարելիս պատճառված վնասը», ինչպես նաև «հատուցում է իր աշխատողի պատճառած վնասը» ձևակերպումները, ըստ էության, նպատակ է հետապնդել ամրագրել այս հատուկ պայմանների պարտադիրությունը:

Այլ կերպ ասած՝ օրենսդրական ձևակերպումից բխում է, որ տվյալ հարաբերություններում վճռորոշ նշանակություն ունեն ոչ միայն վնասի փաստը և դրա հատուցման ընդհանուր հիմքերը, այլև աշխատողի կարգավիճակը և վնասի կապը աշխատողի աշխատանքային գործառույթների կատարման հետ: Հետևաբար, այս պարագայում, ընդհանուր պայմաններից բացի, անհրաժեշտ են նաև հատուկ պայմաններ՝ աշխատանքային հարաբե-

րության առկայությունը և վնասի կապը աշխատանքային պարտականությունների կատարման հետ:

Ուշագրավ է, որ նույնաբովանդակ իրավական մոտեցումը իր ամրագրումն է ստացել նաև Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի 2006 թվականի փետրվարի 16-ի № 12-Օ որոշման շրջանակում⁵, որտեղ ևս որպես պատասխանատվության առաջացման որոշիչ պայման ընդգծվում է վնասի կապը աշխատանքային գործունեության հետ: Մեր կարծիքով, աշխատողի կողմից պատճառված վնասի համար պատասխանատվության շրջանակներում վնասի հարցին անդրադառնալիս առանցքային նշանակություն պետք է ստանա այն հարցը, թե արդյոք այն կապված է աշխատողի գործառույթային դերի հետ՝ այսինքն՝ այն պետք է ծագած լինի այն գործունեության ընթացքում, որը աշխատողը իրականացնում էր գործատուի շահերից ելնելով և նրա վերահսկողության ներքո:

Այժմ անդրադարձ կատարենք պատճառահետևանքային կապին: Պատճառական կապը, հանդիսանում է հիմնական կապող օղակ վնասի և հակաիրավական գործողությունների միջև և ենթադրում է, որ հակաիրավական արարքը ժամանակի մեջ նախորդում է վնասին, ինչպես նաև՝ հակաիրավական արարքը առաջացնում է վնասը⁶: Հարկ է նշել, որ պատճառական կապի կախվածությունը չի ենթադրվում՝ ի տարբերություն մեղքի, ուստի դրա առկայությունը պետք է ապացուցի տուժողը: Իր հերթին, չՉ Վճռաբեկ դատարանը անդրադառնալով ոչ օրինաչափ վարքագծի և վնասի միջև պատճառահետևանքային կապին՝ արձանագրել է, վնասը պետք է հանդիսանա ոչ օրինաչափ վարքագծի ուղղակի, անմիջական հետևանք⁸:

Ուշագրավ է, որ պատճառական կապի առկայությունը պարզելու համար անգլիական պրակտիկան ընդունում է «but for» (եթե չլիներ կամ եթե, ապա) թեստի կիրառումը, ինչի առանձնահատկությունը հետևյալն է. յուրաքանչյուր դեպքում արարքի և վնասի միջև պատճառական կապի առկայությունը պարզելու համար պետք է հարցնել. եթե չլիներ զննվող գործողությունները, ապա տուժողին վնաս կպատճառվե՞ր, թե՞ ոչ: Եթե պատասխանը «այո» է, ապա վնասի հատուցման պարտականություն պատասխանողը չի ունենա, եթե պատասխանը «ոչ» է, ապա պատասխանողը ենթակա է պատասխանատվության՝ պատճառված վնասի համար⁹:

Այս առումով պատճառական կապի պարզման համար կարող է կիրառվել նաև «but for» թեստի տրամաբանությունը, համաձայն որի՝ գնահատվում է, թե արդյոք վնասը կծագեր տվյալ վարքագծի բացակայության դեպքում: Միաժամանակ արտապայմանագրային պատասխանատվությու-

www.aradaradatuinyournal.com

նր առաջանում է միայն այն դեպքում, երբ վնասը հանդիսանում է ոչ միայն տվյալ վարքագծի անմիջական արդյունք, այլև այդ վարքագիծը դրսևորվել է աշխատանքային գործառնությունների շրջանակներում: Վերոգրյալից հետևում է, որ աշխատողի կողմից պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման հարցում վճռորոշ նշանակություն ունի ոչ միայն վնասի և հակաիրավական վարքագծի առկայությունը, այլև վնաս պատճառած անձի կարգավիճակը և գործողության (անգործության) կապը աշխատանքային գործառնությունների կատարման հետ:

Վնաս պատճառելու հետևանքով ծագած հարաբերություններում սուբյեկտին՝ որպես իրավաբանական անձի կամ քաղաքացու աշխատող որակելու չափանիշները

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձը կամ քաղաքացին պարտավոր է հատուցել իր աշխատողի կողմից պատճառված վնասը: Այս համատեքստում «աշխատող» հասկացությունը քաղաքացիական իրավունքի իմաստով ունի ավելի լայն բովանդակություն, քան աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված նույն հասկացությունը, քանի որ այն ներառում է ոչ միայն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործող անձանց, այլև այն անձանց, ովքեր աշխատանք են կատարում քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա՝ գործելով գործատուի առաջադրանքով և նրա վերահսկողության ներքո:

ՀՀ Վճռաբեկ դատարանը¹⁰, մեկնաբանելով նշված նորմը, արձանագրել է, որ պատասխանատվությունը դրվում է ոչ թե անմիջական վնաս պատճառողի, այլ այն սուբյեկտի վրա, որի կազմակերպական և գործառնության շրջանակներում իրականացվել է տվյալ գործողությունը: Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ աշխատանքային օրենսդրության նորմերի համադրությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի 2-րդ կետի հետ ցույց է տալիս, որ անձը աշխատող համարվելու համար պետք է աշխատի աշխատանքային պայմանագրի հիման վրա: Դատարանը միաժամանակ ընդգծել է, որ գործատուի պատասխանատվությունը չի սահմանափակվում միայն այն դեպքերով, երբ աշխատողը գործել է նրա ուղղակի առաջադրանքով, այլ ընդգրկում է նաև այն իրավիճակները, երբ աշխատողը պարտավոր էր գործել համապատասխան ձևով՝ իր աշխատանքային պարտականություններից բխող կերպով: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը կարևորել է գործատուի վերահսկողության դերը՝ նշելով, որ աշխատողի գործողությունները պետք է դիտարկվեն գործատուի կողմից կազմակերպված և վերահսկվող աշ-

խատանքային գործընթացի շրջանակներում: Այս առումով դատարանը արձանագրել է, որ աշխատողը չի դադարում աշխատող լինելուց նույնիսկ այն դեպքերում, երբ նա գործել է գործատուի անմիջական վերահսկողությունից դուրս կամ խախտել է աշխատանքային պայմանագրի պայմանները:

Ուշագրավ է, որ օրինակ *Stevenson Jordan & Harrison Ltd v MacDonald & Evans* գործով առաջարկվել է կիրառել այլընտրանքային թեստ աշխատողի կարգավիճակը որոշելու համար, այն է՝ գնահատել, թե որքանով է ենթադրյալ աշխատողը ինտեգրված պատասխանողի բիզնեսում՝ նշելով, որ «Մի առանձնահատկություն, որը, կարծես, անցնում է բոլոր օրինակներով, այն է, որ աշխատանքային պայմանագրի դեպքում մարդը աշխատում է որպես բիզնեսի մաս, և նրա աշխատանքը կատարվում է որպես բիզնեսի անբաժանելի մաս»:

Զննարկվող ինստիտուտի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ նաև այն դեպքերին, երբ վնասը պատճառվել է փաստացի աշխատանքային հարաբերությունների պայմաններում: Խնդիրը կայանում է նրանում, թե արդյոք այն իրավիճակներում, երբ անձը գործատուի կազմակերպական և վերահսկողական ոլորտում է, սակայն իրավաբանորեն որպես աշխատող ձևակերպված չէ, նրա գործողությունների համար պատասխանատվությունը կարող է դրվել գործատուի վրա:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածը, ըստ էության, արձանագրել է, որ աշխատողի կարգավիճակը կապվում է աշխատանքային պայմանագրի առկայության հետ: Միաժամանակ դատական պրակտիկան ցույց է տալիս, որ վնասի հատուցման համար հայցվորի վրա է դրվում ոչ միայն վնասի և հակաիրավական վարքագծի, այլև աշխատանքային հարաբերությունների առկայության և վնասի՝ աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված լինելու ապացուցման բեռը:

Սակայն նման մոտեցումը խնդրահարույց է այն դեպքերում, երբ այդ հարաբերությունները կրում են փաստացի բնույթ: Սա կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ գործատուն, պահանջվող ձևով չձևակերպելով աշխատանքային հարաբերությունները, խուսափի նաև իր աշխատողի կողմից պատճառված վնասի համար պատասխանատվությունից, ինչի հետևանքով տուժող կողմը կարող է հայտնվել առավել խոցելի վիճակում:

Այս համատեքստում կարևոր է նաև միջազգային փորձին անդրադարձ կատարելը:

Այսպես, անգլիական իրավունքում ձևավորվել է «աշխատանքային հարաբերություններին նման» («akin to employment») թեստը, որի համաձայն փոխարինող պատասխանատվությունը կարող է առաջանալ նաև այն դեպքերում, երբ հարաբերու-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյունները ձևականորեն աշխատանքային չեն, սակայն իրենց բովանդակությամբ և կազմակերպական կապերով մոտ են դրանց: Դատարանները այդ դեպքում գնահատում են, մասնավորապես, գործունեության կապը պատասխանողի շահերի հետ, անձի ինտեգրվածությունը կազմակերպության գործունեության մեջ, վերահսկողության աստիճանը և վնասի առաջացման ռիսկի ստեղծումը:

Մեր կարծիքով՝ այս մոտեցումը կարող է արժեքավոր լինել նաև ներպետական իրավակարգավորման և իրավակիրառ պրակտիկայի տեսանկյունից: Խոսքը, իհարկե, օտարերկրյա լուծումը մեխանիկորեն փոխառելու մասին չէ, այլ այն գաղափարի ընկալման, որ պատասխանատվության հարցը պետք է լուծել ոչ թե ձևական իրավական որակավորման, այլ նաև փաստացի հարաբերության իրական բովանդակության գնահատման հիման վրա:

Այս առումով, կարծում ենք, փաստացի աշխատանքային հարաբերությունները պարզելու համար դատարանը պետք է կենտրոնանա ոչ թե միայն այն հարցի վրա, թե ինչ իրավական հիմքով է ձևակերպվել կամ չի ձևակերպվել անձի ներգրավվածությունը, այլ պետք է որոշակի չափանիշների օգնությամբ գնահատի երկու կողմերի միջև ձևավորված հարաբերության իրական բնույթը: Այդպիսի չափանիշներ կարող են լինել, օրինակ, անձի ինտեգրվածությունը գործատուի կազմակերպական գործունեության մեջ, նրա կողմից գործատուի հրահանգներին ենթարկվելը, աշխատանքային գործընթացի կազմակերպման եղանակը, գործատուի կողմից աշխատանքի պայմանների և միջոցների ապահովումը, կատարվող գործունեության տնտեսական և գործառնության կապը գործատուի շահերի հետ, ինչպես նաև այն, թե ով է ստեղծել և վերահսկել վնասի առաջացման ռիսկը:

Հետևաբար, իրավակիրառ պրակտիկայում և հետագա օրենսդրական զարգացումների շրջանակում նպատակահարմար է մշակել այնպիսի չափանիշներ, որոնք դատարաններին հնարավորություն կտան յուրաքանչյուր կոնկրետ դեպքում բացահայտելու փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայությունը և դրա հիման վրա արդարացիորեն լուծելու վնասի հատուցման պարտավորության բաշխման հարցը:

Քննարկվող խնդիրների տրամաբանական շարունակությունն է աշխատանքային օրենսդրության կարգավորումների վերլուծությունը, մասնավորապես՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի տեսանկյունից:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն.

1. Անօրինական է համարվում այն աշխատանքը, որն իրականացվում է առանց աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնք-

ված գրավոր աշխատանքային պայմանագրի:

3. (...) Եթե դատական կարգով հաստատված է, որ աշխատողի և գործատուի միջև գոյություն ունեն (գոյություն են ունեցել) փաստացի աշխատանքային հարաբերություններ, ապա աշխատանքային հարաբերությունները համարվում են ծագած այն օրվանից, երբ աշխատողը փաստացի անցել է աշխատանքի: Աշխատողը աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը հաստատելու նպատակով իրավունք ունի դիմելու դատարան փաստացի աշխատանքային հարաբերությունների գոյության ժամանակահատվածում, ինչպես նաև փաստացի աշխատանքային հարաբերությունները դադարելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում»:

Օրենսդիրը, մի կողմից, ընդունում է փաստացի աշխատանքային հարաբերությունների գոյության հնարավորությունը նույնիսկ գրավոր պայմանագրի բացակայության պայմաններում և նախատեսում է դրանց դատական ճանաչման մեխանիզմ: Սակայն, մյուս կողմից, այդ մեխանիզմը սահմանափակված է սուբյեկտային տեսանկյունից՝ դատարան դիմելու իրավունքը վերապահելով բացառապես աշխատողին:

Հարկ է նշել, որ գործող կարգավորումների պարագայում փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության հաստատումը կարող է վճռորոշ նշանակություն ունենալ նաև վնաս կրած երրորդ անձանց իրավունքների պաշտպանության համար, սակայն վերջիններս զրկված են այդ հարցը դատարանում ինքնուրույն բարձրացնելու հնարավորությունից: Սա հանգեցնում է այնպիսի իրավիճակի, երբ գործատուն, չձևակերպելով աշխատանքային հարաբերությունները, գործնականում կարող է խուսափել իր աշխատողի կողմից պատճառված վնասի համար պատասխանատվությունից՝ ստեղծելով լրացուցիչ խոչընդոտներ տուժողի համար:

Մեր կարծիքով, նման մոտեցումը չի համապատասխանում վնասի հատուցման ինստիտուտի նպատակին, քանի որ պատասխանատվության հարցը պետք է լուծվի ոչ թե հարաբերության ձևական որակավորման, այլ դրա իրական բովանդակության հիման վրա: Եթե օրենսդիրը ընդունում է փաստացի աշխատանքային հարաբերությունների գոյության հնարավորությունը, ապա հիմնավորված է նաև տուժողին դատարան դիմելու իրավունք վերապահելը՝ այդ հարաբերությունների առկայությունը հաստատելու նպատակով:

Հետևաբար, նպատակահարմար է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի շրջանակում աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը հաստատելու համար դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակում ներառել նաև վնաս կրած անձին: Նման

լուծումը տուժողին կտրամադրի անհրաժեշտ իրավական գործիքակազմ՝ դատարանում բարձրացնելու փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության հարցը և, դրա հիման վրա, հիմնավորելու արտապայմանագրային պատասխանատվություն կիրառելու հնարավորությունը: Միաժամանակ այսպիսի կարգավորումը կծառայի նաև որպես կանխարգելիչ միջոց՝ ուղղված աշխատանքային հարաբերությունների քողարկման և դրա միջոցով պատասխանատվությունից խուսափելու պրակտիկայի սահմանափակմանը:

Պատասխանատվության սուբյեկտները և դրա բաշխման առանձնահատկությունները

Աշխատողի կողմից պատճառված վնասի հատուցման հարաբերություններում առանցքային նշանակություն ունի պատասխանատվություն կրող սուբյեկտների հստակ սահմանումը, քանի որ դրանից է կախված տուժողի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը և վնասի իրական հատուցման հնարավորությունը: Օրենսդրությունը, որպես կանոն, պատասխանատվությունը դնում է գործատուի վրա՝ ելնելով այն հանգամանքից, որ վերջինս կազմակերպում և վերահսկում է աշխատողի գործունեությունը և կրում է դրա ռիսկերը:

Միևնույն ժամանակ, իրավակիրառ պրակտիկայում շարունակում է քննարկվել այն հարցը, թե արդյոք աշխատողը լիովին ազատվում է պատասխանատվությունից, թե կարող է հանդես գալ որպես ինքնուրույն պատասխանատու սուբյեկտ, ինչպես նաև արդյոք հնարավոր է գործատուի և աշխատողի համատեղ պատասխանատվության կիրառումը:

Այս հարցի կապակցությամբ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման հարաբերություններում գործատուի պատասխանատվությունը չի բացառում աշխատողի անձնական պատասխանատվությունը, այլ հանդես է գալիս որպես տուժողի պաշտպանության լրացուցիչ երաշխիք: Այսպես, ինչպես ֆրանսիական, այնպես էլ անգլիական իրավունքում ընդունված է, որ տուժողը կարող է իր ընտրությամբ պահանջ ներկայացնել գործատուի, աշխատողի կամ երկուսի դեմ, այդ թվում՝ համապարտության կարգով: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ապահովել վնասի առավել արդյունավետ և ամբողջական հատուցում:

Այս կապակցությամբ անգլիական տեսական գրականության մեջ աշխատողի կողմից պատճառված վնասի հատուցումը գործատուի վրա դնելը հիմնավորվում է նրանով, որ գործատուն ամեն դեպքում ավելի հարուստ է, քան աշխատողը, ուստի գործատուն ավելի ռեալ հնարավորություն ունի հատուցելու պատճառված վնասը¹³ :

Մեր կարծիքով, այս տրամաբանությունը կիրառելի է նաև ՀՀ իրավակարգավորման շրջանակներում: Քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի նպատակը վնասի հատուցման ինստիտուտի շրջանակներում տուժողի շահերի առավել արդյունավետ պաշտպանությունն ապահովելն է՝ վնասի հատուցման պարտականությունը դնելով ոչ միայն անմիջական վնաս պատճառած աշխատողի, այլև այն իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա, որի հետ վերջինս գտնվում է աշխատանքային հարաբերության մեջ: Սակայն այս նորմի բովանդակությունից չի բխում, թե օրենսդիրը ցանկացել է բացառել անմիջական վնաս պատճառած աշխատողի անձնական պատասխանատվությունը: Ընդհակառակը, եթե ընդունվի, որ 1062-րդ հոդվածը բացառում է աշխատողի դեմ անմիջական պահանջ ներկայացնելու հնարավորությունը, ապա դա կարող է հանգեցնել վնասի ամբողջական հատուցման սկզբունքի անհարկի սահմանափակման, բուն վնաս պատճառած անձի դեմ հատուցման պահանջ ներկայացնելու հնարավորության բացառման:

Իրապես հնարավոր են իրավիճակներ, երբ անմիջական վնաս պատճառած աշխատողը փաստացի ավելի վճարունակ լինի, քան այն իրավաբանական անձը կամ քաղաքացին, որի հետ աշխատողը գտնվում է աշխատանքային հարաբերության մեջ, կամ երբ գործատուի գույքային դրությունը բավարար չլինի տուժողին պատճառված վնասը լրիվ հատուցելու համար: Այդպիսի պայմաններում տուժողին միայն գործատուի դեմ պահանջ ներկայացնելու հնարավորությամբ սահմանափակելը չէր համապատասխանի ոչ վնասի ամբողջական հատուցման գաղափարին, ոչ էլ խախտված իրավունքների վերականգման գաղափարին: Հետևաբար, առավել հիմնավորված է այն մոտեցումը, ըստ որի՝ Քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածը պետք է մեկնաբանել ոչ թե որպես աշխատողի անձնական պատասխանատվությունը բացառող նորմ, այլ որպես տուժողի համար պատասխանատու սուբյեկտների շրջանակն ընդլայնող նորմ, որը նրան հնարավորություն է տալիս իր ընտրությամբ պահանջ ներկայացնել ինչպես գործատուի, այնպես էլ անմիջական վնաս պատճառած աշխատողի դեմ:

Ուշագրավ է նաև անդրադառնալ գործատուի և աշխատողի համապարտ պատասխանատվության կիրառման հնարավորությանը:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համապարտ պարտականությունը (պատասխանատվությունը) կամ համիրավ պահանջը ծագում է, եթե պարտականության համապարտությունը կամ պահանջի համիրավությունը նախատեսված է պայմանագրով կամ սահմանված է օրենքով, մասնավորապես, եթե ան-

www.aradaradatiyunjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բաժանելի է պարտավորության առարկան: Հատկանշական է, որ Քաղաքացիական օրենսգրքի 361-րդ հոդվածը համապարտ պարտականության առաջացման համար պահանջում է դրա ուղղակի օրենսդրական ամրագրում (պայմանագրային հարաբերությունների համատեքստում՝ պայմանագրում հատուկ դրա նախատեսումը): Իր հերթին, նույն օրենսգրքի 1062-րդ հոդվածում սահմանված չէ համապարտության վերաբերյալ որևէ դրույթ:

Սակայն հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ հոդվածի համաձայն վնասը համատեղ պատճառած անձինք տուժողի առջև կրում են համապարտ պատասխանատվություն: Գրականության մեջ օրինակ նշվում է, որ վնասը համարվում է համատեղ պատճառված, եթե այն երկու կամ ավել անձանց հակաօրինական գործողությունների անբաժանելի հետևանք է: Ընդ որում, վնասը այս դեպքում անբաժանելի է, քանի որ անհնար է որոշել, թե որ գործողությունը, ինչ չափով է հանդիսացել առկա արդյունքի պատճառը: Վնասը համատեղ պատճառված դիտարկելու համար պարտադիր չէ, որ վնաս պատճառողների գործողությունները հետապնդեն նույնանման նպատակ: Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն գլխի կանոնների համաձայն՝ աշխատող է համարվում աշխատանքային պայմանագրի հիման վրա, ինչպես նաև քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանք կատարող քաղաքացին, եթե նա գործել է կամ պետք է գործեր համապատասխան իրավաբանական անձի կամ քաղաքացու առաջադրանքով և աշխատանքների անվտանգ կատարման նկատմամբ նրա վերահսկողության ներքո:

Նշված երկու նորմերի համադրված վերլուծությունից կարող ենք եզրահանգել, որ եթե կոնկրետ իրավիճակում հաստատվում է, որ վնասի առաջացումը պայմանավորված է ոչ միայն աշխատողի հակաիրավական վարքագծով, այլ նաև գործատուի կողմից աշխատանքի կազմակերպման, վերահսկողության ապահովման պարտականությունների խախտմամբ, ապա վնասը կարող է որակել որպես համատեղ պատճառված: Այս պարագայում կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ հոդվածով նախատեսված իրավական ռեժիմը, որի համաձայն՝ գործատուն և աշխատողը հանդես են գալիս որպես համատեղ վնաս պատճառած անձինք և տուժողի առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

Եզրակացություն

Այսպիսով՝ վերը շարադրվածի հիման վրա հանգում ենք հետևյալ հիմնական եզրահանգումներին.

1) Աշխատողի կողմից պատճառված վնասի

համար իրավաբանական անձի կամ քաղաքացու պատասխանատվության ինստիտուտը սերտորեն կապված է աշխատանքային հարաբերությունների հետ, ուստի դելիկտային պարտավորությունների առաջացման ընդհանուր պայմանների առկայությունը ինքնին բավարար չէ արտապայմանագրային պատասխանատվություն կիրառելու համար: Հատկանշական է, որ օրենսդիրը, կիրառելով «աշխատանքի շրջանակներում օրենքով սահմանված պարտականությունները կատարելիս պատճառված վնասը», ինչպես նաև «հատուցում է իր աշխատողի պատճառած վնասը» ձևակերպումները, ըստ էության, նպատակ է հետապնդել ամրագրել այս հատուկ պայմանների պարտադիրությունը: Այս առումով արտապայմանագրային պատասխանատվության առաջացման համար անհրաժեշտ են ոչ միայն դելիկտային պատասխանատվության ընդհանուր պայմանները, այլև հատուկ պայմաններ՝ աշխատանքային հարաբերության առկայություն և վնասի կապը աշխատողի աշխատանքային պարտականությունների կատարման հետ:

2) Աշխատողի կողմից պատճառված վնասի համար գործատուի պատասխանատվության հարցը նպատակահարմար չէ պայմանավորել բացառապես աշխատանքային հարաբերությունների ձևական առկայությամբ, քանի որ փաստացի աշխատանքային հարաբերությունների պայմաններում նման մոտեցումը կարող է հանգեցնել գործատուի կողմից պատասխանատվությունից խուսափելուն և տուժողի իրավունքների ոչ լիարժեք պաշտպանության: Այս առումով առավել հիմնավորված է հարաբերության փաստացի բնույթի գնահատման մոտեցումը, համաձայն որի՝ գործատուի պատասխանատվությունը կարող է պայմանավորվել անձի կազմակերպական ինտեգրվածությամբ, գործատուի վերահսկողության ներքո գտնվելով և անձի գործունեության՝ գործատուի շահերի հետ ունեցած գործառնության կապով:

3) Փաստացի աշխատանքային հարաբերությունների պայմաններում տուժողին պատճառված վնասի հատուցման հարցում ևս նպատակահարմար է առաջնորդվել ոչ թե բացառապես գրավոր աշխատանքային պայմանագրի առկայության կամ բացակայության փաստով, այլ այն հանգամանքով, թե արդյոք տվյալ անձը փաստացի գործել է որպես գործատուի կազմակերպական ոլորտում ներգրավված և նրա վերահսկողության ներքո գտնվող սուբյեկտ: Եթե դատարանը հաստատի, որ հարաբերությունն իր բովանդակությամբ եղել է աշխատանքային կամ աշխատանքային հարաբերություններին համարժեք, ապա միայն դրա չձևակերպված լինելու հանգամանքը չպետք է հնարավորություն տա գործատուին խուսափելու պատասխանատվությունից: Քննարկվող խնդրի լուծման տեսանկյունից առավել հիմնավոր է այն

www.aradaradutyjournal.com

մտտեցումը, համաձայն որի՝ աշխատողի կողմից պատճառված վնասի համար գործատուի պատասխանատվության հարցը պետք է լուծվի հարաբերության փաստացի բնույթի գնահատման հիման վրա: Նման մտտեցումը մի կողմից կբացառի աշխատանքային հարաբերությունների քողարկմամբ գործատուի պատասխանատվությունից խուսափելու հնարավորությունը, իսկ մյուս կողմից կապահովի տուժած երրորդ անձանց իրավունքների առավել արդյունավետ պաշտպանությունը:

4) Քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածը պետք է մեկնաբանել ոչ թե որպես աշխատողի անձնական պատասխանատվությունը բացառող նորմ, այլ որպես տուժողի համար պատասխանատու սուբյեկտների շրջանակն ընդլայնող նորմ, որը նրան հնարավորություն է տալիս իր ընտրությամբ պահանջ ներկայացնել ինչպես գործատուի, այնպես էլ անմիջական վնաս պատճառած աշխատողի դեմ: Քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի նպատակը վնասի հատուցման ինստիտուտի շրջանակներում տուժողի շահերի առավել արդյունավետ պաշտպանությունն ապահովելն է՝ վնասի հատուցման պարտականությունը դնելով ոչ միայն անմիջական վնաս պատճառած աշխատողի, այլև այն իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա, որի հետ վերջինս գտնվում է աշխատանքային հարաբերության մեջ: Սակայն այս նորմի բովանդակությունից չի բխում, թե օրենսդիրը ցանկացել է բացառել անմիջական վնաս պատճառած աշխատողի անձնական պատասխանատվությունը: Հնարավոր են իրավիճակներ, երբ անմիջական վնաս պատճառած աշխատողը փաստացի ավելի վճարունակ լինի, քան այն իրավաբանական անձը կամ քաղաքացին, որի հետ աշխատողը գտնվում է աշխատանքային հարաբերության մեջ, կամ երբ գործատուի գույքային դրությունը բավարար չլինի տուժողին պատճառված վնասը լրիվ հատուցելու համար:

5) Օրենսդիրը, մի կողմից, ընդունում է փաստացի աշխատանքային հարաբերությունների գոյության հնարավորությունը նույնիսկ գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում և նախատեսում է դրանց դատական ճանաչման մեխանիզմ: Սակայն, մյուս կողմից, այդ մեխանիզմը սահմանափակված է սուբյեկտային տեսանկյունից՝ դատարան դիմելու իրավունքը վերապահելով բացառապես աշխատողին: Հարկ է նշել, որ գործող կարգավորումների պարագայում փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության հաստատումը կարող է վճռորոշ նշանակություն ունենալ նաև վնաս կրած երրորդ անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից, սակայն վերջիններս զրկված են այդ հարցը դատարանում ինքնուրույն բարձրացնելու հնարավորությունից: Սա հանգեցնում է այն-

պիսի իրավիճակի, երբ գործատուն, չձևակերպելով աշխատանքային հարաբերությունները, գործնականում կարող է խուսափել իր աշխատողի կողմից պատճառված վնասի համար պատասխանատվությունից՝ ստեղծելով լրացուցիչ խոչընդոտներ տուժողի համար: Հետևաբար, նպատակահարմար է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի շրջանակում աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը հաստատելու համար դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակում ներառել նաև վնաս կրած անձին: Նման լուծումը տուժողին կտրամադրի անհրաժեշտ իրավական գործիքակազմ՝ դատարանում բարձրացնելու փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության հարցը և դրա հիման վրա, հիմնավորելու արտապայմանագրային պատասխանատվություն կիրառելու հնարավորությունը: Միաժամանակ այսպիսի կարգավորումը կծառայի նաև որպես կանխարգելիչ միջոց՝ ուղղված աշխատանքային հարաբերությունների քողարկման և դրա միջոցով պատասխանատվությունից խուսափելու պրակտիկայի սահմանափակմանը:

6) Հոդվածում հիմնավորվել է, որ եթե կոնկրետ իրավիճակում հաստատվում է, որ վնասի առաջացումը պայմանավորված է ոչ միայն աշխատողի հակաիրավական վարքագծով, այլ նաև գործատուի կողմից աշխատանքի կազմակերպման, վերահսկողության ապահովման պարտականությունների խախտմամբ, ապա վնասը կարող է որակել որպես համատեղ պատճառված: Այս պարագայում կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ հոդվածով նախատեսված իրավական ռեժիմը, որի համաձայն՝ գործատուն և աշխատողը հանդես են գալիս որպես համատեղ վնաս պատճառած անձինք և տուժողի առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

¹ Տե՛ս Суханов Е.А., “Российское гражданское право учебник”, Том 2, .Статутъ 2011, “Обязательственное право”, 2011, էջ 1083-1084:

² «Անձը պետք է որևէ գործողություն կատարեր (delictum in commissione): Անօրինական արարք կատարելու մտադրությունը դեղիկտ չէր համարվում, գործողության կատարումը կամ գործողության կատարումից ձեռնպահ մնալը պետք է որևէ հետևանք առաջացներ, գործողության և հետևանքի միջև պետք է առկա լիներ պատճառահետևանքային կապ (կաուզալ նեկստա), կատարված արարքը պետք է անօրինական լիներ (օրինակ, եթե ուրիշի գույքին վնաս էր պատճառվում անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության սահմաններում, ապա այդպիսի գործողությունների արդյունքում պատճառված վնասը համարվում էր իրավաչափ), պետք է լիներ դեղիկվենտի մեղքը: Թվարկված տարրերից որևէ մեկի բացակայության դեպքում արարքը դեղիկտ չէր համարվում:» Այս մասին առավել մանրամասն տե՛ս Ավետիսյան Վ.Գ., «Հռոմեական մասնավոր իրավունք», ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 95:

⁴ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2012 թվականի որոշումը թիվ ԿԳ/0125/02/11 քաղաքացիական գործով:

⁵ Տե՛ս Century Insurance Co Ltd v Northern Ireland Road Transport Board, (House of Lords), AC 509 (1942):

⁶ Տե՛ս Кравчук А.А., “Деликтная ответственность работодателя за вред, причинённый его работником: теория и практика”, Журнал юридических исследований, том 8 № 3 , 2023, էջ 29:

⁷ Տե՛ս Բեքմեդյան Գ., «Պատճառական կապը դեղիկտային պարտավորություններում», ԵՊՀ հրատարակչություն 2017, էջ 2:

⁸ Տե՛ս Сергеева А.П., “Гражданское право”, Учебник, том 3 2-е издание, “Проспект”, М., 2016, էջ 8:

⁹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 08.08.2024 թվականի որոշումը թիվ ՏԳ/05/74/02/21 քաղաքացիական գործով:

¹⁰ Տե՛ս Բեքմեդյան Գ., «Պատճառական կապը դեղիկտային պարտավորություններում», ԵՊՀ հրատարակչություն 2017, էջ 5:

¹¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2012 թվականի որոշումը թիվ ԿԳ/0125/02/11 քաղաքացիական գործով:

¹² Տե՛ս R. Kidner, “Vicarious liability”, Legal Studies, 15, 1995, էջեր 60–61:

¹³ Տե՛ս UK Supreme Court, The Catholic Child Welfare Society v Various Claimants and The Institute of the Brothers of the Christian Schools and others (UKSC 56, 2012):

¹⁴ Տե՛ս R.V.F. Heuston and R.A. Buckley, “Salmond and Heuston on the Law of Torts”, 21st edn. (London: Sweet & Maxwell, 1996), էջ 430, և B. S. Markesinis and S. F. Deakin “Tort Law” Third Edition, Clarendon Press, Oxford 1994, էջ 497:

¹⁵ Տե՛ս Останина Е.А., “Некоторые аспекты возложения ответственности за совместно причиненный вред”, сборник статей сер. “Анализ современного права”, Исследовательский центр частного права, Статут, Москва, 2010, էջ 380:

¹⁶ Տե՛ս Богданов Д.Е., “Солидарная деликтная ответственность с позиций справедливости”, Цивилист, Москва, 2013, N 3, էջ 49:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1) Ավետիսյան Վ.Գ., «Հռոմեական մասնավոր իրավունք», ԵՊՀ հրատարակչություն, 2013:

2) Բեքմեդյան Գ., «Պատճառական կապը դեղիկտային պարտավորություններում», ԵՊՀ հրատարակչություն 2017:

3) Богданов Д.Е., “Солидарная деликтная ответственность с позиций справедливости”, Цивилист, Москва, 2013, N 3:

4) Кравчук А.А., “Деликтная ответственность работодателя за вред, причинённый его работником: теория и практика”, Журнал юридических исследований, том 8 № 3 , 2023:

5) Останина Е.А., “Некоторые аспекты возложения ответственности за совместно причиненный вред”, сборник статей сер. “Анализ современного права”, Исследовательский центр частного права, Статут, Москва, 2010:

6) Сергеева А.П., “Гражданское право”, Учебник, том 3 2-е издание, “Проспект”, М., 2016:

7) Суханов Е.А., “Российское гражданское право учебник”, Том 2, “Статут” 2011, “Обязательственное право”, 2011:

8) B. S. Markesinis and S. F. Deakin “Tort Law” Third Edition, Clarendon Press, Oxford 1994:

9) Kidner, “Vicarious liability”, Legal Studies, 15, 1995:

10) R.V.F. Heuston and R.A. Buckley, “Salmond and Heuston on the Law of Torts”, 21st edn. (London: Sweet & Maxwell, 1996):

11) ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2012 թվականի որոշումը թիվ ԿԳ/0125/02/11 քաղաքացիական գործով:

12) ՀՀ վճռաբեկ դատարանի 08.08.2024 թվականի որոշումը թիվ ՏԳ/05/74/02/21 քաղաքացիական գործով:

13) Century Insurance Co Ltd v Northern Ireland Road Transport Board, (House of Lords), AC 509 (1942):

14) UK Supreme Court, The Catholic Child Welfare Society v Various Claimants and The Institute of the Brothers of the Christian Schools and others (UKSC 56, 2012):

Шушаник Гукасян

Преподаватель кафедры гражданского права ЕГУ,
Кандидат юридических наук, доцент

Тарон Бахчоян

Студент бакалавриата юридического факультета ЕГУ,
Эксперт Фонда “Центр развития законодательства” Министерства юстиции РА

РЕЗЮМЕ

Ответственность юридического лица или гражданина за вред, причиненный его работником

В рамках настоящей статьи рассматриваются общие условия возникновения внедоговорной ответственности в случае причинения вреда работником, выявляются специальные условия, необходимые для применения деликтной ответственности, анализируется возможность ее применения при наличии фактических трудовых отношений, а также критерии квалификации лица в качестве работника.

По результатам исследования выявляются отдельные пробелы действующего правового регулирования и правоприменительной практики, обосновывается, что для возникновения внедоговорной ответственности при причинении вреда работником недостаточно лишь общих условий деликтных обязательств, но необходимы также специальные условия. Особое внимание уделяется разграничению формального и фактического характера трудовых отношений.

В статье обосновывается, что статью 1062 Гражданского кодекса следует рассматривать как норму, направленную на защиту интересов потерпевшего, которая не исключает личной ответственности работника.

Кроме того, критикуется действующее регулирование, согласно которому право обращения в суд с требованием о признании фактических трудовых отношений принадлежит исключительно работнику. Предлагается предоставить данное право также третьим лицам, понесшим ущерб, с целью обеспечения полноценной защиты их прав и ограничения возможностей работодателей уклоняться от ответственности.

Обосновывается, что в случаях, когда вред обусловлен как противоправным поведением работника, так и нарушением работодателем обязанностей по организации труда или осуществлению контроля, такой вред следует квалифицировать как совместно причиненный.

Ключевые слова: ответственность работодателя, вред, причиненный работником, внедоговорная ответственность, фактические трудовые отношения, причинно-следственная связь.

Shushanik Ghukasyan

Lecturer at YSU Department of Civil Law,
Candidate of Legal Sciences, Associate Professor

Taron Bakhchoyan

Bachelor's student at the Faculty of Law, Yerevan State University
Expert at the “Center of Legislation Development” Foundation of the Ministry of Justice
of the RA

SUMMARY

The liability of a legal entity or citizen for damage caused by their employee

This article examines the general conditions for the emergence of non-contractual liability in cases where harm is caused by an employee, identifies the specific conditions necessary for the application of tort liability, and analyzes the possibility of its application in the presence of de facto employment relationships, as well as the criteria for qualifying a person as an employee.

The study reveals certain gaps in the current legal regulation and law enforcement practice, substantiating that the emergence of non-contractual liability for harm caused by an employee requires not only the general conditions of tort obligations, but also specific conditions. Particular attention is paid to distinguishing between the formal and factual nature of employment relationships.

The article argues that Article 1062 of the Civil Code should be regarded as a norm aimed at protecting the interests of the injured party, which does not exclude the personal liability of the employee.

In addition, the existing regulation is criticized, according to which the right to apply to the court with a claim for recognition of de facto employment relationships is granted exclusively to the employee. It is proposed to extend this right to third parties who have suffered damage, in order to ensure full protection of their rights and to limit the ability of employers to evade liability.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

It is substantiated that in cases where the harm is caused both by the unlawful conduct of the employee and by the employer's failure to fulfill obligations related to the organization of work or supervision, such harm should be classified as jointly caused.

Key words: Employer liability, damage caused by an employee, non-contractual liability, de facto employment relationships, causal link.

Բնագիրը ներկայացվել է 23.04.2026թ.
Ընդունվել է տպագրության 27.04.26թ.

ՈՒՒԲԻՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ապիստենտ, ի.գ.թ.

ՄԻԼԵՆԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի մագիստրոս

**ՓՈԽՆԱԿ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հոդվածը նվիրված է վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների տարատեսակներից մեկի՝ «փոխնակ մայրության» ինստիտուտի կիրառության շրջանակներում կնքվող պայմանագրերի իրավական էության բացահայտմանը: Մասնավորապես, հոդվածում անդրադարձ է կատարվում փոխնակ մայրության պայմանագրի իրավական բնույթին, քննարկվում են պայմանագրի կնքման առանձնահատկությունները, վեր են հանվում գործող իրավակարգավորումների բացերը, խնդրահարույց կողմերը, ինչպես նաև ներկայացվում են ինստիտուտի պայմանագրային կարգավորման կատարելագործմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների առաջարկներ:

Հիմնաբառեր- Փոխնակ մայր, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիա, նախատեսված ծնող, փոխնակ մայրության պայմանագիր, պատվիրատու, իմպլանտացիա, ներպատվաստում, ռեալ պայմանագիր, կոնսենսուալ պայմանագիր:

Ներածություն

Փոխնակ մայրության ինստիտուտի՝ որպես անպտղության հաղթահարման միջոցի ներթափանցումը սոցիալ-իրավական համակարգ մի կողմից հնարավորություն ընձեռեց մարդուն իրացնելու իր վերարտադրողական և ընտանեկան-անձնական իրավունքները, մյուս կողմից կանգնեցրեց իրավական և բարոյական մի շարք խնդիրների առաջ:

Փոխնակ մայրությունը, հանդիսանալով վերջին տասնամյակներում դինամիկ զարգացում ապրած և լայն տարածում գտած վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիա, թեև օրենսդրական մակարդակում ստացել է իրավական կարգավորում, սակայն օրենսդրի կողմից համակողմանի անդրադարձ չի կատարվել այդ գործընթացի հիմքում ընկած պայմանագրային հարաբերություններին, որոնք հանդիսանում են այս գործընթացի իրավական առանցքը: Մասնավորապես, ՀՀ օրենսդրությամբ դեռևս հստակեցված չեն փոխնակ մայրության պայմանագրի իրավական բնույթը, կողմերի փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, պայմանագրային դրույթների խախտման դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցները: Ընդ որում, հարկ է նկատել, որ այս խնդիրն առկա է ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև արտասահմանյան երկրներում:

Հետազոտություն

Փոխնակ մայրության կիրառման գործընթացում ծագող պայմանագրային հարաբերություններ-

րի համապարփակ իրավական կարգավորման բացակայությունը միգուցե պայմանավորված է նրանով, որ տեսական մակարդակում բացակայում է այս հարցի շուրջ ձևավորված միասնական մոտեցումը: Սի խումբ իրավագետներ գտնում են, որ փոխնակ մայրության պայմանագիրը պետք է դասել քաղաքացիաիրավական պայմանագրերի շարքին՝ այն պատճառաբանությամբ, որ այն, ըստ էության, նման է կա՛ն ծառայությունների մատուցման պայմանագրին, կա՛ն առքուվաճառքի պայմանագրին (որոշ դեպքերում նաև գտնում են, որ սա խառը պայմանագիր է), իրավագետների մյուս խմբի կարծիքով փոխնակ մայրության պայմանագիրը պետք է դիտարկել ոչ թե քաղաքացիական, այլ ընտանեկան իրավունքի տիրույթում՝ դասելով այնպիսի պայմանագրերի շարքին, ինչպիսին է, օրինակ, ամուսնական պայմանագիրը, քանի որ փոխնակ մայրության պայմանագրով առաջին հերթին կարգավորվում են ծնողների իրավունքներն ու պարտականությունները, բացի այդ՝ այն շոշափում է պայմանագրի կնքման արդյունքում ծնվող երեխայի իրավունքներն ու օրինական շահերը: Փոխնակ մայրության պայմանագրի իրավական բնույթի կապակցությամբ նման մոտեցումների առկայությունն ինքնին թույլ չի տալիս պատշաճ կերպով որակելու կողմերի իրավունքների ու պարտականությունների բնույթը, մինչդեռ այդ պայմանագիրը հանդիսանում է փոխնակ մայրության գործընթացում կողմերի միջև առաջացող հարաբերությունները մանրամասն կարգավորող միակ իրավական փաստաթուղթը: Մասնավորապես, այդ պայմա-

www.aradaratutyunjournal.com

նագրով են սահմանվում նախատեսված ծնողների³ և փոխնակ մոր իրավունքներն ու պարտականությունները, ապագա երեխայի փոխանցման կարգը, պայմանագրային պարտավորությունները չկատարելու, պայմանագրից հրաժարվելու իրավական հետևանքները, այդ ամենի համար կողմերի պատասխանատվությունը: Այն դեպքերում, երբ պայմանագրի կողմ է հանդիսանում նաև համապատասխան բուժական հաստատությունը, ապա անհրաժեշտություն է առաջանում կարգավորելու նաև փոխնակ մայրության գործընթացում վերջինիս իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը և մի շարք այլ հարցեր:

Բոլորովին այլ հարց է, որ մինչ այժմ քննարկվող պայմանագրային հարաբերություններն օրենսդրական մակարդակով չեն կարգավորվել:

Այսպես, ՀՀ իրավական համակարգում փոխնակ մայրության պայմանագրերի կնքման կարգին և պայմաններին անդրադարձ է կատարվում միայն ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 26-ի «ԴՆԹ-Ի որոշման (ներառյալ՝ նմուշառման) կարգը և ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մարտի 9-ի N 351-ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» - N 1395-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ Որոշում): Մասնավորապես՝ այն սահմանում է, որ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների, այդ թվում՝ փոխնակ մայրության կիրառման գործընթացում կնքվող պայմանագրերը կարող են ունենալ Կառավարության վերը նշված որոշմանը կցված հավելվածով սահմանված ձևը՝ չնախատեսելով իմպերատիվ պահանջ, որ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման ցանկացած դեպքում կնքվող պայմանագիրը պետք է ունենա բացառապես նշված որոշմամբ սահմանված ձևն ու կառուցվածքը:

Հարկ է նկատել, որ ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ նախատեսված պայմանագրի մասնակից է հանդիսանում նաև վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառությամբ զբաղվող բժշկական հաստատությունը, մինչդեռ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի⁵ (այսուհետ նաև՝ Օրենք) տրամաբանությունից բխում է, որ փոխնակ մայրության պայմանագիրը վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձանց և փոխնակ մոր միջև գրավոր կնքվող և նոտարական վավերացման ենթարկվող երկկողմ փաստաթուղթ/համաձայնությունն է, որով փոխնակ մայրը պարտավորվում է սերունդը փոխանցել նախատեսված ծնողին/ծնողներին (Օրենք, 2-րդ հոդված, 1-ին մաս, 9-րդ կետ, 15-րդ հոդված 6-րդ մաս):

Կարևոր է նաև հաշվի առնել այն, որ Որոշմամբ

առաջարկվող պայմանագրային ձևն ունի բավականին խնդրահարույց կողմեր, թեև դրանով նախատեսվել են թե՛ փոխնակ մոր, և թե՛ նախատեսված ծնողների իրավունքներն ու պարտականությունները կարգավորող դրույթներ, սակայն մի շարք հարցերի էլ ընդհանրապես անդրադարձ չի կատարվել: Այսպես, օրինակ, քննարկման առարկա չի դարձվել փոխնակ մոր պատճառով հղիության ընդհատման դեպքում վրա հասնող պատասխանատվության հարցը, անդրադարձ չի կատարվել երեխայի մոտ հիվանդությունների առկայության դեպքում կողմերի իրավունքներին և պարտականություններին, փոխնակ մոր կողմից երեխային նախատեսված ծնողներին հանձնելու պայմանագրային պարտականության խախտման իրավական հետևանքներին և այլն: Բացի այդ, կան պայմանագրային դրույթներ, որոնք բավականաչափ խնդրահարույց են: Օրինակ՝ նախատեսված ծնողների վճարային պարտավորությունների կատարման, և փոխնակ մոր՝ համապատասխան վճարումներն ստանալու վերաբերյալ դրույթները, որոնք էականորեն անբարենպաստ վիճակում են դնում փոխնակ մորը, մասնավորապես՝ նախատեսվել է, որ վճարումները ենթակա են կատարման միայն հղիությունը հաստատվելու պահից, իսկ ներպատաստման բոլոր փորձերի անհաջողության դեպքում (ընդ որում այդպիսի փորձերը կարող են կատարվել մինչև երեք անգամ) և, կազմակերպության կարծիքով, փոխնակ մոր հղիության հետագա անհնարինության դեպքում նախատեսված ծնողները փոխնակ մոր նկատմամբ որևէ վճարային պարտավորություն չեն կրում, այլ միայն համապատասխան բժշկական ծառայությունների կատարման դիմաց վճարման ծախսերն են նրանց կողմից վճարման ենթակա: Փաստորեն, այս կարգավորմամբ մի կողմ են դրվում փոխնակ մոր բարոյահոգեբանական բոլոր զգացմունքները և դրա դիմաց որևէ վճարում, նույնիսկ, չի նախատեսվում: Հետևաբար կարծում ենք, փոխնակ մայրության պայմանագրի վերաբերյալ որոշ իրավակարգավորումներ պետք է իմպերատիվ կերպով սահմանվեն օրենքով, և ոչ թե Կառավարության որոշմամբ նախատեսվեն որպես հայեցողական դիսպոզիտիվ դրույթներ:

Անդրադառնալով Որոշմամբ նախատեսված փոխնակ մայրության պայմանագրի բնույթը որոշելու խնդրին՝ կարևոր է նկատել, որ այն ինքնին իրենից որևէ բարոյություն չի ներկայացնում, քանի որ այդ պայմանագիրը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված՝ ծառայությունների մատուցման պայմանագրին, դեռ ավելին՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ 777-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նա-

խատեսված կանոնները կիրառվում են նաև բժշկական ծառայությունների պայմանագրերի նկատմամբ: Ուստի այս եռակողմ պայմանագրերի մասով, ինչպես նաև այն երկկողմանի պայմանագրերի, որոնք կնքվում են փոխնակ մոր և համապատասխան բժշկական հաստատության միջև, և նախատեսված ծնողի/ծնողների և բժշկական հաստատության միջև տարակարծություն չկա, որ դրանք ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր են: Մինչդեռ, բոլորովին այլ հարց է, երբ պրակտիկայում պայմանագրերը կնքվում են անմիջապես փոխնակ մոր ու նախատեսված ծնողների միջև և անհրաժեշտություն է առաջանում պարզելու, թե այդ պայմանագրերն ինչ բնույթ ունեն:

Այսպիսով ողջ վերոգրյալը վկայությունայն մասին, որ փոխնակ մայրության պայմանագրերին դիսպոզիտիվ կարգավորումներով որոշակի անդրադարձ է կատարվում միայն վերը նշված Ռոշման համատեքստում, և դա պայմանավորված է նաև նրանով, որ դեռևս բացակայում է միասնական պրակտիկական առ այն, թե փոխնակ մայրության պայմանագրերը ՀՀ իրավական համակարգում ինչպիսի դասակարգման պետք է ենթարկվեն և ինչ պայմանագրեր պետք է կնքվեն՝ վերաբրտադրողականության օժանդակ այս տեխնոլոգիայի կիրառման, այն է՝ փոխնակ մայրության իրականացման գործընթացում առաջացող իրավահարաբերությունները կարգավորելու համար:

Ինչպես նշվեց, որոշ հեղինակներ կտրականապես դեմ են այն թեզին, որ փոխնակ մայրության պայմանագիրը կարող է դասվել քաղաքացիաիրավական պայմանագրերի թվին: Օրինակ՝ Յ. Օ.Լեբեդևան կարծում է, որ փոխնակ մայրության պայմանագրի էությունը ծնողական անձնական ոչ գույքային իրավունքների փոխանցումն է փոխնակ մորից կենսաբանական ծնողներին, հետևաբար այս պայմանագիրը չի կարող դասվել ծառայությունների մատուցման քաղաքացիական պայմանագրերի շարքին՝ հաշվի առնելով միայն այս համաձայնագրի հատուցելի հնարավոր բնույթը: Փոխնակ մայրության պայմանագիրը ընտանեկան իրավական պայմանագրերի հատուկ տեսակ է: Գ. Վ. Բոգդանովայի կարծիքով, կենսաբանական ծնողների և փոխնակ մոր միջև ծագող հարաբերությունները, ինչպես նաև նրանց միջև ծագող հարաբերությունների հատուկ անձնական բնույթը, փոխնակ մոր կողմից կատարվող հատուկ պարտավորությունը, այս պայմանագրի էությունից բխող իրավունքներն ու պարտականություններն այնքան առանձնահատուկ են, որ քաղաքացիական օրենսդրության նորմերը չեն կարող կիրառվել փոխնակ մայրության պայմանագրի նկատմամբ: Ե. Ռ. Սուխարևան գտնում է, որ այս պայմանագրերը դասվում են ընտանեկան-իրավական պայմանագրերի շարքին, քանի

որ այն կնքվում է ծնվող երեխայի և նախատեսված ծնողների միջև ընտանեկան հարաբերությունների հաստատման նպատակով:

Ամփոփելով պետք է նշել, որ հեղինակների նշված մոտեցումներն ընդունելի չեն, և փոխնակ մայրության պայմանագրերը չեն կարող դիտարկվել ընտանեկան օրենսդրության իրավակարգավորումների համատեքստում:

Վերհանելու համար՝ թե ի վերջո փոխնակ մայրության պայմանագրերը, քաղաքացիաիրավական պայմանագրերի շարքում պետք է դասել, թե ընտանեկան իրավունքի կարգավորման ներքո դիտարկել, նախ և առաջ անհրաժեշտ է պարզել վեր հանել դրա էությունը, հասկանալ՝ թե այն ի՞նչ է իրենից ենթադրում:

Այսպես, Օրենքի տրամաբանությունից բխում է, որ փոխնակ մայրության պայմանագիրը վերաբրտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձանց և փոխնակ մոր միջև գրավոր ձևով կնքվող և նոտարական վավերացման ենթարկվող համաձայնությունն է, որով փոխնակ մայրը պարտավորվում է սերունդը փոխանցել նախատեսված ծնողին (ծնողներին): Փաստորեն, փոխնակ մայրության պայմանագիրն այն համաձայնագիրն է, որով մի կողմը՝ փոխնակ մայրը պարտավորվում է մյուս կողմի՝ պատվիրատու ծնող(ներ)ի հանձնարարությամբ և սահմանված վարձատրության դիմաց կամ անվճար հիմունքներով արհեստական բեղմնավորումից հետո մասնակցել սաղմի իմպլանտացիայի գործընթացին, երեխային կրել, ծնել և փոխանցել պատվիրատու ծնող(ներ)ին, իսկ պարտավորությունները չկատարելու դեպքում կրել դրա քաղաքացիաիրավական հետևանքները:

Այսինքն՝ օրենսդրական կարգավորման համաձայն՝ երեխան չի հանդիսանում փոխնակ մայրության պայմանագրի մասնակից սուբյեկտ: Ընդ որում, նույնիսկ եթե համաձայն ենք փոխնակ մայրության պայմանագիրն ընտանեկան իրավունքի տիրույթում դիտարկող հեղինակների այն պնդմանը, թե փոխնակ մայրության պայմանագրի հիման վրա ծագում են ընտանեկան-իրավական հարաբերություններ, ապա կարևոր է ուշադրությունը բեռել այն հանգամանքին, որ այդ ընտանեկան հարաբերությունները ծագում են միայն երեխայի ծննդից և նախատեսված ծնողներին փոխանցելուց հետո, այսինքն՝ կողմերի պայմանագրային պարտավորությունները կատարելուց հետո:

Հետևաբար, պայմանագրի կնքման պահին ձևավորված ընտանեկան հարաբերությունները բացակայում են:

Բացի այդ, հարկ է նկատել, որ ՀՀ Ընտանեկան օրենսգիրքը, ի թիվս այլնի, կարգավորում է անձնական ոչ գույքային և գույքային հարաբերություններն ընտանիքի անդամների միջև՝ ամուսինների, ծնողների և զավակների (որդեգրողների ու որդեգր-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վածների), իսկ ընտանեկան օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և շրջանակներում՝ մյուս ազգականների և այլ անձանց միջև (ՀՀ Ընտանեկան օրենսգիրք 2-րդ հոդված): Փոխնակ մայրը վերոնշյալ սուբյեկտների շարքում, լավագույն դեպքում, կարող է դիտարկվել որպես «այլ անձ», սակայն հարկ է նկատել Ընտանեկան օրենսգրքում նախատեսված հետևյալ ձևակերպումը՝ «*ընտանեկան օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և շրջանակներում՝ մյուս ազգականների և այլ անձանց միջև*», այսինքն՝ «այլ անձինք», այլ անձանց մասնակցությամբ առաջացող հարաբերություններն, առնվազն, պետք է նախատեսված լինեն ընտանեկան օրենսդրությամբ, մինչդեռ՝ ընտանեկան օրենսդրությամբ ընդհանրապես անդրադարձ չի կատարվում փոխնակ մայրությանը, հետևաբար փոխնակ մայրը չի կարող դիտարկվել նաև այլ անձանց շարքում:

Ուստի, ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ եթե փոխնակ մայրության պայմանագիրն օրենսդրական կարգավորումների համաձայն կնքվում է փոխնակ մոր և նախատեսված ծնողի/ծնողների միջև, ապա խոսք լինել չի կարող կողմերի միջև ընտանեկան հարաբերությունների ծագման մասին և փոխնակ մայրության պայմանագիրը չի կարող կարգավորվել ընտանեկան իրավունքի նորմերով, հետևաբար այն պետք է դասել քաղաքացիաիրավական պայմանագրերի շարքին:

Բացի այդ, փոխնակ մայրության պայմանագիր կնքելով՝ կողմերից յուրաքանչյուրը հետապնդում է իր շահը: Մասնավորապես՝ նախատեսված ծնողների շահը կայանում է երեխա ունենալու մեջ, իսկ փոխնակ մոր շահը՝ փոխնակ մայրության արդյունքում տրվող վարձատրությունն ստանալու մեջ, իսկ որոշ դեպքերում նաև անպտղությամբ տառապող անձանց՝ երեխայի բերկրանքն զգալու կարողություն պարզելու մեջ¹²: Այսինքն՝ փոխնակ մայրության պայմանագրի հիման վրա ծագող վերոնշյալ հարաբերություններն ընտանեկան օրենսդրությամբ կարգավորման ենթակա հարաբերությունների շարքում դասվել չեն կարող ոչ միայն սուբյեկտային կազմի, այլև պայմանագրով հետապնդվող նպատակների համատեքստում, իսկ պետությունը չի կարող այն դիտարկել ընտանեկան իրավունքի շրջանակներում և իրականացնել դրա մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն, քանի որ **ընտանեկան իրավունքի համատեքստում** պետության կողմից պաշտպանության ենթակա են ընտանիքը, մայրությունն ու մանկությունը և ոչ թե մարդու վերարտադրողական իրավունքները:

Փոխնակ մայրության պայմանագիրը դիտարկելով քաղաքացիաիրավական պայմանագրերի շարքում, հաջորդ կարևոր հարցը, որը պետք է առնել քննության այն է, թե փոխնակ մայրության

դեպքում ինչպիսի պայմանագիր պետք է կնքվի: Իրատեսական է երկու տիպի պայմանագրերի դիտարկումը, այն է՝ առքուվաճառքի և ծառայությունների մատուցման պայմանագիրը: *Եթե հարցը դիտարկվում է առուվաճառքի պայմանագրի համատեքստում, ապա առաջ է գալիս հիմնարար խնդիր, այն է՝ ինչն է տվյալ գործարքի իրական առարկան՝ երեխան, թե՞ սաղմը: Դրան հաջորդում է մեկ այլ կարևոր հարցադրում՝ արդյո՞ք սաղմը, պտուղը կամ ձևավորման փուլում գտնվող մարդկային էակը կարող են հանդես գալ որպես քաղաքացիաիրավական գործարքի առարկա:*

Սրա հետ կապված նախ հարկ է նշել, որ քաղաքացիական օրենսդրությունը առուվաճառքի պայմանագրի առարկա է դիտարկում գույքը (ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 470-րդ հոդված, 1-ին մաս): Այս տրամաբանությամբ, եթե կնքվում է առուվաճառքի պայմանագիր, ապա ստացվում է, որ սպագա երեխան, սաղմը փաստացի ընկալվում են որպես քաղաքացիաիրավական շրջանառության մեջ գտնվող գույքեր, ապրանքային բնույթի օբյեկտներ: Ընդ որում, դա բխում է նաև այն օրենսդրական կարգավորումից, համաձայն որի՝ այն օբյեկտները, որոնք հանված են քաղաքացիական շրջանառությունից սահմանվում են օրենքով (ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, 133-րդ հոդված, 2-րդ մաս), իսկ գործող օրենսդրությունը սաղմը չի դասում նման շրջանառությունից հանված օբյեկտների շարքին, ուստի և կարելի է եզրակացնել, որ այն, իրավական իմաստով, կարող է դիտարկվել որպես քաղաքացիական շրջանառության մեջ գտնվող օբյեկտ: Հետևաբար, եթե գործարքի առարկա ընդունվում է սաղմը՝ որպես գույքային բնույթի օբյեկտ, ապա տվյալ հարաբերությունները հնարավոր է դիտարկել քաղաքացիաիրավական կարգավորման դաշտում:

Այսինքն՝ փոխնակ մայրության պայմանագրի դիտարկումը որպես առքուվաճառքի պայմանագրի ենթատեսակ, ենթադրում է, որ սաղմը հանդիսանում է առքուվաճառքի պայմանագրի օբյեկտ, ինչն էլ նսեմացնում է մարդկային կյանքի էությունը: Սաղմը նոր ձևավորվող կենդանի օրգանիզմ է, կյանքի սկիզբն է, ուստի մարդու կյանքը առքուվաճառքի պայմանագրի առարկա դիտարկելը նույնիսկ իր մեջ բովանդակում է քրեաիրավական տարրեր: Հետևաբար, միայն սա բավարար է փոխնակ մայրության պայմանագիրը առքուվաճառքի պայմանագրերի շարքում չդասելու համար: Ինչ վերաբերում է փոխնակ մայրության պայմանագրի՝ ծառայությունների մատուցման պայմանագրի ենթատեսակ հանդիսանալուն, ապա հարկ է նկատել, որ նույնիսկ ծառայությունների մատուցման պայմանագրի վերաբերյալ գիտնականների մոտեցումները միանշանակ չեն: Մասնավորապես՝ մի խումբ գիտնականներ պնդում են, որ փոխնակ մայրու-

www.aradadutyjournal.com

www.ardaradutyjournal.com

թյունը կարող է իրականացվել ինչպես վճարովի, այնպես էլ անվճար հիմքում քննարկելով, մինչդեռ ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է միայն ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերի վերաբերյալ իրավակարգավորումներ, և նման պայմաններում հնարավոր չէ փոխնակ մայրության վճարովի պայմանագիրը դասել քաղաքացիական պայմանագրերի մի տեսակի շարքում, իսկ անհատույց հիմունքներով իրականացվող փոխնակ մայրության պայմանագրերը՝ մեկ այլ տեսակի շարքում այն դեպքում, երբ այդ պայմանագրերը միմյանցից տարբերվում են միայն վճարովի կամ անվճար լինելու հիմքով: Այնուամենայնիվ, մի խումբ գիտնականներ, այս ամենով հանդերձ, շարունակում են պնդել, որ փոխնակ մայրության պայմանագրերը պետք է դասել ծառայությունների մատուցման պայմանագրերի շարքին: Այսպես, օրինակ, Յու. Ա. Դրոնովան գտնում է, որ փոխնակ մայրության պայմանագրի առարկան փոխնակ մոր և նախատեսված ծնողների կողմից կատարման ենթակա որոշակի գործողությունների ամբողջությունն է, մասնավորապես՝ փոխնակ մոր կողմից իրականացվող այն գործողությունների, որոնք կապված են երեխային կրելու հետ և նախատեսված ծնողների այն գործողությունների, որոնք կապված են փոխնակ մոր կողմից մատուցված ծառայությունների համար վճարումների կատարման հետ: Համաձայնում ենք, այս մոտեցման հետ այնքանով, որ փոխնակ մայրության պայմանագրի առարկան երեխային կրելը և նախատեսված ծնողներին փոխանցելն է, այսինքն՝ ինքնատիպ ծառայությունների մատուցումը: Անգամ այն դեպքում, երբ փոխնակ մայրության պայմանագիրը կնքվում է արտոնաբանական հիմունքներով, նախատեսված ծնողները միևնույն է պարտավորվում են փոխնակ մորը հղիության ընթացքում ցուցաբերել նյութական օգնություն և կոմպենսացնել երեխային կրելու ընթացքում կատարվող ծախսերը՝ ներառյալ բժշկական հետազոտությունների համար կատարված բոլոր ծախսերի, համապատասխան սննդակարգի, հագուստի, ժամանակավոր անաշխատունակության համար կատարման ենթակա վճարումները: Ընդ որում, այս ծախսերը նախատեսված ծնողների կողմից կատարման ենթակա են անկախ այն հանգամանքից, թե փոխնակ մայրությունը կատարվում է կոմերցիոն, թե արտոնաբանական հիմքում քննարկելով¹⁵: Բացի այդ, ծառայությունը որպես իրավական կատեգորիա հանդիսանում է քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտ՝ անկախ դրա վճարովի կամ անվճար լինելու հանգամանքից:

Հարկ է նաև նկատել, որ փոխնակ մայրության պայմանագրի քաղաքացիաիրավական պայմանագիր լինելը բխում է նաև դրա կոնսենսուալ բնույթից¹⁴: Փոխնակ մայրության պայմանագրի բնույթի

որոշման համատեքստում կարևոր է այս հարցին անդրադարձ կատարելը, քանի որ պայմանագրի կոնսենսուալ կամ ռեալ լինելու վերաբերյալ առկա մոտեցումները ևս միանշանակ չեն:

Այսպես, Ն. Ֆ. Չվենիգոռոսկայան գտնում է, որ փոխնակ մայրության պայմանագրերը ռեալ պայմանագրեր են, քանի որ կողմերի իրավունքներն ու պարտականությունները ծագում են միայն սաղմի ներպատվաստման/տեղադրման դեպքում, այսինքն՝ սաղմը փոխնակ մորը փոխանցելու պահից¹⁵: Մինչդեռ, փոխնակ մայրության պայմանագրի՝ որպես ռեալ պայմանագրի դիտարկումը հանգեցնում է նրան, որ փոխնակ մայրը նախատեսված ծնողների նկատմամբ երեխայի փոխանցման կապակցությամբ որևէ պարտավորություն չի ունենում¹⁶: Այսինքն՝ փոխնակ մայրության պայմանագիրը ռեալ պայմանագիր դիտարկելը կարող է հանգեցնել նրան, որ փոխնակ մայրը հրաժարվի սաղմի իմպլանտացիայի կատարումից: առանց որևէ բացասական հետևանքներ կրելու՝ էականորեն անբարենպաստ վիճակում դնելով պատվիրատուներին՝ նախատեսված ծնողներին, հատկապես եթե վերջիններս կատարած լինեն բոլոր վճարումները: Հետևաբար, ինչպես նշում է Մ. Վ. Անտոկոլսկայան, փոխնակ մայրության պայմանագիրը պետք է կնքել նախքան սաղմի ներպատվաստումը (հակառակ դեպքում՝ պայմանագիրը սաղմի իմպլանտացիայից հետո փոխնակ մայրության պայմանագրի կնքումը¹⁷ հակասում է բարոյականության հիմունքներին)¹⁸: Սա ևս վկայում է այն մասին, որ փոխնակ մայրության պայմանագիրը չի կարող համարվել ռեալ պայմանագիր: Ամփոփելով՝ նշենք, որ միանում ենք այն իրավագետներին, ովքեր փոխնակ մայրության պայմանագիրը կնքված են համարում կողմերի միջև պայմանագրի էական պայմանների վերաբերյալ փոխադարձ համաձայնության ձեռքբերման պահից, այդպիսով՝ փոխնակ մայրության պայմանագիրը համարելով կոնսենսուալ պայմանագիր:

Սույն հոդվածի շրջանակներում կարևոր է նաև անդրադառնալ փոխնակ մայրության պայմանագրի կողմերի պատասխանատվության հարցին, որն, ըստ էության, կարգավորվում է քաղաքացիական օրենսդրությամբ¹⁹: Քանի որ այս պայմանագիրը երկկողմանի է, իրավունքներ և պարտականություններ է առաջացնում երկու կողմերի համար, ուստի պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն պետք է կրեն և՛ փոխնակ մայրը, և՛ պատվիրատու ծնողները: Ընդ որում, կարևոր է նկատել, որ օրենսդրական մակարդակում բացակայում են փոխնակ մայրության պայմանագրի դրույթների խախտման դեպքում վրա հասնող պատասխանատվության վերաբերյալ դրույթները, ուստի ստեղծված իրավիճակում գոր-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ծում են քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված՝ պարտավորությունների խախտման դեպքում վրա հասնող ընդհանուր պատասխանատվության միջոցները: Մասնավորապես՝ փոխնակ մայրության պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երկկողմանի վրա հասնող պատասխանատվությունը պատճառված վնասի հատուցումն է, սակայն հարկ է նկատել, որ այն ապացուցելը պրակտիկ մակարդակում կարող է որոշակի դժվարություններ առաջացնել, հատկապես, երբ խոսքը պատճառված բարոյա-հոգեբանական վնասի մասին է, իսկ պատճառված վնասի հատուցման չափը որոշելն էլ ավելի խնդրահարույց է, ուստի գտնում ենք, որ կողմերի միջև համապատասխան պարտավորությունների խախտման համար հստակ որոշակի չափով վնասի հատուցման պարտավորություն նախատեսված լինելը փոխնակ մայրության պայմանագրերի երկկողմանի կատարումը առավել երաշխավորված կդարձնի:

Եզրակացություն

Ուստի, ելնելով ողջ վերոգրյալից և փոխնակ մայրության պայմանագիրը դիտարկելով ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրի ենթատեսակ՝ գտնում ենք, որ օրենսդրական մակարդակում՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում՝ ծառայությունների մատուցման պայմանագրին նվիրված 5-րդ ենթաբաժնում պետք է նախատեսել նոր 39.1-րդ գլուխը, որն ամբողջությամբ նվիրված կլինի փոխնակ մայրության պայմանագրին, որտեղ նախատեսված կլինեն պայմանագրի էական պայմաններին, կողմերի իրավունքներին և պարտականություններին, ինչպես նաև պայմանագրային պարտավորությունների չկատարման դեպքում վրա հասնող իրավական հետևանքների վերաբերյալ դրույթներ:

Բացի այդ նպատակ ունենալով ընդգծել փոխնակ մայրության պայմանագիրը բնութագրող հիմնական հատկանիշները՝ պայմանագրի քաղաքացիաիրավական բնույթը, դրա՝ երկկողմանի գործարք լինելը, կոնսենսուալ բնույթը, գրավոր կարգով կնքման և նոտարական վավերացման ենթակա լինելը և ծառայությունների մատուցման պայմանագրի ենթատեսակ դիտարկելը, առաջարկում ենք նաև նախատեսել փոխնակ մայրության պայմանագրի հետևյալ սահմանումը.

1. Փոխնակ մայրության պայմանագրով մի կողմը՝ փոխնակ մայրը պարտավորվում է սերունդը փոխանցել վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձին/անձանց, այն է՝ նախատեսված ծնողին (ծնողներին), իսկ նախատեսված ծնողը (ծնողները) պարտավորվում են կատարել սույն պայմանագրով նախատեսված վճարային պարտավորությունները:

2. Փոխնակ մայրության պայմանագիրը կնքված է համարվում բոլոր էական պայմանների շուրջ կողմերի փոխադարձ համաձայնության ձեռքբերման պահից:

3. Փոխնակ մայրության պայմանագիրը կնքվում է գրավոր և ենթակա է նոտարական վավերացման: Գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Միևնույն ժամանակ, նպատակ հետապնդելով փոխնակ մայրության գործընթացում առաջացող պայմանագրային հարաբերություններում առավել արդյունավետ կազմակերպել երեխայի և նախատեսված ծնողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, առաջարկում ենք, որ փոխնակ մայրության բոլոր տիպի պայմանագրերում նախատեսվեն պատասխանատվություն սահմանող հետևյալ նորմերը.

«Փոխնակ մոր կողմից փոխնակ մայրության պայմանագրի կնքման պահից դրա գործողության ողջ ընթացքում թմրանյութերի, թունանյութերի, ալկոհոլի և այլ վնասակար նյութերի, երեխայի կյանքին և առողջությանը սպառնացող ռեղամիջոցների օգտագործման, միջամտությունների իրականացման, ինչպես նաև հղիության արհեստական ընդհատման դեպքում, բացառությամբ, երբ ռեղամիջոցի օգտագործման կամ միջամտության իրականացման կամ հղիության ընդհատման այլընտրանքային և բժշկական ցուցումներով թույլատրելի տարրերակներ առկա չեն, փոխնակ մորը սույն պայմանագրով նախատեսված վճարումները հատուցման ենթակա չեն, իսկ փոխնակ մայրը պարտավոր է հատուցել նախատեսված ծնողի/ծնողների կողմից մինչ այդ կատարված բոլոր վճարումները և ծախսերը:

Փոխնակ մոր կողմից պայմանագրային մյուս պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձինք փոխնակ մոր նկատմամբ որևէ այլ վճարային պարտավորություն չեն կրում:»

¹ Տե՛ս Արթյուշինա Օլգա Նիկոլաևնա, Մարինա Վլադիմիրովնա - Правовая природа договора о суррогатном материнстве; Вестник КГУ № 1, 2018, էջ 234: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <file:///C:/Users/user/Downloads/pravovaya-priroda-dogovora-o-surrogatnom-materinstve.pdf>, 01.03.2026թ. դրությամբ: Տե՛ս նաև Пянченко К. А. - Правовая Природа договора суррогатного материнства; Молодежная юридическая наука Alma Mater – 2022 Материалы международной научной конференции студентов, магистрантов и аспирантов, էջեր 323-324, Чашкова С. Ю. - Система договорных обязательств в российском семейном праве: автореф. дис. ... канд. юрид. наук: 12.00.03 / С. Ю. Чашкова. - Москва, 2004, էջ 23: Հասանելի է հետևյալ՝ https://pureportal.spbu.ru/files/108292010/_Alma_Mater_2022.pdf հղմամբ - 01.03.2026 թ. դրությամբ:

² Տե՛ս Лебедева Ю. О. - Некоторые проблемы правового регулирования вспомогательных репродукции в свете нового Федерального закона «Об основах охраны здоровья граждан в Российской Федерации». // Медицинское право. 2012. № 2, էջ 16, Богданова Г. В., - Проблемы правового регулирования личных и имущественных отношений между родителями и детьми: Дисс. Канд. юрид. наук. Саратов, 1999, էջ 80:

³ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում ամրագրված են հիմնական հասկացությունները, որի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ «նախատեսված ծնողներ՝ զույգեր կամ անհատներ, որոնք դիտարկում են փոխնակ մայրությունը որպես ծնող դառնալու միջոց՝ իրենց կամ դրանրական սեռաբջիջներից ստացված սաղմ օգտագործելով»:

⁴ Տե՛ս ՀՀ Կառավարության 2006 թվականի մարտի 9-ի N 351-ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 1395-Ն որոշումը: Ընդունվել է ՀՀ Կառավարության կողմից՝ 26.10.2017թ., ուժի մեջ է մտել՝ 25.11.2017թ.: ՀՀ ՊՏ 2017.11.15/67(1342) Հոդ.1123:

⁵ Տե՛ս «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 11.12.2002թ., ուժի մեջ է մտել 07.07.2003թ.:
ՀՀ ՊՏ 2003.01.07/1(236) Հոդ.5:

⁶ Տե՛ս ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 05.05.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ.: ՀՀ ՊՏ 1998.08.10/17(50):

⁷ Տե՛ս Лебедева Ю. О. , նույն աշխատությունը՝ էջ 16:

⁸ Տե՛ս Богданова Г. В. , նույն աշխատությունը՝ էջ 80:

⁹ Տե՛ս Արթյուշինա Օլգա Նիկոլաևնա, Մարինա Վլադիմիրովնա – նույն աշխատությունը՝ էջ 234:

¹⁰ Տե՛ս Արթյուշինա Օլգա Նիկոլաևնա, Մարինա Վլադիմիրովնա – նույն աշխատությունը՝ էջ 234:

¹¹ Տե՛ս ՀՀ ԸՆտանեկան օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 09.11.2004թ., ուժի մեջ է մտել՝ 19.04.2005թ.: ՀՀ ՊՏ 2005.01.19/4(376) Հոդ.60:

¹² Տե՛ս Արթյուշինա Օլգա Նիկոլաևնա, Մարինա Վլադիմիրովնա – նույն աշխատությունը՝ էջ 235:

¹³ Տե՛ս Малютина А.В. - О правовой природе договора суррогатного материнства // Всероссийский журнал научных публикаций. – 2012. – № 1 (11), էջ 47:

¹⁴ Տե՛ս Большечевская Е.С. - Правовая природа договора суррогатного материнства // Актуальные проблемы российского права. 2011. № 2. էջ 384:

¹⁵ Տե՛ս Звенигородская Н.Ф. Семейно-правовые сделки: проблемы классификации FAMILY // Вестник Омского университета. Серия «Право». – 2011. – № 4 (29) – էջ 81:

¹⁶ Տե՛ս Абрамова Е.Н., Аверченко Н.Н., Арсланов К.М. и др.; под ред. Сергеева А.П., Проспект М. - Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации. Часть вторая: учебно-практический комментарий (постатейный) /, 2010.

¹⁷ Տե՛ս Արթյուշինա Օլգա Նիկոլաևնա, Մարինա Վլադիմիրովնա – նույն աշխատությունը՝ էջ 235:

¹⁸ Տե՛ս Пестрикова А.А. Обязательства суррогатного материнства. Дис. ... канд. юрид. наук. Самара, 2007, էջ 111:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՆԿ

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 05.05.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ.: ՀՀ ՊՏ 1998.08.10/17(50):

2. ՀՀ ԸՆտանեկան օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 09.11.2004թ., ուժի մեջ է մտել՝ 19.04.2005թ.: ՀՀ ՊՏ 2005.01.19/4(376) Հոդ.60:

3. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 11.12.2002թ., ուժի մեջ է մտել 07.07.2003թ.: ՀՀ ՊՏ 2003.01.07/1(236) Հոդ.5:

4. «ԴՆԹ-ի որոշման (ներառյալ՝ նմուշառման) կարգը և ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մարտի 9-ի N 351-ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 1395-Ն որոշումն ընդունվել է ՀՀ Կառավարության կողմից՝ 26.10.2017թ., ուժի մեջ է մտել՝ 25.11.2017թ.: ՀՀ ՊՏ 2017.11.15/67(1342) Հոդ.1123:

5. Абрамова Е.Н., Аверченко Н.Н., Арсланов К.М. и др.; под ред. Сергеева А.П., Проспект М. - Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации. Часть вторая: учебно-практический комментарий (постатейный) /, 2010:

www.araratadatumjournal.com

6. Артюшина О. Н., Прохорова М. В. - Правовая природа договора о суррогатном материнстве; Вестник КГУ № 1, 2018, № 234: Հասցեի տեղեկություններ՝ file:///C:/Users/user/Downloads/pravovaya-priroda-dogovora-o-surrogatnom-materinstve.pdf, 01.03.2026թ.:
7. Богданова Г. В. - Проблемы правового регулирования личных и имущественных отношений между родителями и детьми: Дисс. Канд. юрид. наук. Саратов, 1999, № 80:
8. Большечевская Е. С. - Правовая природа договора суррогатного материнства // Актуальные проблемы российского права. 2011. № 2, № 384:
9. Звенигородская Н.Ф. Семейно-правовые сделки: проблемы классификации FAMILY // Вестник Омского университета. Серия "Право". – 2011. – № 4 (29) – № 81:
10. Лебедева Ю. О. Некоторые проблемы правового регулирования вспомогательных репродукции в свете нового Федерального закона "Об основах охраны здоровья граждан в Российской Федерации". // Медицинское право. 2012. № 2, № 16:
11. Малютин А. В. - О правовой природе договора суррогатного материнства // Всероссийский журнал научных публикаций. – 2012. – № 1 (11), № 47:
12. Панченко К. А. - Правовая Природа договора суррогатного материнства; Молодежная юридическая наука Alma Mater – 2022 Материалы международной научной конференции студентов, магистрантов и аспирантов, № 323-324:
13. Пестрикова А. А. Обязательства суррогатного материнства. Дис. ... канд. юрид. наук. Самара, 2007, № 111:
14. Чашкова С. Ю. Система договорных обязательств в российском семейном праве: автореф. дис. ... канд. юрид. наук: 12.00.03/С. Ю. Чашкова. - Москва, 2004, № 23: Հասցեի տեղեկություններ՝ https://pureportal.spbu.ru/files/108292010/_Alma_Mater_2022.pdf – 01.03.2026 թ. նրբագրված:

Рубина Петросян

Ассистент кафедры гражданского права юридического факультета ЕГУ,
кандидат юридических наук (к.ю.н.)

Милена Аршакян

Магистрант кафедры гражданского права юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ***Проблемы договорного регулирования суррогатного материнства***

Статья посвящена раскрытию правовой сущности договора, заключаемого в рамках применения института "суррогатного материнства" - одной из разновидностей вспомогательных репродуктивных технологий. В частности, в статье рассматриваются правовая природа договора о суррогатном материнстве, обсуждаются особенности его заключения, выявляются недостатки и пробелы действующих правовых регулирований, их проблемные аспекты, а также представляются соответствующие законодательные инициативы, направленные на договорное регулирование данного института.

Ключевые слова: суррогатная мать, вспомогательная репродуктивная технология, предполагаемый родитель, договор о суррогатном материнстве, заказчик, имплантация, подсадка эмбриона, реальный договор, консенсуальный договор.

Rubina Petrosyan

Assistant Professor at the Chair of Civil Law,
Faculty of Law, Yerevan State University (YSU), PhD in Law

Milena Arshakyan

Master's Student at the Chair of Civil Law,
Faculty of Law, Yerevan State University (YSU)

SUMMARY***Issues of contractual regulation of surrogacy***

The article is devoted to disclosing the legal essence of the agreement concluded within the framework of the "surrogacy" institute, one of the varieties of assisted reproductive technologies. In particular, the article addresses the legal characterization of the surrogacy agreement, examines the specific features of its conclusion, identifies the

shortcomings and gaps in the current legal regulations, highlights problematic aspects, and presents relevant legislative initiatives aimed at improving the contractual regulation of the institution.

Key words: surrogate mother, assisted reproductive technology, intended parent, surrogacy agreement, commissioning party, implantation, embryo transfer, real contract, consensual contract.

Բնագիրը ներկայացվել է 20.04.2026թ.

Ընդունվել է տպագրության 27.04.26թ.

ԱՆԱՀԻՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի
ասպիրանտ, դասախոս, փաստաբան

**ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՍԱՍԲ ԱՆՁԻ
ՎՐԱ ԴՐՎՈՂ ԱՐԳԵԼՔՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՍԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

Հոդվածը նվիրված է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ազատության սահմանափակում այլընտրանքային պատժատեսակի ընթացքում նշանակվող արգելքների չկատարման իրավական հետևանքներին: Հոդվածում բացահայտվում է պատժի կատարման պրոգրեսիվ համակարգի էությունը և այդ համատեքստում ներկայացվում է դատապարտյալի բացասական վարքագծի հետևանքով պատժի խստացման իրավական նպատակը:

Հետազոտության շրջանակներում անդրադարձ է կատարվում այն հանգամանքին, թե որ հաստատությունների այցելությունը և ինչ միջոցառումների կազմակերպումը, կամ մասնակցությունն է արգելվում դատապարտյալին պատժի կրման ընթացքում: Հոդվածում քննարկվում է նաև բնակության վայրի փոփոխությունն հասկացության օրենսդրական բնորոշման անհրաժեշտությունը, ինչպես նաև հարգելի հանգամանքների դեպքում դատարանի կողմից սահմանված արգելքների չկատարման կամ պատժի ընթացքում վերահսկողության պարտադիր պահանջներից խուսափելու իրավական հետևանքները:

Վերլուծության արդյունքներով առաջարկվում է վերանայել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասը՝ ներդնելով «պատժից խուսափող» հասկացության առավել համապարփակ և ամբողջական սահմանում:

Հիմնաբառեր - ազատության սահմանափակում, պատժի փոխարինում, պատժի կատարման պրոգրեսիվ համակարգ, ժամանցային կամ այլ հաստատություն, բնակության վայրի փոփոխություն, վերահսկողության պարտադիր պահանջ, անձի վրա դրվող արգելք, հարգելի հանգամանք:

Ներածություն

ՀՀ քրեական օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային փոփոխություններից է ազատության սահմանափակման նախատեսումը պատիժների համակարգում: Ազատության սահմանափակումը դասելով այլընտրանքային պատժատեսակների շարքին՝ օրենսդիրը նպատակ է հետապնդել ապահովել պատժի նպատակները, այդ թվում՝ անձի վերասոցիալականացումը, առանց դատապարտյալին ազատությունից զրկելու: Պատժատեսակն իր առջև դրված այս նպատակներն իրագործում է պատժի բովանդակությունն արտացոլող, դատապարտյալի իրավունքները սահմանափակող արգելքների նախատեսմամբ, որոնց կատարումն էլ կազմում է ազատության սահմանափակման ողջ պրոցեսը:

Միաժամանակ, եթե դատապարտյալը չի պահպանում սահմանված ռեժիմային պահանջները, խախտում է դրանք, ապա դատապարտյալի համար առաջանում են քրեաիրավական հետևանքներ, որոնք վերջնաորոշում կարող են հանգեցնել ազատության սահմանափակում պատիժն ազատագրված փոխարինելուն:

Հետևաբար, հիմք ընդունելով օրենսդրական համակարգային փոփոխությունները և իրավակիրառ փորձի բացակայությունը այս պատժի կատարման փուլում ծագում են մի շարք հարցեր՝ պատժի փոխարինման կամ վերացման առնչությամբ, որոնք մի շարք դեպքերում պահանջում են

համակարգային, խորքային մեկնաբանություն, իսկ այլ դեպքերում՝ օրենսդրական լուծումներ:

Ուսումնասիրությունը կատարվել է սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա, ձևական-տրամաբանական, իրավահամեմատական մեթոդների կիրառմամբ:

I. Ազատության սահմանափակման փոխարինման իրավական նշանակությունը.

Ամփոփելի է, որ պատժի նպատակների իրագործումն անմիջականորեն կապված է պատժի կատարման հետ: Այլ խոսքով՝ պատժի նպատակներն իրագործվում են ոչ այնքան դատավճռի կայացմամբ և համաշափ պատժի նշանակմամբ, որքան հետագայում դատական ակտով սահմանված պատժի պատշաճ կատարմամբ, քանի որ հենց պատժի կատարումն է, որը հանգեցնում է պատժի նպատակների իրագործմանը, մասնավորապես՝ սոցիալական արդարության վերականգնմանը, հանցագործությունների կանխմանը և պատժի ենթարկված անձի վերասոցիալականացմանը:

Հետևաբար՝ պատժի կատարման արդյունքներով դրական կամ բացասական, երբեմն առաջ է գալիս պատժի փոխարինման կամ վերացման անհրաժեշտություն:

Այս փոխարինումը բխում է պատժի կատարման պրոգրեսիվ համակարգից: Պատժի կատարման պրոգրեսիվ համակարգը կա՛մ բարելավում է դատապարտյալի իրավական վիճակը, կա՛մ վատթարացնում այն՝ պայմանավորված դատապարտ-

յալի կողմից պատժի կրման ընթացքում սահմանված պահանջների պահպանման աստիճանով՝

Պատժի կատարման համակարգի պրոգրեսիվությունը մասնագիտական գրականության մեջ բնութագրվում է նաև որպես. «Իր վարքագծով պայմանավորված՝ դատապարտյալի իրավական դրության փոփոխություն՝ վերջինիս իրավունքների ընդլայնման կամ սահմանափակման իմաստով»:

Թեև ՀՀ քրեական և քրեակատարողական օրենսդրությունն ուղղակիորեն չեն ամրագրում պատժի կատարման պրոգրեսիվ համակարգը և չեն բացահայտում դրա էությունը, սակայն ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված գրեթե բոլոր պատիժների կատարումն այս կամ այն կերպ հիմնված է այս համակարգի վրա:

Մասնավորեցնելով ասվածը՝ պատժի կատարման ընթացքում դատապարտյալի դրական կամ բացասական վարքագծով պայմանավորված՝ կարող են առաջ գալ հետևյալ քրեաիրավական հետևանքները, որոնք էլ պատժի կատարման պրոգրեսիվ համակարգի տարատեսակներ են.

1) **Պատժի կրման պայմանների փոփոխություն:** ՀՀ քրեական օրենսդրության շրջանակներում այս փոփոխությունը հիմնականում վերաբերելի է ազատազրկմանը: Օրինակ՝ դատապարտյալին ցածր անվտանգային գուտու մեղմ պայմաններից խիստ պայմաններ տեղափոխելը և հակառակը կամ ռեժիմային փոփոխությունները, որոնք ևս բխում են դատապարտյալի դրական կամ բացասական վարքագծից: Պայմանների փոփոխության հնարավորություն է նախատեսվում նաև պատիժը պայմանականորեն չկիրառելիս սահմանված փորձաշրջանի ընթացքում:

2) **Պատժատեսակի փոխարինում:** Այս փոխարինումը կարող է երկու դրսևորում ունենալ:

- Պատժատեսակի փոխարինում ավելի խիստ պատժատեսակով: Օրինակ կարող է ծառայել տուգանքի, հանրային աշխատանքների, որոշակի պաշտոնների զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու արգելքի չկատարման դեպքում դրանց փոխարինումն ազատազրկմամբ:

- Պատժատեսակի փոխարինում ավելի մեղմ պատժատեսակով: ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում պատժի պրոգրեսիվ բնույթին համահունչ նշանակված պատժատեսակն ավելի մեղմ պատժով փոխարինելու հնարավորություն, սակայն պատժից ազատելու ինստիտուտի առանձին դրսևորումների պարագայում հնարավոր է հանդիպել պատժի մեղմացման դեպքերի, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 88-րդ հոդվածի կիրառման պարագայում:

3) **Պատժից ազատում:** Դատապարտյալի դրական վարքագծի հետևանքով պատժից ազատման դասական օրինակ է պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու ինստիտուտը: Դրա-

կան վարքագծի հաշվառմամբ պատժից ազատվելու հնարավորություն է նախատեսում նաև ներման ինստիտուտը: Հղի կնոջ կամ խնամքին մինչև 6 տարեկան երեխա ունեցող անձի պատժի կատարումը հետաձգելը դրական վարքագծի հիմքով՝ ևս պատժից ազատվելու տարրեր է պարունակում: Պատժից ազատող այս հանգամանքը, թեև որոշակի նախադրյալներ է պահանջում, այնուամենայնիվ դրա արդյունքում դատապարտյալի նկատմամբ սահմանված փորձաշրջանի ավարտով վերջինս ամբողջությամբ ազատվում է պատժի կրումից:

Հիմք ընդունելով պատժի կատարման պրոգրեսիվ համակարգի դրսևորման ձևերը՝ կարելի է արձանագրել, որ ազատության սահմանափակման փոխարինումը ևս պատժի կատարման պրոգրեսիվ համակարգի տարր է, ինչի համատեքստում է տեսաբաններն իրավաչափորեն պնդում են, որ ազատության սահմանափակման փոփոխումը զուգորդվում է դաստիարակչական-պատժողական ազդեցության խստացմամբ, ինչով պայմանավորված՝ այն պատժի կատարման պրոգրեսիվ համակարգի մաս է կազմում³:

Դատապարտյալի բացասական վարքագծի հետևանքով պատժի խստացումը, հատկապես, ազատազրկման հետ չկապված, այլընտրանքային բնույթ կրող պատիժների դեպքում ողջամտորեն հիմնավորված է: Խնդիրն այն է, որ այլընտրանքային պատիժների, և մասնավորապես ազատության սահմանափակման դեպքում թեև պետության վերահսկողությունը պահպանվում է, սակայն պատժի նպատակների ապահովման հիմնական ընթացքն ընկած է անձի բարեխղճության վրա: Այսինքն՝ պատիժների այս տեսակի նշանակման պարագայում իրավակիրառը ելնում է այն համոզմունքից, որ դատապարտյալն ունի բարեխղճության այն մակարդակը, որի պայմաններում առանց հատուկ և խիստ հսկողության պատրաստակամ է կատարել դատական ակտի պահանջները:

Հետևաբար՝ եթե դատապարտյալը չարաշահում է այդ վստահությունը, այլ բան չի մնում քան այլընտրանքային պատժի փոխարինումն ավելի խիստ պատժատեսակով, որի կատարումն արդեն պետության բացառիկ իրավասության տիրույթում է:

Արդյունքում կարելի է եզրակացնել, որ ազատության սահմանափակման փոխարինումն ազատազրկմամբ, պատժի կատարման պրոգրեսիվ համակարգի տարր կազմելով, ուղղված է պատժի նպատակների իրագործմանը՝ հանցանք կատարած անձի նկատմամբ պատժողական քաղաքականության խստացման եղանակով:

II. Ազատության սահմանափակման փոխարինման իրավական հիմքերը.

ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը կար-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

զավորվում է ազատության սահմանափակման փոխարինման հարցը և սահմանում է, որ նախատեսված պատժից դատապարտյալի խուսափելու դեպքում այն փոխարինվում է ազատագրկմամբ՝ ազատության սահմանափակման 2 օրը հաշվարկելով ազատագրկման 1 օրվա դիմաց (...):»:

Հոդվածում տրված ձևակերպումը հնարավորություն է տալիս արձանագրել, որ ազատության սահմանափակման փոխարինման իրավական հիմքը դատապարտյալի՝ պատժից խուսափելն է:

Միաժամանակ, օրենսդիրը բացահայտել է «պատժից խուսափող» հասկացությունը և սահմանել. «Մույն հոդվածի իմաստով՝ պատժից խուսափող է համարվում այն դատապարտյալը, որը երկու և ավելի անգամ խախտել է դատարանի սահմանած արգելքը»:

Նկատի ունենալով այն, որ օրենսդիրը պատժից խուսափող է համարում ազատության սահմանափակմանը զուգահեռ կիրառվող արգելքները խախտող դատապարտյալին՝ նախ հարկ ենք համարում վերաբերելի մասով բացահայտել պարտականությունների քրեաիրավական բովանդակությունը և նշյալի համատեքստում քննարկել դրանց խախտման առնչությամբ ծագող որոշ իրավական խնդիրներ:

1) Տարբեր ժամանցային կամ այլ հաստատություններ այցելելու, ինչպես նաև որոշակի միջոցառումներ կազմակերպելու, մասնակցելու և այցելելու արգելք.

Այս արգելքի կատարման կապակցությամբ ծագող հնարավոր իրավական խնդիրների պարզաբանումը պահանջում է բացահայտել «միջոցառումներ» և «հաստատություն» եզրույթների քրեաիրավական նշանակությունը:

Իրավաբանական գրականությամբ միջոցառման եզրույթի ներքո հասկացվում են օրինակ, հասարակական-քաղաքական (հավաքներ, հանրահավաքներ, փողոցային երթեր, ցույցեր և այլն), մշակութային-զվարճալի (փառատոներ, մասնագիտական տոներ, ժողովրդական հանդիսություններ և այլն), ինչպես նաև սպորտային միջոցառումները (Օլիմպիական խաղեր, սպարտակիադաներ, ունիվերսիադաներ, տարբեր մարզաձևերի մրցումներ և այլն): «Հաստատություն» կարելի է համարել ինչպես պետական հիմնարկները, վարչական շենքերը այնպես էլ մասնավոր կազմակերպությունները, օրինակ՝ սրճարանները, մարզաարահները, խանութները և այլն:

Հաշվի առնելով, որ «հաստատություն» և «միջոցառում» տերմինների բացատրությունը չափազանց լայն և տարբերվող կարող է լինել՝ դատական ակտերում, օրենսդրական ձևակերպումների պարզ վկայակոչմամբ քննարկվող սահմանափակման նախատեսումը կարող է խնդրահարույց լինել՝ առաջ բերելով պատժի փոխարինման անհրաժեշտությունը:

տությունը:

Մասնավորապես՝ քննարկման առարկա դարձնելով որոշ դատական գործեր, որոնց շրջանակներում անձի նկատմամբ ազատության սահմանափակում է կիրառվել՝ դատարանները գերակշիռ դեպքերում օգտագործել են վերացական ձևակերպումներ: Մասնավորապես՝ թիվ **ԼԳ/0590/01/25** քրեական վարույթի շրջանակներում դատավճռով սահմանվել է հետևյալը. «Մեղադրյալ (...)–ին արգելել այցելել, մասնակցել, որոշակի միջոցառումների, առանց դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության փոխել բնակության վայրը»:

Կամ մեկ այլ՝ թիվ **ԱՎԳ-2/0143/01/25** վարույթով դատարանը վճռել է. «Նշանակված պատժի կրման ժամանակահատվածում (...)–ին արգելել՝

- այցելել տարբեր ժամանցային կամ այլ հաստատություններ, կազմակերպել, մասնակցել կամ այցելել որոշակի միջոցառումների, որտեղ հնարավորություն կունենա օգտագործել թմրանյութեր, կամ հոգեմետ նյութեր»:

Ընդ որում՝ իրավակիրառ գործընթացի ուսումնասիրության արդյունքում գերակշիռ դեպքերում այս սահմանափակման կիրառումը նման ձևակերպումներ է ստացել, ինչը, ըստ էության, պայմանավորված է տվյալ պատժատեսակի կիրառման կայուն փորձի բացակայությամբ:

Սակայն, դատական ակտերում այդպիսի ընդհանրական և վերացական ձևակերպումների օգտագործումը կարող է մի քանի բացասական հետևանքներ առաջացնել: Մի կողմից՝ այն կարող է դատապարտյալի իրավունքները չափազանց ինտենսիվ և անհիմն սահմանափակել, քանի որ «հաստատություններ» և «միջոցառումներ» տերմինների օգտագործմամբ կարող է տպավորություն առաջանալ, որ դատապարտյալը չի կարող այցելել սրճարաններ, մասնավոր կամ պետական հաստատություններ (գրասենյակներ, վարչական շենքեր, գրադարաններ և այլն), որպիսի պայմաններում վերջինիս իրավունքների սահմանափակման աստիճանը կարող է չափազանց ինտենսիվ լինել և կանխարգելիչ նպատակներ չհետապնդել այն համատեքստում, որ որոշ ժամանցի վայրեր այցելելը, հակառակը՝ կարող է դատապարտյալի դրական վարքագծի մասին վկայել:

Մյուս կողմից, նման ձևակերպումների պայմաններում սահմանափակման բնույթը կարող է անկանխատեսելի լինել դատապարտյալի համար՝ զրկելով վերջինիս իր վարքագծային թույլատրելի սահմանների մասին ամբողջական պատկերացում կազմելու հնարավորությունից: Արդյունքում՝ իրավակիրառողն անխուսափելիորեն կանգնելու է պատժատեսակի փոխարինման խնդրի առջև, քանի որ դատապարտյալը, անգամ դիտավորության

www.aradaradutyjournal.com

բացակայության պայմաններում, այս կամ այն կերպ խախտելու է արգելքները: Այլ կերպ՝ եթե դատապարտյալի համար որոշակի չէ, թե ինչ վարքագիծ է պետությունն իրենից ակնկալում, ենթադրվում է, որ վերջինս ի գորու չի լինի իր վրա դրված պարտականությունը պատշաճ կատարել, որը ոչ միայն չի հանգեցնի պատժի նպատակների իրագործմանը, այլև կարող է հանգեցնել դատապարտյալի իրավական դրության անհիմն խստացման:

Հենց այս պատճառով է, որ ՌԳ Գերագույն դատարանի Պլենումը իրավաչափորեն նշել է, որ դատարանների կողմից այսպիսի սահմանափակումը կիրառելիս դատավճռում պետք է հստակ սահմանվի, թե կոնկրետ ինչ միջոցառումների այցելությունն է արգելվում դատապարտյալին:

Մեր կարծիքով՝ միջոցառումներ և հաստատություններ այցելելու արգելքը պետք է խիստ անհատականացված լինի՝ բխելով ինչպես անձի, այնպես էլ՝ նրա կողմից կատարված արարքի առանձնահատկություններից: Օրինակ՝ եթե դատապարտյալի արարքն ընտանեկան ջերմ, հուզական կապը կորցնելու գործոնով է պայմանավորված եղել, ապա շատ անգամ ընտանեկան տոնակատարություններին մասնակցելը կարող է ոչ թե բացասական, այլ դրական ազդեցություն թողնել դատապարտյալի վրա: Նույնը կարող է վերաբերել նաև մշակութային, կրթական միջոցառումների մասնակցությանը: Մինչդեռ եթե դատարանը չի որոշակիացնում իր կողմից սահմանված արգելքների ցանկն ու սահմանները, ապա պատժի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը ստիպված է լինելու այսօրինակ միջոցառումներին մասնակցությունը ևս խախտում դիտարկել: Խոսքը, սակայն, վերաբերելի չէ այն դեպքերին, երբ դատապարտյալի կողմից կատարված հանցագործությունն ուղղակիորեն պահանջում է ընտանեկան կամ մշակութային միջոցառումների մասնակցության սահմանափակում:

Հետևաբար՝ նման սահմանափակումների կիրառման դեպքում հենց իրավակիրառողի շահերից է բխում հստակ սահմանել հաստատությունների և միջոցառումների այն ցանկը, որոնք արգելված են ազատության սահմանափակման ժամանակահատվածում՝ պատժի արդյունավետությունը բարձրացնելու և հետագայում դրա փոխարինման հավանականությունը նվազեցնելու նպատակով:

2) Բնակության վայրը փոխելու արգելքը.

Առաջին հայացքից համեմատաբար պարզ այս արգելքի կատարման շրջանակներում կարող են իրավական որոշ խնդիրներ առաջանալ:

Մասնավորապես՝ ՀՀ օրենսդրությամբ բացահայտվում է «մշտական բնակության վայր» հասկացությունը: Այն պարզաբանվում է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում, որի համաձայն. «(..) Մշտական

բնակության վայր (կացարան) է համարվում այն տարածքը, որտեղ բնակիչն ունի բնակվելու իրավունք, որը նա համարում և հայտարարում է որպես իր կացարան: Մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս անձը պարտավոր է յոթնօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել այն համայնքի տեղական ռեգիստրին, որտեղ գտնվում է նրա նոր կացարանը: Բնակիչը կարող է հաշվառվել միայն մեկ կացարանում (...):»:

Բնակության վայրի որոշումը ազատության սահմանափակման պարագայում խնդրահարույց չէ այն իմաստով, որ դատապարտյալի բնակության վայր պետք է համարել այն տարածքը, որը սահմանվել է դատարանի կողմից: Իսկ դատարանն իր հերթին պետք է հաշվի առնի ինչպես հանցանք կատարած անձի հաշվառման, այնպես էլ նրա մատնանշած վայրը, ինչպես նաև վերջինի՝ այնտեղ բնակվելը հավաստող փաստաթղթերը:

Փոխարենը՝ խնդրահարույց կարող է համարվել բնակության վայրի փոփոխման հարցը: «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի իմաստով բնակության վայրի փոփոխությունը, ըստ էության, հասկացվում է որպես կացարանի վերջնական փոփոխում մեկ այլ կացարանով: Մեր այս դատողությունը պայմանավորված է այն տրամաբանությամբ, որ նույն օրենքը միայն մշտական բնակության վայրի փոփոխման պարագայում է պարտադրում բնակչին յոթնօրյա ժամկետում համայնքի տեղական ռեգիստրին այդ մասին գրավոր տեղեկացնել: Այսինքն՝ առնվազն օրենքի տրամաբանությամբ բնակության վայրի ժամանակավոր փոփոխությունները (օրինակ՝ կարճ ժամանակահատվածով հանգստի մեկնելը և այլն) մշտական բնակության վայրի փոփոխում չի համարվում:

Համանման կարծիք է արտահայտել նաև Ի.Ե. Միշինը, ով նշել է, որ անձի բնակության վայրն այն տեղն է, որտեղ անձը գտնվում է մշտապես կամ առավելապես, իսկ անչափահաս երեխաների պարագայում բնակության վայրը նույնանում է իրենց օրինակյան ներկայացուցիչների բնակության վայրի հետ:

Սակայն, կարծում ենք, որ նշվածը բնակության վայրի հասկացության ներքո կարող է դիտարկվել միայն քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում, քրեաիրավական իմաստով այս հասկացությունը կարող է տարբերվող բովանդակություն ունենալ:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 39-րդ հոդվածով սահմանվում է բնակության վայրի փոփոխման կառուցակարգը, որի համաձայն՝ «Այն դեպքում, երբ դատարանը սահմանել է առանց դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի համաձայնության բնակության վայրը փոխելու արգելք, ապա դատապարտ-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

յալը բնակության վայրը փոխելու համար համա-
ձայնություն ստանալու նպատակով դիմում է Պրո-
բացիայի ծառայություն, որը դիմումն ստանալուց
հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում,
կայացնում է որոշում:

*Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված
դեպքում Պրոբացիայի ծառայությունը կարող է
թույլատրել դատապարտյալին փոխել բնակության
վայրը միայն բացառիկ հանգամանքների առկա-
յության դեպքում: Բացառիկ հանգամանքներ են
հանդիսանում դատապարտյալի ծանր հիվանդու-
թյունը և այլ վայրում բժշկական համապատաս-
խան օգնություն ստանալու անհրաժեշտությունը,
մերձավոր ազգականի մահը կամ ծանր հիվանդու-
թյունը, արտակարգ իրավիճակը, կրթություն ստա-
նալու կամ այլ վայրում աշխատանքի անցնելու
հիմքով բնակության այլ վայր տեղափոխվելու
անհրաժեշտությունը կամ այլ հանգամանքներ,
որոնք ողջամտորեն անհամատեղելի են տվյալ
վայրում պատժի կատարման հետ»:*

Քննարկվող կարգավորմամբ սահմանվում է
միայն պատժի պայմանների փոփոխության մե-
խանիզմները՝ բացառիկ պահանջներ ներկայաց-
նելով բնակության վայրի փոփոխությանը, սակայն
օրենսդրությամբ չի բացահայտում բնակության
վայրի փոփոխումն եզրույթը:

Արդյունքում՝ որոշակի տարրնկալում կարող է
առաջանալ այն հարցի շուրջ, թե որոշակի կար-
ճատև ժամանակահատվածով այլ վայրում բնակ-
վելու դեպքերը (օրինակ՝ մեկ-երկու օրով հանգստի
կամ այլ նպատակներով որևէ վայրում գիշերելը)
արդյոք հավասարեցված է բնակության վայրի փո-
փոխմանը և նման փոփոխության դեպքում վե-
րահսկողություն իրականացնող իրավասու մարմ-
նին տեղյակ չպահելը խախտում պետք է դիտար-
կել, թե՛ ոչ:

Կարծում ենք, որ քրեաիրավական իմաստով
բնակության վայրի փոփոխությանը պետք է տար-
բերվող մեկնաբանություն տալ և նույնիսկ մեկօրյա
փոփոխության դեպքում դատապարտյալը պետք է
ստանա վերահսկողություն իրականացնող իրա-
վասու մարմնի համաձայնությամբ:

Մեր այս դիրքորոշման հիմքում ընկած է մի
քանի դատողություն.

1) նախ՝ ազատության սահմանափակման
ժամանակահատվածում դատապարտյալի նկատ-
մամբ վերահսկողությունն իրականացվում է վերջի-
նիս բնակության վայրի Պրոբացիայի ծառայու-
թյան կողմից, հետևաբար՝ բնակության վայրից
տարբերվող որևէ այլ վայրում գիշերելու պարագա-
յում դատապարտյալի նկատմամբ չի կարող պատ-
շաճ վերահսկողություն իրականացվել: Այլ խոս-
քով՝ վերջինը կարող է վերահսկողությունից դուրս
մնալ:

2) Ավելին՝ եթե օրենքն այս դեպքում տարբե-

րակի փոփոխման՝ մշտական և ժամանակավոր
դեպքերը, ապա կարող է կանգնել մի խնդրի առջև,
երբ դատապարտյալը պարբերաբար կփոխի իր
բնակության վայրը տարաբնույթ պատճառաբա-
նություններով (մի դեպքում՝ հանգստի նպատակ,
մեկ այլ դեպքում՝ որևէ վայրում գիշերելու ցանկու-
թյան հիմքով և այլն), սակայն կպատճառաբանի
կարճատևությամբ, իսկ իրավասու մարմինը մի
կողմից պատշաճ հսկողություն չի կարողանա իրա-
կանացնել, մյուս կողմից խախտում արձանագրե-
լու հնարավորությունից կզրկվի: Այսինքն՝ բնակու-
թյան վայրի փոփոխությանը լայն մեկնաբանու-
թյուն տալը հնարավոր չարաշահումների իրական
պատճառ կարող է հանդիսանալ:

3) Բացի այդ, քրեակատարողական օրենսդ-
րությամբ բնակության վայրի փոփոխության նման
բարդացված ընթացակարգ նախատեսելով, ինչ-
պես նաև բնակության վայրի փոփոխումը բացա-
ռիկ հանգամանքների հետ կապելով՝ օրենսդիրն ի
ցույց է դնում դատարանի կողմից սկզբնապես հաս-
տատված բնակության վայրի հետ դատապարտ-
յալի կապի պահպանման կարևորությունը պատժի
կրման ընթացքում:

4) Վերջապես՝ քաղաքացիաիրավական կամ
վարչաիրավական իմաստով այս տերմինի օգ-
տագործման պարագայում, անհասկանալի կմնա
նման արգելքի նախատեսումը որպես պատիժ կամ
այն ուղեկցող տարր այն դեպքերում, երբ դատա-
պարտյալը հնարավորություն ունենա առանց հս-
կողություն իրականացնող իրավասու մարմնին
տեղեկացնելու և համաձայնությունն ստանալու
պարբերաբար այլ վայրերում գիշերել: Հատկապես
ազատության սահմանափակման դեպքում տվյալ
պատժատեսակն իր պատժիչ գործառույթն իրա-
կանացնում է կիրառվող պարտականությունների
միջոցով, հետևաբար՝ ենթադրվում է, որ վերական-
գնողական գործառույթին զուգահեռ արգելքները
պատժողական բնույթ ևս պետք է ունենան՝ սահ-
մանափակելով դատապարտյալի որոշակի խումբ
իրավունքները: «Բնակչության պետական ռեզ-
խտրի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում «բնա-
կության վայրի փոփոխում» եզրույթը մեկնաբանե-
լու պարագայում քննարկվող պարտականությունը
վերաձվում է ոչ թե քրեաիրավական-պատժողա-
կան, այլ վարչական-կազմակերպչական հարցի:

Հետևաբար՝ համակարգային մեկնաբանման
արդյունքում կարելի է եզրակացնել, որ քրեաիրա-
վական իմաստով «բնակության վայրի փոփոխում»
տերմինի օգտագործմամբ օրենսդիրը նկատի ունի
նաև ժամանակավոր՝ անգամ մեկ օր, բնակության
վայրից տարբերվող, այլ վայրերում գիշերելու դեպ-
քերը, ինչից ենթադրվում է, որ առանց վերահսկո-
ղություն իրականացնող իրավասու մարմնի համա-
ձայնության, բնակության վայրի ցանկացած փո-
փոխություն՝ նույնիսկ կարճատև, պետք է նշված

www.aradaradutyjournal.com

արգելքի խախտում դիտարկել:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ հարակից օրենքները տարբերվող մեկնաբանություն են տալիս «բնակության վայրի փոփոխություն» եզրույթին և դրա արդյունքում տարբերակումներ կարող են առաջանալ առնվազն դատապարտյալի համար, ուստի նպատակահարմար կլինի քննարկվող արտահայտությանը տալ քրեաիրավական բացատրություն՝ սահմանելով, որ

«Բնակության վայրի փոփոխություն պետք է համարել դատապարտյալի՝ դատարանի կողմից սահմանված հասցեի ցանկացած փոփոխություն»:

3) Որոշակի ժամեր տնից բացակայելու արգելք.

Սույն արգելքի նշանակմամբ պատժի կրման ընթացքում դատապարտյալին արգելվում է օրվա ընթացքում որոշակի ժամանակ բացակայել բնակության վայրից: Այն չի կարող պակաս լինել օրական 8 և չի կարող ավելի լինել օրական 12 ժամից:

Նկատի ունենալով, որ պատժատեսակի կատարումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով՝ այս արգելքի կապակցությամբ հնարավոր հանդիպող խախտումները ողջամտորեն կանխատեսելի են և այդպիսիք կարող են դիտարկվել դատարանի դատավճռով նախատեսված ժամանակահատվածում բնակության վայրում չգտնվելը (չվերադառնալը) կամ արգելված ժամանակահատվածում այն լքելը:

• Հարգելի հանգամանքների ուժով արգելքների խախտումը.

Այս, ինչպես նաև հողվածում նախատեսված այլ արգելքների խախտման պարագայում որոշակի առումով խնդրահարույց կարող են համարվել այն դեպքերը, երբ դատապարտյալը խախտում է արգելքները հարգելի հանգամանքների ուժով, կամ որոշակի անհրաժեշտությունից դրդված:

Մասնավորապես՝ կարող են լինել դեպքեր, երբ դատապարտյալը սեփական կամքից անկախ հանգամանքներով խախտում է դատական ակտի պահանջները, օրինակ՝ գիշերային ժամին բժշկական հաստատություն մեկնելու կարիք է առաջանում և/կամ օբյեկտիվ հնարավորություն չի լինում ժամանակին վերադառնալ բնակության վայր, ինչը ողջամտորեն պետք է խախտում չդիտարկվի, մինչդեռ օրենսդրական կարգավորումներից հակառակ պատկերն է ձևավորվում:

Ավելի կոնկրետ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասը որևէ բացառություն չի նախատեսում հարգելի հանգամանքների դեպքում սահմանված արգելքների խախտման առնչությամբ: Չուգահեռաբար, քրեակատարողական օրենսդրությամբ ևս խախտումները հարգելի համարելու ընթացակարգ սահմանված չէ, ինչից ենթադրվում է, որ եթե պատժի կրման ընթացքում դա-

տապարտյալի թույլ տված խախտումներից մեկը հարգելի հանգամանքների ուժով վրա հասած լինի, իսկ մյուսը ոչ, վկայակոչվածը չի խոչընդոտելու պատիժ կատարող մարմնին պատժի փոխարինման միջնորդություն ներկայացնել դատարան:

Նշվածը, սակայն, մեր գնահատմամբ իրավաչափ չի կարող համարվել: Խնդրին հարկ է պատժի փոխարինման իրավական նպատակների համատեքստում անդրադարձ կատարել: Մասնավորապես՝ ազատության սահմանափակումից խուսափելու պայմաններում այն ազատագրվմամբ փոխարինելու գործիքակազմը կիրառելի է հենց այն լույսի ներքո, որ դատապարտյալը դիտավորյալ չի պահպանում դատական ակտով սահմանված արգելքները, ինչը վկայում է դատապարտյալի ոչ պատշաճ վարքագծի մասին:

Այսինքն՝ իրավակիրառը դիմում է պատժի փոխարինմանը՝ խստացնելով դրա պայմանները, երբ ելնելով դատապարտյալի ոչ իրավաչափ վարքագծից, եզրակացնում է, որ պատժի նպատակներն ազատության պայմաններում չեն իրականացվում, որն էլ բխում է պատժի պրոգրեսիվ համակարգից: Մինչդեռ այն դեպքում, երբ դատապարտյալի կողմից պարտականությունների խախտումը ոչ կամային բնույթ է կրում, իսկ երբեմն կարող է որոշակի դրական վարքագծի հետևանք լինել, (օրինակ՝ ուշացել է, քանի որ ականատես է եղել ավտոմթարի և փորձել է օգնություն ցուցաբերել), պատժից խուսափելու կամ պատժի նպատակների իրականացման առնչությամբ խնդիրներ չեն կարող առաջանալ, հետևաբար՝ այդ հանգամանքը չի կարող պատժի փոխարինման իրավական հիմք դիտարկվել: Այլ խոսքով՝ պատժի փոխարինման իրավական հիմքը դատապարտյալի բացասական վարքագիծն է:

Հետևաբար՝ կարելի է եզրակացնել, որ պատժի կատարման պրոգրեսիվ բնույթից չի բխում արգելքների խախտման յուրաքանչյուր դեպքում պատժատեսակի փոխարինման անհրաժեշտությունը, մասնավորապես՝ փոխարինումը չպետք է տեղի ունենա այն դեպքում, երբ դատապարտյալը, հարգելի կամ հանրօգուտ հանգամանքներով պայմանավորված, զրկված է լինում դատարանի սահմանված արգելքները պահպանելու հնարավորությունից կամ դրանք դիտավորյալ չի պահպանում:

Հարգելի հանգամանքների պարագայում դատապարտյալը թեև արգելքների պահպանման տեսանկյունից փաստացի դրսևորում է անգործություն, սակայն նկատի ունենալով, որ անգործությունը բխում է իր պարտականությունները կատարելու կոնկրետ դեպքում արգելքները պահպանելու օբյեկտիվ անհնարինությունից, վկայակոչվածը ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի 10 կարգավորման համատեքստում չպետք է դատապարտյալի համար քրեաիրավական հետևանքներ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

առաջացնի: Չնայած նրան, որ քննարկվող նորմում անգործության դեպքում քրեական պատասխանատվության հարցը կարգավորվում է քրեական օրենսգրքով նախատեսված արարք կատարելու համատեքստում, գտնում ենք, որ պատժի կատարման փուլում դրսևորված անգործության պարագայում, անալոգիայի կիրառմամբ, նույն չափանիշները պետք է պահպանվեն:

Ինչ վերաբերում է հանրօգուտ հանգամանքների ուժով պարտականությունների չկատարմանը, ապա նման դեպքերում կարող է խոսք գնալ **ծայրահեղ անհրաժեշտության վիճակի** մասին, երբ պաշտպանվող շահերին վնաս է պատճառվում սպառնացող վտանգի կանխման նպատակով կամ **մրցակցող շահերի** պարագայում, երբ մի դեպքում դատապարտյալի վրա ընկած է դատարանի կողմից սահմանված արգելքների պահպանման պարտականություն, իսկ մյուս դեպքում իրավական ակտով գործողություն կատարելու պահանջ: Օրինակ՝ մի կողմից դատապարտյալը պարտավոր է ժամանակին բնակության վայր վերադառնալ, մինչդեռ մյուս կողմից կյանքի կամ առողջության համար վտանգավոր վիճակում գտնվող և ինքնապահպանության միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից զրկված անձին օգնություն ցույց տալու օրենսդրական պարտականություն ունի, որի պարագայում քրեական օրենքով պաշտպանվող շահերի միջև առկա է մրցակցություն և յուրաքանչյուր պարտականության չկատարման պարագայում կարող են քրեաիրավական հետևանքներ առաջանալ:

Նշված խնդրին անդրադարձել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն իր ԵԴ-1/0935/13/25 որոշմամբ: Մասնավորապես՝ ազատության սահմանափակումը որոշակի ժամկետով ազատագրված փոխարինելու վերաբերյալ միջնորդության քննության ընթացքում դատապարտյալը նշել է. *«Առաջին երկու խախտումները պայմանավորված են եղել աշխատանքով: Աշխատում է որպես շինարար: Աշխատանքից տուն վերադառնալիս խցանումների հանգամանքով պայմանավորված մի փոքր ուշացել է: Մի անգամ ուշացել է 7 րոպե, մյուս անգամ 25 րոպե, քանի որ նախատեսված ժամանակից ուշ է ավարտվել աշխատանքը (...):»*

Այս առնչությամբ դատարանը, մերժելով միջնորդությունը, նշել է. *«Միևնույն ժամանակ, Դատարանը արձանագրում է, որ կարող են առաջանալ տարատեսակ հանգամանքներ, որոնք իրենց օրյակտիվ բնույթով զրկեն անձին չխախտելու (պահպանելու) դատարանի դատավճռով սահմանված արգելքները: Դատարանը, գնահատման ենթարկելով այդ հանգամանքները, որպես երակետ պետք է ընդունի պատժի նպատակների նվաճման կամ դրանց շարունակական իրացման գաղափարը»:*

որ»:

Դատարանի վերլուծությունը, իրավաչափորեն, բխում է անձի իրավունքների պաշտպանության գաղափարից և նպատակային մեկնաբանման դաշտում է գտնվում, սակայն, կարծում ենք, որ նման մեկնաբանությունը հարկ է ամրապնդել օրենսդրական հիմքերով:

Կիսելով դատարանի պատճառաբանությունը՝ գտնում ենք, որ օրենսդրական ուղիղ հիմքերի բացակայությունը կարող է առաջ բերել դատավորից դատավոր տարբերվող մեկնաբանություններ, որոնք էլ կարող են հանգեցնել միատեսակ պրակտիկայի բացակայության: Ավելին՝ հարգելի հանգամանքների դեպքում խախտման փաստը չարձանագրվելու հնարավորությունը շատ ավելի օրենսդրական, քան մեկնաբանողական հարց է:

Ուստի խուսափելու համար տարբերվող մեկնաբանություններից, որոնք կարող են հղում կատարել օրենքի ձևակերպումներին, առավել նպատակահարմար կլինի օրենսդրական փոփոխություններ իրականացնել՝ ուղիղ նախատեսելով նման բացառություն:

• Դատարանի կողմից սահմանված արգելքների քանակական հատկանիշը.

Իրավակիրառ պրակտիկայում տարրնկալումներ է առաջացնում դատապարտյալի կողմից թույլ տրված խախտումների քանակը, որը բավարար է դատապարտյալին պատժից խուսափող դիտարկելու համար:

Օրենսդրական կարգավորմամբ պատիժ խուսափող է համարվում այն դատապարտյալը, ով **«երկու և ավելի անգամ»** խախտել է դատական ակտով իր վրա դրված պարտականությունները:

Մինչդեռ «երկու և ավելի» տերմինը որոշակի երկիմաստություն է առաջացնում, մասնավորապես՝ մի կողմից ենթադրվում է, որ երկու խախտման փաստն արդեն իսկ բավարար է դատապարտյալին պատժից խուսափող համարելու հարցում՝ նկատի ունենալով, որ չի օգտագործվում «երկուսից ավելի» արտահայտությունը, մյուս կողմից «և» շաղկապը ենթադրում է երկու պայմանների միաժամանակյա առկայություն:

Ընդ որում՝ ՀՀ քրեական օրենսգրքում միաժամանակ օգտագործվում է ինչպես «երկու և ավելի», այնպես էլ՝ «երկու կամ ավելի» արտահայտությունները: Օրինակ՝ օրենսգրքում «պարբերաբար» տերմինը բնորոշվում է որպես նույնաբնույթ արարքը **երկու կամ ավելի անգամ** կատարելով՝ կամ հանցակցության հասկացությունը սահմանելիս օրենսդիրն այն բնութագրում է որպես քրեական պատասխանատվության ենթակա **երկու կամ ավելի անձանց** դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը¹¹: Նույն ձևակերպումն օգտագործվում է նաև հանցագոր-

ծությունների բազմակիության դեպքում¹³ Քրեական օրենսգրքի Հատուկ մասում ևս ձևակերպումը հենց այս կերպ է օգտագործվում, օրինակ՝ անգգուշությանը երկու կամ ավելի անձանց կյանքից զրկելու հանցակազմը, ինչպես նաև այլ դեպքեր :

Որոշ դեպքերում, սակայն, օգտագործվում է նաև «երկու և ավելի» արտահայտությունը, օրինակ՝ ի թիվս քննարկվող դեպքի, նաև՝ ՀՀ քրեական օրենսգրքի 60-րդ, 119-րդ, 120-րդ, 251-րդ, 464-րդ և 525-րդ հոդվածներում: Նշված օրինակներում ևս ընդունված է համարել, որ նախատեսված առաջին պայմանի առկայությունը բավարար է պահանջը հաղթահարված համարելու համար:

Արդյունքում՝ ստեղծվում է մի իրավիճակ, երբ Քրեական օրենսգրքում օգտագործվում են երկու տարբեր ձևակերպումներ, որոնք փաստացի միևնույն միտքն արտահայտելու նպատակ ունեն:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ «Նույն նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացության կամ տերմինի բովանդակությունը տարբեր իմաստներով կրկնվելու դեպքում կիրառվում է հասկացության կամ տերմինի այն բովանդակությունը, որը բխում է տվյալ իրավական ակտի էությունից կամ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի սկզբունքներից»:

Օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար քվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, եթե իրավական ակտում՝

1) նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ,և և կամ ,ու և շաղկապով բաժանված պայմաններով, կամ (...):

Եթե նորմատիվ իրավական ակտում քվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, ապա չի կարող կիրառվել «կամ» շաղկապը:

Նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար քվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի կամ քվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը, եթե իրավական ակտում՝

1) նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, կամ (...)

Եթե նորմատիվ իրավական ակտում քվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի առկայությունը, ապա չի կարող կիրառվել «և» կամ «ու» շաղկապը, կամ դրանք չեն կարող բաժանվել ստորակետով կամ կետադրական այլ նշանով:

Վկայակոչված կարգավորումների ուսումնասիրությամբ կարելի է արձանագրել, որ նորմատիվ իրավական ակտերում «և» շաղկապի օգտագործմամբ կապակցված երկու պայմանների միաժամանակյա առկայություն է անհրաժեշտ, փոխարենը՝ երբ օգտագործվում է «կամ» շաղկապը, ապա

պայմաններից որևէ մեկը բավարար է պահանջը հաղթահարված համարելու համար:

Հետևաբար՝ առնվազն «Նորմատիվ իրավական ակտերի» մասին ՀՀ օրենքի տրամաբանությունից բխում է, որ ազատության սահմանափակման փոխարինման հարցը լուծելիս դատապարտյալի կողմից թույլ տրված երկու խախտումը չի կարող բավարար համարվել դատապարտյալին պատժից խուսափող համարելու հարցում:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ օրենսդիրը միևնույն բովանդակությունն արտահայտելու նպատակով երկու տարբեր տերմիններ է օգտագործում՝ կարծում ենք, որ օրենսգրքում օգտագործվող տերմինների միասնականությունն ապահովելու, ինչպես նաև այդ ձևակերպումները մեկնաբանման կանոններին համապատասխանեցնելու նպատակով առավել ողջամիտ կլինի օրենսդրական փոփոխություն իրականացնել և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածում օգտագործել երկու կամ ավել արտահայտությունը:

• Պատժի կատարման վերահսկողության պահանջների խախտումը.

ՀՀ քրեական օրենսգրքի դատապարտյալի բացասական վարքագծի «չափման միավոր» է համարում միայն դատական ակտով նախատեսված արգելքների չկատարումը, մինչդեռ պատժի կատարման փուլում դատապարտյալի ոչ իրավաչափ կամ բացասական վարքագծի մասին կարող է վկայել նաև վերահսկողության շրջանակներում դատապարտյալի վրա դրված պարտականությունների կատարումից խուսափելը և:

Մասնավորապես՝ օրենսդրական կարգավորումների ուժով ազատության սահմանափակումից խուսափող է համարվում այն դատապարտյալը, ով խախտում է բացառապես դատարանի կողմից սահմանված արգելքները, մինչդեռ հնարավոր են իրավիճակներ, երբ դատապարտյալը արգելքների խախտում թույլ չի տալիս, օրինակ՝ պահպանում է ժամային սահմանափակումները, չի փոխում բնակության վայրը, կամ չի այցելում դատական ակտով արգելված հաստատություններ, սակայն խախտում է վերահսկողության պարտադիր պայմանները, ինչպես օրինակ՝ հրաժարվում է կրել էլեկտրոնային սարքերը կամ չի թույլատրում Պրոբացիայի ծառայության աշխատակիցներին իր բնակության վայր մուտք գործելը և այլն:

Այսպես՝ ազատության սահմանափակման կատարման ժամանակահատվածում Պրոբացիայի ծառայության իրավունքները և գործառնությունները սահմանված են ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 39-րդ հոդվածով, որի համաձայն՝ «Պրոբացիայի ծառայողն իրավունք ունի այցելելու դատապարտյալի բնակության վայր (բացառիկ դեպքերում՝ դատապարտյալի նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտու-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյունից ելնելով՝ նաև գիշերային ժամերին), նրան կանչելու Պրոբացիայի ծառայություն, ստանալու գրավոր կամ բանավոր պարզաբանումներ, բնակության, ուսման կամ աշխատանքի վայրից, կրթական հաստատությունից պահանջելու և ստանալու պատժի կատարման համար անհրաժեշտ՝ դատապարտյալի վարքագծի վերաբերյալ տեղեկություններ:

Դատապարտյալի հետ համատեղ բնակվող անձինք պարտավոր են չխոչընդոտել պրոբացիայի ծառայողի գործունեությունը: Վերահսկողություն իրականացնող պրոբացիայի ծառայողը պետք է հնարավորինս խուսափի դատապարտյալի հետ համատեղ բնակվող անձանց անհանգստություն պատճառելուց:

Ազատության սահմանափակման կատարումն իրականացվում է էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ»:

Ստացվում է, որ ազատության սահմանափակման ի կատար ածման պարտադիր տարր է կազմում ոչ միայն դատապարտյալի կողմից դատական ակտով սահմանված արգելքների պահպանումը, այլև վերահսկողության մաս կազմող այլ գործողությունների իրականացումը, օրինակ՝ էլեկտրոնային հսկողության միջոցների կրումը, Պրոբացիայի ծառայության աշխատակցի պահանջով գրավոր կամ բանավոր պարզաբանումներ տալը, իրականացվող այցելություններին չխոչընդոտելը և այլն: Հետևաբար՝ դատապարտյալին պետք է բացասական բնութագրի նաև նշյալ գործողությունների իրականացմանը խոչընդոտելը, դրանց կատարումից ապօրինի հրաժարվելը կամ խուսափելը:

Ընդ որում՝ ուշադրության է արժան այն, որ Լեհաստանի քրեական օրենսգրքով ազատության սահմանափակման ժամանակահատվածում որպես պարտականություն կարող է նախատեսվել նաև պատժի ընթացքի վերաբերյալ բացատրություններ ներկայացնելը¹⁵, ինչից ենթադրվում է, որ Լեհական օրենսդրությամբ բացատրություններ ներկայացնելը կամ դրանից հրաժարվելն այն աստիճան կարևոր է համարվում, որ պարտականությունների մակարդակով է նախատեսված և հետևաբար՝ դրա չկատարումը կարող է առաջացնել անցանկալի հետևանքների դատապարտյալի համար:

Չուգահեռաբար, ՌԳ քրեակատարողական օրենսդրությամբ ազատության սահմանափակման կարգի և պայմանների խախտում է համարվում դատապարտյալի՝ առանց հարգելի պատճառի չներկայանալը քրեակատարողական տեսչություն՝ հաշվառման նպատակով, դատապարտյալի՝ առանց հարգելի պատճառի չներկայանալը քրեակատարողական տեսչություն՝ վերջինիս կանչով, պատժի, կրթությանը վերաբերող հարցերի շուրջ

բանավոր կամ գրավոր բացատրություններ տալու համար, դատապարտյալի՝ առանց հարգելի պատճառի չներկայանալը քրեակատարողական տեսչություն՝ գրանցման նպատակով և այլն:

Միաժամանակ, ազատության սահմանափակումից չարամիտ խուսափող է ճանաչվում այն դատապարտյալը, ով հրաժարվել է իր նկատմամբ կիրառվող տեխնիկական հսկողության և վերահսկման միջոցներից :

Հետևաբար՝ միջազգային վերաբերելի փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է այն մասին, որ դատապարտյալի այնպիսի գործողությունները, որոնք ուղղված են պատժի կատարման կարգի խախտմանը վկայում են դատապարտյալի բացասական վարքագծի մասին ուստի պետք է պատժից խուսափելու հատկանիշներ պարունակեն:

Իրականացված վերլուծության համատեքստում կարելի է արձանագրել, որ պատժի կատարման ընթացքում դատապարտյալի իրավահպատակ, օրինական վարքագծի մասին է վկայում ոչ միայն վերջինիս կողմից արգելքների պահպանումը, այլև պատժի կատարման ռեժիմին ենթարկվելը, հետևաբար՝ չի կարող տրամաբանական համարվել, երբ որոշակի ժամեր բնակության վայրից ուշանալը խախտում է դիտարկվում և որպես հետևանք պատժի փոխարինման է հանգեցնում, իսկ, օրինակ՝ էլեկտրոնային սարքը փչացնելը կամ դրա կրումից հրաժարվելը՝ ոչ:

Ուստի գտնում ենք, որ պատժի փոխարինման հարց պետք է բարձրացվի ոչ միայն արգելքների խախտման, այլև վերահսկողությունից խուսափելու դեպքերում:

Միաժամանակ, քանի դեռ օրենսդրորեն նման ուղղակի կարգավորումներ նախատեսված չեն, դատարանները գրկված են տվյալ խախտումներին արձագանքելու հնարավորությունից: Մասնավորապես՝ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը ազատության սահմանափակումը որոշակի ժամկետով ազատագրկմամբ փոխարինելու միջնորդության հիմքում դրել է դատապարտյալի կողմից էլեկտրոնային սարքը կտրելու և դրա հետագա կրումից հրաժարվելու հանգամանքը, ինչի կապակցությամբ դատարանը հետևյալ մեկնաբանությունն է կատարել. «Ինչպես ներկայացված միջնորդությամբ, այնպես էլ դրան կից նյութերում առկա չէ որևէ փաստական տվյալ այն մասին, որ դատապարտյալ (...) խախտել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2025 թվականի փետրվարի 13-ի թիվ ԵԳ-1/2065/01/23 դատավճռով սահմանված վերը նշված արգելքը:

Ինչ վերաբերում է ներկայացված միջնորդությամբ դատապարտյալի նկատմամբ իրականացված վերահսկողության ընթացքում վերջինիս կողմից դրսևորված վարքագծի վերաբերյալ հետևու-

www.ardadatuynjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյուններին, Դատարանը կրկնում է, որ ազատության սահմանափակման ձևով նշանակված պատժից դատապարտյալի խուսափելու դեպքում այն փոխարինվում է ազատագրկմամբ ոչ թե ազատության սահմանափակման ձևով նշանակված պատժի կրման ընթացքում ենթադրարար ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու պայմաններում, այլ այն դեպքում, երբ դատապարտյալը երկու և ավելի անգամ խախտում է Դատարանի սահմանած կոնկրետ արգելքը, ինչը տվյալ դեպքում բացակայում է»:

Ստացվում է, որ մի կողմից դատապարտյալն ակնհայտ ոչ իրավաչափ վարքագիծ է դրսևորում՝ հրաժարվելով նույնիսկ նվազագույն վերահսկողական պահանջներին ենթարկվելուց, մյուս կողմից դատապարտյալի այդօրինակ բացասական վարքագծին դատարանն արձագանքելու գործիքակազմ չունի, ինչը առնվազն չի բխում պատժի նպատակների իրագործման տրամաբանությունից և արդյունավետ վերահսկողության մաս չի կազմում:

Հետևաբար՝ կարծում ենք, որ «պատժից խուսափող» եզրույթը պետք է ենթարկել օրենսդրական շտկումների՝ ներառելով նաև վերահսկողության պարտադիր պահանջներին ենթարկվելուց հրաժարվելու դեպքերը:

Վերջապես, ամփոփելով ազատության սահմանափակման փոխարինման կապակցությամբ իրականացված վերլուծությունները՝ գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասն օրենսդրական փոփոխման և լրացման կարիք ունի:

Առավել նպատակահարմար կլիներ նորմը հետևյալ կերպ շարադրվել. «Սույն հոդվածի իմաստով՝ պատժից խուսափող է համարվում այն դատապարտյալը, որը երկու կամ ավելի անգամ առանց հարգելի պատճառների խախտել է դատարանի սահմանած արգելքը կամ քրեակատարողական օրենսդրությամբ նախատեսված վերահսկողության պարտադիր պահանջը»:

Եզրակացություն

Ամփոփելով կատարված վերլուծությունները՝ հարկ ենք համարում արձանագրել հետևյալը.

1) Հաշվի առնելով, որ ազատության սահմանափակման նշանակմամբ կիրառվող տարբեր ժամանցային կամ այլ հաստատություններ այցելելու, ինչպես նաև որոշակի միջոցառումներ կազմակերպելու, մասնակցելու և այցելելու արգելքը չափազանց լայն և բովանդակային կարող է ընկալվել՝ դատական ակտերում օրենսդրական ձևակերպման պարզ վկայակոչումը, այս արգելքի նախատեսումը կարող է մի կողմից դատապարտյալի իրավունքները չափազանց ինտենսիվ և անհիմն սահմանափակվել, մյուս կողմից՝ սահմանափակման բնույթը կարող է անկանխատեսելի լինել դատապարտյալի համար: Հետևաբար՝ քննարկվող արգ-

ելքի կիրառման դեպքում իրավակիրառողի շահերից է բխում հստակ և որոշակի սահմանել հաստատությունների և միջոցառումների այն ցանկը, որոնք այցելելն արգելված է ազատության սահմանափակման ժամանակահատվածում՝ պատժի արդյունավետությունը բարձրացնելու և հետագայում դրա փոխարինման հնարավորությունը նվազեցնելու նպատակով:

2) Առանց վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության, դատապարտյալի բնակության վայրի ցանկացած՝ նույնիսկ ժամանակավոր փոփոխություն, պետք է դատարանի կողմից բնակության վայրը փոխելու արգելքի խախտում դիտարկել: Միաժամանակ, տարրնկայումներից խուսափելու նպատակով առավել նպատակահարմար կլինի քննարկվող արտահայտությանը տալ քրեաիրավական բացատրություն՝ սահմանելով. «Բնակության վայրի փոփոխություն պետք է համարել դատապարտյալի՝ դատարանի կողմից սահմանված հասցեի ցանկացած փոփոխություն»:

3) ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասը որևէ բացառություն չի նախատեսվում պատժատեսակի նշանակմամբ կիրառվող արգելքները հարգելի հանգամանքների հետևանքով խախտելու վերաբերյալ, ինչը, սակայն, իրավաչափ չի կարող համարվել: Գտնում ենք, որ փոխարինումը չպետք է տեղի ունենա այն դեպքում, երբ դատապարտյալը գրկված է լինում կամ դիտավորյալ չի պահպանում դատարանի սահմանած արգելքները՝ հարգելի կամ հանրօգուտ հանգամանքներով պայմանավորված:

4) Պատժի կատարման ընթացքում դատապարտյալի իրավահպատակ, օրինական վարքագծի մասին է վկայում ոչ միայն վերջինիս կողմից ազատության սահմանափակման նշանակմամբ կիրառվող արգելքների պահպանումը, այլև վերահսկողության պահանջներին ենթարկվելը՝ էլեկտրոնային սարքեր կրելը և այլն: Հետևաբար՝ պատժի փոխարինման հարց պետք է բարձրացվի ոչ միայն արգելքների խախտման, այլև վերահսկողությունից խուսափելու դեպքերում:

5) Արդյունքում՝ առավել նպատակահարմար ենք համարում ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասը հետևյալ կերպ շարադրվել. «Սույն հոդվածի իմաստով՝ պատժից խուսափող է համարվում այն դատապարտյալը, որը երկու կամ ավելի անգամ առանց հարգելի պատճառների խախտել է դատարանի սահմանած արգելքը կամ քրեակատարողական օրենսդրությամբ նախատեսված վերահսկողության պարտադիր պահանջը»:

www.aradaradatumjournal.com

- ¹ Տե՛ս Կաչևսկիյ Ե.Մ. Российская прогрессивная система исполнения уголовных наказаний/ Московский гос. ун-т им. М.В. Ломоносова. Москва: Городец, 2007. էջ 237.
- ² Տե՛ս Տաևո՛վ Ա.Բ. - Прогрессивная система исполнения лишения свободы и ее отражение в новом законодательстве Республики Казахстан. Астана, 2004. էջ 22.
- ³ Տե՛ս Կաչևսկիյ Ե.Մ. - Российская прогрессивная система исполнения уголовных наказаний. “Городец”, 2007. էջ 52-53.
- ⁴ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մաս:
- ⁵ О практике назначения судами Российской Федерации уголовного наказания: Постановление Пленума Верховного Суда РФ от 22 декабря 2015 г. № 58 // Российская газета. 2015. № 295:
⁶ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=30962247438377200:
- ⁷ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741158045:
- ⁸ О практике назначения судами Российской Федерации уголовного наказания : Постановление Пленума Верховного Суда РФ от 22 декабря 2015 г. № 58 // Российская газета. 2015. № 295:
- ⁹ Տե՛ս Միշին Ի.Ե., К вопросу о некоторых проблемах при реализации прав граждан на выбор места жительства // Молодой ученый, 2017, №38. էջ 82 – 86:
- ¹⁰ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ Անգործությամբ կատարված արարքը քրեական պատասխանատվություն է առաջացնում, եթե անձը տվյալ իրադրությունում կարող էր կատարել իր պարտականությունը:
- ¹² Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետ:
- ¹³ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մաս:
- ¹⁴ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանցագործությունների բազմակիություն է համարվում միևնույն անձի կողմից երկու կամ ավելի հանցանք կատարելը:
- ¹⁵ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ, 172-րդ, 184-րդ, 243-րդ, 342-րդ և այլ հոդվածներում:
- ¹⁵ Տե՛ս [https://www.unodc.org/cld/uploads/res/uncac/LegalLibrary/Poland/Laws/Criminal%20Code%20\(Poland\).pdf](https://www.unodc.org/cld/uploads/res/uncac/LegalLibrary/Poland/Laws/Criminal%20Code%20(Poland).pdf) հոդված 34:
- ¹⁶ Տե՛ս https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_12940/50174ca8ee7b727ab752f22dd75f402fce54837d/ հոդված 58:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք., (05.05.2021), Միաս. կայք 2021.05.17-2021.05.30 Պ.Հ 27.05.2021:
2. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրք (15.06.2022), Միաս. կայք 2022.06.27-2022.07.10 Պ.Հ 29.06.2022:
3. Мишин И.Е. К вопросу о некоторых проблемах при реализации прав граждан на выбор места жительства // Молодой ученый, 2017, №38:
4. О практике назначения судами Российской Федерации уголовного наказания: Постановление Пленума Верховного Суда РФ от 22 декабря 2015 г. № 58 // Российская газета. 2015. № 295:
5. Скаков А.Б. - Прогрессивная система исполнения лишения свободы и ее отражение в новом законодательстве Республики Казахстан. Астана, 2004:
6. Կաչևսկիյ Ե.Մ. Российская прогрессивная система исполнения уголовных наказаний/ Московский гос. ун-т им. М.В. Ломоносова. Москва: Городец, 2007.
7. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=27303072741158045.
8. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=30962247438377200.
9. https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_12940/50174ca8ee7b727ab752f22dd75f402fce54837d/
10. [https://www.unodc.org/cld/uploads/res/uncac/LegalLibrary/Poland/Laws/Criminal%20Code%20\(Poland\).pdf](https://www.unodc.org/cld/uploads/res/uncac/LegalLibrary/Poland/Laws/Criminal%20Code%20(Poland).pdf)

References

1. Hayastani Hanrapetowt'yan qreakan o'rensgirq., (05.05.2021), Mias. kayq 2021.05.17-2021.05.30 P.H 27.05.2021.
2. Hayastani Hanrapetowt'yan qreakataroghakan o'rensgirq (15.06.2022), Mias. kayq 2022.06.27-2022.07.10 P.H 29.06.2022.
3. Mishin I.E., K voprosu o nekotoryh problemah pri realizacii prav grazhdan na vybor mesta zhitel'stva // Molodoj uchenyj, 2017, №38.
4. O praktike naznachenija sudami Rossijskoj Federacii ugolovnogogo nakazaniya: Postanovlenie Plenuma Verhovnogo Suda RF ot 22 dekabrja 2015 g. № 58 // Rossijskaja gazeta. 2015. № 295:
5. Skakov A.B. - Progressivnaja sistema ispolnenija lishenija svobody i ee otrazhenie v novom zakonodatel'stve Respubliki Kazahstan. Astana, 2004.
6. Tkachevskij Ju.M. Rossijskaja progressivnaja sistema ispolnenija ugolovnyh nakazaniy/ Moskovskij gos. un-t im. M.V. Lomonosova. Moskva: Gorodec, 2007.

Анаит Аракелян
Аспирант кафедры Уголовное право, ЕГУ,
преподаватель, адвокат

РЕЗЮМЕ

Правовые последствия неисполнения запретов, налагаемых на лицо при ограничении свободы

Статья посвящена правовым последствиям неисполнения запретов, установленных при назначении альтернативного вида наказания - ограничения свободы - предусмотренного Уголовным кодексом Республики Армения. В статье раскрывается сущность прогрессивной системы исполнения наказания и, в данном контексте, представляется правовая цель ужесточения наказания вследствие негативного поведения осужденного.

В рамках исследования рассматривается вопрос о том, посещение каких заведений, а также организация каких мероприятий или участие в них запрещены осужденному в процессе отбывания наказания. В статье также обсуждается необходимость законодательного определения понятия «смена места жительства»), а также правовые последствия неисполнения установленных судом запретов в случае уважительных обстоятельств или уклонения от обязательных требований контроля в процессе отбывания наказания.

По результатам анализа предлагается пересмотреть часть 8 статьи 64 Уголовного кодекса РА, внедрив более полное определение понятия «лицо, уклоняющееся от наказания».

Ключевые слова: ограничение свободы, замена наказания, прогрессивная система исполнения наказания, досуговое или иное заведение, смена места жительства, обязательное требование контроля, запрет налагаемый на лицо, уважительное обстоятельство.

Anahit Arakelyan
PhD student and at the department of Criminal law, YSU,
lecturer, attorney at law

SUMMARY

Legal consequences of non-compliance with the restrictions imposed under restriction of liberty

The article is devoted to the legal consequences of non-compliance with the restrictions imposed during the implementation of “restriction of liberty” - an alternative sanction provided for by the Criminal Code of the Republic of Armenia. The article reveals the essence of the progressive system of punishment execution and, in this context, presents the legal objective of tightening the punishment as a result of the convict’s negative behavior.

Within the scope of the research, reference is made to the circumstances regarding which institutions the convict is prohibited from visiting, and which events they are prohibited from organizing or participating in during the service of the sentence. The article also discusses the necessity of a legislative definition for the concept of “change of residence,” as well as the legal consequences of non-compliance with court-imposed restrictions due to valid circumstances or evading mandatory supervision requirements during the punishment process.

Based on the results of the analysis, it is proposed to revise Article 64, Part 8 of the RA Criminal Code by introducing a more comprehensive and complete definition of the concept of “punishment evader.”

Key words: restriction of liberty, substitution of punishment, progressive system of punishment execution, leisure or other institution, change of residence, mandatory supervision requirement, restriction imposed on a person, valid circumstance.

Բնագիրը ներկայացվել է 15.04.2026թ.
Ընդունվել է տպագրության 27.04.26թ.

ՈՒՒԲԻՆԱ ՄԵԻԹԱՐՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարության միջազգային
իրավական համագործակցության վարչության պետ,
ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի քրեական
իրավունքի ամբիոնի ասպիրանտ

**ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՀԱԿԱՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՁԻ
ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՅՄԱՆ
ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Վերասոցիալականացումը պատժի նպատակ դիտարկելու պարագայում քրեակատարողական հիմնարկների առջև դրվում է որոշակի խնդիր՝ ապահովել անձի մեկուսացումը հասարակությունից՝ կատարված հանցանքին համահունչ, միաժամանակ անձի հետ տանել այնպիսի աշխատանքներ, որոնց արդյունքում նա կվերադառնա հասարակություն՝ դրսևորելով օրինապահ վարքագիծ: Նշված խնդիրների համաժամանակյա առկայությունն ինքնին հակասական, իսկ իրացվելիությունը ոչ միանշանակ է ընկալվում: Այս հիմնախնդիրն է նվիրված սույն հոդվածը, որտեղ վերլուծության են ենթարկվում քրեակատարողական հիմնարկներում վերասոցիալականացման ապահովման հետ կապված մարտահրավերները:

Հիմնաբառեր - քրեակատարողական հիմնարկներ, վերասոցիալականացում, նորմալիզացիա:

Ներածություն

Քրեակատարողական հիմնարկները՝ որպես ազատությունից զրկելու հետ կապված պատժի կատարումն ապահովող հաստատություններ, առաջին հերթին դիտարկվում են որպես անձին մեկուսացնելու և որոշակի սահմանափակ պայմաններում պահելու տեսանկյունից: Չուզահեռաբար, դատապարտյալների հետ քրեակատարողական հիմնարկներում տարվող վերսացիալականացման աշխատանքների արդյունքում ակնկալվում է, որ անձը կվերադառնա հասարակություն՝ արդեն իսկ ինտեգրված և պատրաստ իրավահպատակ վարքագիծ դրսևորելուն: Սակայն հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկներին բնորոշ առանձնահատկությունները, այդ թվում՝ դրա փակ բնույթը և բազմաթիվ սահմանափակումներ՝ հարց է առաջանում, թե արդյոք վերասոցիալականացումն իսկապես հնարավոր է ազատագրկման ձևով պատիժ նշանակելու դեպքում:

Խնդիրն ավելի է խորանում այն դեպքում, երբ քրեակատարողական հիմնարկը ոչ միայն չի կարողանում ապահովել անձի վերասոցիալականացումը, այլ հակառակը՝ անձը հիմնարկից դուրս է գալիս հանցավոր վարքագծի դրսևորման տեսանկյունից առավել արդյունավետ հմտություններով:

Վերոգրյալի համատեքստում սույն հոդվածում անդրադարձ է կատարվում քրեակատարողական միջավայրի հակասականությանը, երբ նպատակը ինքնուրույն կյանք վարող, օրինապահ քաղաքացի ձևավորելն է, սակայն որպես միջոց ընտրված է անձին մեկուսացման պայմաններում պահելը՝ վերլուծելով հակասականության կոնկրետ

դրսևորումներ և լուծման հնարավոր ուղղություններ:

Հետազոտության մեթոդաբանությունը
Հոդվածի շրջանակներում հետազոտությունն իրականացվել է առավելապես դոկտրինալ և համեմատական-իրավական մեթոդներով, ուսումնասիրվել են օրենսդրական ակտեր, գիտական գրականություն, ինչպես նաև եվրոպական երկրների օրենսդրություն: Գիտական գրականությունից հավաքագրված տվյալները դիտարկվել են ամբողջության մեջ, մեջբերված դատողություններն առանձին վերլուծվել են, ներկայացվել են դրանց առնչությամբ հեղինակի դիտարկումները, ամփոփվել են առաջարկների տեսքով:

Հետազոտության արդյունքներ և քննարկում
Պատմականորեն պետությունները հանցանք կատարած անձանց մեկուսացրել են հասարակությունից երկու հիմնական նպատակով՝ ապահովելու հասարակության անվտանգությունը և «ուղեղելու» անձին:

Հատկապես այն դեպքում, երբ վերասոցիալականացումն է դիտվում որպես պատժի նպատակ, որը բացի անձի հետ վարքագծային փոփոխությանն ուղղված աշխատանքներից ենթադրում է նաև հասարակությունում վերաինտեգրվելուն և օրինապահ վարքագիծ դրսևորելուն համապարփակ աջակցություն (այդ թվում՝ մասնագիտական ուսուցում, աշխատանքի ապահովում և այլն), քրեակատարողական հիմնարկների պայմաններում դրա իրականացումը առաջացնում է մի շարք մարտահրավերներ: Ըստ էության պետությունը փորձում է ձևավորել ինքնուրույն, պատասխանատու և

օրինապահ քաղաքացի՝ նրան պահելով այնպիսի արհեստական միջավայրում, որն ի սկզբանե ձևավորված է անձի ինքնուրույնությունը ճնշելու և սոցիալական կապերից զրկելու տրամաբանությամբ, համընդհանուր վերահսկողության ներքո:

Թերևս ակնհայտ է, որ քրեակատարողական հիմնարկները շատ հաճախ ունենում են հակառակ ազդեցություն: Այսինքն՝ անձը հիմնարկից դուրս է գալիս ոչ թե վերասոցիալականացված, այլ հակառակը՝ որոշ հանցանքների կատարման մեջ առավել հմտացած կամ առնվազն հանցավոր վարքագծի արդյունավետության ամրապնդված վճռակալությամբ: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ հանձնարարականի նախաբանում ևս հղում է կատարվում հետազոտությունների, և արձանագրվում է, որ ազատությունից զրկումը հաճախ ունի բացասական հետևանքներ և չի ապահովում անձանց վերականգնումը:

Ուստի կարևոր է իրատեսական լինել դատապարտյալի վերասոցիալականացման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության ապահովման համատեքստում քրեակատարողական միջավայրի խնդիրների տեսանկյունից:

Առհասարակ քրեակատարողական հիմնարկների առնչությամբ առկա են տարբեր քննադատություններ, որոնք հիմնականում արտահայտվում են հետևյալ ուղղություններով.

- քրեակատարողական հիմնարկը բավարար չափով «ուղղիչ» չէ, այլ խոսքով քրեակատարողական «տեխնիկան» լիովին ձևավորված չէ և գտնվում է սաղմնային վիճակում,

- էությամբ «ուղղիչ» քրեակատարողական հիմնարկը պատժողական տեսանկյունից թույլ է և տնտեսական առումով կրկնակի սխալ՝ դրա բարձր ծախսի և դեղիկվենտ վարքի վերացման անկարողության պատճառով²:

Այսինքն՝ առաջին գաղափարի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկները չեն կարողանում կատարել հանցանք կատարած անձանց վերասոցիալականացման իրենց պարտականությունը, ուստի արդյունքում ստացվում է, որ պետության քաղաքականությունը բացառապես պատժողական է, և անձը պարզապես որոշակի ժամկետով պահվում է անազատության մեջ, հետագայում ազատվում և շարունակում ապրել իր չփոփոխված արժեհամակարգով և վարքային շեղվող դրսևորումներով: Սա, ինչպես նշվեց, հնարավոր սցենար է, սակայն անհրաժեշտ է նաև գնահատել, օրինակ, եվրոպական զարգացած երկրների քրեակատարողական հիմնարկներում ձևավորված մշակույթը և դրա արդյունքում՝ կրկնահանցավորության նվազումը, ինչը վկայում է այն մասին, որ ամեն դեպքում քրեակատարողական հիմնարկներում հնարավոր է ունենալ ձևավորված կայուն հա-

մակարգ, որը կատարում է վերասոցիալականացման իր գործառույթը:

Ինչ վերաբերում է հաջորդ ուղղությանը, ապա այն արտացոլում է քրեակատարողական հիմնարկների առնչությամբ առկա հակասականությունը՝ ընդհուպ մինչև պնդելով, որ «ուղղիչ» էություն ունեցող քրեակատարողական հիմնարկում պատժողական գործառույթ չի իրականացվում: Այս մոտեցումն արդարացված չի կարող լինել այն պարագայում, երբ քրեակատարողական հիմնարկն իրապես իրականացնում է իր «ուղղիչ» (վերասոցիալականացման) գործառույթը, քանի որ վերասոցիալականացման գործընթացի վերջնարդյունքում հասարակություն է վերադարձվում նրա լիիրավ անդամ, ով հետևում է հասարակությունում ընդունված նորմերին և կանոններին, և կրիտիկական իրավիճակում չի ընտրում շեղվող վարքագիծ:

Այս համատեքստում հատկանշական է, որ քրեակատարողական հիմնարկների մասին խոսելիս դրանք հաճախ ընկալվում են որպես պարզապես պատժի կատարման վայրեր, որտեղ անձինք պետք է կրեն զրկանքներ: Փաստացի, ի լրումն մարդասիրության սկզբունքի, մի կողմ է մղվում նաև այն, որ հիմնարկներում անձինք իրականացնում են իրենց կենսագործունեությունը, արթնանում են, գիրք կարդում, մարզվում, աշխատում, ունեն իրենց հետ համատեղ բնակվող անձինք, ստեղծագործում են և այլն: Նման պայմաններում անխուսափելիորեն ձևավորվում է համայնք, առկա են մարդկային տարբեր հարաբերություններ և շփումներ, վարքագծային փոփոխություններ: Այս տեսանկյունից էական է, որ քրեակատարողական հիմնարկներում ապահովվի նաև դատապարտյալների հետ պատշաճ աշխատանքների իրականացումը, որպեսզի ազատվելուց հետո նրանք կարողանան շարունակել իրենց կենսագործունեությունը, ինչը հավասարապես կարևոր է հենց հասարակության համար:

Խնդրո առարկայի հետ են կապված նաև քրեակատարողական հիմնարկում քրեական ենթամշակույթի առկայությամբ պայմանավորված մարտահրավերները: Մասնավորապես՝ եթե քրեակատարողական հիմնարկի վարչակազմը չկարողանա ապահովել պատշաճ անվտանգություն կամ անձին ցուցաբերել անհրաժեշտ օգնություն, առավել հավանական է քրեական ենթամշակույթ կրող դատապարտյալների ազդեցության տարածումը, այդպիսով՝ վերասոցիալականացման գործընթացի ձախողումը:

Հարկ է նշել սակայն, որ ներկայում քրեակատարողական հիմնարկում անվտանգության ապահովման առնչությամբ կան տարբեր մոտեցումներ, ինչպիսին է «դինամիկ անվտանգության» մոդելը, որի պայմաններում անվտանգության աշխատակիցները ծանոթ են դատապարտյալների խնդիրներին և կարիքներին, իսկ նրանց և դատապարտյալ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ների միջև հարաբերությունները կրում են կառուցողական բնույթ:

Սակայն որքան էլ նշված հարաբերությունները լինեն կառուցողական, քրեակատարողական հիմնարկներում երկար ժամանակահատվածով գտնվելն ինքնին անձանց ժամանակավորապես անկարող է դարձնում արդեն ազատության մեջ կառավարելու առկա առօրյա կյանքի որոշակի տարրեր: Այն պայմանավորված է քրեակատարողական հիմնարկի բնույթով, սահմանված հստակ կանոնակարգով, ինչը տեղ չի թողնում անձանց որոշումների կայացման կամ այլ կերպ ինքնադրսևորման: Ուստի անհրաժեշտ է, որ դատապարտյալների հետ տարվող աշխատանքներն ուղղված լինեն ոչ թե «լավ դատապարտյալի», այլ ինքնուրույն անհատի ձևավորմանը:

Քրեակատարողական հիմնարկում գտնվելն ինքնին ունի իրեն բնորոշ որոշակի սահմանափակումներ, որոնք բացասաբար են ազդում անձի վրա: Այսպես, տեսության մեջ հայտնի է Սայքսի կողմից առանձնացված՝ ազատագրկման հետ կապված հինգ հիմնական սահմանափակումներ կամ գրկանքներ («pains of imprisonment»)՝ ազատության, սպրանքների ու ծառայությունների կորուստ, հակառակ սեռի հետ հարաբերությունների կորուստ, ինքնուրույնության և անվտանգության կորուստ⁴:

Կարծիք կա, որ ազատագրկված անձինք քրեակատարողական ռեժիմի պայմաններում անձնական պատասխանատվություն ստանձնելու խիստ սահմանափակ հնարավորություններ ունեն, ուստի քրեակատարողական հիմնարկը չի նախապատրաստում նրանց ազատվելուց հետո սեփական կյանքը տնօրինելուն: Մինչդեռ ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն կարող են ընձեռել քրեակատարողական միջավայրն առավելազույնս մոտեցնել արտաքին աշխարհի պայմաններին՝ գործընթացները դարձնելով ավելի արդյունավետ և ազատագրկված անձանց շրջանում խրախուսելով ինքնապատասխանատվությունն ու ինքնակատարելագործումը⁵:

Այս առումով հարկ է նշել, որ տեղեկատվական տեխնոլոգիաներին հասանելիության բացակայությունը քրեակատարողական հիմնարկներում ևս կարող է խորացնել առկա հակասականությունը: Հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացի տեմպերը՝ երկար ժամանակ քրեակատարողական հիմնարկում գտնվող, թվային գրագիտություն և տեղեկատվական տեխնոլոգիաներին հասանելիություն չունեցող դատապարտյալը նաև թվային առումով է մեկուսացվում, և ազատվելուց հետո բախվում ինտեգրման էական խնդիրների: Ուստի, վերասոցիալականացման միջոցառումները պետք է հասցեագրեն նաև այս ոլորտը:

Քրեակատարողական հիմնարկի սահմանափակումների մասին խոսելիս հարկ է անդրադառ-

նալ սկանդինավյան պետություններում առավել տարածված «նորմալիզացիայի» կամ «նորմալության» գաղափարին: Այն ենթադրում է, որ քրեակատարողական հիմնարկների պայմանները պետք է հնարավորինս մոտ լինեն ազատության մեջ կյանքին՝ հաշվի առնելով նաև այն հիմնարար գաղափարը, որ անձին ազատությունից զրկելն արդեն իսկ պատիժ է, և լրացուցիչ սահմանափակումներ նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է: Իհարկե արդեն իսկ հասկանալի է, որ քրեակատարողական հիմնարկները, միևնույնն է, չեն կարող համարժեք լինել հասարակությունում ապրելու պայմաններին, սակայն այս մոտեցումը մյուս կողմից կարող է նպաստել քրեակատարողական միջավայրի առանձնահատկությունների և վերասոցիալականացման միջև առկա հակասության չեզոքացմանը:

«Նորմալիզացիայի» գաղափարը ծագել է հոգեկան խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի համատեքստում, ապա կիրառվել է նաև ազատությունից զրկման ձևով պատիժ կրող անձանց նկատմամբ:

Այսպես, 20-րդ դարի երկրորդ կեսին Բենգտ Նիլյեն առաջինն էր, ով առաջ քաշեց հոգեկան խնդիրներ ունեցող անձանց պահման պայմանները հասարակությունում ապրելու ամենօրյա կենսապայմաններին հնարավորինս մոտեցնելու գաղափարը: Նա առանձնացնում էր կյանքի որոշակի ասպեկտներ, որոնք ենթակա էին «նորմալիզացիայի», այդ թվում՝ օրվա, շաբաթվա, տարվա կանոնակարգ, անհատի նկատմամբ հարգանք և ինքնադրսևորվելու իրավունք, սեռական օրինաչափություններ, միջավայրի օրինաչափություններ և չափանիշներ և այլն:

Նա, հակառակվելով իր ընդդիմախոսներին, որոնք գտնում էին՝ կյանքի ասպեկտների առանձնացումը հանգեցնում է ստանդարտացման, նշում էր, որ «նորմալիզացիան» պետք է հանգեցնի անհատականացման, այլ ոչ թե ստանդարտացման: Տեսության մեջ այս մոտեցումը զարգացվել է՝ առանձնացնելով «նորմալ կյանք» ապրելու համար անհրաժեշտ այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝ գործունեության համար անհրաժեշտ վայրի առկայություն, տեղական համայնքի կողմից առաջարկվող ամենին մասնակցելու կամ դրանից օգտվելու իրավունք, տնտեսական և նյութական չափանիշների առկայություն, որոնք թույլատրում են անձին անձամբ գնելու այն, ինչ անհրաժեշտ է, իրենց առօրյա կյանքի վրա ազդելու հնարավորություն և այլն⁶:

Փաստորեն՝ «նորմալիզացիան» ենթադրում է, որ անձը պետք է շարունակի մնալ հասարակության լիիրավ անդամ՝ չունենալով միայն այն հնարավորությունները, որոնք կապված են ազատագրկման հետ:

«Նորմալիզացիայի» սկզբունքի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է նախ ունենալ մի քանի կարևոր հարցի պատասխան: Այս համատեքստում տեսության մեջ արդարացիորեն առանձնացվում է հետևյալը՝ ի՞նչ է նշանակում «նորմալ կյանք» հասարակության մեջ, և քրեակատարողական հիմնարկում կյանքի ո՞ր ասպեկտները պետք է «նորմալիզացվեն» և ի՞նչ եղանակներով: Ընդգծվում է, որ տարբեր պետություններում առկա են տարբեր արժեքներ և չափանիշներ, ուստի «նորմալիզացիայի» վերաբերյալ ցանկացած ուսումնասիրություն պետք է համապատասխանեցվի տվյալ երկրի ընդհանուր քրեակատարողական և սոցիալական կոնտեքստին:

Վերջին պնդմամբ ակներև է տարբերություններում սոցիալական տարբերությունների առկայությունը, երբ, օրինակ, մեկ պետության քրեակատարողական հիմնարկը, որին համահունչ է տվյալ պետության «նորմալ» կենսապահովումը, կարող է ճիստություն թվալ մեկ այլ պետության հասարակության անդամների համար: Իհարկե այստեղ դեր են խաղում նաև տվյալ հասարակությունում առկա պատկերացումները պատժի և վերասոցիալականացման մասին:

Այնուամենայնիվ, նշված հարցերը ակնհայտ են դարձնում քրեակատարողական հիմնարկների տարատեսակ հակասություններ, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկում երբ են ակնկալվում այնպիսի պայմաններ, ինչպիսիք՝ ազատության մեջ, իսկ որ դեպքում՝ ոչ:

Այս հիմնահարցի օրինակ է բժշկական ծառայությունների մատուցումը, մասնավորապես՝ արդյոք «նորմալ» է ազատությունից զրկված անձանց համար բժշկական ծառայություններից օգտվելու նույն սակագները սահմանել, ինչ ազատության մեջ գտնվողների համար, թե՛ հակառակը՝ ապահովել անվճար բուժօգնության հնարավորություն: Առաջին հայացքից հավասար պահանջներ ապահովելը բխում է քրեակատարողական հիմնարկում ազատության մեջ առկա նույն պայմանները ապահովելու ձգտումից, սակայն այն հաշվի չի առնում ազատությունից զրկված անձանց բնորոշ խոցելիությունները:

Իհարկե առհասարակ անհրաժեշտ է, որ քրեակատարողական հիմնարկները ընդգրկվեն հանրային առողջապահական համակարգում՝ ապահովելով առնվազն այն անվճար ծառայությունները, որոնք անձը կստանար ազատության մեջ:

Սակայն մյուս կողմից՝ հասարակության համար անընկալելի կարող է թվալ հանցանք կատարած անձանց մատուցվող մնացած արտոնությունների սահմանում: Ուստի քրեակատարողական հիմնարկներում առհասարակ նմանատիպ արտոնությունների սահմանումը կարող է բախվել հասարակական դիմադրության, ինչը պայմանավորված է

պատմականորեն արմատացած այն պատկերացմամբ, որ քրեակատարողական հիմնարկում կենսապայմանները պարտադիր զիջեն ազատ և օրինապահ ամենախոցելի քաղաքացու կենսապայմաններին: Սակայն «նորմալիզացիան» պահանջում է հրաժարվել այս մոտեցումից՝ հաշվի առնելով մնացած պայմաններում դատապարտյալների վերասոցիալականացման, և ըստ այդմ՝ հասարակության անվտանգության ապահովման արդյունավետությունը:

«Նորմալության» սկզբունքի մեկ այլ կողմ ևս կա. ինչպես է դատապարտյալը պատկերացնում «նորմալ» կյանքը, որը մեկ անգամ ևս փաստում է, որ այս սկզբունքը կարող է լինել սուբյեկտիվ, և գործնականում դրա կիրառումը ոչ միանշանակ կարող է ընկալվել:

Այսպես՝ Ֆինլանդիայի բաց քրեակատարողական հիմնարկների դատապարտյալների շրջանում կատարված հարումների արդյունքներով վեր է հանվել նորմալության երեք նարրատիվ.

- 1) «նոստալգիկ» նորմալություն, որը հավասարակշռում է ազատագրվման և բնականոն կյանքի ընթացքի խզումը,
- 2) երևակայական նորմալություն, որն ուրվագծում է ապագան,
- 3) նորմալության վերաբերյալ ընդվզող հայացքներ, որոնց պարագայում թեև այն շարունակում է առկա լինել, սակայն իրավական և համընդհանուր ընդունված նորմերը կասկածի տակ են դրվում:

Այսինքն՝ առաջին նարրատիվի դեպքում անձի համար բնականոն է համարվում իր՝ մինչև ազատագրվման դատապարտվելն ունեցած կյանքին վերադարձը, երկրորդ դեպքում՝ այն ապագան և իրենց երազանքներն են, իսկ երրորդ դեպքում այն կրկին պարունակում է որոշակի նոստալգիկ տարրեր, սակայն անձը նորմալության մեջ ներառում է նաև հասարակությունում ընդունված կանոններին հակասող նորմեր (օրինակ՝ թմրանյութերի օգտագործում): Ակնհայտ է, որ վերջին դեպքում անձի հետ պետք է տանել նաև թիրախային հոգեբանական աշխատանքներ՝ նրա ընկալումներում «նորմալ կյանք»-ի վերափոխման համար, որի արդյունքում անձը հետագայում ինքնուրույն որոշում կկայացնի հրաժարվելու հանցավոր վարքագծից:

Ինչպես հայտնի է, քրեակատարողական հիմնարկները սահմանափակ հնարավորություններ են տալիս անձին՝ ինքնուրույն որոշումներ կայացնելու: Ուստի «նորմալիզացիայի» սկզբունքը պահանջում է նաև քրեակատարողական հիմնարկներում ապահովել անձի ինքնուրույնության լայն հնարավորություններ: Հակառակ պարագայում նա ենթագիտակցաբար հավատում է, որ իր որոշումներից ոչինչ կախված չէ, և երբ հայտնվում է ազատության մեջ, չի արդարացնում նախաձեռնող վարքագիծ

www.aradaradutyjournal.com

դրսևորելու վերաբերյալ հասարակության ակնկալիքը (օրինակ՝ գտնել աշխատանք, վարձել բնակարան, վճարել հարկեր և այլն)՝ ի վերջո կրկին հակված լինելով շեղվող վարքագծի:

Այն ենթադրում է, օրինակ, իր մասնավոր տարածքի զգացում, այդ թվում՝ սեփական խցի բանալի ունենալը, դրանում լուսավորության կառավարումը կամ այլ դատապարտյալների հետ համատեղ ստեղծագործական աշխատանքը: «Նորմալիզացիայի» ապահովմամբ հայտնի, նորվեգական «Հալդեն» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալները, օրինակ, նշել են, որ իրենց խցերից ազատորեն դուրս գալու և վերադառնալու, լուսավորությունը կարգավորելու և խցի պատերին անձնական լուսանկարներ փակցնելու հնարավորությունները համատեղ օգնել են իրենց տարածքում ստեղծել մասնավոր կյանքի և նորմալության զգացում¹¹:

Վերասոցիալականացման գործընթացի արդյունավետության տեսանկյունից կարևոր են նաև հիմնարկի կառուցվածքային առանձնահատկությունները, ուստի քրեակատարողական հիմնարկներում անհրաժեշտ է, օրինակ, շփումների համար նախատեսված հատվածներ, խցերի առավել հարմարավետ կառուցվածք, արտադրական տարածքներ և այլն: Սա հավասարապես վերաբերում է դինամիկ անվտանգության ապահովման կառուցվածքային պայմանների նախատեսմանը, այդ թվում՝ խցերի և անվտանգության աշխատակիցների սենյակների միջև հնարավորինս սահմանափակ պատնեշների առկայությանը, թափանցիկության տարրերի ապահովմանը և այլն:

Հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկների և ազատության մեջ առկա պայմանների հնարավորինս մոտեցնելու ձգտումը, կամ այլ կերպ՝ «նորմալիզացիայի» սկզբունքի կիրառումը, վերասոցիալականացման տեսանկյունից կունենա դրական ազդեցություն:

Հատկանշական է, որ այս սկզբունքը այս կամ այն կերպ իր արտացոլումն է ստացել նաև միջազգային իրավական տարբեր փաստաթղթերում: Այսպես.

Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ վերանայված կանոնների (Մանդելայի կանոններ)¹² 3-րդ կանոնի համաձայն՝ ազատագրվումը և այլ միջոցները, որոնք հանգեցնում են անձի մեկուսացմանը արտաքին աշխարհից, արդեն իսկ տառապանք են պատճառում հենց այն փաստով, որ անձին զրկում են ազատությունից և ինքնորոշման իրավունքից: Հետևաբար, քրեակատարողական հիմնարկը չպետք է ավելորդ կերպով ծանրացնի նման իրավիճակին բնորոշ տառապանքը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա հիմնավորված է մեկուսացման անհրաժեշտությամբ կամ կարգապահության պահպանմամբ:

Մանդելայի 5-րդ կանոնի 1-ին կետի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը պետք է ձգտի նվազեցնել քրեակատարողական հիմնարկում և ազատության մեջ կյանքի ցանկացած տարբերություն, որոնք նվազեցնում են դատապարտյալների պատասխանատվությունը կամ նրանց արժանապատվությունը: Այս համատեքստում խոսվում է նաև ֆիզիկական, հոգեկան կամ այլ հաշմանդամություն ունեցող անձանց համար խելամիտ պայմանների ապահովման մասին:

Մանդելայի կանոնները նաև շեշտադրում են ազատագրված անձանց՝ պարբերաբար առավել կարևոր նորություններին տեղեկացվելու (63-րդ կանոն), գրադարանից օգտվելու (64-րդ կանոն) և այլ հնարավորությունների մասին, ինչը ևս նպատակ ունի անձանց համար ապահովելու ազատության մեջ կյանքին հնարավորինս համարժեք պայմաններ: Իսկ 99-րդ կանոնն ընդգծում է, որ քրեակատարողական հիմնարկներում աշխատանքի կազմակերպումն ու մեթոդները պետք է հնարավորինս նման լինեն հիմնարկներից դուրս առկա համանման աշխատանքին, որպեսզի ազատագրված անձինք նախապատրաստվեն բնականոն մասնագիտական կյանքի:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն¹³ և շեշտել է, որ քրեակատարողական հիմնարկում կյանքը պետք է կազմակերպվի այնպես, որ հնարավորինս մոտ լինի համայնքային կյանքի իրողություններին («նորմալիզացիայի» սկզբունք):

Քրեակատարողական միջավայրի հսկասահ կանությունը կապվում է նաև անձի՝ վերասոցիալականացման գործընթացներին մասնակցելու մոտիվացիային: Առաջին հերթին, հանցավոր ճանապարհն ընտրելու գործոններից մեկը կարող է լինել անձի՝ որոշակի մասնագիտություն կամ աշխատանք չունենալու փաստը, ինչը ենթադրում է, որ քրեակատարողական հիմնարկն իր վրա է վերցնում պարտավորություն՝ հիմնարկի սահմանափակ պայմաններում անձին շահագրգռել ստանալու նոր մասնագիտություն կամ ներգրավվելու այս կամ այն աշխատանքում: Բացի այդ, երբեմն դատապարտյալները կարող են, օրինակ, պայմանական վաղաժամկետ ազատման նպատակով պարզապես մասնակցել տարատեսակ միջոցառումների (շաշկու, շախմատի, մրցաշար, մարզական մրցաշար և այլն), ինչը կկրի ձևական բնույթ և չի ունենա բովանդակային, դրական ազդեցություն վերասոցիալականացման վրա:

Բացի այդ, թեև հայտնի է քրեակատարողական հիմնարկներում կրթական ծրագրերին մասնակցության դրական ազդեցությունը կրկնահանցագործության կանխման վրա¹⁴, սակայն իրատեսական է, որ բարի մտադրություններ ունեցող մասնագետների հետ դրվագային շփումը մի քանի շաբաթվա կամ, լավագույն դեպքում, մի քանի ամսվա

ընթացքում, կարող է անբավարար լինել չեզոքացնելու մի ամբողջ կյանքի ընթացքում կուտակված բացասական հակումները :

Ուստի կրթական և սոցիալական բնույթի միջոցառումները կրկին պետք է համակցված լինեն անձի հետ հոգեբանական ակտիվ աշխատանքների, այդ թվում՝ կոգնիտիվ-վարքաբանական թերապիայի իրականացմամբ, որպեսզի ունենան որոշակի դրական ազդեցություն անձի վերասոցիալականացման համար:

Եզրակացություն

Քրեակատարողական համակարգի արդի մարտահրավերների համապարփակ վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ քրեակատարողական միջավայրին բնորոշ սահմանափակումների և վերասոցիալականացման էության միջև հակասությունները վերացնելու հիմնական ճանապարհը քրեակատարողական միջավայրի վերափոխումն է, որի արդյունքում անձի մեկուսացումը միտված չէ նրա չեզոքացմանը կամ սոցիալական դեգրադացիային:

Այլ խոսքով՝ թեև քրեակատարողական հիմնարկում ազատագրվման էությունը անձի մեկուսացումն է հասարակությունից և նրա կենսագործունեության վերահսկումը, այն կարող է նաև ապահովել այնպիսի հնարավորություններ, որոնք միտված կլինեն տրամագծորեն հակառակ՝ անձին դեպի հասարակություն կյանքի լիարժեք պատ-

րաստելու նպատակին, կտվորեցնեն անձին լինել համայնքի մի մասը, ունենալ սեփական տարածքը, նպատակները, օրակարգը, հետաքրքրությունները, մասնագիտությունն ու աշխատանքը:

Այս իմաստով դատապարտյալի վերասոցիալականացման գործընթացի արդյունավետությունը կապված է քրեակատարողական հիմնարկի պայմաններում անձի ինքնուրույնության խթանման և «նորմալիզացիայի» սկզբունքի գործնական կիրառման հետ: Ուստի անհրաժեշտ է քրեակատարողական հիմնարկում ապահովել հասարակության կյանքին համարժեք պայմաններ, զերծ մնալ այն սահմանափակումներից, որոնք չեն բխում անձի ռիսկայնությունից, ինչպես նաև հնարավորություններ ստեղծել անձի՝ որոշումների կայացման ունակությունը զարգացնելու համար: Այն ենթադրում է նաև ընդհանուր առմամբ քրեակատարողական հիմնարկի պատժիչ-հսկողական գործառույթից անցում դեպի դինամիկ անվտանգության համակարգ, որտեղ անձնակազմի և դատապարտյալների միջև կառուցողական փոխհարաբերությունները դառնում են անվտանգության և վերասոցիալականացման նախադրյալ:

¹ Տե՛ս Recommendation Rec(2003)22 of the Committee of Ministers to member states on conditional release (parole), հասանելի է՝ <https://search.coe.int/cm?i=09000016805df03f>, ընդունվել է 2003 թվականի սեպտեմբերի 17-ին, վերջին պայցելություն՝ 2026 թվականի ապրիլի 6:

² Տե՛ս Koulouris K. N., Foucault’s seven universal maxims of the good “penitentiary condition” and the warehousing prison in Greece: distancing, deregulation and denial as determinants of the relation between the punitive procedure and the penitentiary technique, p. 1802, հասանելի է՝ http://crime-in-crisis.com/en/wp-content/uploads/2017/06/85-KOULOURIS-KOURAKIS-FS_Final_Draft_26.4.17.pdf, հրատարակման ամսաթիվ՝ 2017 թվականի հունիսի 13, վերջին պայցելություն՝ 2026 թվականի ապրիլի 6:

³ Տե՛ս Goffman E., Asylums, Essays on the Social Situation of Mental Patients and Other Inmates, Penguin Books, 2022, քք. 12-13.

⁴ Տե՛ս McKendy L., Ricciardelli R., The Pains of Imprisonment and Contemporary Prisoner Culture in Canada, The Prison Journal, 2021, Sage Publications, p. 529.

⁵ Տե՛ս McDougall C., Pearson D.A.S., Technology as a Means of rehabilitation: A Measurable Impact on Reducing Crime, The Palgrave Handbook of International Cybercrime and Cyberdeviance, (editors: Holt T.J., Bossler A.M.) 2020, p. 184.

⁶ Տե՛ս De Vos, H., Beyond Scandinavian Exceptionalism. Palgrave Studies in Prisons and Penology, Palgrave Macmillan, Cham., 2023, p. 2.

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 3:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 10:

⁹ Տե՛ս De Vos, H., նույն տեղում, էջ 24:

¹⁰ Տե՛ս Villman E., Narratives of normality: Finnish prisoners envisioning their future, Punishment and Society, 2023, p. 93.

¹¹ Տե՛ս Engstrom, K. V., Ginneken, E. F. J. C. van, What is ethical prison architecture?: An exploration of prison design and wellbeing, Prison Service Journal, 2023(267), p. 33.

www.aradaradutyjournal.com

¹² Տե՛ս The United Nations Standard Minimum Rules for the Treatment of Prisoners (the Nelson Mandela Rules), ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 17-ին, հասանելի է՝ https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/Nelson_Mandela_Rules-E-book.pdf, վերջին այցելություն՝ 2026 թվականի ապրիլի 6:

¹³ Տե՛ս Recommendation Rec(2003)23 of the Committee of Ministers to Member States on the Management by Prison Administrations of Life Sentence and other Long-Term Prisoners, հասանելի է՝ <https://pjp-eu.coe.int/documents/41781569/42171329/CMRec+%282003%29+23+on+the+management+of+life+sentence+and+other+long+term+prisoners.pdf/bb16b837-7a88-4b12-b9e8-803c734a6117> ընդունվել է 2003 թվականի հոկտեմբերի 9-ին, վերջին այցելություն՝ 2026 թվականի ապրիլի 6:

¹⁴ Տե՛ս Golgher, A. B., Souza, R. G. d., & Silva, B. F. A. d., Associations between prison recidivism and working and educational experiences during deprivation of liberty. *Revista Brasileira de Segurança POblica*, 18(2), 2024, p. 216.

¹⁵ Տե՛ս McSweeney T., Hough M., Supporting offenders with multiple needs: Lessons for the “mixed economy” model of service provision, *Criminology & Criminal Justice* 6(1), 2006, p. 117.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. De Vos, H., *Beyond Scandinavian Exceptionalism*. Palgrave Studies in Prisons and Penology, Palgrave Macmillan, Cham., 2023.
2. Engstrom, K. V., Ginneken, E. F. J. C. van, *What is ethical prison architecture?: An exploration of prison design and wellbeing*, *Prison Service Journal*, 2023(267), pp. 29-37.
3. Goffman E., *Asylums, Essays on the Social Situation of Mental Patients and Other Inmates*, Penguin Books, 2022.
4. Golgher, A. B., Souza, R. G. d., Silva, B. F. A. d., Associations between prison recidivism and working and educational experiences during deprivation of liberty. *Revista Brasileira de Segurança POblica*, 18(2), 2024, pp. 214-23.
5. Koulouris K. N., Foucault’s seven universal maxims of the good “penitentiary condition” and the warehousing prison in Greece: distancing, deregulation and denial as determinants of the relation between the punitive procedure and the penitentiary technique, p. 1802, հասանելի է՝ http://crime-in-crisis.com/en/wp-content/uploads/2017/06/85-KOULOURIS-KOURAKIS-FS_Final_Draft_26.4.17.pdf, հրատարակման ամսաթիվ՝ 2017 թվականի հունիսի 13, վերջին այցելություն՝ 2026 թվականի ապրիլի 6:
6. McDougall C., Pearson D.A.S., *Technology as a Means of rehabilitation: A Measurable Impact on Reducing Crime*, *The Palgrave Handbook of International Cybercrime and Cyberdeviance*, (editors: Holt T.J., Bossler A.M.) 2020, pp. 185-204.
7. McKendy L., Ricciardelli R., *The Pains of Imprisonment and Contemporary Prisoner Culture in Canada*, *The Prison Journal*, 2021, Sage Publications, pp. 528-552.
8. McSweeney T., Hough M., Supporting offenders with multiple needs: Lessons for the “mixed economy” model of service provision, *Criminology & Criminal Justice* 6(1), 2006, pp. 107-125.
9. Recommendation Rec(2003)23 of the Committee of Ministers to Member States on the Management by Prison Administrations of Life Sentence and other Long-Term Prisoners, հասանելի է՝ <https://pjp-eu.coe.int/documents/41781569/42171329/CMRec+%282003%29+23+on+the+management+of+life+sentence+and+other+long+term+prisoners.pdf/bb16b837-7a88-4b12-b9e8-803c734a6117> ընդունվել է 2003 թվականի հոկտեմբերի 9-ին, վերջին այցելություն՝ 2026 թվականի ապրիլի 6:
10. Recommendation Rec(2003)22 of the Committee of Ministers to member states on conditional release (parole), հասանելի է՝ <https://search.coe.int/cm?i=09000016805df03f>, ընդունվել է 2003 թվականի սեպտեմբերի 17-ին, վերջին այցելություն՝ 2026 թվականի ապրիլի 6:
11. The United Nations Standard Minimum Rules for the Treatment of Prisoners (the Nelson Mandela Rules), ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 17-ին, հասանելի է՝ https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/Nelson_Mandela_Rules-E-book.pdf, վերջին այցելություն՝ 2026 թվականի ապրիլի 6:
12. Villman E., *Narratives of normality: Finnish prisoners envisioning their future*, *Punishment and Society*, 2023, pp. 80-98.

References

1. De Vos, H., *Beyond Scandinavian Exceptionalism*. Palgrave Studies in Prisons and Penology, Palgrave Macmillan, Cham., 2023.
2. Engstrom, K. V., Ginneken, E. F. J. C. van, *What is ethical prison architecture?: An exploration of prison design and wellbeing*, *Prison Service Journal*, 2023(267), pp. 29-37.
3. Goffman E., *Asylums, Essays on the Social Situation of Mental Patients and Other Inmates*, Penguin Books, 2022.
4. Golgher, A. B., Souza, R. G. d., Silva, B. F. A. d., Associations between prison recidivism and working and educational experiences during deprivation of liberty. *Revista Brasileira de Segurança POblica*, 18(2), 2024, pp. 214-23.
5. Koulouris K. N., Foucault’s seven universal maxims of the good “penitentiary condition” and the warehousing prison in Greece: distancing, deregulation and denial as determinants of the relation between the punitive procedure and the penitentiary technique, p. 1802, published on June 13, 2017, available at: http://crime-in-crisis.com/en/wp-content/uploads/2017/06/85-KOULOURIS-KOURAKIS-FS_Final_Draft_26.4.17.pdf, last accessed: April 6, 2026.

6. McDougall C., Pearson D.A.S., Technology as a Means of rehabilitation: A Measurable Impact on Reducing Crime, The Palgrave Handbook of International Cybercrime and Cyberdeviance, (editors: Holt T.J., Bossler A.M.) 2020, pp. 185-204.

7. McKendy L., Ricciardelli R., The Pains of Imprisonment and Contemporary Prisoner Culture in Canada, The Prison Journal, 2021, Sage Publications, pp. 528-552.

8. McSweeney T., Hough M., Supporting offenders with multiple needs: Lessons for the “mixed economy” model of service provision, Criminology & Criminal Justice 6(1), 2006, pp. 107-125.

9. Recommendation Rec(2003)23 of the Committee of Ministers to Member States on the Management by Prison Administrations of Life Sentence and other Long-Term Prisoners, adopted on October 9, 2003, available at: <https://pjp-eu.coe.int/documents/41781569/42171329/CMRec+%282003%29+23+on+the+management+of+life+sentence+and+other+long+term+prisoners.pdf/bb16b837-7a88-4b12-b9e8-803c734a6117>, last accessed: April 6, 2026.

10. Recommendation Rec(2003)22 of the Committee of Ministers to member states on conditional release (parole), adopted on September 17, 2003, available at: <https://search.coe.int/cm?i=09000016805df03f>, last accessed: April 6, 2026.

11. The United Nations Standard Minimum Rules for the Treatment of Prisoners (the Nelson Mandela Rules), adopted on December 17, 2015, available at: https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/Nelson_Mandela_Rules-E-book.pdf, last accessed: April 6, 2026.

12. Villman E., Narratives of normality: Finnish prisoners envisioning their future, Punishment and Society, 2023, pp. 80-98.

Рубина Мхитарян

Начальник департамента международного правового сотрудничества Министерства юстиции РА,
Аспирант кафедры уголовного права юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ

Противоречивость пенитенциарной среды в контексте ресоциализации личности

При рассмотрении ресоциализации в качестве цели наказания, перед уголовно-исполнительными учреждениями ставится определенная задача: обеспечить изоляцию лица от общества соразмерную совершенному преступлению, и в то же время проводить с ним такую работу, в результате которой он вернется в общество, демонстрируя законопослушное поведение. Одновременное наличие указанных задач само по себе противоречиво, а их реализуемость воспринимается неоднозначно. Данная статья посвящена этой фундаментальной проблеме, в которой анализируются вызовы, связанные с обеспечением ресоциализации в уголовно-исполнительных учреждениях.

Ключевые слова: пенитенциарные учреждения, ресоциализация, нормализация

Rubina Mkhitaryan

Head of International Legal Cooperation Department
of the Ministry of Justice of the RA,
Student at the Chair of Criminal Law of the Faculty of Law of YSU

SUMMARY

***The contradictory nature of the penitentiary environment
from the perspective of offender resocialization***

When resocialization is viewed as a goal of punishment, penitentiary institutions are faced with a certain task: ensuring the isolation of the individual from society proportionate to the crime committed, while concurrently conducting such work with the individual that will result in their return to society demonstrating law-abiding behavior. The simultaneous existence of these objectives is inherently contradictory, and their feasibility is perceived as ambiguous. This article is dedicated to this fundamental issue, analyzing the challenges associated with ensuring resocialization within penitentiary institutions.

Key words: penitentiary institutions, resocialization, normalization.

Բնագիրը ներկայացվել է 15.04.2026թ.
Ընդունվել է տպագրության 27.04.26թ.

ՄԻԼԵՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի իրավական փորձաքննությունների ծառայության պետի պաշտոնակատար, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԻ ԱՊԱՅՈՒՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հոդվածի նպատակն է վերլուծել փողերի լվացման և հարակից հանցագործությունների վերաբերյալ վարույթներով փաստական հանգամանքների ապացուցման հետ կապված որոշակի իրավական հարցեր:

Հոդվածում վերլուծվել է այնպիսի խնդիր, ինչպիսին է քննարկվող հանցանքների վերաբերյալ վարույթներով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում լրացում կատարելու անհրաժեշտությունը՝ պայմանավորված այնպիսի հանգամանքների առկայության հետ, որոնց հավաստումը պահանջում է որոշակի ապացույցի առկայություն:

Հոդվածում քննարկման առարկա է դարձվել ֆինանսական քննության կարևոր դերն ու նշանակությունը՝ փողերի լվացման և հարակից հանցագործությունների վերաբերյալ վարույթներով: Կարևորվել է գուգահեռ ֆինանսական քննության դերը:

Հոդվածում քննարկվել է հանցավոր ճանապարհով ստացված գույքի վերաբերյալ քրեական վարույթով այդ գույքի շարժընթացը և ծավալը պարզելու իրավական անհրաժեշտությունն ու իրավական հիմքը և դրանց լույսի ներքո արձանագրվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում համապատասխան լրացում կատարելու անհրաժեշտությունն ու դրանով պայմանավորված վարույթ իրականացնող մարմնի համար վարույթին փորձագետ ներգրավելու պարտականության սահմանման անհրաժեշտությունը:

Հոդվածը նպատակ է հետապնդում ներկայացնել այնպիսի խնդիր, որը առաջացել է իրավակիրառ պրակտիկայում և շարունակելու է առաջանալ: Այս առումով հոդվածը նաև արդիական է, քանի որ ներկայացվող մոտեցումները կարող են հետաքրքրություն ներկայացնել ինչպես ուսանողների, այնպես էլ փաստաբանների, իրավապահ մարմինների աշխատակիցների և դատավորների մոտ:

Հիմնարաներ - ֆինանսական քննություն, գույքի շարժընթաց, ծավալ, փորձագետ, հանցավոր ծագում ունեցող գույք, դատահաշվապահական փորձաքննություն, փորձագետի եզրակացություն:

Ներածություն

Գործնականում հաճախ առաջանում է և հետազայում կարող է շարունակվել առաջանալ այնպիսի իրավական խնդիր, որը վերաբերում է հանցավոր ծագում ունեցող գույքի շարժընթացը և ծավալը որոշելու իրավական հիմքի որոշակիությանն ու իրավաչափությանը:

Ընդ որում, այդ խնդրի զգայունությունը կայանում է գուգահեռ ֆինանսական քննության բացակայության և փողերի լվացման և հարակից հանցագործությունների վերաբերյալ վարույթներով դրա անհրաժեշտության հետ:

Հոդվածում քննարկվում է այնպիսի իրավական խնդիր, ինչպիսին է փողերի լվացման և հարակից հանցագործությունների վերաբերյալ վարույթներով ապացուցման առարկայի մաս կազմող հանցավոր ծագում ունեցող գույքի շարժընթացը և ծավալը որոշելու հստակ և որոշակի օրենսդրական

հենքի բացակայությունը:

Մույն աշխատանքի նպատակն է գործնականում հանդիպող խնդրի վերհանումն ու դրա հաղթահարմանն ուղղված որոշակի լուծում առաջարկելը, որը քննարկման առարկա դեպքում արտահայտվում է օրենսդրական լրացում կատարելու առաջարկով:

Ուսումնասիրությունը կատարվել է սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա, ձևական-տրամաբանական, համեմատախրավական մեթոդների կիրառմամբ:

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ
ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ՈՐՈՇԱԿԻ ՓԱՍՏԱԿԱՆ
ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԻ ԱՊԱՅՈՒՑՄԱՆ ՀԵՏ
ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇԱԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐ

Քրեական դատավարության գործունեության ամենակարևոր բաղադրիչը ապացուցումն է: Քրեական դատավարության իրավունքի նորմերը, որոնք կարգավորում են ապացուցման գործընթացը և նախատեսված են ապահովելու քրեական վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստերի հուսալի հաստատումը: Ապացուցման գործընթացը կարգավորող, դրա նպատակները, առարկան, սահմանները և միջոցները սահմանող նորմերը անքակտելիորեն կապված են քրեական դատավարությունում անհատի իրավունքների և օրինական շահերի դատավարական երաշխիքների համակարգի հետ:

Ապացուցման խնդիրների հաջող լուծումը մեծապես պայմանավորված է տվյալ գործունեության առարկայի՝ ապացուցման առարկայի, հստակ պատկերացմամբ: Ապացուցման առարկա ասելով հիմնականում հասկանում ենք վարույթի համար նշանակություն ունեցող այն հանգամանքների համակցությունը, որոնք հաստատվում կամ հերքվում են ապացույցներ հավաքելու, ստուգելու և գնահատելու միջոցով: Քրեական գործերով ապացույցների օգնությամբ վեր հանվող ոչ բոլոր ապացույցներն են մտնում ապացուցման առարկայի մեջ, իսկ ապացույցների սահմանը որոշում է այն ապացույցների շրջանակը, որոնք անհրաժեշտ և բավարար են գործով ճշմարտությունը բացահայտելու համար²:

Ելնելով այն հանգամանքից, որ սույն գիտական հոդվածը վերաբերում է փողերի լվացման և հարակից հանցագործությունների վերաբերյալ վարույթներով որոշակի փաստական հանգամանքների ապացուցման հետ կապված որոշակի իրավական խնդիրներին, ապա պետք է առանձնացնենք ապացուցման առարկայի մեզ համար սույն գիտական հոդվածի տեսանկյունից անհրաժեշտ առարկան, այն է՝ հանցավոր ծագում ունեցող գույքի շարժընթացը և ծավալը: Մասնավորապես, նշված հանգամանքի պարզումն առանցքային է ֆինանսական, տնտեսական, ինչպես նաև՝ կոռուպցիոն բնույթի հանցանքների առկայության պայմաններում: Նշված հանգամանքների պարզումը ձեռք է բերում ինքնուրույն նշանակություն այնքանով, որ դրանց հստակեցումը կարևոր նշանակություն ունի, ի թիվս այլնի, արարքի իրավական գնահատականը ճիշտ որոշելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետի համաձայն՝

«Ապացույց՝ փաստի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ստացված տվյալ, որի հիման վրա քննիչը, դատախազը, դատարանը պարզում են ապացուցման ենթակա հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Քրեական վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք պետք է հաստատվի պատշաճ ապացույցների բավարար համակցությամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածը սահմանում է ապացույցների տեսակները, որոնցից սույն գիտական հոդվածում քննարկման առարկա կդարձվի փորձագետի եզրակացությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Փորձագետը վարույթի առարկայով չշահագրգռված այն անձն է, որը հատուկ գիտելիքների կամ հմտությունների օգտագործմամբ օժանդակում է վարույթին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի համաձայն՝

«Փորձագետի եզրակացությունը գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ որևէ այլ բնագավառում հատուկ գիտելիքների կամ հմտությունների օգտագործմամբ, վարույթն իրականացնող մարմնի կամ վարույթի մասնավոր մասնակցի կողմից իրեն առաջադրված, ինչպես նաև իր փաստության մեջ մտնող այլ հարցերի վերաբերյալ գրավոր հիմնավորված հետևություններն են, որոնց փորձագետը հանգել է՝ վարույթի համապատասխան նյութերը, դիակը կամ վարույթին ներգրավված համապատասխան անձին հետազոտելով»:

Վերոշարադրյալի լույսի ներքո նկատելի է, որ փորձագետի եզրակացությունը պետք է ընդգրկվի ապացույցների մեջ բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտ են հատուկ գիտելիքներ գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստների ոլորտում:

Նշյալ տեսակի ապացույցի միջոցով հնարավորություն է ստեղծվում ապացուցման առարկայի մեջ մտնող այնպիսի հանգամանք հաստատել, որի հաստատումն այլ կերպ քան հատուկ գիտելիքներ ունեցող անձի կողմից հաստատելը կարող է առնվազն ապացույցի արժանահավատության խնդիր առաջացնել:

Ընդ որում, նույնիսկ այն դեպքերում, երբ վարույթն իրականացնող մարմինը տիրապետում է որոշ հատուկ գիտելիքների, որոնք անհրաժեշտ են գործի որոշ հանգամանքների պարզման համար, օրենքը թույլ չի տալիս նրանց ստանձնել փորձագետների գործառույթները: Այս պահանջը պայմանավորված է փորձաքննության որակյալ, մանրամասն և օբյեկտիվ անցկացումը ապահովելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև փորձագետի եզրակացությունը որպես ապացույց համապարփակ քննության և գնահատման միջոցով ստուգելու բոլոր անհրաժեշտ երաշխիքների ստեղծմամբ :

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Կարևոր է նկատել, որ քրեական դատավարությունում ապացուցման միջոցները չեն նույնականացվում պարզապես փաստերի կամ ապացույցների հետ: Այն մի ամբողջական համակարգ է, որի միջոցով իրավական գործընթացում հաստատվում են հաստատման ենթակա հանգամանքները: Այս միջոցները ոչ միայն հավաքում են տվյալներ, այլև ձևավորում են դատավարության ընթացքում ապացուցման պրոցեսը՝ ապահովելով տեղեկությունների իրավաչափությունն ու ճշգրտությունը: Ապացուցման միջոցը գործողությունների կամ միջոցների ամբողջ համակարգ է, որի միջոցով ստեղծվում է և ստուգվում է ապացույցը: Այս տարբերությունը կարևոր է, քանի որ թույլ է տալիս գնահատել ապացուցման արդյունավետությունը և իրավաչափությունը ոչ միայն ֆիզիկական փաստերի առկայությամբ, այլև դրանք ստանալու մեթոդների օրինականությամբ:

Այսպես, փողերի լվացման և հարակից հանցագործությունների քննության կարևոր բաղադրիչ է հանդիսանում ֆինանսական քննության կարևոր դերն ու նշանակությունը: Մասնավորապես, ֆինանսական քննությունը պետք է կազմի ինչպես փողերի լվացման, այնպես էլ նախորդող հանցագործությունների քննության պլանավորման անբաժանելի մաս, քանի որ ֆինանսական, ինչպես նաև կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությունը չի կարող լինել ամբողջական առանց ակտիվների շարժի և դրանք տիրապետող անձանց գույքային դրության վերաբերյալ բավարար տեղեկությունների հավաքման: Ֆինանսական քննության նպատակով իրականացվելիք գործողությունները պետք է կազմեն վարույթի քննության պլանավորման մաս և քննությունը պետք է զուգահեռաբար նպատակ ունենա ինչպես հավաքելու բավարար ապացուցողական բազա հանցակազմի բոլոր տարրերի առկայությունն ապացուցելու համար, այնպես էլ հայտնաբերելու հանցավոր ծագում ունեցող գույքը դրա հետագա բռնագրավվումն ապահովելու նպատակով: Հանցավոր եկամուտների ձևավորման և դրանց հետագա ճակատագրի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն կարող է ունենալ ֆինանսական հանցագործությունների համակողմանի քննությունն ապահովելու տեսանկյունից: Ֆինանսական շարժերի ամբողջական շղթայի բացահայտումը և անձանց վարքագծի ուսումնասիրությունը կարող են էական նշանակություն ունենալ հանցակազմի տարբեր տարրերի, այդ թվում՝ հանցակազմի սուբյեկտիվ կողմի ապացուցման տեսանկյունից:

Ֆինանսական քննության անմիջական նպատակն է այնպիսի ապացույցների հավաքումը, որոնք հաստատում են ակտիվների և հանցանքի միջև կապի առկայությունը կամ հանցանքի արդյունքում ստացված եկամուտների ծավալը: Նշված

նպատակին հնարավոր է հասնել հետևելով ակտիվների շարժին, ինչն առավել բարդ գործերով հաճախ ներառելու է բազմաթիվ գործարքներ, այդ թվում՝ արտերկրում գործող բանկային հաշիվներին և միջնորդ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց անունով իրականացված փոխանցումներ: Հավաքված ֆինանսական տեղեկությունների վերլուծությունը թույլ է տալիս համադրել և համեմատել գույքի ստացման և փոխանցման ամսաթվերը, դրա ծագման աղբյուրների վերաբերյալ տեղեկությունները, կատարված գործարքների բնույթը և դուրս բերել առկա բացերը և անհամապատասխանությունները:

Օրինակ՝ տվյալների ուսումնասիրությունը կարող է ցույց տալ գումարի կանխիկացում մեկ անձի կողմից՝ առանց դրա հետագա ճակատագրի մասին տեղեկությունների, իսկ մեկ այլ անձի վերաբերյալ հավաքված տեղեկությունները ցույց տան նույն ծավալով գումարի մուտք հաշվին առանց ծագման աղբյուրի վերաբերյալ տվյալների: Այս բնույթի վերլուծությունը կարող է հիմք հանդիսանալ նոր վարկածների առաջադրման և ապացուցողական գործողությունների ձեռնարկման համար:

Հավաքված տեղեկությունները կարող են վերլուծության ենթարկվել նաև զուտ ակտիվների ծավալը վեր հանելու նպատակով՝ մասնավորապես համադրելով անձի եկամուտները վերջինի ծախսերի և գույքի հետ: Նշված վերլուծության արդյունքում դուրս բերված անհամապատասխանությունները կարող են վկայել հանցավոր գույքի առկայության մասին և հիմք հանդիսանալ հետագա ապացուցողական գործողությունների կատարման համար: Նշված հանգամանքը կարող է օգտագործվել նաև փողերի լվացման հանցակազմի տարրերի ապացուցման համար: Փողերի լվացման կամ կոռուպցիոն սխեմաների առկայությունը պարզելու համար կարող է օգտակար լինել նաև վեր հանված գործարքների հատկանիշների համադրումը ՖՂԿ-ի կամ միջազգային մարմինների կողմից հրապարակված տիպաբանությունների և ազդակների հետ: Նշված փաստաթղթերը ամրագրում են փողերի լվացման նպատակ ունեցող անձանց վարքագծին հատուկ ազդակները, ինչպես նաև փողերի լվացման համար հաճախ օգտագործվող սխեմաները: Հայտնաբերված համընկնումները կարող են հիմք հանդիսանալ հավելյալ գործողությունների ձեռնարկման համար՝ հանցագործության ամբողջական պատկերը ստանալու նպատակով:

Բացի այդ, լինում են նաև այնպիսի դեպքեր, երբ անձի եկամուտը միախառնված է, այսինքն՝ եկամտում առկա են թե՛ օրինական, թե՛ ապօրինի եկամուտներ, որոնք միայն հատուկ գիտելիքների տիրապետող փորձագետի վերլուծության արդյունքում կարող է բացահայտվել:

Չնայած վերոգրյալին, Հայաստանի Հանրա-

պետության իրավակիրառ պրակտիկան զարգանում է այնպես, որ ֆինանսական քննությանն ու մեթոդիկային համարժեք ուշադրություն չի դարձվում: Այլ խոսքով, եթե փորձենք ձևակերպել, ապա ստացվում է այնպես, որ վարույթն իրականացնող մարմինն է կրում իր վրա ամբողջ ֆինանսական քննության բեռը: Այնինչ, ֆինանսական քննության և դրա արդյունքների երաշխիք պետք է հանդես գա փորձագետի ներգրավվածությունը վարույթին՝ դրա սկզբնական փուլից մինչև ավարտը, որպեսզի փորձագետի կողմից կատարված վերլուծությունների հիման վրա ստացված արդյունքները արտացոլվեն ապացույցի ուժ ունեցող եզրակացության մեջ: Այսպիսի մոտեցումը մի կողմից կապահովի ֆինանսական քննության ոչ բարենպաստ հետևանքները վարույթն իրականացնող մարմնի վրա չդնելը, իսկ մյուս կողմից՝ մասնավոր շահն առավել քան պաշտպանված կլինի, որպիսի մոտեցմամբ հնարավոր կլինի ապահովել հանրային և մասնավոր շահի հավասարակշռված պաշտպանությունը:

Ասվածը ամրապնդելու համար կարևոր նշանակություն ունի նաև այն, որ FATF-ի (Financial Action Task Force)⁹ հանձնարարականներով սահմանվում է համակողմանի և հետևողական միջոցառումների մի շրջանակ, որը երկրները պետք է իմպլեմենտացնեն փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի նպատակով: Այսպես, ՖԱԹՖ-ի հանձնարարականների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ երկրները պետք է ապահովեն ՖԱԹՖ-ի հանձնարարականներով նախատեսված առանցքային միջոցառումների իրականացումը, որն իր մեջ ներառում է նաև իրավասու մարմինների լիազորությունների և պարտականությունների, ինչպես նաև այլ ինստիտուցիոնալ միջոցառումների շրջանակի սահմանում և նշվածի շրջանակում է, որ երկրները պետք է ապահովեն նշանակված իրավապահ մարմինների առկայությունը, որոնց վրա կրվի փողերի լվացման/ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ներպետական քաղաքականությունների շրջանակում փողերի լվացման, դրան նախորդող հանցագործությունների և ահաբեկչության ֆինանսավորման գործերի պատշաճ նախաքննությունն ապահովելու պատասխանավորությունը:

Այս նշանակված մարմինները պետք է առնվազն հանցավոր ճանապարհով ստացված գույք առաջացնող բոլոր հիմնական հանցագործությունների դեպքում փողերի լվացման, դրան նախորդող հանցագործությունների և ահաբեկչության ֆինանսավորման գործերով քրեական հետապնդում իրականացնելիս նախաձեռնողական կերպով կատարեն զուգահեռ ֆինանսական քննություն և այն

պետք է ներառի այն դեպքերը, երբ նախորդող հանցագործությունը կատարվել է տվյալ երկրի տարածքից դուրս¹⁰ :

Որպեսզի ողջ վերոգրյալի կարևորությունը փորձենք արտացոլել ՀՀ իրավակիրառ պրակտիկայում առկա օրինակների վրա՝ բերենք մի օրինակ. անձին վերագրվում է փողերի լվացման հանցակազմի հատկանիշներով արարքի կատարում, մասնավորապես, փողերի լվացմանը նախորդող հանցանքի արդյունքում 15.000.000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամի օրինականացում, որի հաստատման հիմքում ընկած է վարույթն իրականացնող քննիչի կողմից գույքերի շարժընթացի վերաբերյալ տվյալներ պարունակող փաստաթղթերի զննություններ հիման վրա կատարած սեփական հաշվարկը. մինչդեռ, օբյեկտիվ իրականության մեջ հանցավոր ճանապարհով ստացված գույքը կարող էր լինել ավելի շատ կամ ավելի քիչ, քան ներկայացված է մեղադրանքում, ինչը պայմանավորված է նրանով, որ քննիչը չունի և ողջամիտ էլ չէ ակնկալել կամ պահանջել, որ ունենա ֆինանսական բարդ գործարքների, հարյուրավոր միախառնված փոխանցումների, վճարային ու փոխանցման տարբեր համակարգերի միջոցով իրականացված գույքի տեղաշարժի և ծավալի ճշգրիտ որոշման վերաբերյալ գիտելիքներ և հմտություն¹¹ :

«Դատալեքս» իրավական համակարգի միջոցով համապատասխան դատական ակտերին ծանոթանալով պարզ դարձավ, որ ամբողջ պրակտիկան է զարգանում հենց այն ուղղությամբ, որ առհասարակ այս վարույթներով և այս հարցերի պարզաբանման կապակցությամբ վարույթին փորձագետի ներգրավվածություն առկա չէ:

Փողերի լվացման վարույթներով մինչդատական քննությունը պահանջում է նուրբ, ճկուն, բազմակողմանի և պրոֆեսիոնալ մոտեցում: Միայն այդպիսի քննության, փորձագիտական վերլուծության և միջազգային համագործակցության գործիքների արդյունավետ համադրությունն է, որ կմեծացնի այսպիսի լատենտայնությամբ օժտված հանցագործությունների բացահայտումը:

Նշված մոտեցումը բխում է նաև նրանից, որ, ինչպես արդեն նշել ենք, փողերի լվացման պրոցեսը սովորաբար ներառում է բազմաբնույթ ֆինանսական գործարքներ, որոնք լինում են բարդ և կարող են ներառել բազմաթիվ երկրներ կամ ֆինանսական միջավայրեր և նման պայմաններում է, որ այնպիսի փորձաքննություն ինչպիսին է դատահաշվապահական փորձաքննությունը՝ կարող է արդյունավետ միջոց լինել, քանի որ միայն ոլորտի հատուկ գիտելիքներ տիրապետող մասնագետը կարող է հստակ բացահայտել կատարված գործարքները և դրանց լեգիտիմությունը կամ անօրինականությունը:

Ուսումնասիրելով արտասահմանյան գրակա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նությունը՝ պարզ է դառնում, որ գրականությանը հայտնի «Walker Model»-ը և փորձագետի դերակատարությունը գրեթե անմիջապես կապված են, մասնավորապես, վերլուծելով փողերի վացման գործընթացի երեք հիմնական փուլերը՝ փորձագետները կարող են օգնել բացահայտել այդ գործընթացը, վերահսկել անհասկանալի կամ բարդ գործարքները:

Ըստ «Walker Model»-ի փողերի վացման գործընթացը բաժանվում է երեք հիմնական փուլի, դրանք են՝

1. Տեղաբաշխում (Placement)

Հանցավոր ծագում ունեցող գույքը ներդրվում է ֆինանսական համակարգ՝ բանկային ավանդի, փոխարկման, խաղատների, գնում-վաճառքների միջոցով:

2. Շերտավորում (Layering)

Կատարվում են մի շարք բարդ, բազմաստիճան ֆինանսական գործարքներ՝ փողի աղբյուրը քաքցնելու նպատակով (տրանսֆերներ, փոխարկումներ, միջնորդ ընկերություններ, օֆշորներ և այլն):

3. Ինտեգրացում (Integration)

Ուղղորդված և «մաքրված» միջոցները վերադառնում են օրինական տնտեսություն՝ որպես ներդրում, գնում, բիզնես եկամուտ կամ այլ օրինականացված ակտիվ՝:

Այս գործընթացում, երբ անձինք փորձում են քաքցնել իրենց փողերի օրինականությունը՝ դրանք կարող են փոխանցվել բարդ գործարքներով, ֆինանսական միջանցքներով, կամ նույնիսկ տեղափոխվել այլ երկրներ: Այս փուլերում էլ հենց պետք է կիրառելի լինի տնտեսագիտական, մասնավորապես՝ դատահաշվապահական փորձաքննությունը՝ բացահայտելու համար փողերի վացման պրոցեսը: Ողջ վերոշարադրյալի մասին է խոսում նաև այն, որ փողերի վացման դեմ պայքարի միջազգային մարմինները, ինչպիսիք են ՖԱԹՖ-ը կամ FBI-ն¹³ ԱՄՆ-ում, հաճախ պահանջում են, որպեսզի քրեական հետաքննության մեջ ներգրավվեն փորձագետներ, ովքեր կարող են վերլուծել տեղական ու միջազգային ֆինանսական համակարգերն ու պահպանել միջազգային ստանդարտները:

Ֆինանսական հանցագործությունների, այդ թվում՝ փողերի վացման վարույթներով դատահաշվապահական փորձաքննության կարևորությունը կայանում է նրանում, որ դատահաշվապահական փորձաքննությունը հաշվապահական սկզբնական և ամփոփ փաստաթղթերի ու ֆինանսական հաշվետվությունների փաստացի տվյալների մասնագիտական հետազոտումն է: Դատահաշվապահական փորձաքննության էությունն այն է, որ դատաքննչական մարմինները (քննիչ, հետաքննիչ, դատախազ, դատավոր) տնտեսական ոլորտում տեղի ունեցած հանցագործությունների կամ նա-

խապատրաստվող նյութերի, ինչպես նաև տնտեսագիտական բնույթի (կապված դեբիտորական, կրեդիտորական պարտքերի, հարկային պարտավորությունների, մաքսային ձևակերպումների հետ, վիճահարույց հարցերի պարզաբանման համար էական նշանակություն ունեցող) հանգամանքների բացահայտում են կատարում: Այն նաև կոնկրետ որևէ քրեական գործոն (կատարված չարաշահումների հետևանքով պետությանը պատճառված վնասի չափի, ինչպես նաև լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջադրման և այդ հարցերում մեղավոր անձանց շրջանակը) պարզելու նպատակով կատարվող վերլուծություններն են, որոնք ուղղված են կատարված հանցանքի հետևանքների պարզաբանմանը գուտ տնտեսագիտական տեսանկյունից: Դատահաշվապահական փորձաքննության ժամանակ փորձագետ-հաշվապահն իրականացնում է հաշվապահական հաշվառման մեջ հարուցված գործի նյութերի գծով համապատասխան հետազոտություն և քննիչի կամ դատարանի առաջադրած հարցերի լուծումների հիման վրա կազմում եզրակացություն: Փորձաքննության իրականացման համար պահանջվում են հատուկ հաշվապահական և տնտեսագիտական մասնագիտական գիտելիքներ (կառավարում, համալիր տնտեսական գործունեության վերլուծություն, հարկային գործ, ֆինանսական կառավարում, աուդիտ) և նշյալ փորձաքննության հիմնական խնդիրն է աջակցել քրեական, քաղաքացիական և վարչական խախտումների հարուցված գործերի գծով ապացուցողական տեղեկատվության ստացմանը՝ օգտագործելով հաշվապահական հաշվառման ոլորտում կիրառվող ժամանակակից մասնագիտական գիտելիքներն ու հնարավորությունները¹⁴: Դատահաշվապահական փորձաքննության ժամանակ լուծվում են հետևյալ հիմնական խնդիրները՝

- վերլուծվում են պաշարների, դրամական միջոցների և այլ ակտիվների ավելցուկի կամ պակասորդի փաստացի տվյալները և նյութական վնասի չափը,

- ստուգվում են պաշարների, դրամական միջոցների և այլ ակտիվների շարժի փաստաթղթային ձևակերպման ճշտությունը, դրանց պահպանման և հսկողության պայմանները, ինչպես նաև նյութական պատասխանատվության կազմակերպման դրվածքը,

- որոշվում է հաշվապահական փաստաթղթերում արտացոլված տնտեսական գործառնությունների համապատասխանությունը օրենսդրությանն ու հաշվառման դրվածքին և փաստաթղթային տեղեկատվության երկհամատեղելիությունը մեղադրվողի և վկաների ցուցմունքներին, հետազոտվում է պաշարների, դրամական միջոցների և այլ ակտիվների մուտքագրման և ելքագրման փաստաթղթա-

յին հիմնավորվածությունը, ինչպես նաև հաշվառումից դուրս պատրաստի արտադրանքի քանակն ու գինը՝ հիմք ընդունելով տեխնոլոգների, ապրանքագետների և ինժեներների եզրակացության արդյունքները (...):

Վերոշարադրյալ վերլուծության արդյունքում գալիս ենք այն եզրահանգման, որ բոլոր այն դեպքերում, երբ առկա է հանցավոր ճանապարհով ստացված գույքի վերաբերյալ քրեական վարույթ, այդ գույքի շարժընթացը և ծավալը պարզելը պահանջում է առնվազն տնտեսագիտական (բանկային, ֆինանսական, հարկային, մաքսային և համարժեք բնույթի այլ ենթալորտների) ոլորտի մասնագիտական տեսական իմացություն և կիրառման որոշակի հմտություն, որը վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարելը ոչ միայն լինելու է ոչ ամբողջական, այլև՝ կարող է հանգեցնել ապացույցի անարժանահավատության՝ դրանով իսկ նմանատիպ վարույթներով առանցքային ապացույցից վերաժվելով ոչ հավաստի ապացույցի և կորցնելով իր ապացուցողական արժեքը. Ընդ որում, նշյալ խնդիրն իր բնույթով այնպիսին է, որ հատվածական լուծումները չեն կարող հանգեցնել ցանկալի արդյունքին, հետևաբար, այդպիսի վարույթներով հանցավոր ճանապարհով ստացված գույքի վերաբերյալ շարժընթացը և ծավալը ապացուցելու վարույթն իրականացնող մարմնի պարտականության իրացումը չպետք է պայմանավորված լինի վերջինիս անձնային կամ մասնագիտական որակներով կամ համարժեք փորձաքննություն նշանակելու հայեցողությամբ. Ասվածը նշանակում է, որ անհրաժեշտ է իրականացնել առավել հիմնարար փոփոխություն, այն է՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի շարժընթացը և ծավալը կարող են հաստատվել միայն ապացույցի կոնկրետ տեսակով, այն է՝ փորձագետի եզրակացությամբ.

Կարևորելով ողջ վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասը անհրաժեշտ է լրացնել 6-րդ մասով՝ հետևյալ կերպ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ստորև նշված հանգամանքները քրեական վարույթում կարող են հաստատվել միայն հետևյալ ապացույցները նախապես ստանալով և հետազոտելով՝

6) Հանցավոր ծագում ունեցող գույքի շարժընթացը և ծավալը՝ դատահաշվապահական փորձաքննության արդյունքում փորձագետի կողմից տրված եզրակացությամբ»:

Նշյալը կարևորվում է այնքանով, որ այսպիսի օրենսդրական փոփոխության արդյունքում է, որ վարույթն իրականացնող մարմինը կունենա այս գործերով փորձագետ ներգրավելու կոնկրետ պարտականություն:

Նման կարգավորումը հնարավորություն կտա բարձրացնել նախաքննության արդյունավետությունը, բարձրացնել ձեռք բերված ապացույցի ապացուցողական արժեքը և բացառել միևնույն հարցի վերաբերյալ վարույթն իրականացնող այս կամ այն քննիչի կողմից տարբերակված մոտեցումը:

Եզրակացություն

1. Բոլոր այն դեպքերում, երբ առկա է հանցավոր ճանապարհով ստացված գույքի վերաբերյալ քրեական վարույթ՝ այդ գույքի շարժընթացը և ծավալը պարզելը պահանջում է առնվազն տնտեսագիտական (բանկային, ֆինանսական, հարկային, մաքսային և համարժեք բնույթի այլ ենթալորտների) ոլորտի մասնագիտական տեսական իմացություն և կիրառման որոշակի հմտություն, որը վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարելը ոչ միայն լինելու է ոչ ամբողջական, այլև՝ կարող է հանգեցնել ապացույցի անարժանահավատության՝ դրանով իսկ նմանատիպ վարույթներով առանցքային ապացույցից վերաժվելով ոչ հավաստի ապացույցի և կորցնելով իր ապացուցողական արժեքը:

2. Առաջարկում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 6-րդ մասով՝ հետևյալ կերպ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ստորև նշված հանգամանքները քրեական վարույթում կարող են հաստատվել միայն հետևյալ ապացույցները նախապես ստանալով և հետազոտելով՝

6) Հանցավոր ծագում ունեցող գույքի շարժընթացը և ծավալը՝ դատահաշվապահական փորձաքննության արդյունքում փորձագետի կողմից տրված եզրակացությամբ»:

Արդյունքում վարույթն իրականացնող մարմինը կունենա այս գործերով փորձագետ ներգրավելու կոնկրետ օրենսդրական պարտականություն և նման կարգավորումը հնարավորություն կտա բարձրացնել ինչպես նախաքննության արդյունավետությունը, այնպես էլ ձեռք բերված ապացույցի ապացուցողական արժեքը, բացառել միևնույն հարցի վերաբերյալ վարույթն իրականացնող այս կամ այն քննիչի կողմից տարբերակված մոտեցումը:

www.aradaradutyjournal.com

¹ Տե՛ս Курс советского уголовного процесса. Общая часть. Под ред. Бойкова А. Д., Карпеца И. И. М.: Изд. Изд. Юридическое литература, 1989. Course of Soviet criminal procedure. General part. Edited by Boykov A.D., Karpets I.I. Moscow: Publ. Publ. Legal Literature, 1989:

² Տե՛ս ՀՀ քրեական դատավարության ընդհանուր մասի դասագիրքը բուհերի համար, ԵՊՀ հրատարակչություն, 2006:

³ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ԱԺ, 30.06.2021, ՀՕ-306-Ն):

⁴ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ԱԺ, 30.06.2021, ՀՕ-306-Ն):

⁵ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ԱԺ, 30.06.2021, ՀՕ-306-Ն):

⁶ Տե՛ս Курс советского уголовного процесса. Общая часть. Под ред. Бойкова А. Д., Карпеца И. И. М.: Изд. Изд. Юридическое литература, 1989. Course of Soviet criminal procedure. General part. Edited by Boykov A.D., Karpets I.I. Moscow: Publ. Publ. Legal Literature, 1989:

⁷ Տե՛ս Стельмах В. Ю. Понятие и система средств доказывания в уголовном судопроизводстве // Вестник Оренбургского государственного университета. 2016. № 6 (194):

⁸ Տե՛ս «Փողերի վացման գործերի քննության ուղեցույց» հաստատված «Հայաստանի Հանրապետությունում փողերի վացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 2023թ. մարտի 2-ի նիստում:

⁹ Այսուհետ նաև՝ ՖԱԹՖ:

¹⁰ Տե՛ս «Փողերի վացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային ստանդարտներ»-ը:

¹¹ Ընդ որում, նշյալ օրինակը բերվեց Դատալեքս իրավական համակարգի միջոցով փողերի վացման վերաբերյալ գործերին, մասնավորապես, ներկայացված մեղադրանքներին և դրանք հիմնավորող ապացույցներին ծանոթանալու արդյունքում:

¹² Տե՛ս Walker, J. (1999). How Big is Global Money Laundering? Journal of Money Laundering Control, 3(1):

¹³ Federal Bureau of Investigation.

¹⁴ Տե՛ս Ա.Ա. Բայադյան, «Դատահաշվապահական փորձաքննություն» ուսումնական ձեռնարկ:

¹⁵ Տե՛ս Судебно-бухгалтерская экспертиза: учеб. пособие для студентов вузов, под ред. Е.Р. Российской, Н.Д. Эриашвили. - М.: ЮНИТИ-ДАНА, 2007.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա.Ա. Բայադյան, «Դատահաշվապահական փորձաքննություն» ուսումնական ձեռնարկ:
2. «Փողերի վացման գործերի քննության ուղեցույց» հաստատված «Հայաստանի Հանրապետությունում փողերի վացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 2023թ. մարտի 2-ի նիստ:
3. «Փողերի վացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային ստանդարտներ»:
4. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ԱԺ, 30.06.2021, ՀՕ-306-Ն):
5. ՀՀ քրեական դատավարության ընդհանուր մասի դասագիրքը բուհերի համար, ԵՊՀ հրատարակչություն, 2006:
6. Курс советского уголовного процесса. Общая часть. Под ред. Бойкова А. Д., Карпеца И. И. М.: Изд. Изд. Юридическое литература, 1989.
7. Стельмах В. Ю. Понятие и система средств доказывания в уголовном судопроизводстве // Вестник Оренбургского государственного университета. 2016. № 6 (194).
8. Судебно-бухгалтерская экспертиза: учеб. пособие для студентов вузов, под ред. Е.Р. Российской, Н.Д. Эриашвили. - М.: ЮНИТИ-ДАНА, 2007.
9. Walker, J. (1999). How Big is Global Money Laundering? Journal of Money Laundering Control.

References

1. A. A. Bayadyan, “Datahashvaphakan p’orts’akanut’yun”, usumnakan dzernarg. [A. A. Bayadyan, Forensic Accounting Examination, Study Guide.]
2. P’ogheri Ivacman gortseri k’nnut’yan ughghets’uyts”, hastatvats “Hayastani Hanrapetut’yunum p’ogheri Ivacman, ahabekchut’yan finansavorum ev zangvatsayin vochnch’ut’yan zenqi taratsman finansavorumun dem tarvogh paykari har-c’erov” mijgerteschakan hanzhazhoghovi 2023 t’. marti 2-i nistum. [“Guidelines for the Investigation of Money Laundering Cases”, approved at the meeting of the Interagency Commission on Combating Money Laundering, Terrorist Financing and Financing of Proliferation of Weapons of Mass Destruction, held on 2 March 2023.]
3. “P’ogheri Ivacman, ahabekchut’yan finansavorum ev zangvatsayin vochnch’ut’yan zenqi taratsman finansavorumun dem payk’ari mijazgayin standartner”-y: [International Standards on Combating Money Laundering, Terrorist Financing and Financing of the Proliferation of

- Weapons of Mass Destruction.]
4. ՀՀ քրեական ժողովրդական օրենսգրք (ԱՀ, 30.06.2021, ՀՕ՝-306-Ն)
[Criminal Procedure Code of the Republic of Armenia (NA, 30.06.2021, zr -306-N)]
 5. Hayastani Hanrapetut'yan k'reakan datavarut'yun (yndhanur mas), dasagirq buheri hamar, YPH hratarakch'ut'yun, Yerevan, 2006
Criminal Procedure of the Republic of Armenia (General Part), textbook for universities, YSU Publishing House, Yerevan, 2006
 6. Kurs sovetskogo ugolovnogo protsesssa. Obshchaya chast'. Pod red. Boykova A. D., Karpetsa I. I. Moskva: Izdatel'stvo «Yuridicheskaya literatura», 1989.
[Course of Soviet Criminal Procedure. General Part. Edited by Boykov A. D., Karpets I. I. Moscow: Legal Literature Publishing House, 1989.]
 7. Stel'makh V. Yu. Ponyatie i sistema sredstv dokazyvaniya v ugolovnom sudoproizvodstve // Vestnik Orenburgskogo gosudarstvennogo universiteta. 2016. № 6 (194).
[Stelmakh V. Yu. The Concept and System of Means of Proof in Criminal Proceedings // Bulletin of the Orenburg State University. 2016. No. 6 (194).
 8. Sudebno-bukhgalterskaya ekspertiza: ucheb. posobie dlya studentov vuzov / pod red. E. R. Rossiyskoy, N. D. Eriashvili. — M.: YUNITI-DANA, 2007.
[Forensic Accounting Expertise: Study Guide for University Students / ed. by E. R. Rossiyskaya, N. D. Eriashvili. - Moscow: UNITY-DANA, 2007.]
 9. [Walker, J. (1999). How Big is Global Money Laundering? Journal of Money Laundering Control]

Милена Айрапетян

Исполняющий обязанности руководителя службы правовой экспертизы
Апелляционного антикоррупционного суда Республики Армения
Аспирант кафедры уголовного судопроизводства и
криминалистики юридического факультета ЕГУ РА

РЕЗЮМЕ

Проблемы правового характера, связанные с доказыванием фактических обстоятельств в уголовных производствах по делам о легализации денежных средств (отмывании денег) и связанных с ними преступлениях

Целью статьи является анализ определённых правовых вопросов, связанных с доказыванием фактических обстоятельств в уголовных производствах по делам о легализации денежных средств (отмывании денег) и связанных с ними преступлениях.

В статье рассматривается вопрос о необходимости внесения дополнения в статью 107 Уголовно-процессуального кодекса Республики Армения применительно к рассматриваемым преступлениям, что обусловлено наличием обстоятельств, подтверждение которых требует наличия определённых видов доказательств.

В статье анализируются важная роль и значение финансового расследования в рамках производств по делам о легализации денежных средств и связанных с ними преступлениях, а также подчёркивается роль параллельного финансового расследования.

В статье рассмотрены правовая необходимость и правовые основания установления движения и объёма имущества, полученного преступным путём, в рамках уголовного производства, и в свете этого зафиксирована необходимость внесения соответствующего дополнения в статью 107 Уголовно-процессуального кодекса Республики Армения, а также обусловленная этим необходимость установления обязанности для органа, осуществляющего производство, по привлечению эксперта к участию в производстве.

Целью статьи является представление проблемы, которая возникла в правоприменительной практике и будет продолжать возникать. В этом отношении статья также является актуальной, поскольку представленные подходы могут представлять интерес как для студентов, так и для адвокатов, сотрудников правоохранительных органов и судей: интерес как для студентов, так и для адвокатов, сотрудников правоохранительных органов и судей.

Ключевые слова: финансовое расследование, движение имущества, объём имущества, эксперт, имущество преступного происхождения, судебно-бухгалтерская экспертиза, заключение эксперта.

Milena Hayrapetyan

Acting head of the legal expertise service of the Anti-Corruption
Court of Appeal of Republic of Armenia
Yerevan State university, faculty of law- Postgraduate student
at the chair of Criminal Procedure and Criminalistics

SUMMARY***Some legal issues related to the confirmation of factual circumstances in criminal proceedings concerning money laundering and related crimes***

The purpose of the article is to analyze certain legal issues related to the proving of factual circumstances in criminal proceedings concerning money laundering and related crimes.

The article examines the issue of the necessity of introducing an amendment to Article 107 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia in relation to the crimes under consideration, which is обусловлена the existence of circumstances whose verification requires the presence of specific types of evidence.

The article considers the important role and significance of financial investigation in proceedings on money laundering and related crimes, and also emphasizes the role of parallel financial investigation.

The article also addresses the legal necessity and legal basis for determining the movement and scope of property obtained through criminal means within criminal proceedings, and, in light thereof, records the necessity of making a corresponding amendment to Article 107 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia, as well as, consequently, establishing an obligation for the body conducting the proceedings to involve an expert in the proceedings.

The purpose of the article is to present a problem that has arisen in law enforcement practice and will continue to arise. In this regard, the article is also relevant, as the approaches presented may be of interest to students, lawyers, law enforcement officers, and judges.

Key words: financial investigation, movement of property, scope of property, expert, criminally derived property, forensic accounting examination, expert opinion.

Բնագիրը ներկայացվել է 15.04.2026թ.

Ընդունվել է տպագրության 27.04.26թ.

ՎԻՐԱԲ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի ամբիոնի դասախոս

**ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՉԵՆՔԻ ԺԱՄԿԵՏԱՆՑ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՐՈՒՄ**

Հոդվածում քննարկվում են զենքի ժամկետանց թույլտվությունների դեպքում իրավական որակման հիմնախնդիրները:

Ըստ հեղինակի՝ թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենքը պահելը կամ կրելը (օգտագործելը) հանգեցնում է ոչ միայն սահմանված վարչաիրավական կարգավորումների չպահպանմանը, այլև էականորեն խաթարում է զենքի շրջանառության իրավական ռեժիմը: Պետությունը սահմանելով զենքի շրջանառության լիցենզավորման (թույլտվության) համակարգ՝ նախատեսում է նաև թույլտվությունների պարբերական վերանայման արդյունավետ կառուցակարգեր, որը նպատակ է հետապնդում ապահովել զենքի գտնվելը միայն այն անձանց մոտ, ովքեր համապատասխանում են օրենքով նախատեսված պահանջներին:

Հեղինակի գնահատմամբ՝ թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենքի շրջանառությունը փաստացի տեղի է ունենում առանց իրավական հիմքի, որը վտանգ է ներկայացնում հանրային անվտանգության համար և խաթարում է զենքի շրջանառության նկատմամբ պետական վերահսկողության արդյունավետությունը:

Հեղինակի կարծիքով՝ քննարկվող իրավիճակում պետության քրեաիրավական արձագանքը կարող է հանդիսանալ զենքի ապօրինի շրջանառությունից հանրային անվտանգությունն ապահովելու արդյունավետ և համարժեք միջոց: Այն կարող է ունենալ կանխարգելիչ նշանակություն՝ խթանելով զենքի սեփականատերերի կողմից զենքի շրջանառության սահմանված կանոնակարգերի պահպանմանը, ինչպես նաև թույլտվությունների երկարաժամանակ պարտականության պատշաճ կատարումը: Հետևաբար, թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենք պահելու կամ կրելու (իրավաբանական անձի դեպքում՝ պահելու կամ օգտագործելու) դեպքում անձի արարքը պետք է որակել զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերով:

Հիմնարարներ - ժամկետանց թույլտվություններ; զենքի շրջանառություն; հանրային անվտանգություն; պետական վերահսկողություն; որակման հիմնախնդիրներ; ներպետական իրավակարգավորումներ; արտասահմանյան երկրների փորձ; վարչական պատասխանատվություն; քրեական պատասխանատվություն; արտոնյալ ժամկետ:

Ներածություն

«Չենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի¹ (այսուհետ նաև՝ Օրենք) 11-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ քաղաքացիական և ծառայողական զենքի համապատասխան թույլտվությունները տալիս է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:

2. Իրավաբանական անձանց տրվող թույլտվություններն են՝
(...)

3) քաղաքացիական կամ ծառայողական զենք պահելու և օգտագործելու թույլտվություն (այսուհետ՝ զենք պահելու և օգտագործելու թույլտվություն)՝ 10 տարի գործողության ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 10 տարով երկարաձգելու իրավունքով:
(...)

3. Ֆիզիկական անձանց տրվող թույլտվու-

թյուններն են՝

(...)

3) քաղաքացիական կամ ծառայողական զենք (քաղաքացիամբ սառը և զազային զենքերի) պահելու և կրելու թույլտվություն (այսուհետ՝ զենք պահելու և կրելու թույլտվություն)՝ 10 տարի գործողության ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 10 տարով երկարաձգելու իրավունքով:
(...)

12. Սույն հոդվածով նախատեսված թույլտվությունների ժամկետները երկարաձգելու համար դիմումը ներկայացվում է դրանց գործողության ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ»:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն առգրավում, վերցնում է իրավաբանական և ֆիզիկական անձանց տնօրինության տակ գտնվող զենքը հետևյալ դեպքերում՝

1) սույն օրենքով նախատեսված լիցենզիանե-

www.aradaratutyunjurnal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ընդ գործողությունը կասեցվել կամ դադարեցվել է, թույլտվությունները ճանաչվել են ուժը կորցրած, կամ վերոնշյալ լիցենզիաները կամ թույլտվությունները բացակայում են. (...):»:

Վերը նշված իրավանորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ իրավաբանական անձանց քաղաքացիական կամ ծառայողական զենք պահելու և օգտագործելու, իսկ ֆիզիկական անձանց քաղաքացիական կամ ծառայողական զենք (բացառությամբ սառը և գազային զենքերի) պահելու և կրելու թույլտվությունները (այսուհետ նաև՝ թույլտվություններ) տրվում են տասը տարի գործողության ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ տասը տարով երկարաձգելու իրավունքով: Ընդ որում, թույլտվությունների ժամկետները երկարաձգելու նպատակով անձը Օրենքով նախատեսված դիմումը պետք է ներկայացնի դրանց գործողության ժամկետները լրանալուց մեկ ամիս առաջ: Այն դեպքում, երբ անձը սահմանված կարգով չի երկարաձգել թույլտվությունների ժամկետները, այլ կերպ՝ դրանք բացակայում են՝ ՀՀ ոստիկանությունը լիազորված է վերցնելու (առգրավելու) անձի տնօրինության տակ գտնվող զենքը:

Այս համատեքստում տեսագործական հետաքրքրություն է ներկայացնում հետևյալ հարցի քննարկումը՝

Ինչպե՞ս պետք է որակել անձի արարքը (ի՞նչ իրավական հետևանքներ պետք է վրա հասնեն), երբ թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո, վերջինս սահմանված կարգով չի երկարաձգել դրանք և շարունակել է զենք պահել կամ կրել (իրավաբանական անձի դեպքում՝ պահել կամ օգտագործել) առանց համապատասխան թույլտվությունների:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմել թե՛ ընդհանուր գիտական և թե՛ մասնավոր գիտական մեթոդները: Մասնավորապես, կիրառվել են ընդհանուր գիտական այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են ինդուկցիան, դեդուկցիան, անալիզը, սինթեզը, ինչպես նաև մասնավոր գիտական՝ իրավահամեմատական, ձևական իրավաբանական, իրավական մոդելավորման և այլ մեթոդներ: Հոդվածում արված եզրահանգումների համար հիմք են ծառայել գիտական գրականության մեջ և դատական պրակտիկայում առկա տեսակետներն ու մեկնաբանությունները, ինչպես նաև օրենսդրական նորմերի համակարգային իրավահամեմատական վերլուծությունը:

Հետազոտության արդյունքներ և քննարկում.

1. Ներպետական իրավակարգավորումների վերաբերյալ

ՀՀ գործող իրավակարգավորումների պայ-

մաններում՝ թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենք պահելու կամ կրելու (իրավաբանական անձի դեպքում՝ պահելու կամ օգտագործելու) դեպքում իրավասու մարմինների կողմից քննարկման առարկա կարող է դառնալ բացառապես անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում առանձին զանցակազմ, որը պատասխանատվություն է նախատեսում քննարկվող արարքի համար, նախատեսված չէ: Ընդ որում, քրեական պատասխանատվության հարցը կարող է քննարկվել միայն այն դեպքում, երբ թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո անձը զենքը պահել կամ կրել է (իրավաբանական անձի դեպքում՝ պահել կամ օգտագործել է) դիտավորությամբ (գիտակցել է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք տվյալ հանցակազմի հատկանիշ են), քանի որ նշված արարքներն անզգուշությամբ կատարելու համար ՀՀ օրենսդրությամբ քրեական պատասխանատվություն նախատեսված չէ:

Դատախազաքննչական համակարգի գործընկերների հետ մասնավոր գրույցների արդյունքում պարզ է դառնում, որ գործնականում քննարկվող իրավիճակում նախաձեռնվում են քրեական վարույթներ՝ զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերով: Այնուամենայնիվ, նշված քրեական վարույթներով հետազայում զենքի սեփականատիրոջ (տիրապետողի) նկատմամբ ռեաբիլիտացնող հիմքով հանրային քրեական հետապնդում չի հարուցվում կամ հետապնդումը դադարեցվում է՝ հիմք ընդունելով վերջինիս պարզաբանումն այն մասին, որ գտնվել է անփույթ և մոռացել է երկարաձգել թույլտվությունների ժամկետները:

Հարկ է նշել, որ «Դատալեքս» տեղեկատվական համակարգում մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում՝ չգտնվեցին քրեական գործեր, որոնցով անձին մեղադրանք է առաջադրվել թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենք պահելու կամ կրելու համար: Այսպիսով՝ դատարաններ համապատասխան վարույթներ չեն ուղարկվել:

2. Արտասահմանյան երկրների փորձը

Այն, որ թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենքը պահելը կամ կրելը (օգտագործելը) անձի համար պետք է առաջացնի անբարենպաստ իրավական հետևանքներ՝ տարակարծությունների տեղիք չի տալիս: Այդուհանդերձ, արտասահմանյան երկրների ոլորտին վերաբերելի իրավակարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված դեպքում անձի արարքի որակման (իրավական հետևանքների առաջացման) հարցում պետությունների մոտեցումները մի-

www.aradadutyjournal.com

ասնական չեն: Մասնավորապես, մի շարք երկրներում թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենքը պահելը կամ կրելը (օգտագործելը) որակվում է որպես վարչական իրավախախտում և ենթադրում է վարչական պատասխանատվության կիրառում, մինչդեռ այլ երկրներում նման վարքագիծը կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության:

Առաջին խումբ երկրների իրավակարգավորումների հիմքում, ըստ էության, ընկած է այն մոտեցումը, որի համաձայն՝ թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենքը պահելը կամ կրելը (օգտագործելը), որպես կանոն, չի բնութագրվում հանրային վտանգավորության այնպիսի աստիճանով, որը կարող է արդարացնել անձի նկատմամբ քրեական պատասխանատվության կիրառումը: Փաստացի, նշված իրավիճակում զենքը սկզբնապես ձեռք է բերվել օրինական հիմքով (ունի օրինական ծագում), իսկ կատարված իրավախախտումը կրում է ձևական բնույթ և առավելապես վերաբերում է տվյալ զենքի հետ կապված վարչաիրավական կարգավորումների չպահպանմանը:

Ավելին, քննարկվող դեպքում զենքի սեփականատերն արդեն իսկ հաղթահարել է զենք ձեռք բերելու համար օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերը (հանձնել է անվտանգության կանոնների իմացության տեսական և գործնական քննություններ, զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների բացակայությունը հավաստելու նպատակով անցել է համապատասխան բժշկական զննություններ և այլն) և ստացել համապատասխան թույլտվություններ, ինչն էապես տարբերվում է այն իրավիճակներից, երբ զենքը սկզբնապես ձեռք է բերվել և շրջանառվել է ապօրինի կերպով:

Հարկ է նշել, որ նշված մոտեցումն առավելապես բնորոշ է հետխորհրդային երկրներին:

Այսպես՝ **Ռուսաստանի Դաշնության** վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ դրանում առկա է հատուկ զանգակազմ³, որը պատասխանատվություն է նախատեսում զենքի գրանցման (վերագրանցման) կամ դրա հաշվառման ժամկետները խախտելու համար, որը, ի թիվս այլնի, ընդգրկում է նաև անձի կողմից զենքի կրման և/կամ պահպանման թույլտվությունների երկարաձգման սահմանված ժամկետների խախտումը⁴:

Ղազախստանի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով պատասխանատվություն է նախատեսված զենքի պահպանման, պահպանման և կրելու թույլտվության գործողության ժամկետի ավարտի դեպքում՝ **իրավաբանական անձի** կողմից զենքի գրանցման (վերագրանցման) համար ներքին գործերի մարմիններ

չդիմելու համար⁵:

Բելոռուսի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը պատասխանատվություն է նախատեսում հրազենի, գազային, օդաճնշիչ կամ նետողական զենքի գրանցման, ինչպես նաև պահելու և կրելու թույլտվությունների գործողության երկարաձգման սահմանված ժամկետները կամ բնակության վայրի փոփոխության դեպքում՝ հաշվառման կանոնները խախտելու համար⁶:

Համանման իրավակարգավորումներ են նախատեսված նաև **Ուկրաինայի** վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում⁷:

Մոլդովայի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը պատասխանատվություն է նախատեսում զենքի թույլտվության կամ զենքի տիրապետման թույլտվության վավերացման (վիզավորման) սահմանված ժամկետը խախտելու համար⁸: Ընդ որում, այստեղ առավել խիստ պատասխանատվություն է նախատեսված զենքի թույլտվության կամ զենքի տիրապետման թույլտվության վավերացման (վիզավորման) սահմանված ժամկետը մեկ տարուց ավելի խախտելու համար⁹:

Էստոնիայի «Ձենքի մասին» օրենքը պարտավորեցնում է զենքի սեփականատիրոջը կամ այլ օրինական տիրապետողին զենք ձեռք բերելու թույլտվության կամ զենքի թույլտվության ժամկետը լրանալու, թույլտվությունը կասեցնելու կամ հետ վերցնելու դեպքում՝ ոչ ուշ, քան թույլտվության գործողության վերջին աշխատանքային օրը կամ թույլտվությունը հետ վերցնելու կամ այն կասեցնելու մասին որոշման մասին հաղորդելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, զենքը (փամփուշտները, «Եվրոպական հրազենի անցագիրը»¹⁰) հանձնել ոստիկանությանը¹¹: Նշված պարտականությունը չկատարելը հանգեցնում է վարչական պատասխանատվության՝ ֆիզիկական անձանց դեպքում առաջացնելով տուգանքի նշանակում՝ մինչև 200 միավոր, կամ կալանք, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ տուգանքի նշանակում՝ մինչև 2000 եվրոյի չափով¹²:

Այսպիսով՝ վերը նշված երկրներում **զենքն ապօրինի կերպով պահելը և (կամ) կրելը** դրսևորվում է երկու հիմնական ձևով՝

• Օրինական հիմքով ձեռք բերված զենքը պահելը և (կամ) կրելը թույլտվության (լիցենզիայի) պայմանների խախտմամբ, որն իր մեջ ներառում է նաև թույլտվության (լիցենզիայի) գործողության ժամկետի ավարտի դեպքում՝ առանց դրա ժամկետը սահմանված կարգով երկարաձգելու, զենքը պահելը և (կամ) կրելը: Նշված դեպքերում առաջանում է **վարչական պատասխանատվություն**:

• Ձենքը պահելը և (կամ) կրելը՝ ի սկզբանե **առանց համապատասխան թույլտվության (լիցեն-**

զիայի), որի դեպքում արդեն վրա է հասնում քրեական պատասխանատվություն:

Երկրորդ մտտեցման հիմքում, ըստ ամենայնի, ընկած է իրավական այն ընկալումը, որի համաձայն՝ զենքի շրջանառությունը ենթակա է պետության կողմից առավել խիստ վերահսկողության, քանի որ այդ ոլորտում սահմանված կանոնակարգերի խախտումները կարող են էական ազդեցություն ունենալ հասարակական անվտանգության տեսանկյունից: Հետևաբար, թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենքը պահելը կամ կրելը (օգտագործելը) պետք է գնահատվի ոչ թե որպես զուտ վարչաիրավական բնույթի խախտում, այլ որպես զենքի շրջանառության իրավական ռեժիմի էական խախտում, որը արդարացնում է անձի նկատմամբ քրեական պատասխանատվության կիրառումը:

Այս առումով հատուկ ուշադրության է արժանի Կանադայում և Անգլիայում ձևավորված փորձը: Նշված երկրներում քննարկվող հարցին առնչվող իրավակարգավորումների համակարգային վերլուծությունը հիմք է տալիս փաստել, որ զենքի թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո՝ առանց համապատասխան թույլտվության զենքին տիրապետելը (պահելը, կրելը, օգտագործելը) սկզբունքորեն հանգեցնում է քրեական պատասխանատվության¹³:

Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել, որ հիշյալ երկրներում քրեական պատասխանատվությունը վրա է հասնում ոչ թե անմիջապես, այլ օրենսդրորեն սահմանված արտոնյալ ժամկետի (grace period) ավարտից հետո՝ զենքը տիրապետելու (պահելու, կրելու, օգտագործելու) դեպքում:

Այսպես՝ Կանադայի «Չենքի մասին» օրենքի համաձայն՝ եթե հրազենի թույլտվությունը (լիցենզիան) չի երկարաձգվում մինչև դրա գործողության ժամկետի ավարտը, ապա թույլտվության (լիցենզիայի) գործողությունն ավտոմատ երկարաձգվում է վեց ամսով՝ սկսած այն օրվանից, երբ այն պետք է ավարտվեր նշված օրենքի իրավակարգավորումների համաձայն¹⁴: Այնուհանդերձ, օրենքը սահմանում է, որ արտոնյալ ժամանակահատվածում թույլտվության (լիցենզիայի) սեփականատերը, մինչև լիցենզիայի սահմանված ընթացակարգով երկարաձգումը, իրավունք չունի կրել կամ օգտագործել այդ հրազենը, ինչպես նաև ձեռք բերել հրազեն կամ ռազմամթերք¹⁵:

Հարկ է նկատել, որ նշված իրավակարգավորումը Կանադայի օրենսդրության մեջ ներդրվել է 2017 թվականի նոյեմբերի 30-ից և նպատակ է հետապնդում սահմանել արտոնյալ ժամկետ այն անձանց համար, ովքեր թույլտվությունների ժամկետների ավարտից հետո, որոշ հանգամանքներով պայմանավորված, չեն երկարաձգել դրանք (օրինակ՝ երկարատև արձակուրդի, զինվորական ծա-

ռայության կամ հոսպիտալացման պատճառով)¹⁶: Արտոնյալ վեցամսյա ժամկետի ընթացքում զենքի սեփականատերը կարող է երկարաձգել լիցենզիան՝ առանց քրեական հետապնդման ենթարկվելու վտանգի: Մինչ այդ գործող իրավակարգավորման պայմաններում՝ թույլտվության (լիցենզիայի) ժամկետի լրանալուց հետո հրազենը պահելը կարող էր անմիջապես հանգեցնել քրեական պատասխանատվության, որի համար Կանադայի քրեական օրենսգրքով նախատեսված է մինչև հինգ տարվա ազատազրկում¹⁷:

Այսպիսով, Կանադայի օրենսդրությունը զենքի թույլտվության ժամկետը լրանալուց հետո, մինչև դրա երկարաձգումը, անձի համար սահմանում է արտոնյալ ժամկետ, միևնույն ժամանակ՝ մինչև թույլտվության սահմանված ընթացակարգով երկարաձգումը, սահմանափակում է անձի՝ նշված զենքի հետ կապված իրավունքները (կրել, տեղափոխել, օգտագործել, դրա համար ձեռք բերել ռազմամթերք և այլն): Նշված ժամկետի ավարտից հետո զենքը պահելը հանգեցնում է քրեական պատասխանատվության:

Կանադայում սույն ոլորտին վերաբերելի կանոնակարգումներից հատուկ ուշադրության է արժանի այն, որ այստեղ զենքի թույլտվության գործողության ժամկետը լրանալուց երեք ամիս առաջ անձանց ավտոմատ կերպով ուղարկվում է թույլտվությունը վերագրանցելու վերաբերյալ ծանուցումներ¹⁸:

Անգլիական օրենսդրությունը ևս թույլտվության (սերտիֆիկատի) ժամկետը լրանալուց հետո անձի համար սահմանում է արտոնյալ ժամանակահատված: Այսպես՝ Անգլիայի «Հրազենի մասին» օրենքի «Սերտիֆիկատներ, սահմանափակ երկարաձգում» վերտառությամբ հողվածը սահմանում է՝

«(1) Սույն հոդվածը կիրառվում է այն դեպքերում, երբ՝

ա) սերտիֆիկատի երկարաձգման դիմումը ներկայացվել է սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտից առնվազն 8 շաբաթ առաջ կամ մինչև այդ օրը, սակայն՝

բ) ոստիկանության գլխավոր պաշտոնյան սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտից առաջ չի ընդունել որոշում՝ դիմումը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ:

(2) Սերտիֆիկատը շարունակում է գործել սույն ենթակետի ուժով մինչև հետևյալ իրադարձություններից առաջինի վրա հասնելը՝

ա) ոստիկանության գլխավոր պաշտոնյան որոշում է ընդունում դիմումը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ,

բ) երկարաձգման ժամանակահատվածի ավարտը:

www.aradaradutyjournal.com

(3) Սույն հոդվածի (2) ենթակետում «երկարաձգման ժամանակահատված» ասելով՝ նկատի է առնվում 8 շաբաթ տևող ժամանակահատվածը, որը սկսվում է այն օրվան հաջորդող օրվանից, երբ սերտիֆիկատի գործողության ժամկետը պետք է ավարտվեր:

(4) Եթե (2) ենթակետի (ա) կետում նշված իրադարձությունը վրա է հասնում առաջինը, և ուստիկանության գլխավոր պաշտոնյան բավարարում է դիմումը, ապա այն ժամանակահատվածը, որի ընթացքում սերտիֆիկատը շարունակել է գործել սույն հոդվածի (2) ենթակետի հիման վրա, 28A հոդվածի (1) մասի նպատակներով համարվում է երկարաձգված սերտիֆիկատի գործողության ժամկետի մաս (...)19»:

Ինչպես նկատում ենք, անգլիական օրենսդրությունը անձի համար արտոնյալ ժամկետ սահմանում է բացառապես այն դեպքում, երբ վերջինս զենքի թույլտվության (սերտիֆիկատի) գործողության ժամկետի ավարտից առաջ՝ սահմանված ժամկետում, իրավասու մարմնին ներկայացրել է թույլտվության երկարաձգման դիմում, սակայն վերջինս մինչ այդ ժամկետի ավարտը չի ընդունել որոշում՝ դիմումը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ: Մյուս դեպքերում՝ թույլտվության (սերտիֆիկատի) գործողության ժամկետի ավարտից հետո, զենքը պահելը համարվում է չարտոնված և կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության:

Հարկ է նշել, որ քննարկվող հարցի վերաբերյալ արտասահմանյան երկրներում ձևավորված մոտեցումներից մեզ համար առավել ընդունելի է երկրորդը: Մեր գնահատմամբ՝ թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենքը պահելը կամ կրելը (օգտագործելը) հանգեցնում է ոչ միայն սահմանված վարչաիրավական կարգավորումների չպահպանմանը, այլև էականորեն խաթարում է զենքի շրջանառության իրավական ռեժիմը: Պետությունը սահմանելով զենքի շրջանառության լիցենզավորման (թույլտվության) համակարգ՝ նախատեսում է նաև թույլտվությունների պարբերական վերանայման արդյունավետ կառուցակարգեր, որը նպատակ է հետապնդում ապահովել զենքի գտնվելը միայն այն անձանց մոտ, ովքեր համապատասխանում են օրենքով նախատեսված պահանջներին:

Եզրակացություն

Օրենքով սահմանված կարգով տրված թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենքի շրջանառությունը փաստացի տեղի է ունենում առանց իրավական հիմքի: Նշված իրավիճակը վտանգ է ներկայացնում հանրային անվտանգության համար և խաթարում է զենքի շրջանառության նկատմամբ պետական վերահսկողության

արդյունավետությունը: Կարծում ենք՝ քննարկվող իրավիճակում պետության քրեաիրավական արձագանքը կարող է հանդիսանալ զենքի ապօրինի շրջանառությունից հանրային անվտանգությունն ապահովելու արդյունավետ և համարժեք միջոց: Այն կարող է ունենալ կանխարգելիչ նշանակություն՝ խթանելով զենքի սեփականատերերի կողմից զենքի շրջանառության սահմանված կանոնակարգերի պահպանմանումը, ինչպես նաև թույլտվությունների երկարաձգման պարտականության պատշաճ կատարումը:

Հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև հաշվի առնելով հիշյալ երկրների լավագույն փորձը՝ առաջարկում ենք.

- Թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո, առանց սահմանված կարգով դրանք երկարաձգելու, զենք պահելու կամ կրելու (իրավաբանական անձի դեպքում՝ պահելու կամ օգտագործելու) դեպքում անձի արարքը որակել զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերով:

- Բացառել անձին քրեական պատասխանատվության ենթարկելն այն դեպքում, երբ թույլտվությունների ժամկետները երկարաձգելու համար վերջինս սահմանված կարգով դիմում է ներկայացրել իրավասու մարմնին, սակայն մինչև դրանց ժամկետների ավարտը վերջինս չի ընդունել որոշում՝ դիմումը բավարարելու կամ մերժելու մասին:

- Հնարավոր չարաշահումներից խուսափելու նպատակով սահմանել վարչական պատասխանատվություն այն դեպքերի համար, երբ անձը զենքը պահելու, կրելու կամ օգտագործելու թույլտվությունների ժամկետները երկարաձգելու համար դիմումը ներկայացրել է սահմանված մեկամսյա ժամկետի խախտմամբ (օրինակ՝ ժամկետը լրանալուց տասն օր առաջ):

- Անմիջապես քրեական պատասխանատվության կիրառումը բացառելու նպատակով՝ թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենքի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի համար Օրենքով սահմանել երկամսյա արտոնյալ ժամկետ: Միաժամանակ, անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել, որ արտոնյալ ժամկետում անձն իրավունք չունի կրել կամ օգտագործել այդ զենքը: Այս արգելքին հակառակ՝ զենքը կրելը կամ օգտագործելը նույնպես պետք է որակվի զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերով:

- Մշակել և ներդնել թույլտվությունների ժամկետների ավարտի վերաբերյալ նախնական ծանուցման (reminder notice) արդյունավետ էլեկտրոնային գործիքակազմեր (մեխանիզմներ): Այս ոլորտում ինքնաշխատ էլեկտրոնային ծանուցման համակարգերի մշակումը և ներդրումը կարող է հան-

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դիսանալ կանխարգելիչ միջոց՝ հնարավորություն տալով զենքի սեփականատիրոջը կամ այլ օրինական տիրապետողին ժամանակին ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ թույլտվությունները երկարաձգելու համար, այդպեսով նվազեցնելով նաև այն դեպքերը, երբ անձը չի երկարաձգում թույլտվությունների ժամկետները պարզապես մոռացության (անփութության) հետևանքով: Բացի այդ, նախնական ծանուցման արդյունավետ մեխանիզմների ներդրումը հնարավորություն կտա տվյալ դեպքով նախաձեռնված քրեական վարույթի ընթացքում հիմնավորել անձի՝ զենքն ապօրինի կերպով պահելու կամ կրելու (օգտագործելու) դիտավորությունը:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկում ենք «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1 և 12.2 մասերով՝

«12.1 Այն դեպքում, երբ մինչև սույն հոդվածով նախատեսված թույլտվությունների ժամկետների ավարտը անձը սույն հոդվածով սահմանված կարգով դիմում չի ներկայացրել դրանց ժամկետները երկարաձգելու համար, ապա թույլտվությունների ժամկետներն ավտոմատ երկարաձգվում են երկու ամսով՝ սկսած այն օրվանից, երբ դրանք պետք է ավարտվեին սույն օրենքի համաձայն:

12.2 Սույն հոդվածի 12.1 մասով նախատեսված դեպքում՝ անձը չի կարող կրել կամ օգտագործել այդ զենքը»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 192-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ֆիզիկական անձանց կողմից բնակության վայրը փոխելիս, իսկ իրավաբանական անձանց կողմից հաշվառման վայրը փոխելիս զենքի գրանցման (վերագրանցման) կամ զենքը պահելու, կրելու կամ օգտագործելու թույլտվությունների ժամկետները երկարաձգելու համար դիմում ներկայացնելու սահմանված ժամկետները կամ ոստիկանությունում զենքը հաշվառման վերցնելու կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր միավոր զենքի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով»:

¹ Տե՛ս ՀՀ օրենքը զենքի շրջանառության կարգավորման մասին: Ընդունվել է 05.10.2022թ., ուժի մեջ է մտել 28.04.2023թ., ՀՕ-368-Ն: Գործում է:

² Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 192-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսված ֆիզիկական անձանց կողմից բնակության վայրը փոխելիս, իսկ իրավաբանական անձանց կողմից հաշվառման վայրը փոխելիս զենքի գրանցման (վերագրանցման) սահմանված ժամկետները խախտելու կամ ոստիկանությունում այն հաշվառման վերցնելու կանոնները խախտելու համար: Ըստ էության, առաջին դեպքում խոսքը «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 31-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված պարտականության չկատարման մասին է, ըստ որի՝ իրավաբանական անձը զենք պահելու զետեղարանի գտնվելու վայրի հասցեն, իսկ քաղաքացին զենքն իր մշտական բնակության վայրից տեղափոխելիս, եթե զենքագանցելու է 10 օրը, ապա տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը՝ զետեղարանը կամ զենքը նոր հասցեում հաշվառելու համար: Երկրորդ դեպքը վերաբերում է զենք ձեռք բերելուց հետո այն հաշվառման վերցնելու սահմանված ժամկետի չպահպանմանը: Օրինակ, Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքացու ձեռք բերած զենքը ձեռքբերման օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում էնթակա է հաշվառման Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում:

³ Նշված զանցակազմի մանրամասն վերլուծության վերաբերյալ տե՛ս Н. Н. Макеев, Некоторые аспекты государственного регулирования правоотношений, связанных с оборотом огнестрельного охотничьего оружия, Алтайский вестник государственной и муниципальной службы, 2021, № 19, էջեր 59-61, Р.Р. Фаисханов, А.А. Шмидт, Противоправное хранение гражданского оружия: вопросы квалификации, Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского, 2023, № 3, էջեր 136-147:

⁴ Տե՛ս ՌԴ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հոդված 20.11, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34661/ (վերջին մուտք՝ 20.02.2026թ.):

⁵ Տե՛ս Ղազախստանի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հոդված 486, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://adilet.zan.kz/rus/docs/K1400000235> (վերջին մուտք՝ 21.02.2026թ.):

⁶ Տե՛ս Բելոռուսի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հոդված 23.31, հասանելի է հետևյալ

հղմամբ՝ <https://etalonline.by/document/?regnum=hk2100091> (վերջին մուտք՝ 20.02.2026թ.):

Տե՛ս Ուկրաինայի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հոդված 192, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://continent-online.com/Document/?doc_id=30418317#pos=527;-42 (վերջին մուտք՝ 20.02.2026թ.):

Տե՛ս Մոլդովայի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հոդված 362, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.legis.md/cautare/getResults?doc_id=148850&lang=ru# (վերջին մուտք՝ 20.02.2026թ.):

⁹ Տե՛ս նույն տեղում:

¹⁰ Եվրոպական հրազենի անցագիրը (European Firearms Pass, EFP) նախատեսված է հեշտացնելու համար քրիմալային հրաձգությանը զբաղվողների և որսորդների տեղաշարժը Եվրամիության մի երկրից մյուսը՝ իրենց անձնական հրազենով: Այս մասին մանրամասն տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://poliisi.fi/en/european-firearms-pass> (վերջին մուտք՝ 10.03.2026թ.):

Տե՛ս Էստոնիայի «Ձենքի մասին» օրենքը, հոդված 44, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.riigiteataja.ee/en/eli/504122014001/consolide> (վերջին մուտք՝ 13.03.2026թ.):

¹² Տե՛ս նույն տեղում, հոդված 89⁴:

¹³ Տե՛ս Կանադայի քրեական օրենսգիրք, հոդված 91(1), հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.canlii.org/en/ca/laws/stat/rsc-1985-c-c-46/latest/> (վերջին մուտք՝ 13.03.2026թ.), Անգլիայի «Հրազենի մասին» օրենք, հոդված 1(2), հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.legislation.gov.uk/ukpga/1968/27/contents> (վերջին մուտք՝ 13.03.2026թ.):

¹⁴ Տե՛ս Կանադայի «Ձենքի մասին» օրենք (Firearms Act), հոդված 64, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/f-11.6/page-5.html#h-223601> (վերջին մուտք՝ 20.02.2026թ.):

¹⁵ Տե՛ս Կանադայի խորհրդարանի պաշտոնական կայքէջը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://lop.parl.ca/sites/PublicWebsite/default/en_CA/ResearchPublications/LegislativeSummaries/412C42E?utm#a14 (վերջին մուտք՝ 13.03.2026թ.):

¹⁶ Տե՛ս «Կանադայի պաշտոնական տեղեկագիր», հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://gazette.gc.ca/rp-pr/p2/2017/2017-11-15/html/si-tr70-eng.html> (վերջին մուտք՝ 13.03.2026թ.):

¹⁷ Տե՛ս CBC News. Gun owners to get 6-month grace period when licence expires, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.cbc.ca/news/politics/gun-owners-get-grace-period-1.4404109> (վերջին մուտք՝ 10.03.2026թ.):

¹⁸ Տե՛ս Royal Canadian Mounted Police, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://rcmp.ca/en/firearms/licensing/licence-renewal-individuals> (վերջին մուտք՝ 10.03.2026թ.):

¹⁹ Տե՛ս Անգլիայի «Հրազենի մասին» օրենք, 28B, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.legislation.gov.uk/ukpga/1968/27/section/28B> (վերջին մուտք՝ 20.02.2026թ.):

Օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկ

1. Անգլիայի «Հրազենի մասին» օրենք, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.legislation.gov.uk/ukpga/1968/27/contents>
2. Բելոռուսի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://etalonline.by/document/?regnum=hk2100091>
3. Էստոնիայի «Ձենքի մասին» օրենքը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.riigiteataja.ee/en/eli/504122014001/consolide>
4. Կանադայի «Ձենքի մասին» օրենք, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/f-11.6/page-5.html#h-223601>
5. Կանադայի խորհրդարանի պաշտոնական կայքէջը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://lop.parl.ca/sites/PublicWebsite/default/en_CA/ResearchPublications/LegislativeSummaries/412C42E?utm#a14
6. Կանադայի պաշտոնական տեղեկագիր, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://gazette.gc.ca/rp-pr/p2/2017/2017-11-15/html/si-tr70-eng.html>
7. Կանադայի քրեական օրենսգիրք, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.canlii.org/en/ca/laws/stat/rsc-1985-c-c-46/latest/>
8. ՀՀ օրենքը զենքի շրջանառության կարգավորման մասին: Ընդունվել է 05.10.2022թ., ուժի մեջ է մտել 28.04.2023թ., ՀՕ-368-Ն: Գործում է:
9. Ղազախստանի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://adilet.zan.kz/rus/docs/K1400000235>
10. Մոլդովայի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.legis.md/cautare/getResults?doc_id=148850&lang=ru#
11. Ուկրաինայի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://continent-online.com/Document/?doc_id=30418317#pos=527;-42
12. ՌԴ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34661/
13. Н. Н. Makeev, Некоторые аспекты государственного регулирования правоотношений, связанных с оборотом огнестрельного охотничьего оружия, Алтайский вестник государственной и муниципальной службы, 2021, № 19
14. Р. Р. Фаисханов, А. А. Шмидт, Противоправное хранение гражданского оружия: вопросы квалификации,

Վիրաբ Ամբարձումյան
Преподаватель кафедры уголовного права
Ереванского Государственного Университета

РЕЗЮМЕ

Проблемы правовой квалификации в случаях просроченных разрешений на оружие

В статье рассматриваются проблемы правовой квалификации в случаях истечения срока действия разрешений на оружие.

По мнению автора, хранение или ношение (использование) оружия после истечения срока действия разрешения приводит не только к несоблюдению установленных административно-правовых требований, но и существенно нарушает правовой режим оборота оружия. Устанавливая систему лицензирования (разрешений) оборота оружия, государство предусматривает также эффективные механизмы периодического пересмотра разрешений, направленные на обеспечение нахождения оружия исключительно у лиц, соответствующих установленным законом требованиям.

По оценке автора, после истечения срока действия разрешений оборот оружия фактически осуществляется без правового основания, что представляет угрозу общественной безопасности и подрывает эффективность государственного контроля за оборотом оружия.

По мнению автора, в рассматриваемой ситуации уголовно-правовая реакция государства может выступать эффективным и соразмерным средством обеспечения общественной безопасности от незаконного оборота оружия. Она может иметь превентивное значение, стимулируя владельцев оружия соблюдать установленные правила его оборота, а также надлежащим образом исполнять обязанность по продлению разрешений. Следовательно, в случае хранения или ношения оружия после истечения срока действия разрешений (для юридических лиц — хранения или использования) деяние должно квалифицироваться по составам преступлений, предусматривающим уголовную ответственность за незаконный оборот оружия.

Ключевые слова: просроченные разрешения; оборот оружия; общественная безопасность; государственный контроль; проблемы квалификации; внутригосударственное правовое регулирование; опыт зарубежных стран; административная ответственность; уголовная ответственность; льготный срок.

Virab Hambardzumyan

Lecturer at the Chair of Criminal Law, Faculty of Law, Yerevan State University

SUMMARY

Problems of legal qualification in cases of expired firearm permits

The article examines issues of legal qualification in cases where firearm permits have expired.

According to the author, the possession or carrying (use) of a firearm after the expiration of a permit not only constitutes a violation of established administrative regulations but also significantly undermines the legal regime governing the circulation of firearms. By establishing a licensing (permit) system for firearm circulation, the state also provides for effective mechanisms for the periodic review of permits, aimed at ensuring that firearms remain only in the possession of individuals who meet the legal requirements.

In the author's assessment, once permits expire, the circulation of firearms effectively takes place without a legal basis, posing a threat to public safety and weakening the effectiveness of state control over firearm circulation.

The author argues that, in such circumstances, a criminal law response by the state may serve as an effective and proportionate means of ensuring public safety against illegal firearm circulation. It may also have a preventive function by encouraging firearm owners to comply with the established regulations governing firearm circulation and to properly fulfill their obligation to renew permits. Therefore, the possession or carrying of firearms after the expiration of permits (or, in the case of legal entities, possession or use) should be qualified under the criminal offenses that establish liability for illegal firearm circulation.

Key words: expired permits; firearm circulation; public safety; state control; issues of legal classification; domestic legal regulation; foreign countries' experience; administrative liability; criminal liability; grace period.

Բնագիրը ներկայացվել է 15.04.2026թ.

Ընդունվել է տպագրության 27.04.26թ.

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական
պալատի դատավորի օգնական,
իրավագիտության մագիստրոս

**ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂԻ, ԱՐՏԱԴՐՈՂԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

Արհեստական բանականությունը ներկայումս իր կիրառությունն է գտել ամենատարբեր ոլորտներում՝ տրանսպորտային փոխադրամիջոցներից սկսած մինչև բժշկություն: Եվ նման համալիր օգտագործումն ունի ինչպես իր դրական, այնպես էլ բացասական հետևանքները: Ուստի, հարց է առաջանում, երբ արհեստական բանականության համակարգի գործունեությունն առաջացրել է հանցավոր հետևանքներ, ով պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության դրա համար:

Սույն աշխատանքը ուսումնասիրում է արհեստական բանականության կողմից հանցավոր արարք կատարելու դեպքում քրեական պատասխանատվության հիմնահարցը: Այն է, ով է, ով է երբ պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության՝ ծրագրավորողը, արտադրողը, օգտագործողը:

Հետազոտության արդյունքում ներկայացվել են մի շարք առաջարկներ արհեստական բանականության ծրագրավորողին, արտադրողին, օգտագործողին քրեական պատասխանատվության ենթարկելու որոշակի հանցակազմերի ձևավորման, գործող հանցակազմերի կատարելագործման, հանցանքի կատարմանը ներգրավված արհեստական բանականության համակարգերի նկատմամբ անվտանգության միջոցներ կիրառելու վերաբերյալ:

Հիմնաբառեր - արհեստական բանականության համակարգ, քրեական պատասխանատվություն, արհեստական բանականության համակարգը ծրագրավորող, արհեստական բանականության համակարգն արտադրող, արհեստական բանականության համակարգն օգտագործող, անվտանգության միջոցներ:

Ներածություն

Արհեստական բանականության լայնածավալ կիրառությունը բազմաթիվ խնդիրներ է առաջ բերել, որոնցից ամենաէականը վերջինիս կողմից վնաս պատճառելու դեպքում պատասխանատվության հարցի հետ է կապված: Ծիշտ է, արհեստական բանականությունը մարդու կողմից ստեղծված ալգորիթմ է, բայց, այնուամենայնիվ, դրա որոշակի համակարգեր ինքնազարգացող են և օժտված են որոշակի ինքնուրույնությամբ, քանզի դրանց հետագա գործունեությունը մարդու միջամտությունից և վերահսկողությունից որոշակիորեն դուրս է:

Հարց է առաջանում՝ որ դեպքում պետք է արհեստական բանականության կողմից քրեական օրենքով պաշտպանվող օբյեկտներին վնաս պատճառելու դեպքում պատասխանատվության ենթարկվի ծրագրավորողը, արտադրողը, որ դեպքում օգտագործողը:

Բացի այդ, լայն տարածում է գտել արհեստական բանականությունը որպես գործիք օգտագործելը հանցանք կատարելու համար՝ երբ այն ի սկզբանե ստեղծվում, ծրագրավորվում է հանցավոր նպատակներով կամ որոշակի փոփոխություններ ալգորիթմի մեջ կատարելով պիտանի է դառնում հանցանք կատարելու համար, կամ առանց որևէ փոփոխության, ինքնին օգտագործվում է հանցանք կատարելու համար:

Թեման արդիական է նաև նրանով, որ Հայաստանի Հանրապետությունում նախագծվում է կառուցել արհեստական բանականության առաջին գործարանը:

Աշխատանքը նպատակ ունի պարզել, թե արհեստական բանականության կողմից հանցավոր արարք կատարելու դեպքում ով պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության՝ վերլուծելով միջազգային և ներպետական իրավունքի նորմերը, տեսական մոտեցումները, ինչպես նաև ներկայացնելով գործնական խնդիրները:

Հետազոտության կատարման ընթացքում օգտագործվել են վիճակագրական վերլուծության, համեմատախրավական, համակարգային, պատմահամեմատական, ձևական տրամամաբանական, անալիզի, սինթեզի, ինդուկցիայի, դեդուկցիայի, իրավական մոդելավորման մեթոդները:

Հետազոտություն

Արհեստական բանականության հասկացությունը. միջազգային իրավակարգավորումը

Վերջին մի քանի տարիների ընթացքում զգալի բանավեճ է ծավալվել արհեստական բանականության էության շուրջ: Ֆուտուրոլոգները հայտարարել են նոր տեսակի՝ machina sapiens-ի ծնունդը, որը, ըստ նրանց, երկրի վրա խելացի արարածների շարքում կկիսի մարդու տեղը:

Արհեստական բանականությունը տեխնոլո-

www.ardaradutyjournal.com

գիական լուծումների համալիր է, որը թույլ է տալիս նմանակել մարդու ճանաչողական (կոգնիտիվ) գործառնությունները (ներառյալ ինքնուսուցումը և լուծումների որոնումը՝ առանց նախապես տրված պատճենի) և կոնկրետ առաջադրանքների կատարման ընթացքում ստանալ արդյունքներ, որոնք համադրելի են առնվազն մարդու մտավոր գործունեության արդյունքների հետ: Տեխնոլոգիական լուծումների համալիրը ներառում է տեղեկատվական-հաղորդակցական ենթակառուցվածքը (այդ թվում՝ տեղեկատվական համակարգեր, տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցեր, տեղեկատվության մշակման այլ տեխնիկական միջոցներ), ծրագրային ապահովումը (այդ թվում՝ այնպիսին, որտեղ կիրառվում են մեքենայական ուսուցման մեթոդներ), տվյալների մշակման և լուծումների որոնման գործընթացներն ու ծառայությունները:

Արհեստական բանականության համակարգերի հիմնական բաղադրիչ մասերն են՝ գիտելիքների բազան, որը թույլ է տալիս իրականացնել տեղեկատվության որոնում, պահպանում և փոխակերպում, խնդիրների լուծիչը, այսինքն՝ բլոկը, որն ընդունակ է գտնել լուծումներ՝ շնորհիվ իր մեջ ներդրված ռազմավարության և ինտելեկտուալ (բանական) ինտելեֆեյսը՝ մարդու հետ հաղորդակցվելու համար:

Ինֆորմատիկայի մասնագիտական գրականության մեջ հաճախ առանձնացնում են արհեստական բանականության հետևյալ տեսակները՝ ավտոմատացված (ընդունակ է կատարել առօրյա/միօրինակ առաջադրանքներ), օժանդակ (օպտիմալացնում է մարդու կողմից ընդունվող որոշումները), ընդլայնված (ընդունակ է աջակցել մարդկային մտածողությանը ոչ ստանդարտ իրավիճակներում), ինքնավար (իրականացնում է գործունեությունն ինքնուրույն՝ մարդու նման):

Եվրոպայի խորհրդի հովանու ներքո 2024 թվականի սեպտեմբերի 5-ին ընդունվել է «Արհեստական բանականության և մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության մասին» շրջանակային կոնվենցիան (նաև կոչվում է Արհեստական բանականության մասին շրջանակային կոնվենցիա կամ Արհեստական բանականության կոնվենցիա):

Այս կոնվենցիան միավորում է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մոտեցումները սկզբունքների մակարդակում՝ առաջարկելով արհեստական բանականության ռիսկերն ու ազդեցությունները գնահատելու մեթոդաբանություն՝ միաժամանակ թողնելով օրենսդրական բազմազանության հնարավորություն: Կոնվենցիայի նպատակն է ապահովել, որ արհեստական բանականության տեխնոլոգիաների մշակումն ու օգտագործումը համապատասխանեն մարդու հիմնարար իրավունքներին, ժողովրդավարական արժեքներին և օրենքի

գերակայությանը, անդրադառնալով այնպիսի ռիսկերի, ինչպիսիք են ապատեղեկատվությունը, ալգորիթմական խտրականությունը և պետական հաստատություններին սպառնացող վտանգները:

Շուրջ 17 երկիր, այդ թվում՝ Վրաստանը, ստորագրել են Արհեստական բանականության մասին շրջանակային կոնվենցիան: Հայաստանի Հանրապետությունը դեռևս այն չի ստորագրել:

Կոնվենցիայիով սահմանված է, որ «Արհեստական բանականության համակարգ» նշանակում է մեքենայի վրա հիմնված համակարգ, որը որոշակի նպատակով՝ հստակ կամ անուղղակի, վերամշակում է մուտքային տվյալները՝ ստեղծելով ելքային արդյունքներ (օրինակ՝ կանխատեսումներ, բովանդակություն, առաջարկություններ կամ որոշումներ), որոնք կարող են ազդել ֆիզիկական կամ վիրտուալ միջավայրերի վրա: Նման համակարգերը կարող են տարբեր լինել՝ ըստ ինքնավարության և հարմարվողականության մակարդակի:

Կոնվենցիայով նշված է, որ այն չի կիրառվում արհեստական բանականության համակարգերի հետազոտական և զարգացման այն գործունեությունների նկատմամբ, որոնք դեռևս հասանելի չեն օգտագործման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ փորձարկումները կամ նմանատիպ այլ գործողությունները իրականացվում են այնպես, որ ունենան մարդու իրավունքների, ժողովրդավարության կամ իրավունքի գերակայության վրա ազդելու ներուժ:

Հիմնական սկզբունքներն ու իրավունքները պարունակվում են երրորդ գլխում, որոնք են մարդու արժանապատվությունը և անհատական ինքնավարությունը, թափանցիկությունը և վերահսկողությունը, պատասխանատվությունը և հաշվետվողականությունը, հավասարությունը և խտրականության արգելքը, գաղտնիությունը և անձնական տվյալների պաշտպանությունը, հուսալիությունը, անվտանգ նորարարությունը:

Այս համատեքստում առանձնակի ուշադրության է արժանի հավասարության և խտրականության արգելքի սկզբունքը, որի համաձայն՝ յուրաքանչյուր Կողմ ընդունում կամ պահպանում է միջոցառումներ՝ ապահովելու համար, որ արհեստական բանականության համակարգերի կենսագործունեության ընթացքում իրականացվող գործունեությունը հարգի հավասարության սկզբունքը, ներառյալ՝ զենդերային հավասարությունը, ինչպես նաև խտրականության արգելքը, ինչպես սահմանված է կիրառելի միջազգային և ներքին օրենսդրությամբ: Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է ընդունել կամ պահպանել միջոցառումներ, որոնք ուղղված են անհավասարությունների հաղթահարմանը՝ արդար, իրավաչափ և հավասար արդյունքներ ապահովելու նպատակով, իր կիրառելի ներպետական և միջազգային մարդու իրավունքների

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վերաբերյալ պարտավորություններին համապատասխան, արհեստական բանականության համակարգերի կենսագործունեության ընթացքում իրականացվող գործունեության համատեքստում:

Անվտանգ նորարարության սկզբունքի համաձայն՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության վրա բացասական ազդեցություններից խուսափելու նպատակով նորարարությունը խթանելու տեսանկյունից՝ յուրաքանչյուր Կողմ, ըստ անհրաժեշտության, նպաստում է վերահսկվող միջավայրերի ստեղծմանը՝ արհեստական բանականության համակարգերի մշակում և փորձարկում իրականացնելու համար, սեփական համապատասխան լիազոր մարմինների վերահսկողության ներքո:

Չորրորդ գլուխը սահմանում է վերականգնողական միջոցները: Մասնավորապես, սահմանված է, որ յուրաքանչյուր Կողմ՝ իր միջազգային պարտավորությունների շրջանակում և համահունչ իր ներքին օրենսդրությանը, պարտավոր է ընդունել կամ պահպանել միջոցառումներ՝ ապահովելու մարդու իրավունքների խախտումների նկատմամբ հասանելի և արդյունավետ վերականգնողական մեխանիզմների առկայությունը, որոնք բխում են արհեստական բանականության համակարգերի կենսագործունեության ընթացքում իրականացվող գործունեությունից: Մասնավորապես, միջոցառումներ, որոնք ներառում են՝ ապահովել այն տեղեկությունների գրանցումը և տրամադրումը, որոնք վերաբերում են արհեստական բանականության համակարգերին, որոնք կարող են լուրջ ազդեցություն ունենալ մարդու իրավունքների վրա, ինչպես նաև այդ տեղեկատվությանը մուտք ունեցող լիազորված մարմինների կողմից դրանց հասանելիությունը և, անհրաժեշտության դեպքում, տեղեկությունների տրամադրումը ազդեցություն ստացած անձանց, երաշխավորել, որ վերոհիշյալ տեղեկատվությունը բավարար լինի ազդված անձանց համար՝ վիճարկելու կամ գնահատելու այն որոշումները, որոնք կատարվել կամ էականորեն ձևավորվել են համակարգի օգտագործմամբ, և, համապատասխանության դեպքում, նաև՝ ինքնին համակարգի կիրառումը, տրամադրել արդյունավետ հնարավորություն շահագրգիռ անձանց՝ բողոք ներկայացնելու լիազորված մարմիններին:

Սահմանված են նաև ընթացակարգային երաշխիքները՝ յուրաքանչյուր Կողմ պարտավոր է ապահովել, որ այն դեպքերում, երբ արհեստական բանականության համակարգը լուրջ ազդեցություն է գործում մարդու իրավունքների իրացման վրա, այդպիսի ազդեցություն կրած անձանց համար հասանելի լինեն արդյունավետ ընթացակարգային երաշխիքներ, պաշտպանություններ և իրավական մեխանիզմներ, որոնք համահունչ են կիրառելի միջազգային և ներքին օրենքներին:

Հինգերորդ գլուխը սահմանում է ռիսկերի և բացասական ազդեցությունների գնահատման և մեղմման շրջանակը: Սահմանված է, որ յուրաքանչյուր Կողմ, հաշվի առնելով սահմանված սկզբունքները, պարտավոր է ընդունել կամ պահպանել միջոցառումներ՝ արհեստական բանականության համակարգերի ռիսկերի ճանաչման, գնահատման, կանխարգելման և մեղմման համար՝ հաշվի առնելով մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության վրա դրանց իրական և հնարավոր ազդեցությունները: Այդ միջոցառումները պետք է լինեն աստիճանային և տարբերակված՝ ըստ անհրաժեշտության: Պետք է բավարար չափով հաշվի առնել արհեստական բանականության համակարգերի համատեքստը և նախատեսված օգտագործումը, հատկապես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության նկատմամբ ռիսկերի առումով, գնահատել հնարավոր ազդեցությունների ծանրությունը և հավանականությունը. անհրաժեշտության դեպքում հաշվի առնել համապատասխան շահագրգիռ կողմերի տեսակետերը, հատկապես նրանց, ում իրավունքների վրա դրանք կարող են ազդեցություն ունենալ, այն կիրառել շարունակաբար՝ արհեստական բանականության համակարգի կենսագործունեության ողջ ընթացքում, ներառել մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության նկատմամբ ռիսկերի և բացասական ազդեցությունների մշտական մոնիթորինգը, ներառել ռիսկերի, իրական և հնարավոր ազդեցությունների, ինչպես նաև ռիսկերի կառավարման մոտեցումների փաստաթղթավորում, անհրաժեշտության դեպքում պահանջել արհեստական բանականության համակարգերի փորձարկումը դրանց առաջին օգտագործումից առաջ և նշանակալի փոփոխությունների դեպքում: Սահմանված է, որ յուրաքանչյուր Կողմ ընդունում կամ պահպանում է միջոցառումներ՝ ապահովելու համար, որ արհեստական բանականության համակարգերի բացասական ազդեցությունները մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության վրա համապատասխան կերպով դիտարկվեն և վերացվեն:

Սահմանված է, որ յուրաքանչյուր Կողմ գնահատում է անհրաժեշտությունը արհեստական բանականության համակարգերի որոշակի օգտագործման կասեցման, արգելքի կամ այլ համապատասխան միջոցների կիրառման համար, երբ այդ օգտագործումը համարվում է անհամատեղելի մարդու իրավունքների հարգման, ժողովրդավարության կամ իրավունքի գերակայության հետ:

Հաջորդ կարևոր միջազգային փաստաթուղթը «Արհեստական բանականության մասին» ակտն է (AI Act), որը սահմանում է արհեստական բանականության ընդհանուր կարգավորումը և իրավա-

կան շրջանակը Եվրոպական Միության շրջանակներում :

Այն դասակարգում է արհեստական բանականության կիրառությունները՝ ըստ վնաս պատճառելու ռիսկի.

Անընդունելի ռիսկ - այս կատեգորիայի արհեստական բանականության կիրառությունները արգելված են, բացառությամբ որոշակի բացառությունների: Երբ բացառություն չի կիրառվում, ապա արգելված են.

- Արհեստական բանականության համակարգը շուկա հանելը, շահագործման հանձնելը կամ օգտագործելը, որը շահագործում է ֆիզիկական անձի կամ անձանց որոշակի խմբի խոցելիությունը՝ պայմանավորված նրանց տարիքով, հաշմանդամությամբ կամ սոցիալական ու տնտեսական որոշակի դրությամբ՝ նպատակ ունենալով կամ հանգեցնելով տվյալ անձի կամ այդ խմբին պատկանող անձի վարքագծի էական խաթարմանը այնպիսի ձևով, որը պատճառում է կամ ողջամտորեն կարող է պատճառել այդ անձին կամ մեկ այլ անձի զգալի վնաս:

- Արհեստական բանականության համակարգը շուկա հանելը, շահագործման հանձնելը կամ օգտագործելը՝ ֆիզիկական անձանց կամ նրանց խմբերի գնահատման կամ դասակարգման համար (սոցիալական վարկանիշավորում) որոշակի ժամանակահատվածում՝ հիմնվելով նրանց սոցիալական վարքագծի կամ հայտնի, ենթադրյալ կամ կանխատեսվող անձնական հատկանիշների վրա, որտեղ այդ սոցիալական միավորը (score) հանգեցնում է հետևյալներից մեկին կամ երկուսին՝ որոշակի ֆիզիկական անձանց կամ խմբերի նկատմամբ անբարենպաստ կամ անարդարացի վերաբերմունքի այնպիսի սոցիալական համատեքստերում, որոնք կապ չունեն այն միջավայրի հետ, որտեղ տվյալները սկզբնապես հավաքագրվել են կամ որոշակի ֆիզիկական անձանց կամ խմբերի նկատմամբ անբարենպաստ վերաբերմունքի, որը չարդարացված է կամ անհամաչափ նրանց սոցիալական վարքագծին կամ դրա լրջությանը:

- Արհեստական բանականության համակարգը շուկա հանելը, շահագործման հանձնելը կամ օգտագործելը՝ ֆիզիկական անձանց ռիսկերի գնահատման համար, որպեսզի գնահատվի կամ կանխատեսվի անձի կողմից քրեական հանցագործություն կատարելու հավանականությունը՝ հիմնվելով բացառապես տվյալ անձի պրոֆիլավորման (բնութագրման) կամ նրա անհատական հատկանիշների ու բնավորության գծերի գնահատման վրա: Այս արգելքը չի տարածվում այն արհեստական բանականության համակարգերի վրա, որոնք օգտագործվում են աջակցելու մարդու կողմից իրականացվող գնահատմանը՝ պարզելու անձի ներգրավվածությունը քրեական գործունեության մեջ, որն

արդեն իսկ հիմնված է օբյեկտիվ և ստուգելի փաստերի վրա, որոնք ուղղակիորեն կապված են քրեական գործունեության հետ:

- Արհեստական բանականության համակարգը շուկա հանելը, շահագործման հանձնելը կամ օգտագործելը, որոնք ստեղծում կամ ընդլայնում են դեմքի ճանաչման տվյալների բազաներ՝ համացանցից կամ տեսահսկման համակարգերի (CCTV) կադրերից դեմքի պատկերների անհասցե (զանգվածային) հավաքագրման (scraping) միջոցով:

- Արհեստական բանականության համակարգը շուկա հանելը, շահագործման հանձնելը կամ օգտագործելը՝ աշխատավայրում և կրթական հաստատություններում ֆիզիկական անձի էմոցիաները (հույզերը) վերհանելու (կանխատեսելու) համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արհեստական բանականության համակարգի օգտագործումը նախատեսված է բժշկական կամ անվտանգության նկատառումներով:

- Կենսաչափական դասակարգման համակարգերը շուկա հանելը, շահագործման հանձնելը կամ օգտագործելը, որոնք անհատապես դասակարգում են ֆիզիկական անձանց՝ հիմնվելով նրանց կենսաչափական տվյալների վրա, որպեսզի վերհանեն կամ ենթադրեն նրանց ռասայական պատկանելությունը, քաղաքական հայացքները, արհմիութենական անդամակցությունը, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքները, սեռական կյանքը կամ սեռական կողմնորոշումը: Այս արգելքը չի տարածվում օրինական կերպով ձեռք բերված կենսաչափական տվյալների բազաների (օրինակ՝ պատկերների) պիտակավորման կամ գտման վրա կամ իրավապահ մարմինների կողմից կենսաչափական տվյալների դասակարգման վրա:

- Հանրային հասանելի վայրերում իրավապահ նպատակներով «իրական ժամանակում» հեռահար կենսաչափական նույնականացման համակարգերի օգտագործումը, բացառությամբ այն դեպքերի, երբ մնան օգտագործումը խստորեն անհրաժեշտ է հետևյալ նպատակներից որևէ մեկի համար՝ առևանգված, մարդկանց թրաֆիքինգի կամ սեռական շահագործման գոհ դարձած կոնկրետ անձանց թիրախային որոնում, ինչպես նաև անհայտ կորածների որոնում կամ մարդկանց կյանքին կամ ֆիզիկական անվտանգությանը սպառնացող կոնկրետ, զգալի և անխուսափելի վտանգի կանխում, կամ ահաբեկչական հարձակման իրական և ընթացիկ կամ կանխատեսելի վտանգի կանխում կամ հանցագործություն կատարած լինելու մեջ կասկածվող անձի տեղորոշում կամ նույնականացում՝ քրեական քննություն կամ հետապնդում իրականացնելու նպատակով, այն հանցանքների համար, որոնք նշված են II հավելվածում և տվյալ անհամ պետությունում պատժվում են առնվազն չորս տարի առավելագույն ժամկետով

www.ardaradutyjournal.com

ազատագրված: Միևնույն ժամանակ, ակտր սահմանում է խիստ «ֆիլտրեր», որոնց միջով իրավապահները պետք է անցնեն նախքան «իրական ժամանակում» դեմքի ճանաչման համակարգեր միացնելը¹¹:

Բարձր ռիսկայնություն - արհեստական բանականության կիրառություններ, որոնք, ենթադրաբար, զգալի սպառնալիք են ներկայացնում անձանց առողջության, անվտանգության կամ հիմնարար իրավունքների համար: Մասնավորապես, առողջապահության, կրթության, հավաքագրման, կարևորագույն ենթակառուցվածքների կառավարման, իրավապահ մարմինների կամ արդարադատության ոլորտներում օգտագործվող արհեստական բանականության համակարգերը: Դրանք ենթակա են որակի, թափանցիկության, մարդկային վերահսկողության և անվտանգության պարտավորությունների, և որոշ դեպքերում տեղակայումից առաջ պահանջում են հիմնարար իրավունքների ազդեցության գնահատում¹²: Դրանք պետք է գնահատվեն ինչպես շուկայում տեղադրվելուց առաջ, այնպես էլ իրենց կենսագործունեության ընթացքում: Բարձր ռիսկայնության կիրառությունների ցանկը կարող է ընդլայնվել ժամանակի ընթացքում՝ առանց արհեստական բանականության մասին ակտր փոփոխելու անհրաժեշտության¹³:

Սահմանափակ ռիսկ - այս կատեգորիայի արհեստական բանականության համակարգերն ունեն թափանցիկության պարտավորություններ, որոնք ապահովում են, որ օգտատերերը տեղեկացված են, որ նրանք փոխազդում են արհեստական բանականության համակարգի հետ և թույլ են տալիս նրանց կատարել տեղեկացված ընտրություններ: Այս կատեգորիան ներառում է, օրինակ, արհեստական բանականության ծրագրեր, որոնք հնարավոր են դարձնում պատկերների, ձայնի կամ տեսանյութերի ստեղծումը կամ մանիպուլյացիան (օրինակ՝ դիֆֆեյքերը)¹⁴:

Նվազագույն ռիսկ – Այս կատեգորիան ներառում է, օրինակ, տեսախաղերի կամ սպամի ֆիլտրերի համար օգտագործվող արհեստական բանականության համակարգերը: Ակնկալվում է, որ արհեստական բանականության կիրառությունների մեծ մասը կընկնի այս կատեգորիայի մեջ¹⁵: Այս համակարգերը չեն կարգավորվում, և անդամ պետությունները չեն կարող լրացուցիչ կարգավորումներ սահմանել առավելագույն ներդաշնակեցման կանոնների պատճառով¹⁶:

Վերջին ժամանակահատվածում իրավական շրջանակներում լայն քննարկում է ընթանում արհեստական բանականության կիրառությունը իրավակարգավորման ենթարկելու անհրաժեշտության աստիճանի շուրջ՝ երկու հիմնական մոտեցումների միջև: Առաջին մոտեցումը կարևորում է արհեստական բանականության ոլորտում նորարարություն

ու զարգացումը չսահմանափակելու անհրաժեշտությունը՝ իրավակարգավորման միջոցով: Մյուս իրավաբանները կարևորում են անհրաժեշտությունը ստեղծելու իրավական շրջանակ, որը կկարգավորի արհեստական բանականության կիրառությունը բոլոր ոլորտներում, ինչպես նաև ստեղծելու էթիկական ձևաչափ, որը կկարգավորի այդ կիրառությունները՝ կանխելու դրա ապօրինի կամ վնասակար օգտագործումը մարդկանց և մարդկության համար¹⁷: Մենք համակարծիք ենք երկրորդ մոտեցման հետ, հաշվի առնելով արհեստական բանականության համապարփակ կիրառությունը կյանքի ամենատարբեր ոլորտներում:

Եվրոպայի խորհրդի՝ Հանցագործությունների խնդիրների եվրոպական կոմիտեն (CDPC), որը պատասխանատու է հանցավորության կանխարգելման ու վերահսկման ոլորտում խորհրդի գործունեության համակարգման համար, հանձնարարություն է ստացել՝ մշակել իրավական փաստաթուղթ, որը կվերաբերի արհեստական բանականության օգտագործման ընթացքում առաջացող քրեական պատասխանատվությանը¹⁸:

Փաստաթղթում նախ անդրադարձ է կատարված արհեստական բանականության համակարգերին, որոնք օգտագործվում են որպես հանցագործություն կատարելու գործիք: Նշված է, որ անդամ պետությունները կարող են վերանայել իրենց գործող քրեական օրենսդրությունները՝ գնահատելու համար, թե որքանով են դրանք բավարար՝ արհեստական բանականության համակարգերի միջոցով մարդկանց կյանքի, ֆիզիկական անվտանգության և այլ արժեքների դեմ ուղղված վնասների անդրադառնալու համար: Եթե արհեստական բանականության համակարգը պարզապես օգտագործվում է որպես գործիք՝ արդեն օրենքով սահմանված հանցագործություն կատարելու նպատակով (օրինակ՝ սպանություն, գողություն), ապա գործող օրենքները կարող են լիովին բավարար լինել: Սակայն, անդամ պետությունները կարող են որոշել փոփոխել իրենց օրենսդրությունը, օրինակ՝ արհեստական բանականության օգտագործումը դիտարկել որպես ծանրացուցիչ հանգամանք՝ խստացված քրեական պատասխանատվություն, եթե արհեստական բանականության համակարգի որոշ հատկություններ նպաստել են հանցագործությանը, կամ ընդլայնել պատասխանատվության սահմանները կամ որոշակիորեն ազատել պատասխանատվությունից՝ սոցիալապես ընդունելի ռիսկի կամ համատեղ մեղավորության դեպքում:

2025 թվականի հունիսի 11-ին Հանցագործությունների կանխման եվրոպական կոմիտեն մշակեց նախագիծ «Արհեստական բանականության և քրեական արդարադատության վերաբերյալ հարցաշար»¹⁹, որն ընդգրկում է նախորդ փաստաթղթի հիմնադրույթները:

Սահմանված է, որ օրենսդրական արձագանքի հնարավոր տարբերակների առնչությամբ առաջանում են մի շարք հարցեր, մասնավորապես՝ արդյոք անդամ պետությունները նպատակահարմար են համարում ընդունել հատուկ օրենսդրություն՝ հաշվի առնելով CAI-ից բխող նոր պարտավորությունները:

Հարցաշարն ի թիվս այլի ներառում է այն հարցերը, թե արդյոք օրենսդիրն ունի ծրագրեր՝ հանցագործությունը կատարելու, հեշտացնելու, ուժեղացնելու կամ արհեստական բանականության համակարգերի միջոցով աջակցելու դեպքերում հանցագործությունը ծանրացնող հանգամանքների վերաբերյալ օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու համար, արդյոք օրենսդրությունը կարգավորում է հատուկ արհեստական բանականության տեխնոլոգիաների օգտագործումը հանցագործություններ կատարելու համար, օրինակ՝ դիֆֆեյքերի (deepfakes) օգտագործումը հատուկ համատեքստերում (օրինակ՝ սեռական դիֆֆեյքեր, առցանց սեռական գրումինգ, կամ ընտրական գործընթացների ընթացքում), ինքնավար թռչող սարքերի (դրոնների) օգտագործումը ինչ-որ մեկին սպանելու նպատակով, խարդախության հատուկ ձևեր, արդյոք առկա է անհրաժեշտություն նոր տեսակի հանցագործության սահմանման, որը կապված է «վնասակար արհեստական բանականության համակարգ»-ի (Dark AI) հետ, ինչպես նաև առկա է անհրաժեշտություն քրեականացնելու արհեստական բանականության համակարգի շուկա հանումը, շահագործումը, սեփական օգտագործման համար ձեռք բերումը, ներմուծումը կամ երրորդ անձանց տրամադրումը՝ որևէ ձևով, եթե այն արգելված է ազգային կամ եվրոպական օրենսդրությամբ:

Արհեստական բանականության համակարգը ծրագրավորողի, արտադրողի և օգտագործողի քրեական պատասխանատվությունը

Նախ, հարկ ենք համարում նշել, որ «Կիրեռ-հանցագործությունների մասին» Բուդապեշտի կոնվենցիայի 1-ին մասի ա) կետի համաձայն՝ «համակարգչային համակարգ» նշանակում է՝ ցանկացած սարք կամ փոխկապակցվող կամ կապակցվող սարքերի խումբ, որոնցից մեկը կամ մի քանիսը, ծրագրի համաձայն, կատարում են տվյալների ավտոմատ մշակում: Այս բնորոշումը տառացիորեն իր մեջ ներառում է արհեստական բանականության համակարգը, հետևաբար համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ գլխում նախատեսված հանցագործությունները (համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց ներթափանցելը, համակարգչային տվյալը փոփոխելը,

համակարգչային սարտածը (նենգադուր), համակարգչային տվյալներն ապօրինի որսալը կամ դրանց տիրանալը, հատուկ ծրագրային կամ գործիքային միջոցների ապօրինի շրջանառությունը, համակարգչային կեղծիքը, համակարգիչը, համակարգչային համակարգը կամ համակարգչային ցանցը շահագործելու կանոնները կամ պահանջները խախտելը) վերաբերելի են նաև արհեստական բանականության համակարգերին: Սակայն, մեր կարծիքով վերոնշյալ հանցագործությունները արհեստական բանականության համակարգի նկատմամբ իրականացնելն օժտված է առավել բարձր հանրային վտանգավորությամբ, քան սովորական համակարգչային համակարգի նկատմամբ իրականացնելը՝ պայմանավորված արհեստական բանականության համակարգի՝ ինքնուրույն տվյալահեն գործունեություն իրականացնելու հանգամանքով, այնինչ համակարգչային համակարգն աշխատում է բացառապես կոնկրետ հրահանգներով: Ուստի, վերոգրյալով պայմանավորված, առաջարկում ենք, որպես ծանրացնող հանգամանք նախատեսել արհեստական բանականության համակարգի նկատմամբ իրականացնելը, ինչպես նաև այդ գլուխը վերանվանել համակարգչային համակարգի, համակարգչային տվյալների, արհեստական բանականության համակարգի անվտանգության և անվտանգ գործունեության դեմ ուղղված հանցագործություններ:

Այժմ անդրադարձ կատարենք արհեստական բանականությունը ծրագրավորողի, արտադրողի կամ շահագործողի քրեական պատասխանատվությանը:

Այսպես, այն դեպքում, երբ արհեստական բանականության համակարգերի հակաիրավական գործողությունների պատճառ է ալգորիթմի սխալականությունը, քրեական պատասխանատվության բեռը պետք է դրվի այն ծրագրավորողի վրա, եթե վերջինս կանխատեսել կամ կարող էր կանխատեսել նման սխալների առաջացումը, սակայն պատշաճ ծրագրավորում չի իրականացրել:

Քանի որ ծրագրային ապահովման ստեղծումը ենթադրում է արհեստական բանականության ֆունկցիոնալության և ինքնավերականգնման համակարգի սահմանափակումների մշակումը, հնարավոր սխալների բացառումը և օգտագործողի համար վտանգավոր իրավիճակների կանխումը, ինչպես նաև համակարգչային ալգորիթմների փորձարկումը, տվյալ բաղադրիչների իրականացման համար պատասխանատու անձը հնարավոր է ճանաչվի հանցագործության սուբյեկտ՝ իր գործունեության մեջ մեղքի առկայության դեպքում: Օրինակ, եթե ինքնավար ավտոմեքենայի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտումը, որը հանգեցրել է մարդու մահվան, պատճառ է հանդիսացել վարումն ապահովող ծրագրա-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

յին ապահովման կատարելագործման անհամապատասխանությունը, ապա պատասխանատվությունը պետք է դրվի ծրագիրը մշակողի վրա, եթե նա անհրաժեշտ ուշադրություն և կանխատեսողականություն ցուցաբերելով կարող էր կանխատեսել այդ հետևանքները²¹ :

Հարց է առաջանում, տվյալ դեպքում, ինչպես պետք է որակվի արհեստական բանականությունը ծրագրավորողի արարքը: Այն չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որն անզուգույն արարք է մարդու մահ, քանի որ արհեստական բանականության ծրագրավորողը ճանապարհային երթևեկության հետ կապված որևէ պահանջ կամ կանոն ուղղակիորեն չի խախտել, դա խախտել է իր կողմից ստեղծված արհեստական բանականության համակարգը:

Ի.Ն.Մոսեչկինի կարծիքով կատարվածը կարող է որակվել Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով, այն է՝ աշխատանքների կամ ծառայությունների մատուցում, որոնք չեն համապատասխանում սպառողի կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին, եթե դրանց արդյունքում անփութությամբ առաջացել է մարդու մահ²² : Այն որոշակիորեն համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 412-րդ հոդվածին՝ «1. Իրացնելու նպատակով մարդու կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող հումք կամ ապրանք պատրաստելը, պահելը, փոխադրելը, առաքելը, ձեռք բերելը կամ դրանք իրացնելը կամ այդպիսի աշխատանք կատարելը կամ ծառայություն մատուցելը, եթե այդ արարքն անզուգույն արարքու առողջությանը միջին կամ բեթև ծանրության վնաս է պատճառել» :

(...)

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է փոքրահասակների համար նախատեսված հումքի, ապրանքի, աշխատանքի կամ ծառայության կապակցությամբ կամ

2) անզուգույն արարք է մարդու մահ, առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք՝ (...):»:

Վերոնշյալ հոդվածի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է մարդու կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող արտադրանք պատրաստելը, պահելը, փոխադրելը, առաքելը, ձեռք բերելը կամ իրացնելը,

սակայն հարց է առաջանում, թե որտեղ են սահմանված այդպիսի պահանջները, որոնք վերաբերում են արհեստական բանականությանը: Բացի այդ, անզուգույն արարք վնասը կարող է պատճառվել ոչ թե բացառապես արտադրանքի՝ մարդու կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանելու դեպքում, այլ նաև ԵԽ շրջանակային կոնվենցիայով և ԵՄ «Արհեստական բանականության մասին» ակտով նախատեսված այլ պահանջները չպահպանելու դեպքում, օրինակ՝ ֆիզիկական անձի կամ անձանց որոշակի խմբի խոցելիությունը՝ պայմանավորված նրանց տարիքով, հաշմանդամությամբ կամ սոցիալական ու տնտեսական որոշակի դրությամբ հաշվի չառնելը:

Գ. Հելլկին, նշելով տարբեր ոլորտներում արհեստական բանականության աճող կիրառությունը, առաջարկում է մշակել հատուկ տեսություն՝ արհեստական բանականության և ռոբոտների գործողությունների համար քրեական պատասխանատվության վերաբերյալ, որն իր մեջ կներառեր «արտադրողին, ծրագրավորողին, օգտատիրոջը և բոլոր այլ ներգրավված անձանց» :

Վերոգրյալով պայմանավորված, նախ առաջարկում ենք ստորագրել և վավերացնել Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված արհեստական բանականության վերաբերյալ շրջանակային կոնվենցիան, այնուհետև ընդունել օրենք, որը կսահմանի արհեստական բանականության ծրագրավորման, արտադրման և շահագործման ստանդարտները, որոնք բխում են վերոնշյալ կոնվենցիայից և ԵՄ «Արհեստական բանականության մասին» ակտից, և նախատեսել հետևյալ հանցակազմը.

«Արհեստական բանականության համակարգը ոչ պատշաճ ծրագրավորելը, արտադրելը, շահագործելը, որն անզուգույն արարք է մարդու մահ, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է՝ (...):»:

Համանման հանցակազմի ձևավորման անհրաժեշտության մասին է պնդում նաև Ա.Գիանինին²⁴ :

Այսինքն, երբ արհեստական բանականության համակարգը ծրագրավորողը կանխատեսում է կամ կարող է կանխատեսել հանցավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն համապատասխան կողմավորումներ/ծրագրավորումներ չի կատարում դրա հիման վրա, ապա նա պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության վերոնշյալ հոդվածով:

Հեղինակները պնդում են, որ ամենամեծ խնդիրները ծագում են, երբ արհեստական բանականության համակարգը ստեղծողների կողմից թույլ է տրվել սխալ, որը հանգեցրել է հանցավոր

հետևանքների: Նախ՝ դժվարություններ են առաջանում այն կոնկրետ մշակողին որոշելիս, ում սխալը հանգեցրել է հանցագործության: Այստեղ պետք է հասկանալ, որ արհեստական բանականության համակարգը բարդ ճարտարապետություն ունեցող օբյեկտ է, որի ստեղծմանը մասնակցում է ոչ թե մեկ մարդ, այլ մի խումբ մասնագետներ: Ընդ որում, միշտ չէ, որ հնարավոր է որոշել յուրաքանչյուր մշակողի/ծրագրավորողի պատասխանատվության սահմանները: Այս հանգամանքը բազմապատիկ բարդացնում է մշակողների/ծրագրավորողների մեղքի ապացուցման գործընթացն այն դեպքում, երբ համակարգը կատարում է հանցավոր բնույթի գործողություն (կամ անգործություն)²⁵:

Ամերիկյան իրավական դոկտրինի համաձայն՝ արհեստական բանականության կողմից կատարված հանցանքը պետք է հնարավոր լինի վերագրել մարդուն, այսինքն՝ կազմի actus reus (օբյեկտիվ կողմ)՝ անձի այնպիսի վարքագիծ, որն այս կամ այն կերպ կապված է արհեստական բանականության գործունեության հետ, ինչպես նաև տվյալ անձի վրա դրված պարտականությունների շրջանակի հետ, որոնց չպահպանումը կամ ոչ պատշաճ կատարումը հանգեցրել է արհեստական բանականության կողմից վնասի պատճառմանը: Այն դեպքում, երբ մարդու վարքագծում չի ապացուցվում նշված պարտականության չպահպանումը կամ ոչ պատշաճ կատարումը, ապա պետք է խոսել պատճառահետևանքային կապի բացակայության մասին, ինչը բացառում է տվյալ անձի քրեական պատասխանատվությունը²⁶:

Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք հանցավոր հետևանքը ոչ պատշաճ ծրագրավորման արդյունք է, թե արհեստական բանականության ինքնագրագցման:

Արհեստական բանականության համակարգ արտադրողն այն ընկերությունն է, որի հսկողության ներքո ստեղծվում է վերջնական արդյունքը և որն այդ արդյունքը դուրս է բերում շուկա: Հարկ ենք համարում արձանագրել, որ հնարավոր է իրավիճակ, երբ արհեստական բանականության համակարգը ծրագրավորողը պատշաճ կերպով իրականացրել է ծրագրավորումը, սակայն այն արտադրողը առանց ծրագրավորողին տեղյակ պահելու փոփոխություններ է կատարել դրա մեջ, ուսուցանման այլ բազա է տրամադրել և այլն:

Մյուս դրսևորումն այն դեպքն է, երբ արհեստական բանականությունն օգտագործողը/շահագործողը չի պահպանել այն շահագործելու կանոնները, որի արդյունքում անզգուշությամբ առաջացել է մարդու մահ, առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք:

Այսպես, վնաս պատճառելու ռիսկերի գնահատման համար վճռորոշ նշանակություն ունի արհեստական բանականության նկատմամբ կիրառ-

վող սահմանափակումների տեսակը: Եթե արտադրողը հստակ նշում է, թե ինչի համար է նախատեսված արհեստական բանականության համակարգը և ինչ սահմանափակումներ ունի այն, ապա այդ դեպքում հարկ է դիտարկել այն ռիսկը, որը համակարգը կարող է պատճառել այն պայմանների սահմաններից դուրս օգտագործվելիս, որի համար ստեղծվել է ինքը: Օրինակ՝ ինքնավար ավտոմեքենայի օգտագործումը ձյունառատ եղանակին, երբ արտադրողը հայտարարել է, որ մեքենան նախատեսված չէ ձնհալի կամ ձնաքթի պայմաններում շահագործման համար, կարող է դիտարկվել որպես վնաս պատճառելու լուրջ ռիսկ: Նման դեպքում վնաս պատճառելու համար պատասխանատվությունն ընկնում է այն անձի վրա, ով, իմանալով գոյություն ունեցող սահմանափակումների մասին, այնուամենայնիվ օգտագործել է արհեստական բանականության համակարգը թույլատրելի սահմաններից դուրս²⁷:

Միևնույն ժամանակ, հնարավոր են դեպքեր, երբ արհեստական բանականության համակարգն ի սկզբանե ծրագրավորվի, արտադրվի հանցագործություն կատարելու նպատակով, կամ այնպիսի նպատակների կենսագործման համար, որն արգելված է ներպետական և միջազգային օրենսդրությամբ:

Հարկ ենք համարում նշել, որ մասնագիտական գրականությունում մույնպես քննարկվում են այն սցենարները, երբ արհեստական բանականության համակարգերն ի սկզբանե ստեղծված են եղել հակաիրավական գործողություններ կատարելու համար, կամ երբ վնասի կանխարգելման գործառնություններն անջատված են կամ նախատեսված չեն²⁸:

Վերոգրյալով պայմանավորված, կարծում ենք առկա է անհրաժեշտություն ձևավորելու նոր հանցակազմ՝ «1. Վնասակար արհեստական բանականության համակարգ ծրագրավորելը կամ արտադրելը՝

պատժվում է՝ (...)

2. Մույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը

1) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

2) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

3) անզգուշությամբ առաջացրել է խոշոր չափերի գույքային վնաս,

4) անզգուշությամբ մարդու առողջությանը պատճառել է միջին ծանրության կամ ծանր վնաս՝ պատժվում է՝ (...)

3. Մույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը

1) կատարվել է հանցավոր կազմակերպու-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյան կողմից,

2) անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս

3) անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է՝ (...):

Վնասակար արհեստական բանականության համակարգերը, ըստ էության, «Dark AI»-երն են, որոնց մասին անդրադարձ ենք կատարել աշխատանքի նախորդ ենթագլխում: Դրանք այն արհեստական բանականության համակարգերն են, որոնք ստեղծվել են հանցագործություններ կատարելու, հանցավոր նպատակներ կենսագործելու համար:

Հարկ ենք համարում արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում հատուկ ծրագրային կամ գործիքային միջոցների ապօրինի շրջանառության համար. «Համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց առանց բույլտվության մուտք գործելու կամ համակարգչային տվյալը ոչնչացնելու, վնասելու, աղավաղելու կամ ուղեփակելու (մեկուսացնելու) կամ դրանք ապօրինի որսալու կամ դրան ապօրինի տիրանալու համար նախատեսված հատուկ ծրագրային կամ գործիքային միջոցներ կամ հատուկ հարուցիչով ծրագիր արտադրելը, պատրաստելը, մշակելը, ներմուծելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ արտահանելը՝ դա օգտագործելու կամ իրացնելու նպատակով, կամ այդպիսի ծրագրային կամ գործիքային միջոցը կամ ծրագիրն իրացնելը կամ օգտագործելը»:

Մեր կողմից առաջարկված հանցակազմի և այս հանցակազմի տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ այս հոդվածը պատասխանատվություն չի սահմանում ի սկզբանե վնասակար համակարգչային համակարգ ստեղծելու համար, այլ այն պատասխանատվություն է սահմանում համակարգչային համակարգ մուտք գործելու և այլ նպատակներով հատուկ ծրագրային կամ գործիքային միջոցներ կամ հատուկ հարուցիչով ծրագիր արտադրելու, պատրաստելու և այլ գործողություններ կատարելու համար: Հետևաբար, այս հանցակազմով արարքը կարող է որակվել այն դեպքում, երբ սովորական արհեստական բանականության համակարգ մուտք գործելու և այլ նպատակներով հատուկ ծրագրային կամ գործիքային միջոցներ կամ հատուկ հարուցիչով ծրագիր է արտադրվում, պատրաստվում և այլն: Իսկ, երբ ի սկզբանե վնասակար արհեստական բանականության համակարգ է ծրագրավորվում կամ արտադրվում, ապա արարքը որակման է ենթակա մեր առաջարկված հանցակազմով:

Առաջարկում ենք ձևավորել նաև հանցակազմ վնասակար արհեստական բանականության հա-

մակարգերի շրջանառության համար.

«1. Վնասակար արհեստական բանականության համակարգ ձեռք բերելը կամ իրացնելը՝ պատժվում է՝ (...)

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը

1) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

2) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ պատժվում է՝ (...)

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից՝

պատժվում է՝ (...):»:

Վերոնշյալ հանցակազմերի օբյեկտը արհեստական բանականության անվտանգ գործունեությունն ապահովող հասարակական հարաբերություններն են, հետևաբար առաջարկում ենք թվարկված երեք հանցակազմերը նախատեսել ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ գլխում:

Արհեստական բանականության համակարգն օգտագործողի քրեական պատասխանատվության հարցը կարող է առաջանալ հետևյալ դեպքերում.

- վերջինս արհեստական բանականության համակարգն օգտագործում է հանցանք կատարելու նպատակով՝ դրանում փոփոխություններ կատարելու միջոցով,

- վերջինս արհեստական բանականության համակարգը օգտագործում է հանցանք կատարելու նպատակով՝ առանց այդ համակարգը որևէ փոփոխության ենթարկելու,

- վերջինս արհեստական բանականության համակարգին սովորեցնում է հանցավոր վարքագիծ դրսևորել, որն ըստ էության դուրս է «փոփոխելու» շրջանակներից, որի արդյունքում արհեստական բանականությունը սկսում է հանցավոր վարքագիծ դրսևորել,

- վերջինս արհեստական բանականության համակարգն օգտագործում է առանց այն շահագործելու կանոնները հաշվի առնելու, որը հանգեցնում է հետագայում նրա կողմից հանցավոր վարքագծի դրսևորման, որին արդեն անդրադարձ կատարել ենք:

Քննարկենք այս դրսևորումներից յուրաքանչյուրը:

Այն դեպքում, երբ արհեստական բանականությունն օգտագործվում է հանցանք կատարելու նպատակով՝ դրանում փոփոխություններ կատարելու միջոցով, ապա օգտագործողը ենթակա է քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ գլխով նախատեսված հանցակազմներից նրանով, որի օբյեկտիվ կողմը պարունակվում է նրա արարքում՝ կախված կատարված

www.aradaradatuynjournal.com

փոփոխության բնույթից և նպատակից, ընդ որում, եթե դրա արդյունքում պատճառված վնասը դուրս է վերոնշյալ հանցակազմերի շրջանակներից՝ օրինակ՝ պատճառվում է մարդու մահ, ապա այն կորակվի հանցագործությունների համակցությամբ:

Միևնույն ժամանակ, հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ արհեստական բանականության համակարգն օգտագործվի հանցանք կատարելու նպատակով՝ առանց դրանում որևէ փոփոխություն կատարելու: Օրինակ՝ ներկայումս լայն տարածվածություն ունի շոքթում կատարելու նպատակով արհեստական բանականության օգտագործմամբ զոհի մասնակցությամբ կեղծ տեսանյութեր, նկարներ պատրաստելը և զոհին դրանով շանտաժ անելը՝ որոշակի գումար չտալու դեպքում այն համացանցում հրապարակել: Կամ, անձը կարող է անօդաչու թռչող սարքն օգտագործել մեկ ուրիշին կյանքից զրկելու, առողջությանը որոշակի վնաս պատճառելու և այլ նպատակներով: Հնարավոր է նաև արհեստական բանականության համակարգի օգտագործմամբ կեղծ տեսանյութ պարտաստել և հրապարակել համացանցում, որը կարող է հանգեցնել զոհի ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի:

Արհեստական բանականության համակարգերի՝ մարդու բանական վարքագիծը նմանակելու ունակությունը հանցագործների համար հնարավորություն է ստեղծում հանդես գալ այլ անձի անունից: Նման հակաիրավական արարքն անգլոսաքսոնական իրավունքի երկրների իրավաբանական գրականության մեջ բնորոշվում է որպես ինքնության գողություն (անգլ.՝ identity theft): Ինտելեկտուալ համակարգերը հաճախ օգտագործվում են հանցագործություններ կատարելու նպատակով: Օրինակ՝ խարդախություններ են իրականացվում այնպիսի ծրագրերի միջոցով, որոնք զենեքացնում են որոշակի անձի խոսքին նմանվող ձայնային հարդազորություններ³⁰: Իսկ առանձին անձանց տեսապատկերների նմանակման (իմիտացիայի) միջոցով խարդախներին հաջողվել է մոլորեցնել վճարման խելացի համակարգերը³¹:

Արհեստական բանականության համակարգի օգտագործման այս դրսևորումը գործող օրենսդրությամբ որևէ իրավական գնահատականի չի արժանանում, սակայն մեր կարծիքով այն օժտված է հանրային վտանգավորության բարձր մակարդակով և առկա է անհրաժեշտություն այն մի շարք հանցակազմերի ծանրացնող հանգամանք նախատեսել՝ սպանություն, ինքնասպանության հասցնել, առողջությանը ծանր վնաս պատճառել, առողջությանը միջին ծանրության վնաս պատճառել, առողջությանը թեթև վնաս պատճառել, խարդախություն, շոքթում:

Հարկ է հիշատակել, որ Ռուսաստանի Դաշնությունում օրենսդրական նախաձեռնություն է

ներկայացվել (և ընդունման փուլում է), որով առաջարկվում է օրենսդրորեն նախատեսել արհեստական բանականության սահմանումը և արհեստական բանականության օգտագործումը նախատեսել մի շարք հանցակազմերի ծանրացնող հանգամանք՝ գողություն, խարդախություն, շանտաժ, տեղեկատվական համակարգերի վրա չարամիտ ներագրեցություն, համակարգչային տեղեկատվության պահպանման կամ մշակման միջոցների շահագործման կանոնների խախտում³²:

Այսպես, արհեստական բանականության համակարգերի կիրառումը բարձրացնում է գործողությունների արդյունավետությունը, կրճատում ծախսերը, նվազագույնի հասցնում ռիսկերը և հնարավորություն տալիս ընդլայնել հանցավոր գործունեության մասշտաբները: Հանցավոր արդյունքը ձեռք է բերվում առանց հանցագործի ակտիվ ներգրավվածության: Ուսուցանելով և գործարկելով համակարգը՝ կարելի է առանց ջանքեր գործադրելու օգտվել դրա աշխատանքի արդյունքներից³³:

Ք.Մ.Ճրեմլյոգա-ն ևս գտնում էր, որ արհեստական բանականության կիրառումը մեծացնում է հանցավոր արարքի հանրային վտանգավորության աստիճանը և պետք է հանգեցնի պատասխանատվության ավելի խիստ միջոցների: Հանցագործության կատարման տվյալ միջոցի կիրառումը պետք է ձևակերպվի որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի ընդհանուր մասում³⁴:

Արհեստական բանականության հատուկ ծրագրերը կարող են այնքան իրական նմանակել մարդու դեմքն ու ձայնը, որ գրեթե անհնար լինի տարբերել բնօրինակից: Ընդ որում, դա կարող է արվել առանց տվյալ մարդու գիտության կամ համաձայնության: Քանի որ այս տեխնոլոգիաներն այսօր շատ հասանելի են և չեն պահանջում բանկարժեք սարքավորումներ, ցանկացած ոք կարող է նման կեղծիք (դիֆֆեյք) պատրաստել հենց տանից³⁵: Այս կեղծ պատկերներն ու ձայները հանցագործները կարող են օգտագործել տարբեր նպատակներով՝ մեսենջերներով ուրիշի անունից խոսելուց մինչև բանկային կամ անվտանգության համակարգերին խաբելը³⁶:

Վերոգրյալով պայմանավորված մեծ տարածում ունեն դիֆֆեյքերը: Դիֆֆեյքը (deepfake) կեղծ պատկեր կամ ձայն է, որը ստեղծվում է արհեստական բանականության (նեյրոնային ցանցերի) միջոցով: Այս տեխնոլոգիան թույլ է տալիս այնքան իրական նմանակել մարդու արտաքինն ու ձայնը, որ դժվար է տարբերել բնօրինակից: Սա մոլորեցնում է ոչ միայն սովորական մարդկանց, այլև համակարգչային ծրագրերը (օրինակ՝ դեմքի ճանաչման համակարգերը)³⁷:

Չինաստանում 2020 թվականից արգելված է

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հրապարակել դիֆֆեյբեր, եթե չի նշվում, որ դրանք «կեղծ» են³⁸ : «Խորը սինթեզի տեխնոլոգիաների կառավարման կանոնները» (Deep Synthesis Provisions) Չինաստանի ամենաազդեցիկ իրավական փաստաթղթերից են արհեստական բանականության ոլորտում, որոնք սահմանում են արհեստական բանականության համակարգերի կիրառության ընդհանուր արգելքները և սկզբունքները: Օրինակ՝ արհեստական բանականությամբ ստեղծված ցանկացած տեքստ, ձայն, պատկեր կամ տեսանյութ պետք է ունենա մակնշում, որն օգտատերին հասկացնում է՝ բովանդակությունը սինթեզված է, և արգելվում է որևէ տեխնիկական միջոցով հեռացնել կամ թաքցնել այդ մակնշումները³⁹ :

Իտալիան վերջերս զգալի փոփոխություններ է կատարել իր քրեական օրենսդրության մեջ՝ դառնալով Եվրոպական միության առաջին երկրներից մեկը, որը ներպետական մակարդակով կանոնակարգել է արհեստական բանականության կիրառությունը քրեաիրավական տիրույթում: Այսպես, Իտալիայի քրեական օրենսգրքի 612-quater հոդվածը պատասխանատվություն է նախատեսում արհեստական բանականության համակարգերով ստեղծված կամ փոփոխված բովանդակության ապօրինի տարածման համար. «Ով որ անձին անարդար վնաս է պատճառում՝ առանց նրա համաձայնության փոխանցելով, հրապարակելով կամ այլ կերպ տարածելով արհեստական բանականության համակարգերի կիրառմամբ կեղծված կամ փոփոխված պատկերներ, տեսանյութեր կամ ձայներ, որոնք ունակ են մոլորեցնելու դրանց խկության վերաբերյալ, պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից հինգ տարի ժամկետով: Հանցագործությունը հետապնդվում է սուժոյի բողոքի հիման վրա: Սակայն քրեական հետապնդումը իրականացվում է նաև պետական կարգով, եթե արարքը կապված է մեկ այլ հանցագործության հետ, որի համար նախատեսված է պետական մեղադրանք, կամ եթե այն կատարվել է անչափահաս անձի կամ հիվանդության պատճառով անգործունակ անձի նկատմամբ, կամ պետական իշխանության ներկայացուցչի նկատմամբ՝ նրա ծառայողական պարտականությունների կատարման կապակցությամբ»: Փոփոխություն է կատարվել նույն օրենսգրքի 61-րդ հոդվածում (ընդհանուր ծանրացնող հանգամանքներ) և 11-տոժեցիկ կետով ավելացվել է նոր ծանրացնող հանգամանք՝ «արարքը կատարելը՝ արհեստական բանականության համակարգերի կիրառմամբ, երբ դրանք իրենց բնույթով կամ օգտագործման եղանակով հանդիսացել են նենգ միջոց, կամ երբ դրանց կիրառումը որևէ կերպ խոչընդոտել է հանրային կամ մասնավոր պաշտպանությունը, կամ ծանրացրել է հանցագործության հետևանքները»: Հետաքրքիր է, որ նույն օրենսգրքի 294-րդ հոդվածը պատասխանատվու-

թյուն է նախատեսում քաղաքացու քաղաքական իրավունքների դեմ ուղղված ոտնձգությունների համար. «Ով որ բռնությամբ, սպառնալիքով կամ խաբեությամբ ամբողջությամբ կամ մասամբ խոչընդոտում է քաղաքական իրավունքի իրականացումը, կամ մեկ ուրիշին դրդում է այն իրականացնել իր կամքին հակառակ, պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից հինգ տարի ժամկետով: Եթե խաբեությունը իրականացվել է արհեստական բանականության համակարգերի կիրառմամբ, ապա պատիժը սահմանվում է ազատազրկում՝ երկուսից վեց տարի ժամկետով»⁴⁰ :

Ֆրանսիայի քրեական օրենսգրքով քրեական պատասխանատվություն է սահմանված ընդհանուր դիֆֆեյբերի տարածման համար, ինչպես նաև որպես հատուկ նորմ՝ սեռական դիֆֆեյբերի տարածման համար: Այսպես, օրենսգրքի 226-8-րդ հոդվածի համաձայն՝ «Անձի ձայնով կամ պատկերով կատարված մոնտաժը՝ առանց նրա համաձայնության, որևէ եղանակով հանրությանը կամ երրորդ անձին հայտնի դարձնելը, եթե ակնհայտ չէ, որ դա մոնտաժ է, կամ եթե դրա մասին հստակ նշված չէ պատժվում է մեկ տարի ազատազրկմամբ և 15,000 եվրո տուգանքով: Սույն պարբերությունում նշված իրավախախտմանը հավասարեցվում է և նույն պատիժներով պատժվում է ալգորիթմական մշակմամբ գեներացված տեսողական կամ ձայնային բովանդակությունը, որը ներկայացնում է անձի պատկերը կամ ձայնը՝ առանց նրա համաձայնության, եթե ակնհայտ չէ, որ բովանդակությունը գեներացվել է ալգորիթմական եղանակով, կամ եթե դրա մասին հստակ նշված չէ: Եթե սույն հոդվածով նախատեսված հանցանքները կատարվել են առցանց հանրային հաղորդակցության ծառայության (ինտերնետի) օգտագործմամբ, ապա պատժվում են երկու տարի ազատազրկմամբ և 45,000 եվրո տուգանքով: Երբ սույն հոդվածով նախատեսված հանցանքները կատարվում են տպագիր կամ տեսալսողական մամուլի միջոցով, պատասխանատու անձանց որոշման հարցում կիրառվում են այդ ոլորտները կարգավորող օրենքների հատուկ դրույթները»: Նույն օրենսգրքի 226-8-1-րդ հոդվածի համաձայն՝ «Անձի ձայնով կամ պատկերով ստեղծված սեքսուալ բնույթի մոնտաժն առանց նրա համաձայնության, որևէ եղանակով հանրությանը կամ երրորդ անձին հայտնի դարձնելը պատժվում է երկու տարի ազատազրկմամբ և 60,000 եվրո տուգանքով: Սույն պարբերությունում նշված իրավախախտմանը հավասարեցվում է և նույն պատիժներով պատժվում է ալգորիթմական մշակմամբ գեներացված սեքսուալ բնույթի տեսողական կամ ձայնային բովանդակությունը, որը վերարտադրում է անձի պատկերը կամ ձայնը որևէ եղանակով հանրությանը կամ երրորդ անձին հայտնի դարձնելը առանց նրա համաձայնության:

www.aradaradailyjournal.com

Երբ առաջին պարբերությանը նախատեսված իրավախախտումը կատարվում է տպագիր կամ տեսալսողական մամուլի միջոցով, պատասխանատու անձանց որոշման հարցում կիրառվում են այդ ոլորտները կարգավորող օրենքների հատուկ դրույթները: Եթե մոնտաժի կամ այզոդիթմական մշակմամբ գեներացված բովանդակության հրապարակումը կատարվել է առցանց հանրային հաղորդակցության ծառայության (ինտերնետի) օգտագործմամբ, ապա պատժվում է երեք տարի ազատազրկմամբ և 75,000 եվրո տուգանքով⁴¹:

Վերոշարադրյալի հաշվառմամբ, հաշվի առնելով սոցիալական ցանցերում դիֆիֆեյթերի մեծ քանակությունը, անհրաժեշտ ենք համարում Հայաստանի Հանրապետությունում քրեականացնել առանց անձի համաձայնության նրա ձայնով կամ պատկերով արհեստական բանականությամբ գեներացված պատկերի, տեսապատկերի, ձայնագրության, տեսաձայնագրության տարածումը, որն էական վնաս է պատճառել անձին: Էական վնասը գնահատողական կատեգորիա է, և իրավակիրառը յուրաքանչյուր դեպքում գործի փաստական հանգամանքների գնահատմամբ պետք է հանգի հետևության՝ վնասն էական է, թե ոչ:

Առաջարկում ենք վերոգրյալ հանցակազմն ամրագրել ՀՀ քրեական օրենսգրքի 33-րդ գլխում՝ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություններ: Հարկ ենք համարում արձանագրել, որ մեր կողմից առաջարկված հանցակազմը սահմանազատվում է ՀՀ քրեական օրենսգրքի 204-րդ հոդվածից՝ անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելը, նրանով, որ տարածվում է կեղծ, արհեստական բանականությամբ գեներացված պատկեր, տեսապատկեր, ձայնագրություն, տեսաձայնագրություն, որը չի կարող համարվել անձնական գաղտնիք, քանի որ չի համապատասխանում իրականությանը:

Միևնույն ժամանակ, այն դեպքում, երբ խոսքն առանց անձի համաձայնության նրա ձայնով կամ պատկերով սեռական բովանդակությամբ պատկեր, տեսապատկեր, տեսաձայնագրություն գեներացնելու մասին է, ապա արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածով՝ պոռնկագրական նյութեր կամ առարկաներ պատրաստելը, տարածելը կամ պահպանելը, եթե տարածվել է անորոշ անձանց շրջանակում. «Անորոշ անձանց շրջանակին պոռնկագրական նյութ կամ առարկա, այդ թվում՝ տպագիր հրատարակություն, կինոյի կամ տեսաֆիլմի նյութ, էլեկտրոնային կրիչի վրա պահվող նյութ, պատկեր կամ պոռնկագրական բնույթի այլ առարկա առաջարկելը կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով մատչելի դարձնելը կամ անորոշ անձանց շրջանակում այդպիսի նյութ կամ առարկա գովազ-

դելը»: Եվ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի ծանրացնող հանգամանք նախատեսել՝ եթե պոռնկագրական նյութը ստեղծվել է առանց անձի համաձայնության նրա ձայնով կամ պատկերով արհեստական բանականության գեներացմամբ:

Իսկ այն դեպքում, երբ վերոգրյալը տարածվել, ուղարկվել է որոշակի անձի, ապա արարքը ենթակա է որակման մեր կողմից առաջարկված հանցակազմով:

Միևնույն ժամանակ, երբ դիֆիֆեյթ տարածելու օգտագործվում է հանցանք կատարելու նպատակով, օրինակ՝ շորթում, որի ծանրացնող հանգամանք է արհեստական բանականության օգտագործմամբ կատարելը, ապա անհրաժեշտ է դեկավարվել բաղկացական հանցագործությունների որակման կանոնով⁴²:

Այլ է իրավիճակը, երբ օգտագործողը պատշաճ ծրագրավորված արհեստական բանականության համակարգին սովորեցնում է հանցավոր վարքագիծ դրսևերել՝ հանցագործության հմտություններ է սովորեցնում: Գտնում ենք, որ այս դրսևորումը դուրս է ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի շրջանակից, քանի որ այն իրենից չի ենթադրում համակարգչի, համակարգչային համակարգի, համակարգչային ցանցի կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող տվյալը փոփոխել, քանի որ ուղղակիորեն ոչ թե դրա ծրագրավորման տվյալ է փոփոխվում, այլև նոր գործողություններ կատարել է արհեստական բանականությունը սովորում:

Վերոգրյալով պայմանավորված, գտնում ենք, որ առկա է նոր հանցակազմ նախատեսելու անհրաժեշտություն՝ «Արհեստական բանականության համակարգին հանցագործության հմտություններ, հանցավոր վարքագիծ դրսևորել սովորեցնելը, պատժվում է՝ (...):»:

Վերոնշյալ հանցակազմի օբյեկտը արհեստական բանականության անվտանգ գործունեությունն ապահովող հասարակական հարաբերություններն են, հետևաբար առաջարկում ենք այն նախատեսել ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ գլխում:

Միևնույն ժամանակ, գտնում ենք, որ երբ սովորական արհեստական բանականության համակարգերն են օգտագործվում հանցավոր արարքներ կատարելու նպատակով կամ դրանք ի սկզբանե ծրագրավորվում կամ արտադրվում են հանցավոր նպատակներ կենսագործելու համար, կամ ոչ պատշաճ ձևով, ապա պետք է նախատեսել օրենսդրական հնարավորություն՝ դրանց նկատմամբ կիրառել անվտանգության միջոցներ՝ վերածրագրավորելը, որոշակի գործառույթների իրականացումը սահմանափակելը և որպես ծայրահեղ միջոց՝ ջնջել/ոչնչացնելը:

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քրեական օրենսգրքի 111-րդ հոդվածի համաձայն՝ անվտանգության միջոցը պետական հարկադրանքով ապահովված քրեախրավական ներգործության միջոց է, որը դատարանի դատավճռով կամ որոշմամբ պետության անունից նշանակվում է պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից կամ ազատություններից սույն գլխով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ, որի նպատակն է կանխել պատժի սպառնալիքով արգելված արարքների կատարումը:

Անվտանգության միջոց նշանակելը դատարանի համար ոչ թե պարտականություն է, այլ հայեցողության շրջանակներում տրված իրավունք: Օրենսդիրը հստակեցնում է, որ դատարանը կարող է նշանակել անվտանգության միջոց, եթե համարի, որ քրեական օրենսգրքով պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձը կրկին կարող է այդպիսի արարք կատարել, կամ անվտանգության միջոցի կիրառումն անհրաժեշտ է իր կամ այլ անձի անվտանգությունն ապահովելու համար⁴³:

Թեև օրենսդիրը հնարավորություն է նախատեսում անվտանգության միջոց կիրառել հանցանք կատարած անձի նկատմամբ, սակայն մենք առաջարկում ենք նախատեսել անվտանգության միջոց կիրառելու հնարավորություն, երբ արհեստական բանականությունը ներգրավված է եղել այլ անձի կողմից հանցանքի կատարմանը՝ «Հանցանքի կատարմանը ներգրավված արհեստական բանականության նկատմամբ դատարանը կարող է կիրառել անվտանգության միջոցներ՝ վերածրագրավորել կամ որոշակի գործառնությունների իրականացումը սահմանափակել, որպես ծայրահեղ միջոց՝ ջնջել/ոչնչացնել, որի նպատակն է կանխել վերջինիս ներգրավվածությանը կամ օգտագործմանը հետագա հանցանքների կատարումը»:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի արդյունքում գալիս ենք հետևյալ հետևություններին.

1) Առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածում ամրագրել արհեստական բանականության համակարգի սահմանումը՝ «Արհեստական բանականության համակարգը մեքենայի վրա հիմնված համակարգ է, որը որոշակի նպատակով՝ հստակ կամ անուղղակի, վերանշակում է մուտքային տվյալները՝ ստեղծելով ելքային արդյունքներ (օրինակ՝ կանխատեսումներ, բովանդակություն, առաջարկություններ կամ որոշումներ), որոնք կարող են ազդել ֆիզիկական կամ վիրտուալ միջավայրերի վրա»:

2) Առաջարկում ենք ստորագրել և վավերացնել Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված արհեստական բանականության վերաբերյալ շրջանա-

կային կոնվենցիան, այնուհետև ընդունել օրենք, որը կսահմանի արհեստական բանականության ծրագրավորման, արտադրման և շահագործման ստանդարտները, որոնք բխում են վերոնշյալ կոնվենցիայից և ԵՄ «Արհեստական բանականության մասին» ակտից, և նախատեսել հետևյալ հանցակազմերը.

- «Արհեստական բանականության համակարգը ոչ պատշաճ ծրագրավորելը, արտադրելը, շահագործելը, որն անգոյությունը առաջացրել է մարդու մահ, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք՝ (...):»:

- «1. Վնասակար արհեստական բանականության համակարգ ծրագրավորելը կամ արտադրելը՝ (...):»:

- «1. Վնասակար արհեստական բանականության համակարգ ձեռք բերելը կամ իրացնելը՝ (...):»:

3) ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ գլխում նախատեսված հանցագործությունները հանցագործությունները արհեստական բանականության համակարգի նկատմամբ իրականացնելն օժտված է առավել բարձր հանրային վտանգավորությամբ, քան սովորական համակարգչային համակարգի նկատմամբ իրականացնելը՝ պայմանավորված արհեստական բանականության համակարգի՝ ինքնուրույն տվյալահեղ գործունեություն իրականացնելու հանգամանքով, այնինչ համակարգչային համակարգն աշխատում է բացառապես կոնկրետ հրահանգներով: Ուստի, վերոգրյալով պայմանավորված, առաջարկում ենք, որպես ծանրացնող հանգամանք նախատեսել արհեստական բանականության համակարգի նկատմամբ իրականացնելը, ինչպես նաև այդ գլուխը վերանվանել համակարգչային համակարգի, համակարգչային տվյալների, արհեստական բանականության համակարգի անվտանգության և անվտանգ գործունեության դեմ ուղղված հանցագործություններ:

4) Առաջարկում ենք ձևավորել հետևյալ հանցակազմը. «Արհեստական բանականության համակարգին հանցագործության հմտություններ, հանցավոր վարքագիծ դրսևորել սովորեցնելը, պատժվում է՝ (...):»:

5) Առաջարկում ենք մի շարք հանցակազմերի ծանրացնող հանգամանք նախատեսել արհեստական բանականության օգտագործմամբ կատարելը՝ սպանություն, ինքնասպանության հասցնել, առողջությանը ծանր վնաս պատճառել, առողջությանը միջին ծանրության վնաս պատճառել, առողջությանը թեթև վնաս պատճառել, խարդախություն, շորթում:

6) Հաշվի առնելով սոցիալական ցանցերում դիֆիֆեյքերի մեծ քանակությունը, անհրաժեշտ ենք համարում Հայաստանի Հանրապետությունում քրեականացնել առանց անձի համաձայնության

նրա ձայնով կամ պատկերով արհեստական բանականությամբ գեներացված պատկերի, տեսապատկերի, ձայնագրության, տեսաձայնագրության տարածումը, որն էական վնաս է պատճառել անձին:

7) Սինույն ժամանակ, այն դեպքում, երբ խոսքն առանց անձի համաձայնության նրա ձայնով կամ պատկերով սեռական բովանդակությամբ պատկեր, տեսապատկեր, տեսաձայնագրություն գեներացնելու մասին է, ապա արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածով՝ պոռնկագրական նյութեր կամ առարկաներ պատրաստելը, տարածելը կամ պահպանելը, եթե, իհարկե, տարածվել է անորոշ անձանց շրջանակում: Եվ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի ծանրացնող հանգամանք նախատեսել՝ եթե պոռնկագրական նյութը ստեղծվել է առանց անձի համաձայնության նրա ձայնով կամ պատկերով արհեստական բանականության գեներացմամբ: Իսկ այն դեպքում, երբ վերոգրյալը տարածվել, ուղարկվել է որոշակի անձի, ապա արարքը ենթակա է որակման մեր կողմից նախորդիվ առաջարկված հանցակազմով:

8) Երբ արհեստական բանականության հանակարգերն են օգտագործվում հանցավոր արարքներ կատարելու նպատակով կամ դրանք ի սկզբանե ծրագրավորվում կամ արտադրվում են հանցավոր նպատակներ կենսագործելու համար, կամ ոչ պատշաճ ձևով, ապա առաջարկում ենք օրենսդրություն նախատեսել դրանց նկատմամբ անվտանգության միջոց կիրառելու հնարավորություն՝ վերածրագրավորել կամ որոշակի գործառույթների իրականացումը սահմանափակել, որպես ծայրահեղ միջոց՝ ջնջել/ոչնչացնելը, որի նպատակն է կանխել վերջինիս ներգրավվածությամբ կամ օգտագործմամբ հետագա հանցանքների կատարումը:

¹ <https://armenpress.am/hy/article/1236360> , հասանելի է 2025 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ:

² Տե՛ս Terry Winograd, Thinking Machines: Can There Be? Are We?, THE FOUNDATIONS ARTIFICIAL INTELLIGENCE 167 (Derek Partridge and Yorick Wilks eds., OF 2006).

³ Տե՛ս И.А. Филипова, “Правовое регулированиеискусственного интеллекта” учебное пособие 2-е издание, обновленное и дополненное, 2022, Нижний Новгород, с. 8.

⁴ Տե՛ս նույն տեղում, с. 9:

⁵ Տե՛ս նույն տեղում, с.19.

⁶ Տե՛ս Council of Europe, Framework Convention on Artificial Intelligence and Human Rights, Democracy and the Rule of Law, Council of Europe Treaty Series - No. 225, Vilnius, 5.IX.2024, <https://rm.coe.int/1680afae3c>, հասանելի է 2025 թվականի նոյեմբերի 10-ի դրությամբ:

⁷ Տե՛ս Murphy, Neil. “US, Britain and EU sign international treaty to tackle AI threats”. The National. Retrieved 2024-09-06. / <https://www.thenationalnews.com/future/technology/2024/09/05/us-britain-and-eu-sign-international-treaty-to-tackle-ai-threats/>, հասանելի է 2025 թվականի նոյեմբերի 10-ի դրությամբ:

⁸ Տե՛ս <https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=signatures-by-treaty&treatynum=225>, հասանելի է 2025 թվականի նոյեմբերի 10-ի դրությամբ:

⁹ Տե՛ս Regulation (EU) 2024/1689 of the European Parliament and of the Council of 13 June 2024 laying down harmonised rules on artificial intelligence and amending Regulations (EC) No 300/2008, (EU) No 167/2013, (EU) No 168/2013, (EU) 2018/858, (EU) 2018/1139 and (EU) 2019/2144 and Directives 2014/90/EU, (EU) 2016/797 and (EU) 2020/1828 (Artificial Intelligence Act)/ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32024R1689>, հասանելի է 2025 թվականի նոյեմբերի 8-ի դրությամբ:

¹⁰ Տե՛ս “Proposal for a Regulation laying down harmonised rules on artificial intelligence: Shaping Europe’s digital future”. <https://digital-strategy.ec.europa.eu/en/library/proposal-regulation-laying-down-harmonised-rules-artificial-intelligence>, հասանելի է 2025 թվականի նոյեմբերի 9-ի դրությամբ:

¹¹ Տե՛ս “EU AI Act”-ի 5-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերը:

¹² Տե՛ս Mantelero, Alessandro (2022), Beyond Data. Human Rights, Ethical and Social Impact Assessment in AI, Information Technology and Law Series, vol. 36, The Hague: Springer-T.M.C. Asser Press, doi:10.1007/978-94-6265-531-

www.aradaradutyjournal.com

7. ISBN 978-94-6265-533-1

¹³ St'u Mueller, Benjamin (4 May 2021). “The Artificial Intelligence Act: A Quick Explainer”. Center for Data Innovation/ <https://datainnovation.org/2021/05/the-artificial-intelligence-act-a-quick-explainer/>, հասանելի է 2025 թվականի նոյեմբերի 10-ի դրությամբ:

¹⁴ St'u “EU AI Act: first regulation on artificial intelligence” <https://www.europarl.europa.eu/news/en/headlines/society/20230601STO93804/eu-ai-act-first-regulation-on-artificial-intelligence>, հասանելի է 2025 թվականի նոյեմբերի 15-ի դրությամբ:

¹⁵ St'u Liboreiro, Jorge (21 April 2021). “‘Higher risk, stricter rules’: EU’s new artificial intelligence rules”. Euronews. <https://www.euronews.com/my-europe/2021/04/21/the-higher-the-risk-the-stricter-the-rule-brussels-new-draft-rules-on-artificial-intellige>, հասանելի է 2025 թվականի նոյեմբերի 15-ի դրությամբ:

¹⁶ St'u Veale, Michael; Borgesius, Frederik Zuiderveen (1 August 2021). “Demystifying the Draft EU Artificial Intelligence Act — Analysing the good, the bad, and the unclear elements of the proposed approach”. Computer Law Review International. 22 (4): 97–112. arXiv:2107.03721. doi:10.9785/crl-2021-220402. ISSN 2194-4164. S2CID 235765823.

¹⁷ St'u Ramy El-Kady, “Challenges of Criminal Liability for Artificial Intelligence Systems”, Police Academy, Egypt, <https://orcid.org/0000-0003-2208-7576>, հասանելի է 2025 թվականի նոյեմբերի 20-ի դրությամբ:

¹⁸ St'u European committee on crime problems (CDPC), Discussion Paper on Criminal Liability Related to AI systems - following up Framework Convention on AI & Human Rights, Democracy, the Rule of Law (CAI, CETS No. 225), Strasbourg, 13 November 2024/, <https://rm.coe.int/cdpc-2024-09-ai-criminal-liability-discussion-paper-final-draft/1680b26f16/>, հասանելի է 2025 թվականի նոյեմբերի 20-ի դրությամբ:

¹⁹ St'u European committee on crime problems (CDPC), Draft, Questionnaire concerning artificial intelligence and criminal justice, Strasbourg, 11 June 2025.

²⁰ St'u «Չիբեռնահանցագործությունների մասին կոնվենցիան», Բուդապեշտ, 23.11.2001

²¹ St'u Мосечкин, Илья Н. 2019. «Искусственный интеллект и уголовная ответственность: проблемы становления нового вида субъекта преступления». Вестник СанктПетербургского университета. Право 3: 461–476. <https://doi.org/10.21638/spbu14.2019.304>

²² St'u Мосечкин, Илья Н. 2019. «Искусственный интеллект и уголовная ответственность: проблемы становления нового вида субъекта преступления». Вестник СанктПетербургского университета. Право 3: 461–476. <https://doi.org/10.21638/spbu14.2019.304>

²³ St'u Hallevy G. When Robots Kill: Artificial Intelligence under Criminal Law. University Press of New England, 2013, 244 p.

²⁴ St'u Giannini, A. (2024). United States Report on Traditional Criminal Law Categories and IA. REVUE JURISPRUDENCIQUE DE L'ASSOCIATION INTERNATIONALE DE DROIT PENAL, 2024, 1-41.

²⁵ St'u И.И.Карташов, И.И.Карташов “Искусственный интеллект как субъект уголовной ответственности: настоящее и перспективы”, ПРАВО: история и современность. № 2(15), 2021, с.73.

²⁶ St'u И.И.Карташов, И.И.Карташов “Искусственный интеллект как субъект уголовной ответственности: настоящее и перспективы”, ПРАВО: история и современность. № 2(15), 2021, с.74.

²⁷ St'u И.И.Карташов, И.И.Карташов “Искусственный интеллект как субъект уголовной ответственности: настоящее и перспективы”, ПРАВО: история и современность. № 2(15), 2021, с.72.

²⁸ St'u Владимирова З.В. О возможных способах наделения искусственного интеллекта правосубъектностью // Вестник магистратуры. - 2021. - № 8(119). С. 50-55.

²⁹ St'u Watney M. M. Artificial intelligence and its' legal risk to cybersecurity. European Conference on Information Warfare and Security, ECCWS, 2020-June, 2020, pp. 398–405, Young O. R., Yang J., Guttman D. Meeting cyber age needs for governance in a changing global order. Sustainability (Switzerland), 2020, vol. 12 (14), art. no. 5557.DOI: 10.3390/su12145557.

³⁰ St'u AI helped scammers imitate the voice of the company’s CEO and steal 220,000 euros. Hacker. Available at: <https://xakep.ru/2019/09/05/voice-deepfake/>, հասանելի է 2025 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ:

³¹ St'u Swindlers managed to steal \$ 76 million thanks to Deepfake technology. Available at: <https://news.rambler.ru/inter-net/46154575/>, հասանելի է 2025 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ:

³² <https://www.vedomosti.ru/technology/articles/2025/06/09/1116134-sest-za-neiroset>, հասանելի է 2025 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ:

³³ St'u P. И. Дремлюга, “Использование искусственного интеллекта в преступных целях: уголовно-правовая характеристика”, Азиатско-тихоокеанский регион: экономика, политика, право · Т. 23 · № 3 · 2021, с.161.

³⁴ St'u նույն տեղում, с.162.

³⁵ St'u Zotov S., Dremluga R., Borshevnikov A., Krivosheeva K. Deepfake detection algorithms: a meta-analysis. ACM International Conference Proceeding Series. 2. .SSPS 2020 – 2020 2nd Symposium on Signal Processing Systemst. Guangdong, 2020, pp. 43–48.

³⁶ St'u P. И. Дремлюга, “Использование искусственного интеллекта в преступных целях: уголовно-правовая характеристика”, Азиатско-тихоокеанский регион: экономика, политика, право · Т. 23 · № 3 · 2021, с.160.

19. Murphy, Neil. “US, Britain and EU sign international treaty to tackle AI threats”. The National. Retrieved 2024-09-06. / <https://www.thenationalnews.com/future/technology/2024/09/05/us-britain-and-eu-sign-international-treaty-to-tackle-ai-threats/> , հասանելի է 2025 թվականի նոյեմբերի 10-ի դրությամբ:
20. Ramy El-Kady, “Challenges of Criminal Liability for Artificial Intelligence Systems”, Police Academy, Egypt, <https://orcid.org/0000-0003-2208-7576> , հասանելի է 2025 թվականի նոյեմբերի 20-ի դրությամբ:
21. Regulation (EU) 2024/1689 of the European Parliament and of the Council of 13 June 2024 laying down harmonised rules on artificial intelligence and amending Regulations (EC) No 300/2008, (EU) No 167/2013, (EU) No 168/2013, (EU) 2018/858, (EU) 2018/1139 and (EU) 2019/2144 and Directives 2014/90/EU, (EU) 2016/797 and (EU) 2020/1828 (Artificial Intelligence Act)/ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32024R1689>, հասանելի է 2025 թվականի նոյեմբերի 8-ի դրությամբ:
22. Terry Winograd, Thinking Machines: Can There Be? Are We?, THE FOUNDATIONS ARTIFICIAL INTELLIGENCE 167 (Derek Partridge and Yorick Wilks eds., OF 2006).
23. Veale, Michael; Borgesius, Frederik Zuiderveen (1 August 2021). “Demystifying the Draft EU Artificial Intelligence Act — Analysing the good, the bad, and the unclear elements of the proposed approach”. Computer Law Review International. 22 (4): 97–112. arXiv:2107.03721. doi:10.9785/cri-2021-220402. ISSN 2194-4164. S2CID 235765823.
24. Watney M. M. Artificial intelligence and its’ legal risk to cybersecurity. European Conference on Information Warfare and Security, ECCWS, 2020-June, 2020, pp. 398–405, Young O. R., Yang J., Guttman D. Meeting cyber age needs for governance in a changing global order. Sustainability (Switzerland), 2020, vol. 12 (14), art. no. 5557.DOI: 10.3390/su12145557.
25. Zotov S., Dremliuga R., Borshevnikov A., Krivosheeva K. Deepfake detection algorithms: a meta-analysis. ACM International Conference Proceeding Series. 2. „SSPS 2020 – 2020 2nd Symposium on Signal Processing Systems”. Guangdong, 2020, pp. 43–48.
26. <https://armenpress.am/hy/article/1236360> , հասանելի է 2025 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ:
27. <https://digichina.stanford.edu/work/translation-internet-information-service-deep-synthesis-management-provisions-draft-for-comment-jan-2022/> , հասանելի է 2025 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ:
28. <https://news.rambler.ru/internet/46154575/>, հասանելի է 2025 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ:
29. <https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=signatures-by-treaty&treaty-num=225>, հասանելի է 2025 թվականի նոյեմբերի 10-ի դրությամբ:
30. https://www.legifrance.gouv.fr/codes/section_lc/LEGITEXT000006070719/LEGISCTA000006165310/?anchor=LEGIARTI000049571542#LEGIARTI000049571542, հասանելի է 2025 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ:
31. <https://www.reuters.com/article/us-china-technology/china-seeks-to-root-out-fake-news-and-deepfakes-with-new-online-content-rules-idUSKBN1Y30VU> , հասանելի է 2025 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ:
32. <https://www.vedomosti.ru/technology/articles/2025/06/09/1116134-sest-za-neiroset>, հասանելի է 2025 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ:
33. <https://xakep.ru/2019/09/05/voice-deepfake/>, հասանելի է 2025 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ:

References

1. Codice Penale Italiano [Italian Criminal Code]. Available at: <https://www.gazzettaufficiale.it/dettaglio/codici/codicePenale> (Accessed: 20 December 2025).
2. Dremlyuga R.I. Ispol’zovaniye iskusstvennogo intellekta v prestupnykh tselyakh: ugolovno-pravovaya kharakteristika [The use of artificial intelligence for criminal purposes: criminal law characteristics]. Aziatsko-tikhookeanskiy region: ekonomika, politika, pravo, 2021, Vol. 23, No. 3, p. 161.
3. Filipova I.A. Pravovoye regulirovaniye iskusstvennogo intellekta [Legal regulation of artificial intelligence]. Textbook, 2nd edition. Nizhny Novgorod, 2022, p. 8.
4. HH k’reakan nor orensgrk’um tegh gtat hayets’akargayin motets’umneri yev nor institutneri meknabanman ughets’uyts’ [Guide to the interpretation of conceptual approaches and new institutes in the new Criminal Code of the RA]. Yerevan, p. 209.
5. Kartashov I.I. Iskusstvennyy intellekt kak sub”yekt ugolovnoy otvetstvennosti: nastoyashcheye i perspektivy [Artificial intelligence as a subject of criminal liability: present and prospects]. PRAVO: istoriya i sovremennost’, 2021, No. 2(15), p. 73.
6. Konventsia kiberhants’agortsut’yunneri masin [Convention on Cybercrime]. Budapest, 23.11.2001.
7. Mosechkin I.N. Iskusstvennyy intellekt i ugolovnaya otvetstvennost’: problemy stanovleniya novogo vida sub”yekta prestupleniya [Artificial intelligence and criminal liability: problems of the formation of a new type of subject of crime]. Vestnik Sankt-Peterburgskogo universiteta. Pravo, 2019, Vol. 10(3), pp. 461–476. <https://doi.org/10.21638/spbu14.2019.304>
8. Vladimirova Z.V. O vozmozhnykh sposobakh nadeleniya iskusstvennogo intellekta pravosub”yektnost’yu [On possible ways of granting legal personality to artificial intelligence]. Vestnik magistratury, 2021, No. 8(119), pp. 50–55.

Լուսինե Ավետիսյան

Помощник судьи Уголовной палаты Кассационного суда РА,
магистр юриспруденции

РЕЗЮМЕ

Уголовная ответственность программиста, производителя и пользователя системы искусственного интеллекта

В настоящее время искусственный интеллект находит применение в самых разных областях: от транспортных средств до медицины. Такое комплексное использование имеет как положительные, так и отрицательные последствия. Зафиксирован ряд случаев, когда деятельность систем искусственный интеллект приводила к преступным последствиям, в связи с чем возникает вопрос: кто должен нести за это уголовную ответственность?

Данная работа исследует проблему уголовной ответственности в случае совершения преступного деяния искусственным интеллектом. А именно: кто и когда должен быть привлечен к ответственности — программист, производитель или пользователь?

В результате исследования представлен ряд предложений по формированию конкретных составов преступлений для привлечения к уголовной ответственности программиста, производителя и пользователя искусственный интеллект, совершенствованию действующих составов, а также применению мер безопасности в отношении систем искусственного интеллекта, вовлеченных в совершение преступления.

Ключевые слова - Система искусственного интеллекта, уголовная ответственность, программист системы искусственного интеллекта, производитель системы искусственного интеллекта, пользователь системы искусственного интеллекта, меры безопасности.

Lusine Avetisyan

Assistant to the Judge of the Criminal Chamber
of the Court of Cassation of the RA,
Master of Laws

SUMMARY

The criminal liability of the programmer, manufacturer, and user of an artificial intelligence system

Artificial intelligence is currently being applied across a wide range of fields, from transportation to medicine. Such extensive use has both positive and negative consequences. There have been a number of cases where the operation of artificial intelligence systems has led to criminal outcomes, raising the question of who should bear criminal responsibility for them.

This paper examines the issue of criminal liability in cases where artificial intelligence is involved in committing a criminal act. In particular, it seeks to determine who and under what circumstances should be held criminally liable—the programmer, the manufacturer, or the user.

As a result of the research, several proposals are presented regarding the establishment of specific elements of crimes for holding AI programmers, manufacturers, and users criminally liable, the improvement of existing legal provisions, and the application of safety measures to artificial intelligence systems involved in the commission of crimes.

Key words - Artificial intelligence system, criminal liability, developer of the artificial intelligence system, manufacturer of the artificial intelligence system, user of the artificial intelligence system, security measures.

Բնագիրը ներկայացվել է 15.04.2026թ.
Ընդունվել է տպագրության 27.04.26թ.

ԵՓՐԵՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ
Հայաստանի Հանրապետության պետական
կառավարման ակադեմիայի հայցորդ

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ՍԱՐՍԻՆՆԵՐՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՍԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋՈՑ**

Հակակոռուպցիոն ռազմավարությունները հանդիսանում են պետության կողմից հանրային իշխանության մարմիններում իրականացվող կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված քաղաքականության կարևորագույն իրավական կառուցակարգ: Այս ռազմավարությունների միջոցով են ամրագրվում այն հիմնական խնդիրները և դրանց հաղթահարման գործիքակազմերը, որոնք ծագում են կոռուպցիայի կանխարգելման և ընդհանուր առմամբ հակակոռուպցիոն պայքարի շրջանակներում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոռուպցիան հանդիսանում է համաշխարհային մարտահրավեր պետությունների համար՝ միջազգային կազմակերպությունները և կառույցները ուրվագծել են այն հիմնական էական կանոնները որոնց պետք է համապատասխանի հակակոռուպցիոն ոլորտում իրականացվող քաղաքականությունը: Դրանք առնչվում են հակակոռուպցիոն ռազմավարությունների մշակման իրականացման և գնահատման և՛ ընթացակարգային, և՛ բովանդակային ասպեկտներին: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի կողմից իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականությունը միջազգային կազմակերպությունների կողմից գնահատվում է բարձր՝ ռազմավարության մշակման, իրականացման և գնահատման փուլերում առկա են որոշակի խնդիրներ, որոնք կարիք ունեն հասցեագրման հաջորդ հակակոռուպցիոն ռազմավարություններում: Սույն ուսումնասիրությունն անդրադառնում է այդ հիմնական խնդիրներին, առաջարկում է որոշակի լուծման եղանակներ՝ հիմք ըդունելով նաև միջազգային կազմակերպությունների կողմից տրվող առաջարկությունները և տեսական աղբյուրներում բարձրացված խնդիրները:

Հիմնաբառեր - Հակակոռուպցիոն քաղաքականություն, Հակակոռուպցիոն ռազմավարություն, մոնիթորինգ, գնահատում, կոռուպցիոն ռիսկեր, արդյունքային ցուցիչներ, ազդեցության ցուցիչներ, հաղորդակցում, վարիացիոն շարքի համակշռված միջին, ՏՀԶԿ:

Ներածություն.

Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում պետության կողմից իրականացվող քաղաքականությունը հանդիսանում է գործադիր իշխանության կողմից իրականացվող տարբեր քաղաքական ուղղություններից մեկը: Սակայն, կոռուպցիայի կանխարգելման և ընդհանուր վերցրած հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության իրականացման համատեքստում ժամանակի ընթացքում տեսական աղբյուրներում ձևավորվել են մի շարք մոտեցումներ, իսկ միջազգային տարբեր կառույցներ սահմանել են հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման հստակ ընթացակարգային և բովանդակային պահանջներ, ինչը մեծամասամբ բնորոշ չէ պետությունների կողմից իրականացվող այլ ոլորտային քաղաքականություններին: Հայրենական գիտական աղբյուրներում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված քաղաքականությունների իրականացման վերաբերյալ ուսումնասիրություններ տեսական աղբյուրներում բացակայում են, որոնք սակայն էական նշանակություն ունեն

այս ոլորտում իրականացվող քաղաքականությունների համար տեսական առավել արդյունավետ հիմքերի ստեղծման տեսանկյունից: Հետազոտությանը փորձ է արվում լրացնել այս բացը՝ ներկայացնելով քննարկվող ոլորտում իրականացվող քաղաքականությունների նկատմամբ առկա տեսական մոտեցումները, միջազգային ուղեհիշները և ներպետական համատեքստը՝ վերջնարդյունքում քննարկելով Հայաստանում այս ոլորտում իրականացվող քաղաքականության առկա բացերը: Այս խնդիրների հաշվառմամբ հետազոտության կառուցվածքը հանգում է տեսական աղբյուրների, միջազգային առկա ստանդարտների, ներպետական իրավական կառուցակարգերի ուսումնասիրության և դրանց համադրության արդյունքում համապատասխան առաջարկների ներկայացմանը:

Հետազոտության մեթոդաբանությունը.

Սույն հետազոտության իրականացման համար տեսական հիմք են հանդիսացել տարբեր ուսումնասիրողների կողմից ուսումնասիրության առարկայի վերաբերյալ իրականացված հետազո-

www.ardadatutyunjournal.com

տուրյունները, ներպետական առկա իրավական կարգավորումները, միջազգային հիմնարար փաստաթղթերը և ընդհանուր առմամբ առկա միջազգային փորձը:

Հետազոտության իրականացման մեթոդաբանական հիմք են հանդիսացել դոկտրինայ, համեմատական-իրավական մեթոդները, ինչպես նաև նկարագրության և վերլուծության մեթոդներ:

Հիմնական մաս.

Պետության կողմից տարբեր ոլորտներում իր քաղաքականության իրականացումը իրականացվում է հստակ պլանավորված եղանակով: Սա բխում է Հայաստանի սահմանադրությամբ նախատեսված հանրային իշխանության մարմինների կառուցվածքից և իշխանության օրենսդիր ու գործադիր ճյուղերի միջև իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքներից:

Մասնավորապես՝ Կառավարության կազմավորումից հետո Կառավարությունը Ազգային ժողով է ներկայացնում իր ծրագիրը, որը պետք է արժանանա Ազգային ժողովի հավանությանը: Իշխանության գործադիր ճյուղի կողմից Կառավարության ծրագրի շրջանակներում որոշվում է Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները և իրականացվում է Կառավարության քաղաքականությունը, ըստ այդ ուղղությունների:

Միաժամանակ, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածով նախատեսվում է այն պատասխանատու մարմինների շրջանակը, որոնք իրականացնում են համապատասխան ոլորտային քաղաքականությունները: Մասնավորապես, ըստ վերոգրյալ օրենքի հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականությունը մշակում և իրականացնում է ՀՀ Արդարադատության նախարարությունը: Ընդ որում, քննարկվող օրենքում իրականացված փոփոխություններով նախատեսվեց նաև, որ համապատասխան ոլորտում քաղաքականության իրականացումը ենթադրում է նաև դրա նկատմամբ մոնիթորինգի իրականացումը:

Անդրադառնալով Կառավարության կողմից վարվող հակակոռուպցիոն քաղաքականությանը՝ հարկ է նշել, որ Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա¹, ինչպես նաև 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ² որոշումներով անդրադարձ են կատարվում հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության առաջնահերթություններին, որոնք որպես այդպիսին հիմք են հանդիսացել Հակակոռուպցիոն քաղաքականության ձևավորման համար:

Կառավարության ծրագրի հաշվառմամբ 2019

թվականի հոկտեմբերի 3-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն³, իսկ 2023 թվականի հոկտեմբերի 26-ին «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Ն⁴ որոշումները: Չնայած վերոգրյալ երկու ռազմավարությունների շեշտադրմանը, որն, ըստ էության պայմանավորված է դրանց բովանդակային առանձնահատկություններով, հարկ է նշել, որ Հայաստանում հակակոռուպցիոն ռազմավարություններ ընդունվել են դեռևս 2003 թվականից սկսած⁵: Ընդհանուր առմամբ Հայաստանում գործել են 5 հակակոռուպցիոն ռազմավարություններ:

Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ կառուցակարգերի ներդրումը մեկնարկել է 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ, իսկ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունը հանդիսանում է նախորդ ռազմավարության օրգանական շարունակությունը և դրանով նախատեսվում է զարգացնել ներդրված ինստիտուցիոնալ կառուցակարգերը, ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի առկա կառուցակարգերի լավարկումը:

Անդրադառնալով հակակոռուպցիոն ոլորտում իրականացվող քաղաքականություններին, հարկ է նշել, որ դրա իրականացումը կրում է որոշակի բարդություններ, այն համատեքստում, որ ինքնին կոռուպցիան նյութական և ֆինանսական արժեքների, թաքնված, ինքնակարգավորվող, փոխշահավետ փոխանակում է և նմանատիպ կապերը կոնսենսուսային են, ունեն բարձր լատենտայնություն և շատ հաճախ անհասանելի են⁶:

Այս պատճառով էլ հակակոռուպցիոն քաղաքականության իրականացմանը և հակակոռուպցիոն ռազմավարություններին՝ դրանց մշակման փուլից սկսած մինչև դրանց իրականացման արդյունքների մոնիթորինգը և գնահատումը նախատեսված են մի շարք չափանիշներ: Տեսական աղբյուրներում հեղինակները անդրադառնալով հակակոռուպցիոն քաղաքականությանը ընդհանուր առմամբ, նշում են, որ հակակոռուպցիոն քաղաքականությունը պետության և քաղաքացիական հասարակության հետևողական և շարունակական գործունեությունն է, որն ուղղված է կանխարգելող, հակազդող սահմանափակող, վերացնող բնույթ ունեցող միջոցների մշակմանը և պարբերական իրականացմանը՝ կոռուպցիան առաջացնող պայմանների, պատճառների, դրսևորումների նվազեցման և վերացման նպատակով: Հակակոռուպցիոն ռազմավարությունը իրավական բնույթի ռազմավարական փաստաթուղթ է, որն ուղղված է հակակոռուպ-

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ցիոն ոլորտի իրավական դաշտի ձևավորմանը և դրա գործնական կիրառության ապահովմանը :

Մեկ այլ աղբյուրում հակակոռուպցիոն քաղաքականությունը մեկնաբանվում է որպես պետության և քաղաքացիական հասարակության կողմից համապարփակ և հետևողական միջոցառումների մշակում ու շարունակական իրականացում՝ կոռուպցիան առաջացնող և սնուցող պատճառներն ու պայմանները վերացնելու (նվազագույնի հասցնելու) նպատակով :

Ինչպես արդեն նշել ենք, հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ առկա են դրույթներ նաև միջազգային իրավական փաստաթղթերում: ՄԱԿ կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է մշակի և իրականացնի կամ վարի հանրության մասնակցությանը և օրենքի գերակայության սկզբունքների արտացոլմանը, պետական գործերի և պետական գույքի պատշաճ կառավարմանը, ազնվությանը և անկաշառությանը, թափանցիկությանը և պատասխանատվությանը նպաստող՝ կոռուպցիայի հակազդման արդյունավետ, համակարգված քաղաքականություն : Կոնվենցիայի մեկնաբանության համար առկա ՄԱԿ ուղեցույցում¹⁰ ներկայացվում է այն հիմնական պահանջները, որի հաշվառմամբ պետք է մշակվեն հակակոռուպցիոն ռազմավարությունները: Թերևս, առաջին պահանջներից մեկը, որը Կոնվենցիայի շրջանակներում ներկայացվում է հակակոռուպցիոն ռազմավարություններին, հանգում է նրան, որ դրանք պետք է մշակվեն հիմք ունենալով կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքները, որի հիմքում պետք է լինեն նաև անհրաժեշտ վիճակագրական տվյալներ, ինչպես նաև պետական մարմինների գործունեության վերաբերյալ համապատասխան զեկույցներ: Ուղեցույցով կարևորվում է ինչպես ռազմավարություններում կոռուպցիոն հանցանքների քննության և օրենսդրության կառուցակարգերի, այնպես էլ կանխարգելման մեխանիզմների վերաբերյալ դրույթների առկայությունը: Բացի այդ, ըստ ուղեցույցի կարևոր է հակակոռուպցիոն ռազմավարությունների գործողությունների ծրագրերում հստակ որակական և քանակական եղանակներով չափելի գործողությունների առկայությունը: Կարևորվում է նաև այն հանգամանքը, որ ռազմավարությունների մշակման, ընդունման, իրականացման և մոնիթորինգի ու գնահատման գործընթացում ներգրավված լինեն բոլոր շահագրգիռ կողմերը, ներառյալ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Ըստ ուղեցույցի, կարևոր է, որ ռազմավարությունները հասցեագրեն բոլոր այն ոլորտները, որտեղ առկա են կոռուպցիոն ռիսկերումներ:

Ուղեցույցը կարևորում է նաև լայն մասնակցայնության ապահովումը հասարակության կողմից, որի հասնելու եղանակներից առանձնացվում է հանրային իրազեկվածության բարձրացումը, ինչպես նաև նկարագրում է հակակոռուպցիոն ռազմավարությունների կառուցվածքը և դրա մշակման քայլերի հերթականությունը: Ըստ այդմ, ըստ ուղեցույցի առաջին փուլում, որը մշակման փուլն է, պետք է որոշել առաջնահերթությունները, ռազմավարության իրականացման ժամանակահատվածը, ինչպես նաև հնարավոր ռեսուրսների շրջանակը: Ընդ որում, այս փուլում, ինչպես նշվեց վերևում կարևորվում է ներառականության ապահովումը և բոլոր հնարավոր ոլորտներում խնդիրների վեր հանումը և հասցեագրումը: Մյուս փուլը, դա նախագծման փուլն է, որի ընթացքում պետք է մշակվի հստակ գործողությունների պլան՝ հստակ սահմանելով ռազմավարության նպատակները և գործողությունները, ինչպես նաև սահմանելով հստակ և չափելի ցուցիչներ, որոնցով հնարավոր կլինի գնահատել թե ինչքանով է ապահովվել ռազմավարության կատարվածությունը: Մյուսը իրականացման փուլն է, որի ընթացքում կարևոր է իրազեկվածության բարձրացման ակտիվ աշխատանքների իրականացումը, որը պետք է հետապնդի հնարավորինս շատ ռեսուրսների ներգրավումը ռազմավարության իրականացմանը:

Ըստ ուղեցույցի վերջին փուլը, դա ռազմավարության գնահատման կամ արդյունքների ամփոփման փուլն է, որի շրջանակներում գնահատվում է ռազմավարության արդյունքները:

Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի՝ հակակոռուպցիոն ռազմավարություններին ներկայացվող պահանջների հաշվառմամբ ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի աջակցությամբ 2013 թվականին ընդունվել է «Կուալա Լումպուրի հայտարարությունը Հակակոռուպցիոն ռազմավարությունների վերաբերյալ»՝ փաստաթուղթը: Այս փաստաթուղթը ուղենիշային բնույթ ունի և դրա նպատակն է օգնել կայուն հակակոռուպցիոն ռազմավարություններ նախագծելուն և իրականացնելուն:

Հայտարարության հիմնական բովանդակությունն հանգում է Կոնվենցիայով ամրագրված հիմնական դրույթների ամրագրումը:

Մասնավորապես, հայտարարությունը ընդգծում է, որ հակակոռուպցիոն ռազմավարությունների մշակման գործընթացում պետք է.

1. Հաշվի առնել քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային համատեքստը,
2. Պետք է դրսևորել քաղաքական կամք,
3. Ապահովել շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը,
4. Ապահովել բաց և թափանցիկ գործընթացներ,

5. Մշակման, իրականացման և մոնիթորինգի գործընթացում համակարգման ուժեղացում,

6. Օգտագործել առկա կարիքների և ռիսկերի, ինչպես նաև խոցելի ոլորտների ու բացերի վերաբերյալ տեղեկատվությունը,

7. Ապահովել գործընթացների կայունությունը և ինստիտուցիոնալացումը,

8. Հատկացնել ռեսուրսներ և ապահովել դրանց մոբիլիզացումը,

9. Ապահովել հանրության հաղորդակցում և հանրության ներգրավումը:

Բացի այդ, սույն հայտարարությամբ ներկայացվում է այն հիմնական ուղեցիղները, որոնք վերաբերում են հակակոռուպցիոն ռազմավարությունների կառուցվածքին և բովանդակությանը, ինչպես նաև մոնիթորինգի գործընթացին:

Ըստ հայտարարության հակակոռուպցիոն ռազմավարությունները պետք է.

1. Հիմքում ունենան հիմնավորված առանցքային խնդիրներ և իրատեսական նպատակներ,

2. Այս ռազմավարությունները պետք է համահունչ լինեն պետության կողմից վարվող ընդհանուր քաղաքականություններին և ազգային ռազմավարություններին,

3. Համապատասխանեցվեն և հաշվի առնվեն այլ ռազմավարական փաստաթղթերով առկա մոտեցումները,

4. Պետք է ցուցաբերել համապարփակ և համակարգված մոտեցում,

5. Մշակել հստակ, հակիրճ և դյուրըմբռնելի փաստաթուղթ,

6. Առաջարկվում է, որպես հակակոռուպցիոն ռազմավարությունների նախագծման համար շրջանակային փաստաթուղթ օգտագործել Կոռուպցիայի դեմ կոնվենցիան,

7. Սահմանել հստակ առաջնահերթությունների և գերակայությունների վրա հիմնված իրատեսական և կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքում իրականացնելի գործողություններ,

8. Ապահովել միջոցառումների տեսքով իրականացման մեխանիզմ,

9. Ուշադրություն դարձնել տեղական մակարդակում ռազմավարության իրականացմանը և

10. Ապահովել ռազմավարության ինստիտուցիոնալ և ֆինանսական կայունությունը:

Հայտարարությունը սահմանում է նաև 6 սկզբունքներ ռազմավարության մոնիթորինգի իրականացման համար: Մասնավորապես, ըստ հայտարարության.

1. Մոնիթորինգի մեխանիզմը պետք է լինի ռազմավարության կառուցվածքի անբաժան մաս,

2. Պետք է սահմանել չափելի ցուցանիշներ, սկզբնական արժեքներով և պարբերական չափելիության մեխանիզմներով,

3. Արդյունավետ մոնիթորինգ և գնահատում իրականացնելու նպատակով հուսալի տվյալների գեներացում,

4. Մոնիթորինգի և գնահատման պարբերական հաշվետվությունների պատրաստում,

5. Անհրաժեշտ է տարանջատել ծրագրի կառավարման մոնիթորինգը, ի հակադրություն վերջնարդյունքների/ազդեցության գնահատման,

6. Պետք է ապահովել պատասխանատու մարմին, որը պարբերաբար կիրականացնի հակակոռուպցիոն ռազմավարությունների մոնիթորինգը և գնահատումը՝ վերջինիս ապահովելով անհրաժեշտ ռեսուրսներով:

Այսպիսով՝ ամփոփելով հակակոռուպցիոն ռազմավարությունների վերաբերյալ միջազգային փաստաթղթերում առկա դրույթները, կարող ենք նշել, որ դրանք, ըստ էության, նկարագրում են ինչպես հակակոռուպցիոն ռազմավարությունների ընթացակարգային՝ մշակման գործընթացի մեկնարկից մինչև դրա մոնիթորինգ և գնահատում, այնպես էլ հակակոռուպցիոն ռազմավարությունների բովանդակության որոշակի մանրամասները: Սակայն հարկ է նշել, որ ի տարբերություն հակակոռուպցիոն ռազմավարության մշակման գործընթացին առնչվող ընթացակարգային խնդիրների մանրամասն հասցեագրմանը, միջազգային փաստաթղթերը, բովանդակային տեսանկյունից նմատիպ հստակ պահանջներ չեն սահմանում, և դա բնական է: Նման մոտեցումը պայմանավորված է նրանով, որ յուրաքանչյուր դեպքում պետությունները պետք է առաջնորդվեն տվյալ պահին իրենց առջև ծառայած խնդիրների հաղթահարման անհրաժեշտությամբ: Սակայն, որոշակի հուշում այնուամենայնիվ, այս փաստաթղթերը պարունակում են: Ինչպես տեսնում ենք, խորհուրդ է տրվում որպես ուղեցիղ վերցնել ՄԱԿ Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի առկա դրույթները, մասնավորապես կոնվենցիայի կանխարգելման բաժնի առկա կառուցվածքը և բովանդակությունը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ Կոնվենցիան այն ունիվերսալ գործիքն է, որից բխում է և որն, ըստ էության, նկարագրում է կոռուպցիայի կանխարգելման ժամանակակից գործիքակազմերի մեծամասնությունը: Բայց դա ինքնին բավարար չէ հակակոռուպցիոն ռազմավարությունների բովանդակության ամբողջական բացահայտման տեսանկյունից: Ներկայում հակակոռուպցիոն ռազմավարությունների բովանդակության և բնույթի վերաբերյալ մի շարք տեսական աղբյուրներում առաջ է քաշվում տարբեր մոտեցումներ:

Մասնավորապես, որոշ տեսական աղբյուրներում նշվում է, որ կոռուպցիայի դեմ պայքարը, կախված իր բնույթից կարող է դասակարգվել երեք հիմնական մոտեցումների՝ կանոնների վրա հիմնված, արժեքների վրա հիմնված և տեխնոլոգիաներ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րի վրա հիմնված¹² : Այս երեք մոտեցումները ոչ միայն չեն հակասում միմյանց, այլ շատ հաճախ փոխլրացնում են միմյանց : Այս մոտեցումները շատ հաճախ կիրառվում են միասին՝ ավելի արդյունավետ հակակոռուպցիոն ռազմավարություններ ստեղծելու նպատակով : Նշված երեք մոտեցումներն ունեն իրենց առավելությունները և թույլ կողմերը :

Կանոնների հիման վրա մոտեցման հիմքում ընկած է այն հիմնական մոտեցումը, որ այն կարելի է հաղթահարել հստակ և արդյունավետ օրենքների, կարգավորումների սահմանմամբ, որոնք ուղղված կլինեն անհատական վարքագծային հստակ կառուցակարգեր ներդնելուն և կապահովեն թափանցիկություն ու հաշվետվողականությունը : Այս մոտեցման հենքում ընկած են Լ. Խ. Փեյնի «Կազմակերպություններում բարեվարքության կառավարումը»¹³ և Ռոբերտսի «Համապատասխանության վրա հիմնված էթիկայի կառավարման աճը»¹⁴ աշխատանքները : Կանոնների հիման վրա մոտեցումը հաճախ նաև նկարագրվում է որպես համապատասխանության մոտեցում, որը ըստ էության նշանակում է համապատասխանություն կանոններին և կարգավորումներին¹⁵ : Այս մոտեցման շրջանակներում առաջարկվում է նախատեսել հստակ օրենսդրական կարգավորումներ, որոնք կսահմանեն կոռուպցիոն վարքագծի հնարավոր դրսևորումները և որպեսզի կանխեն նմանատիպ վարքագծի դրսևորումը, կսահմանվեն հստակ սանկցիաներ և պատժամիջոցներ այդպիսի վարքագիծ դրսևորելիս : Այս մոտեցման շրջանակներում շեշտը դրվում է անկախ և ուժեղ հակակոռուպցիոն մարմինների առկայության վրա, որոնք ապահովում են ոլորտային օրենսդրության պահպանվածությունը :

Համապատասխանության կամ կանոնների հիման վրա մոտեցման շրջանակներում տարանջատվում են երկու առանձին մեթոդներ՝ արտաքին մոտիվացիա և պատասխանատվություն ու պատիժներ : Արտաքին մոտիվացիան արտաքին պարգևատրման մեխանիզմներն են, որոնք ուղղված են աշխատողների մոտ ապահովել բարեվարք գործելու շահագրգռվածություն : Նման օրինակ կարող է հանդիսանալ, օրինակ՝ բարձր աշխատավարձերի սահմանումը :

Ի տարբերություն կիրառվող արտաքին մոտիվացիայի սկզբունքի, պատասխանատվության և պատժի մեթոդը նախատեսում է կիրառել խիստ պատասխանատվություն կոռուպցիոն բնույթի իրավախախտումների համար :

Ընդ որում, եթե արտաքին մոտիվացիայի կիրառման արդյունքների գործնական ուսումնասիրությունը, ցույց է տվել դրա ոչ այնքան արդյունավետ լինելու հանգամանքը ըստ հետազոտողների, երկրորդ մեթոդի ազդեցության էմպիրիկ գնահա-

տականը դժվար է տալ¹⁶ :

Կանոնների հիման վրա մոտեցման հիմքում ընկած է կոռուպցիայի առաջացման “principle-agent” տեսությունը : Այս տեսությունը հակակոռուպցիոն քաղաքականությունների մշակման, հակակոռուպցիոն պայքարի և կոռուպցիայի կանխարգելման հիմքում ընկած ամենատարածված տեսական հիմքերից է համարվում¹⁷ : Ըստ այս տեսության հասարակությունը, որը հանդես է գալիս “principale” դերում իր իշխանությունը դելեգացնում է “agent”-ին, որը նման պարագայում հանդիսանում են հանրային պաշտոն զբաղեցնող անձինք : Սակայն, հաշվի առնելով տեղեկատվության անհավասար բաշխման խնդիրը հանրությունը չի կարող արդյունավետ վերահսկողություն իրականացնել վերջինների նկատմամբ¹⁸ : Ընդ որում, այստեղ շեշտը դրվում է այն հանգամանքի վրա, որ հանրային պաշտոն զբաղեցնող անհատը, որը օժտված է որոշակի հայեցողությամբ, չունի բավարար հաշվետվողականություն : Այս տեսության շրջանակներում հակակոռուպցիոն պայքարը ուղղվում է պաշտոնատար անձի մակարդակում հաշվետվողականության մեխանիզմների ներդրմանը : Տեսաբանները, սակայն այս տեսության թերություններից են համարում համակարգային կոռուպցիայի և կոլեկտիվ կերպով կոռուպցիոն վարքագիծ դրսևորելու հանգամանքների վրա չկենտրոնանալը և հատուկ ուշադրություն չդարձնելը : Նշվածը հատկապես ցայտուն կերպով է արտահայտվում, երբ հասարակություններում կոռուպցիոն վարքագիծը համարվում է ընդունելի վարքագիծ¹⁹ :

Մյուս մոտեցումը, որը պետք է քննարկել դա արժեքների հիման վրա մոտեցումն է : Այս մոտեցման պարագայում առաջնային է համարվում էթիկական վարքագծի խրախուսումը և կազմակերպություններում ու հասարակություններում բարեվարքության զարգացումը : Այստեղ կոռուպցիայի դեմ պայքարում կարևորվում են արժեքները, էթիկան և բարոյականությունը : Ուստի այս մոտեցման շրջանակներում առաջնային տեղ է տրվում հասարակության շրջանում սեփական իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը, ինչպես նաև կոռուպցիոն երևույթների դեմ հասարակության անդամների մոտ անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորումը և ազդարարման պատրաստակամության բարձրացումը : Այս մոտեցման շրջանակներում կարևորվում է նաև հանրային և մասնավոր ոլորտում ղեկավարների, կառավարիչների կողմից բարձր բարեվարքության և դրան համապատասխան վարքագծի դրսևորումը, որը հասարակության մոտ կոռուպցիայի նկատմամբ «զրո» հանդուրժողականության ձևավորման կարևոր պայմաններից է :

Սակայն, հարկ է նշել, որ արժեքների հիման

վրա մոտեցումը ունի իր որոշակի առանձնահատկությունները: Նախ, այն ժամանակատար գործընթաց է և հասարակության մոտ չի կարող կարճ ժամանակահատվածում իրականացնել արժեհամակարգային փոփոխություններ: Մյուս կողմից, այս մոտեցումը քիչ է անդրադառնում կոռուպցիային նպաստող կառուցվածքային և համակարգային խնդիրներին, ուստի կարևոր է, որ այս մոտեցմանը զուգահեռ ներդրվեն հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ և օրենսդրական կառուցակարգեր:

Այս մոտեցման ներքո կիրառվող մեթոդները մի քանիսն են: Մասնավորապես՝ վերապատրաստման ծրագրեր, ներքին մոտիվացիոն համակարգեր, կազմակերպություններում և պետական մարմիններում մշակութային փոփոխություններ, ինչպես նաև ղեկավար մակարդակում օրինակելի վարքագծի և բարեվարքության դրսևորում²⁰:

Մյուս մոտեցումը դա տեխնոլոգիաների հիման վրա մոտեցումն է²¹, որի շրջանակներում շեշտը դրվում է կառավարման էլեկտրոնային գործիքների վրա, որոնք ուղղված են թափանցիկության, կառավարման արդյունավետության և հաշվետվողականության հիման վրա: Տեխնոլոգիական լուծումները հնարավորություն են տալիս նվազեցնել հանրային ծառայություններ մատուցողների և քաղաքացիների շփումները, ստեղծել կոռուպցիոն ռեպրեթի վերաբերյալ հաղորդումներ ներկայացնելուն ուղղված ազդարարման հարթակներ, ապահովել հանրության լայն շրջանակների համար տեղեկատվությունը ավելի ազատ ստանալու հնարավորություն, ապահովելու պետական մարմինների կողմից առավել արագ փոխգործակցությունը և այլն: Մակայն, այս մոտեցումը ինքնին բավարար չէ կոռուպցիայի դեմ ինստիտուցիոնալ պայքարի տեսանկյունից և միևնույն ժամանակ, տեխնոլոգիական ժամանակակից լուծումները ոչ բոլորին են հասանելի:

Որպես կոռուպցիայի դեմ պայքարի մոտեցումներ տարբեր աղբյուրներում առանձնացվում²² են նաև ռիսկերի գնահատման և կառավարման մոտեցումը:

Ռիսկերի կառավարման մոտեցման շրջանակներում կարևորվում է պրոակտիվ եղանակով հնարավոր ռիսկային ուղղությունների բացահայտումը և դրանց ուղղությամբ կանխարգելմանն ուղղված գործողությունների իրականացումը: Այս մոտեցման շրջանակներում կիրառվում են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են աուդիտների իրականացումը և ռիսկերի գնահատումը, ուսումնասիրությունների իրականացումը (due-diligence), «չորս աչքի» սկզբունքը (մոտեցման հիմքում ընկած է այն, որ մեկ անձը ավելի է հակված կոռուպցիոն արարք կատարելու, ի համեմատություն երկու անձի, ուստի որոշումների կայացման գործընթացում մեկ աշխատակից ստուգի և հաստատի մյուս աշխատակ-

ցի կայացրած որոշումը), ակտիվների բացահայտումը, պաշտոնների ռոտացիան և արժանիքների հիման վրա աշխատանքի ընդունումը:

Մյուս կարևոր հարցը, որին պետք է անդրադառնալ, դա հակակոռուպցիոն ռազմավարությունների իրականացման մոնիթորինգը և գնահատումն է: Մոնիթորինգը և գնահատումը հանդիսանում են հակակոռուպցիոն ռազմավարությունների անբաժանելի մասը և եթե մի շարք այլ ոլորտներում ռազմավարական փաստաթղթերի գնահատման վերաբերյալ սահմանված չեն նման խիստ պահանջներ, ապա հակակոռուպցիոն ռազմավարությունների պարագայում մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ առկա են մի շարք միջազգային ստանդարտներ:

Ինչպես արդեն նշվեց վերևում, արդյունավետ մոնիթորինգի և գնահատման կառուցակարգերի առկայությունը առաջին հերթին բխում է ՄԱԿ Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի դրույթներից և դրանից բխող մյուս փաստաթղթերից: Միաժամանակ, հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի կառուցակարգերին անդրադարձ է կատարվում նաև մի շարք այլ միջազգային կառույցների կողմից, ինչպիսիք են օրինակ Համաշխարհային բանկը, Եվրոպայի խորհուրդը և այլն:

Հակակոռուպցիոն ռազմավարությունների մոնիթորինգի մեխանիզմներն առավել մանրամասն նկարագրվել են Համաշխարհային բանկի ուղեցուցային «Հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգը և գնահատումը» փաստաթղթում²³: Փաստաթղթում նկարագրվում է մոնիթորինգի և գնահատման բնորոշումը: Ըստ այս փաստաթղթի մոնիթորինգը պարբերական գործողություն է, որը հատուկ ցուցիչների հիման վրա հավաքագրում է տեղեկատվություն, որը նպատակ է հետապնդում հիմնական շահառուներին և ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց ապահովելու առկա նպատակներին հասնելուն ուղղված առաջընթացի և ձեռքբերումների, ինչպես նաև հատկացված ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ ընթացիկ տեղեկատվություն:

Իսկ գնահատումը նկարագրվում է որպես ընթացիկ կամ ավարտված ծրագրի կամ քաղաքականության ներառյալ դրա կառուցվածքի, իրականացման և արդյունքների պարբերական և օբյեկտիվ գնահատում: Գնահատումը պետք է ապահովի ճշգրիտ և օգտակար տեղեկատվություն, որը պետք է հնարավորություն ընձեռնի առկա արդյունքների հաշվառմամբ որոշումներ կայացնելու հնարավորություն տալ: Ընդհանուր առմամբ, գնահատման նպատակը առկա նպատակների իրականացման մակարդակի, արդյունավետության, ազդեցության, կայունության որոշումն է:

Չնայած մոնիթորինգի և գնահատման նմանություններին, այս երկու գործընթացները տար-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բերվում են իրենց կողմից հետապնդվող նպատակներով և իրականացման գործընթացով:

Համաշխարհային բանկի կողմից նկարագրվում է մի քանի գործիքներ, որոնք կարող են կիրառվել մոնիթորինգի իրականացման գործընթացում: Նման գործիքներ են հանդիսանում, օրինակ՝ տրամաբանական շրջանակի, արդյունքների շրջանակի, փոփոխության տեսության գործիքները:

Միաժամանակ, Հայաստանի միջազգային պարտավորությունների շրջանակներում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ցանցի, Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի շրջանակներում Հայաստանի գնահատման զեկույցներում, մասնավորապես, 5-րդ փուլի գնահատման զեկույցում²⁴ անդրադարձ է կատարվում նաև հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգին և գնահատմանը: Չեկույցի շրջանակներում հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման համակարգի՝ միջազգային չափանիշներին համապատասխանությունը գնահատվում է մի շարք ցուցիչներով: Մասնավորապես, կարևորվում է հակակոռուպցիոն ռազմավարություններում ռազմավարական խնդիրների, գործողությունների իրականացման ժամկետների, պատասխանատու մարմինների վերաբերյալ հստակ կառուցակարգերի սահմանումը: Միևնույն ժամանակ, կարևորվում է, որ ռազմավարություններում առկա լինեն արդյունքային ցուցիչների (outcome indicators), ազդեցության ցուցիչներ (impact indicators), գնահատված բյուջե, ֆինանսավորման աղբյուրները:

ՏՀԶԿ-ն անդրադառնում է նաև մոնիթորինգի և գնահատման զեկույցներին ներկայացվող պահանջներին: Անդրադառնալով մոնիթորինգի զեկույցին, նշվում է, որ այն պետք է պատրաստվի առնվազն տարեկան մեկ անգամ: Մոնիթորինգի զեկույցը պետք է հիմնվի արդյունքային ցուցիչների հիման վրա: Միաժամանակ, այն պետք է պարունակի գործողությունների համար ծախսված ֆինանսական միջոցների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև պետք է լինի հրապարակային:

Անդրադառնալով, գնահատման զեկույցին, ՏՀԶԿ-ն նշում է, որ այն պետք է պատրաստվի առնվազն յուրաքանչյուր շրջափուլից հետո մեկ անգամ, պետք է հիմնված լինի ազդեցության ցուցիչների հիման վրա և պետք է հրապարակվի:

Համեմատելով ՏՀԶԿ կողմից մոնիթորինգի կառուցակարգերի նկատմամբ առկա մոտեցումը Համաշխարհային բանկի կողմից ներկայացվող մոնիթորինգի մեխանիզմների հետ, պարզ է դառնում, որ առկա են որոշակի արտաքին տարբերություններ, սակայն դրանք առաջնորդվում են նույն տրամաբանությամբ: Մասնավորապես, Համաշխարհային բանկի կողմից ներկայացվող արդ-

յունքների շրջանակով, ռազմավարությունների կառուցվածքային շղթան դասավորվում է հետևյալ կերպ՝ նախադրյալներ (inputs), գործողություններ (activities), արդյունքներ (outputs) և հետևանքներ կամ ծրագրային արդյունքներ (outcomes): Ընդ որում, Համաշխարհային բանկի կողմից առաջարկվում է հետևանքների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ բաժանումը:

Համեմատելով ՏՀԶԿ և Համաշխարհային բանկի կողմից առաջարկվող մոտեցումները, տեսնում ենք, որ չնայած որոշակի տերմինոլոգիական տարբերության երկու մարմինն էլ կարևորում են արդյունքային ցուցիչների և ազդեցության կամ հետևանքների ցուցիչների հստակ ամրագրումը ռազմավարություններում: Այս ցուցիչների ճիշտ ընտրությունը, դրանց բովանդակությունը, նախատեսված ժամկետային շրջանակը կարևորվում են հենց մոնիթորինգի և գնահատման գործընթացում, որի շրջանակներում գործողությունների արդյունավետությունը գնահատվում է հենց այս ցուցիչների հաշվառմամբ:

Մասնավորապես, մոնիթորինգի շրջանակներում ռազմավարության արդյունավետության, ընդհանուր առմամբ ռազմավարության գործողությունների կատարվածության աստիճանի համար կիրառվում են տարբեր մոտեցումներ: Օրինակ, և 2019-2022 թվականների, և 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունների գնահատման համար կիրառվում է վարիացոն շարքի համակշռված միջին բանաձևը: Այս բանաձևը վերցվել է ՏՀԶԿ կողմից կիրառվող ուղեցուցային փաստաթղթերից :

Նշված բանաձևով ռազմավարության շրջանակներում գործողությունները գնահատվում են.

- ամբողջությամբ կատարված է (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների 91-100%-ը կատարվել են),
- կատարված է մեծամասամբ (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների 71-90%-ը կատարվել են),
- կատարված է մասնակի (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների 31-70%-ը կատարվել է),
- կատարված չէ (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված որևէ աշխատանք իրականացված չէ կամ կատարվել է նախատեսված աշխատանքների մինչև 30%-ը)²⁶ :

Չնայած այն հանգամանքին, որ ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի Հայաստանի 5-րդ փուլի գնահատման շրջանակներում գնահատման այս մեխանիզմի վերաբերյալ մատնանշվել են որոշակի խնդիրներ,

www.aradaradutyjournal.com

սակայն ըստ էության մոնիթորինգի և գնահատման կառուցակարգերում հիմնական խնդիրը հանդիսանում է այն, որ հստակ սահմանված չեն այն չափանիշները, որոնք հիմք են ընդունվում գնահատելու թե կատարող և համակատարող մարմինների կողմից իրականացված աշխատանքներն արդյոք համահունչ են գործողության արդյունքային և քանակական ցուցանիշներին կամ ստուգման միջոցներին: Օրինակ կարող է հանդիսանալ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագիրը: Մասնավորապես՝ Ռ-ազմավարության 2025 թվականի մոնիթորինգի և գնահատման տարեկան զեկույցով²⁷ գնահատման առարկա է դարձվել 2025 թվականին իրականացման ենթակա 72 գործողություն: Օրինակ՝ գործողությունների ծրագրի 1.21-րդ գործողությամբ նախատեսվում է «Ջարգացնել անհամատեղելիության պահանջների բացահայտման և վերահսկողության գործիքները»: Գործողության կատարողականի թիրախով նախատեսվում է, որ միջազգային փորձի հաշվառմամբ պետք է մշակվեն իրավական ակտերի նախագծեր, որոնցով կատարողականի թիրախների հաշվառմամբ պետք է բարելավվեն անհամատեղելիության պահանջները: Միաժամանակ, սույն գործողության արդյունքային քանակական և որակական ցուցանիշով նախատեսվում է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքում և այլ հարակից իրավական ակտերում օրենսդրական փոփոխությունների փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: Միաժամանակ, ռազմավարությունը չի պարունակում հստակ մեթոդաբանություն, թե իրավական ակտերի նախագծերի մշակմանն ուղղված գործողությունների դեպքերում երբ գործողությունը կգնահատվի մասնակի կատարված (31-70% միջակայք) կամ մեծամասամբ կատարված (71-90% միջակայք): Նշվածը գործողության մոնիթորինգի և գնահատման իրականացման փուլում լիազոր մարմնի, ինչպես նաև ռազմավարության այլընտրանքային գնահատումն իրականացնող հասարակական կազմակերպությունների համար կառուցացի բարդություններ գործողության կատարվածության աստիճանը գնահատելու համատեքստում:

Եզրակացություն.

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքներով վեր հանված առկա մոտեցումները, հարկ է նշել, որ հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության իրականացումը և հակակոռուպցիոն ռազմավարությունները ունեն մի շարք տեսական և գործնական առանձնահատկություններ, որոնք այս կամ այն կերպ արտացոլված են նաև Հայաստանում իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականության շրջանակներում: Համեմատելով տե-

սական աղբյուրներում հակակոռուպցիոն ռազմավարությունների և քաղաքականությունների վերաբերյալ ձևավորված մոտեցումները գործող 2019-2022 և 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունների հետ՝ պարզ է դառնում, որ այս ռազմավարական փաստաթղթերը հանդիսանում են վերը քննարկված ռազմավարական մոտեցումների, այն է՝ համապատասխանության կամ կանոնների վրա հիմնված, արժեքների վրա հիմնված, տեխնոլոգիաների հիման վրա մոտեցումների խառնուրդ: Նշված հանգամանքը մի կողմից դրական է, քանի որ ապահովում է պետության խիստ քաղաքականությունը արդեն իսկ բացահայտված կոռուպցիոն իրավախախտումների քննության փուլում, այնպես էլ սահմանում է գործիքակազմեր հանրային իշխանության մարմիններում բարեվարք վարքագծի տարածմանը: Միևնույն ժամանակ, նման մոտեցման արդյունքում հակակոռուպցիոն ռազմավարությունները ծանրաբեռնվում են կատարման ենթակա քանակապես մեծ թիվ կազմող գործողություններով, որոնց ամբողջությամբ իրականացումը նախատեսված սեղմ ժամկետներում դառնում է անիրագործելի: Դրա մասին է վկայում նաև ռազմավարությունների մոնիթորինգի արդյունքները: Եթե օրինակ, 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսվում էր կատարման ենթակա 43 գործողություն, ապա 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսվում է շուրջ 80 գործողություն: Ընդ որում, 2019-2023 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման եզրափակիչ զեկույցի²⁸ արդյունքներից պարզ է դառնում, որ ընդհանուր 43 գործողությունից ամբողջությամբ կատարված է գնահատվել 25 գործողություն, իսկ մասնակի կատարված գործողությունները կազմել են 15-ը: Չկատարված է գնահատվել ընդամենը 3 գործողություն: Միևնույն ժամանակ, արդեն 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման 2025 թվականի տարեկան զեկույցի արդյունքները ցույց են տալիս, որ մեծամասնություն են կազմում մասնակի կատարված գործողությունները՝ ընդհանուր հաշվետու ժամանակահատվածի համար գնահատված 72 գործողությունից մասնակի կատարված է գնահատվել 42-ը, իսկ 30 գործողություն գնահատվել է կատարված: Նման պայմաններում, պարզ է դառնում, որ ռազմավարություններում նմանատիպ մեծ քանակի գործողությունների սահմանումը կարող է հանգեցնել դրանց իրականացման որակական խնդիրների: Ուստի պետք է ընդգծել, որ ռազմավարություններում անհրաժեշտ է սահմանել առավել սեղմ թվով գործողություններ, որոնց իրականացումը իրատեսական կլինի առկա ռեսուրսների և միջոցների համատեքստում:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Կարևոր է նաև ռազմավարության հենքում ունենալ կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքներ: Ռ-ռազմավարությունների մշակման այս մոտեցումը չնայած շեշտվում է միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի գնահատումների շրջանակներում և տեսությունում ընդունված եղանակներից է համարվում՝ սակայն գործող 2023-2026 և 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունների հենքում չեն դրվել կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքներ: Չնայած նշվածը բխել է օբյեկտիվ հանգամանքներից, այն է՝ օրենսդրությունում բացակայել են կոռուպցիոն ռիսկերի գնահատմանն ուղղված կառուցակարգեր և առկա չի եղել լիազոր մարմին, կարևոր է, որ հակակոռուպցիոն հաջորդ ռազմավարությունն հասցեագրի նաև ոլորտային կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքները:

Մյուս կարևոր խնդիրը, որ պետք է արձանագրել ռազմավարության բովանդակային ասպեկտի հետ կապված՝ դա բուն գործողությունների, դրանցով հասցեագրվող խնդիրների, այդ խնդիրների հաղթահարման համար նախատեսված կատարողական քիրախների և միջոցառումների, ինչպես նաև այդ միջոցառումների գնահատման ստուգման եղանակների և արդյունքային ցուցանիշների հարմոնիզացված լինելու հանգամանքն է: Մա այն կարևոր գրավականն է, որը հնարավորություն է ընձեռնելու արդյունավետ կերպով լուծելու բարձրացված խնդիրները և հասնելու դրական արդյունքների: Սակայն, ինչպես ցույց է տալիս 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման 2025 թվականի տարեկան զեկույցի արդյունքները մի շարք դեպքերում կատարող մարմինների կողմից գործողության իրականացումը դժվարանում է արձանագրված

խնդիրների և դրանց հաղթահարման եղանակների խզվածքի պատճառով: Այս պայմաններում կարևոր է, որ ոլորտային հաջորդ ռազմավարությունները նախատեսվող գործողություններն ու միջոցառումները հստակ կերպով բխեցնեն առկա խնդիրներից և դրանց լուծման համար նախատեսեն իրագործելի և չափելի գործողություններ:

Մյուս կարևոր խնդիրը, որի ուղղությամբ առաջարկվում է իրականացնել բարելավումներ հետագա հակակոռուպցիոն ռազմավարությունների շջանակներում՝ դա մոնիթորինգի և գնահատման մեխանիզմներն են: Մասնավորապես, կարևոր է սահմանել գործողությունների գնահատման հստակ չափանիշներ: Նման մոտեցումը ըստ էության հեշտացնելու է ոչ միայն հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման համար իրավասու մարմնի կողմից իրականացվող գնահատման գործընթացը և բացառելու է հնարավոր հայեցողական մոտեցումների դրսևորումը, այլև այն հնարավորություն է տալու ապահովելու այլընտրանքային գնահատումներ իրականացնող հասարակական կառույցների կողմից միասնական չափանիշների կիրառությունն ու վերջնարդյունքում գնահատման օբյեկտիվ արդյունքների ապահովմանը: Նշվածի համար հիմք կարող է հանդիսանալ օրինակ SՀԶԿ ՄԻԳՄ կողմից մշակված՝ «Հանրային կառավարման սկզբունքների գնահատման մեթոդաբանությունը»: Այս մեթոդաբանության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր խումբ գործողությունների գնահատման համար ցուցաբերվում է անհատական մոտեցում և առանձին կերպով սահմանվում են դրանց գնահատման արդյունքները:

¹ Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ս որոշում, <https://www.arlis.am/hy/acts/155328>

² Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշում, <https://www.arlis.am/hy/acts/201370>

³ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում, <https://old.arlis.am/DocumentView.aspx?DocID=168051>

⁴ Կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշում, <https://old.arlis.am/DocumentView.aspx?DocID=184674>

⁵ ՀՀ-ում գործել են 5 հակակոռուպցիոն ռազմավարություններ, մասնավորապես՝ 2003-2007 թվականների, 2009-2012 թվականների, 2015-2018 թվականների, 2019-2022 թվականների, 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունները:

⁶ Мкоян А.А. Государственная стратегия противодействия коррупции: отечественный и зарубежный опыт. Право и управление. XXI век. 2016;(3):87-95. <https://mgimopravo.elpub.ru/jour/article/view/13/14>

⁷ Хамазина, О. И. Правовые средства противодействия коррупции: Проблемы теории и практики: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. - Саратов, 2008. -17 с. <https://www.dissercat.com/content/pravovye-sredstva-protivodeistviya-korrupsii-problemy-teorii-i-praktiki/read>

⁸ Горшенков Г.Н. Политика противодействия коррупции // Бизнес. Образование. Право. 2014.№ 2(27). С. 62-67. <https://vestnik.volbi.ru/upload/numbers/227/article-227-850.pdf>

⁹ Միավորված ազգերի կազմակերպություն, «Կոռուպցիայի դեմ կոնվենցիա» <https://www.arlis.am/hy/acts/48021>

¹⁰ United Nations Office on Drugs and Crime, Technical guide to the United Nations convention against corruption New York, 2009 https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Publications/TechnicalGuide/09-84395_Ebook.pdf

¹¹ Kuala Lumpur Statement on Anti-Corruption Strategies, Kuala Lumpur, 21-22 October 2013 https://www.unodc.org/roseap/uploads/archive/documents/2013/10/corruption/Kuala_Lumpur_Statement_on_Anti-Corruption_Strategies_Final_21-22_October_2013.pdf

¹² Gong, T., Lau, C. Navigating anti-corruption strategies. GPPG 4, 225–230 (2024), <https://doi.org/10.1007/s43508-024-00099-0> ,

¹³ Lynn S. P., Managing for organizational Integrity, Harvard Business Review <https://ilac2013.wordpress.com/wp-content/uploads/2013/05/po-managing-organizational-integrity.pdf>

¹⁴ Roberts, R. (2009). The rise of compliance-based ethics management. Public Integrity, 11(3), 261–277

¹⁵ Bradley Sauve, Jessica Woodley, Natalie J. Jones, & Seena Akhtari Methods of Preventing Corruption: A Review and Analysis of Select Approaches Report number: 2023-R010 Research Division, Crime Prevention Branch <https://www.publicsafety.gc.ca/cnt/rsrscs/pblctns/2023-r010/2023-r010-en.pdf>

¹⁶ Տե՛ս նույն տեղում

¹⁷ Heather Marquette & Caryn Peiffer Collective Action and Systemic Corruption, University of Warsaw 29 March-2 April 2015 <https://baselgovernance.org/sites/default/files/2019-02/collectiveactionandsystemiccorruption.pdf>

¹⁸ Helena Schwertheim, Innovations in Anti-Corruption Approaches, 2017 International Institute for Democracy and Electoral Assistance <https://www.idea.int/gsod-2017/files/IDEA-GSOD-2017-RESOURCE-GUIDE-ANTI-CORRUPTION.pdf>

¹⁹ ՄԱԿ Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի կողմից մշակված ուղեցուցային փաստաթղթում բացի կոռուպցիայի առաջացման “Principal-agent” տեսությունից առանձնացվում են նաև “ Collective action”, “Institutional”, “Game” տեսությունները, որոնք յուրաքանչյուրը մեկնաբանում են կոռուպցիայի առաջացման պատճառները յուրովի, սակայն հարկ է նշել, որ այս տեսությունները ավելի շուտ իրար փոխընդհանուր են քան հակասում:

United nations office on drugs and crime, Knowledge tools for academics and professionals, UNODC Module Series on Anti-corruption, Module 4, Public sector corruption https://grace.unodc.org/grace/uploads/documents/academics/Anti-Corruption_Module_4_Public_Sector_Corruption.pdf,

²⁰ Bradley Sauve, Jessica Woodley, Natalie J. Jones, & Seena Akhtari Methods of Preventing Corruption: A Review and Analysis of Select Approaches Report number: 2023-R010 Research Division, Crime Prevention Branch <https://www.publicsafety.gc.ca/cnt/rsrscs/pblctns/2023-r010/2023-r010-en.pdf>

²¹ Isabelle Adam, Mihály Fazekas Are emerging technologies helping win the fight against corruption? A review of the state of evidence, Information Economics and Policy, Volume 57, December 2021, 100950 <https://doi.org/10.1016/j.infoecopol.2021.100950>

²² United nations office on drugs and crime, National anti-corruption strategies and risk management <https://www.unodc.org/corruption/en/learn/thematic-areas/national-anti-corruption-strategies-and-risk-management.html>

²³ World Bank Group, Governance, Monitoring and Evaluation (M&E) of Anti-Corruption Action Plans, September 2016 <https://documents1.worldbank.org/curated/en/129401593200074880/pdf/Monitoring-and-Evaluation-M-E-of-Anti-Corruption-Action-Plans.pdf>

²⁴ OECD (2024), Baseline Report of the Fifth Round of Monitoring of Anti-Corruption Reforms in Armenia: The Istanbul Anti-Corruption Action Plan, OECD Publishing, Paris, https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2024/03/baseline-report-of-the-fifth-round-of-monitoring-of-anti-corruption-reforms-in-armenia_fe71d6cc/fb158bf9-en.pdf

²⁵ Jesper Johnsen A presentation of the SIGMA indicators for the Principles of Public Administration and the new OECD Public Integrity Indicators Measuring corruption, advancing integrity and using evidence for policy engagement <https://thedocs.worldbank.org/en/doc/c5ecd237253aabd00b1470a201883993-0080022021/original/Johnson-World-Bank-ECA-Governance-SIGMA-and-OECD-PII.pdf>

²⁶ Կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը եվ դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-L որոշում, <https://www.arlis.am/hy/acts/184674/latest>

²⁷ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման 2025 թվականի տարեկան զեկույց, 2026 թվական

²⁸ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների եզրափակիչ գնահատման և

Վննիչությունների գեներալ, 2023 թվական

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշում, <https://www.arlis.am/hy/acts/155328>
2. Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշում, <https://www.arlis.am/hy/acts/201370>
3. Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում, <https://old.arlis.am/DocumentView.aspx?DocID=168051>
4. Կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշում, <https://old.arlis.am/DocumentView.aspx?DocID=184674>
5. Միավորված ազգերի կազմակերպություն, «Կոռուպցիայի դեմ կոնվենցիա» <https://www.arlis.am/hy/acts/48021>
6. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հակակոռուպցիոն ռազմավարության վննիչությունների և գնահատման 2025 թվականի տարեկան գեներալ, 2026 թվական
7. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների եզրափակիչ գնահատման և վննիչությունների գեներալ, 2023 թվական
8. Мкоян А.А. Государственная стратегия противодействия коррупции: отечественный и зарубежный опыт. Право и управление. XXI век. 2016;(3):87-95. <https://mgimopravo.elpub.ru/jour/article/view/13/14>
9. Хамазина, О. И. Правовые средства противодействия коррупции: Проблемы теории и практики: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. - Саратов, 2008. -17 с. <https://www.dissert-cat.com/content/pravovye-sredstva-protivodeistviya-korrupsii-problemy-teorii-i-praktiki/read>
10. Горшенков Г.Н. Политика противодействия коррупции // Бизнес. Образование. Право. 2014.№ 2(27). С. 62-67. <https://vestnik.volbi.ru/upload/numbers/227/article-227-850.pdf>
11. United Nations Office on Drugs and Crime, Technical guide to the United Nations convention against corruption New York, 2009 https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Publications/TechnicalGuide/09-84395_Ebook.pdf
12. Kuala Lumpur Statement on Anti-Corruption Strategies, Kuala Lumpur, 21-22 October 2013 https://www.unodc.org/roseap/uploads/archive/documents/2013/10/corruption/Kuala_Lumpur_Statement_on_Anti-Corruption_Strategies_Final_21-22_October_2013.pdf
13. Gong, T., Lau, C. Navigating anti-corruption strategies. GPPG 4, 225–230 (2024), <https://doi.org/10.1007/s43508-024-00099-0>,
14. Lynn S. P., Managing for organizational Integrity, Harvard Business Review <https://ilac2013.wordpress.com/wp-content/uploads/2013/05/po-managing-organizational-integrity.pdf>
15. Roberts, R. (2009). The rise of compliance-based ethics management. Public Integrity, 11(3), 261–277
16. Bradley Sauve, Jessica Woodley, Natalie J. Jones, & Seena Akhtari Methods of Preventing Corruption: A Review and Analysis of Select Approaches Report number: 2023-R010 Research Division, Crime Prevention Branch <https://www.publicsafety.gc.ca/cnt/rsrscs/pblctns/2023-r010/2023-r010-en.pdf>
17. Heather Marquette & Caryn Peiffer Collective Action and Systemic Corruption, University of Warsaw 29 March-2 April 2015 <https://baselgovernance.org/sites/default/files/2019-02/collectiveactionandsystemiccorruption.pdf>
18. Helena Schwertheim, Innovations in Anti-Corruption Approaches, 2017 International Institute for Democracy and Electoral Assistance <https://www.idea.int/gsod-2017/files/IDEA-GSOD-2017-RESOURCE-GUIDE-ANTI-CORRUPTION.pdf>
19. United nations office on drugs and crime, Knowledge tools for academics and professionals, UNODC Module Series on Anti-corruption, Module 4, Public sector corruption https://grace.unodc.org/grace/uploads/documents/academics/Anti-Corruption_Module_4_Public_Sector_Corruption.pdf,
20. Isabelle Adam, Mihály Fazekas Are emerging technologies helping win the fight against corruption? A review of the state of evidence, Information Economics and Policy, Volume 57, December 2021, 100950 <https://doi.org/10.1016/j.infoecopol.2021.100950>
21. United nations office on drugs and crime, National anti-corruption strategies and risk management <https://www.unodc.org/corruption/en/learn/thematic-areas/national-anti-corruption-strategies-and-risk-management.html>
22. World Bank Group, Governance, Monitoring and Evaluation (M&E) of Anti-Corruption Action Plans, September 2016 <https://documents1.worldbank.org/curated/en/129401593200074880/pdf/Monitoring-and-Evaluation-M-E-of-Anti-Corruption-Action-Plans.pdf>
23. OECD (2024), Baseline Report of the Fifth Round of Monitoring of Anti-Corruption Reforms in Armenia: The Istanbul Anti-Corruption Action Plan, OECD Publishing, Paris, <https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2024/03/baseline-report-of-the-fifth-round-of-monitoring->

of-anti-corruption-reforms-in-armenia_fe71d6cc/fb158bf9-en.pdf

24. Jesper Johnson A presentation of the SIGMA indicators for the Principles of Public Administration and the new OECD Public Integrity Indicators Measuring corruption, advancing integrity and using evidence for policy engagement <https://thedocs.worldbank.org/en/doc/c5ecd237253aabd00b1470a201883993-0080022021/original/Johnson-World-Bank-ECA-Governance-SIGMA-and-OECD-PII.pdf>

References

1. Karavarutyan 2021 tvakani ogostosi 18-I “Hayastani Hanrapetutyun karavarutyan Cragri masin” N 1363-A voroshum <https://www.arlis.am/hy/acts/155328>
2. Karavarutyan 2021 tvakani noyemberi 18-I “Hayastani Hanrapetutyun karavarutyan 2021-2026 tvakanneri gorcuneutyan mijocarumneri cragiry hastatelu masin” N 1902-L voroshum <https://www.arlis.am/hy/acts/201370>
3. Karavarutyan 2019 tvakani hoktemberi 3-I “Hayastani Hanrapetutyun hakakorupcion razmavarutyuny ev dra irakanacman 2019-2022 tvakanneri mijocarumneri cragiry hastatelu masin” N 1332-N voroshum <https://old.arlis.am/DocumentView.aspx?DocID=168051>
4. Karavarutyan 2023 tvakani hoktemberi 26-I “Hayastani Hanrapetutyun hakakorupcion razmavarutyuny ev dranic bkhokh 2023-2026 tvakanneri gorcoxutyunneri cragiry hastatelu masin” N 1332-L voroshum <https://old.arlis.am/DocumentView.aspx?DocID=184674>
5. Miavorvac azgeri kazmakerputyun, “Korupciayi dem konvencia” <https://www.arlis.am/hy/acts/48021>
6. Hayastani Hanrapetutyun ardaradatutyun naxararutyun, Hakakorupcion razmavarutyun monitoringi ev gnhatman 2025 tvakani tarekan zekuyc, 2026 tvakan,
7. Hayastani Hanrapetutyun ardaradatutyun naxararutyun, HH hakakorupcion razmavarutyuny ev dra irakanacman 2019-2022 tvakanneri mijocarumneri ezrapakich gnhatman ev monitoringi zekuyc. 2023 tvakan
8. Mkoyan A.A. Gosudartsvennai strategia protivadestvii korupcii: oteschestvennii i zarubejnii opit. Pravo i upravlenia. XXI vek. 2016;(3):87-95. <https://mgimopravo.elpub.ru/jour/article/view/13/14>
9. Xamazina O. I. Pravovie sredstva protivadestvii korupcii: Problemi teorii i praktiki: Aftoreferat disertacii na soiskanie ucheni stepeni kandidata uridicheskix nauk-Saratov, 2008. -17 p. <https://www.dissercat.com/content/pravovye-sredstva-protivodeistviya-korruptsii-problemy-teorii-i-praktiki/read>
10. Goresnikov G.N. Politika protivadestvii korupcii // Biznes. Obrazovanie. Pravo 2014.№ 2(27). P. 62-67. <https://vestnik.volbi.ru/upload/numbers/227/article-227-850.pdf>

Էփրեմ Կարապետյան

Член Комиссии по предотвращению коррупции
Кандидат в Академию государственного управления РА

ՔԵԶԻՍՈՄԵ

Антикоррупционные стратегии как правовые средства реализации государственной политики, направленной на предотвращение коррупции в органах публичной власти

Антикоррупционные стратегии являются важнейшим правовым механизмом, посредством которого государство реализует политику, направленную на предотвращение коррупции в органах публичной власти. Именно через данные стратегии закрепляются основные проблемы и инструментарий их преодоления, возникающие в рамках предупреждения коррупции и в целом антикоррупционной борьбы.

Учитывая, что коррупция представляет собой глобальный вызов для государств, международные организации и институты сформулировали основные существенные принципы, которым должна соответствовать политика в сфере противодействия коррупции. Эти принципы касаются как процедурных, так и содержательных аспектов разработки, реализации и оценки антикоррупционных стратегий.

Несмотря на то, что антикоррупционная политика, реализуемая Республикой Армения, высоко оценивается международными организациями, на этапах разработки, реализации и оценки стратегий сохраняются определенные проблемы, требующие адресации в последующих антикоррупционных стратегиях.

Настоящее исследование обращается к указанным ключевым проблемам и предлагает возможные пути

их решения, основываясь как на рекомендациях международных организаций, так и на вопросах, поднятых в теоретических источниках.

Ключевые слова: Антикоррупционная политика, антикоррупционная стратегия, мониторинг, оценка, коррупционные риски, показатели результатов, показатели воздействия, коммуникация, взвешенное среднее вариационных рядов, ОЭСР.

Yeprem Karapetyan

Member of the Corruption Prevention Commission
Applicant to the Academy of Public Administration of the RA

SUMMARY

Anti-corruption strategies as legal instruments for implementing state policy aimed at preventing corruption in public authorities

Anti-corruption strategies are one of the most important legal mechanisms through which the state implements policies aimed at preventing corruption within public authorities. These strategies define the key issues and the set of tools designed to address challenges arising in the context of corruption prevention and the broader fight against corruption.

Considering that corruption is a global challenge for states, international organizations and institutions have outlined the essential standards that anti-corruption policies must meet. These standards relate to both procedural and substantive aspects of the development, implementation, and evaluation of anti-corruption strategies.

Even though Armenia's anti-corruption policy is highly rated by international organizations, there are still certain issues present in the stages of strategy development, implementation, and evaluation. These issues require further attention and should be addressed in future anti-corruption strategies.

This study examines the main problems in this field and proposes possible solutions, drawing on recommendations from international organizations as well as issues raised in academic literature.

Key words: Anti-corruption policy, Anti-corruption strategy, monitoring, evaluation, corruption risks, outcome indicators, impact indicators, communication, weighted average of variation series, OECD.

Բնագիրը ներկայացվել է 15.04.2026թ.

Ընդունվել է տպագրության 27.04.26թ.

ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«Արդշինբանկ» ԲԲԸ, Իրավական հարցերի գծով
տնօրենության իրավախորհրդատու,
ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի
Սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

**ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ՏԱՐԲԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՄԱՀՍԱՆԱԴՐԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Սույն գիտական աշխատանքի շրջանակներում քննարկվել են արժանապատվության բովանդակու-
թյան կառուցվածքային առանձնահատկությունները. ներկայացվել են արժանապատվության շերտերը,
շերտերի բովանդակությունը կազմող տարրերն ու դրանց փոխազդեցությունը: Արդյունքում ներկայացվել
են առաջարկներ, որոնց կիրառությունը կարող է պայմանավորել արժանապատվության սահմանադրա-
իրավական բովանդակության և դրա հիման վրա ձևավորվող սահմանադրական իրավունքների և ազա-
տությունների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների ներդրումը:

Հիմնարանը- արժանապատվության երկշերտ համակարգ, բացարձակ միջուկ, երկրորդային շերտ,
փոխազդեցություն, սահմանադրաիրավական պաշտպանություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն գիտական աշխատանքի շրջանակնե-
րում քննարկման առարկա է դարձել արժանա-
պատվության կառուցվածքը: Երևույթի կառուց-
վածքը, կառուցվածքային տարրերի բովանդակու-
թյան պատշաճ ընկալումն են երաշխավորելու հե-
տազայում այդ երևույթի պաշտպանության համար
ընտրվող մեխանիզմների արդյունավետությունը:
Հոդվածի գիտական նորույթը առաջնահերթ ար-
տահայտվում է արժանապատվության երկշերտ
մոդելի գաղափարի ներդրման առաջարկմամբ:
Առաջին շերտի տակ հասկացվում է արժանա-
պատվության բացարձակ միջուկը, որն ունի գոյա-
բանական տարր և գործառնական տարրեր, այդ
տարրերը ժամանակի ընթացքում չեն ձևափոխ-
վում: Երկրորդային կամ հարաբերական շերտի
պարագայում գործ ենք ունենում կոնկրետ սոցիու-
մին բնորոշ գործոններով պայմանավորված ար-
ժանապատվության ընկալման որոշակի առանձ-
նահատկությունների հետ, որպիսիք ժամանակի
ընթացքում կարող են ենթարկվել փոփոխությու-
նների, սակայն այդ փոփոխությունները չեն կարող
հակասել քննարկման առարկա երևույթի առաջին
շերտը կազմող բացարձակ միջուկին՝ այսինքն,
դրա բովանդակությունը կազմող գոյաբանական ու
գործառնական տարրերին:

Հոդվածը բաղկացած է «Ներածություն», «Հե-
տազոտության մեթոդաբանություն», «Հետազո-
տության արդյունքներ և քննարկում», «Եզրակա-
ցություն» և «Գրականության ցանկ» բաժիններից:
«Հետազոտության արդյունքներ և քննարկում» բա-

ժինն, իր հերթին, բաղկացած է երեք, այն է՝ «Արժա-
նապատվության բովանդակության վերաբերյալ
առկա ուղենշային մոտեցումների ընդհանուր նկա-
րագիրը», «Արժանապատվության բացարձակ մի-
ջուկի բովանդակությունը կազմող կառուցվածքա-
յին տարրերի վերհանումը» և «Արժանապատվու-
թյան բովանդակության երկրորդային շերտի
առանձնահատկությունների քննարկումը՝ որոշ
գործնական օրինակների լույսի ներքո» ենթաբա-
ժիններից:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒ-
ԹՅՈՒՆ**

Հետազոտության ընթացքում կիրառվել են
դոկտրինալ, իրավահամեմատական, դիալեկտի-
կական, վերլուծական, դեդուկտիվ և ինդուկտիվ մե-
թոդները: Տվյալները հավաքվել են միջազգային
իրավական փաստաթղթերից և տարբեր գիտական
աշխատանքներից: Դոկտրինալ մեթոդի կիրառ-
մամբ ուսումնասիրվել են մարդու արժանապատ-
վության վերաբերյալ այն հիմնական գիտական
տեսությունները, որոնք արժանապատվությունը
դիտարկում են որպես համընդհանուր և անփոփոխ
արժեք, ինչպես նաև այն մոտեցումները, որոնցում
ընդգծվում է դրա սոցիալ-մշակութային առանձնա-
հատկությունների առկայությունը: Իրավահամե-
մատական մեթոդի կիրառմամբ համեմատության
առարկա են դարձել տարբեր իրավական համա-
կարգերում արժանապատվության բովանդակու-
թյան կառուցվածքի վերաբերյալ ձևավորված
պատկերացումները, ինչը հնարավորություն է տվել

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բացահայտել արժանապատվության կառուցվածքի ընկալման տարբերությունները և դրանց հիմքում ընկած տրամաբանությունը: Դիալեկտիկական մեթոդի կիրառմամբ վեր են հանվել արժանապատվության վերաբերյալ առկա հակասական մոտեցումները, արդյունքում ներկայացվել, թե դրանցից որոնք են հեղինակի տեսանկյունից ընդունելի արժանապատվության համապարփակ դիտարկման տրամաբանության մեջ: Վերլուծական մեթոդի միջոցով վերլուծվել են քննարկման առարկա երևույթի երկու շերտերը, դրանց տարբերն ու դրանց փոխազդեցությունը: Դեդուկտիվ մեթոդի կիրառմամբ ընդհանուր տեսական դրույթներից անցում է կատարվել կոնկրետ եզրակացությունների՝ արժանապատվության բացարձակ միջուկը կազմող տարրերի վերհանման շրջանակներում, իսկ ինդուկտիվ մեթոդի միջոցով կոնկրետ օրինակների վերլուծությունից ձևավորվել են ընդհանուր տեսական դիրքորոշումներ՝ արժանապատվության երկրորդային շերտի բնույթի վերաբերյալ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Արժանապատվության բովանդակության վերաբերյալ առկա ուղենշային մոտեցումների ընդհանուր նկարագիրը

Արժանապատվության պատշաճ հարգումն ու պաշտպանությունը ներկայումս իրավագիտության առջև ծառայած ամենալուրջ մարտահրավերներից է, քանի որ երևույթի պաշտպանությունն իրականացնելու համար նախ պետք է հասկանալ, թե ինչ է այն նշանակում, անհրաժեշտ է բացահայտել դրա բովանդակությունը:

Ինչպես նշել էինք նախորդ գիտական աշխատանքի շրջանակներում արժանապատվության դիտարկումը որպես հերթական իրավունք նեղացնում է վերջինիս բովանդակությունը, քանի որ այն ոչ թե պարզապես իրավունք է, այլ մեր բոլոր իրավունքների և ազատությունների հիմքը: Ավելին, այս համատեքստում կարևոր է նշել, որ բոլոր իրավունքների և ազատությունների հիմքը լինելու գաղափարը պետք է ընկալել այն տրամաբանությամբ, որ յուրաքանչյուր իրավական համակարգում հետագայում ամրագրվելիք բոլոր իրավաչափ իրավունքների և ազատությունների հիմքում ևս այն է կանգնած լինելու: Այլ կերպ, միայն կոնկրետ ժամանակային միավորում ամրագրված իրավունքներով և ազատություններով չեն նկարագրվում նրա բովանդակությունն ու սահմանները: Դրա վառ ապացույցն են նաև այն միջազգային իրավական փաստաթղթերը, որտեղ ամրագրված են արժանապատվության՝ որպես իրավական համակարգի հիմնային երևույթի վերաբերելի բնորոշումները:

Այսպես, ՍԱԿ-ի Մարդու իրավունքների հա-

մընդհանուր հռչակագրի նախաբանում¹ ամրագրված է, որ մարդկության ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ է արժանապատվությունը, իսկ հռչակագրի 1-ին հոդվածի համաձայն՝ բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Ինչպես երևում է հռչակագրում առկա իրավադրույթից, մարդն աշխարհ է գալիս արժանապատվությամբ, որն էլ պայմանավորում է ցանկացած իրավունքի ձևավորում և գործողություն: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի², Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի³ և Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի՝ նախաբաններում ևս արտացոլված է այս գաղափարը: Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի մասով հարկ է նշել նաև, որ 13-րդ հոդվածով ամրագրվել է այն հանգամանքը, որ կրթության գործառնությունից է արժանապատվության գիտակցմանը նպաստելը, քանի որ հենց այդ գիտակցումն է պայմանավորում մարդու իրավունքների ու ազատությունների հարգումը: Ըստ էության, այս շարքը կարելի է շարունակել, սակայն այստեղ ցանկանում ենք ընդգծել այն հանգամանքը, որ վերոնշյալ միջազգային կոնվենցիաների նախաբաններում՝ դրանց նպատակային նշանակությունը սահմանող հատվածներում են ամրագրվել այս գաղափարները, ինչը ցույց է տալիս արժանապատվության բազիսային նշանակությունը՝ թե՛ առկա, և թե՛ ձևավորվելիք իրավունքների և ազատությունների համատեքստում:

Չնայած այս փաստաթղթերում արժանապատվության արժեքային ընկալման համար ուղենշային բնորոշումների առկայությանը, այնուամենայնիվ, *չկա որևէ միջազգային փաստաթուղթ, որի շրջանակներում տրված լինի արժանապատվության սահմանումը*: Արդյունքում, գործնականում արժանապատվության մեկնաբանման վերաբերյալ առկա տարբերակները ոչ միայն տարբեր են, այլև երբեմն հակադրվում են միմյանց:

Տարբեր իրավական հոդվածներում այն մեկնաբանվում է որպես «պարզապես հնչել բառ», «անօգուտ հասկացություն» կամ «լիովին զուրկ որևէ իմաստից», կա նաև բնորոշում, որ այն օգտագործվում է, երբ մարդիկ «ցանկանում են լուրջ հնչել, բայց վստահ չեն, թե ինչ ասել»⁴: Սակայն, իրականում այստեղ խնդիրն այն է, որ երևույթը սահմանելու բարդությունն ու չհասկացվածությունն է պայմանավորել այն այդպիսի բնորոշումներով նկարագրելը: Չնայած արժանապատվության համապարփակ ընկալման բարդությանը, հարկ է ընդունել, որ դրա ընկալումն է պայմանավորելու ճիշտ իրավակարգի, այնուհետ պատշաճ հասարակար-

www.ardadatuynjournal.com

www.aradaradutyjournal.com

գի առկայությունը: Մեր կողմից ընդունելի այս տրամաբանությունը, որն ուղղակի հակադրության մեջ է մտնում այն մեկնաբանություններին, որոնց համաձայն արժանապատվությունն իմաստագուրկ կամ անօգուտ երևույթ է, իր առարկայացումն է ստացել մի շարք գիտնականների աշխատություններում, որոնցում ամփոփվել է այն գաղափարը, որ առանց արժանապատվությունը հիմքում ունենալու իրավունքների ու ազատությունների քննարկումն անիմաստ է:

Արժանապատվության՝ գործնական մակարդակում պատշաճ պաշտպանությունը կազմակերպելու համար նախ հարկ է հստակ հասկանալ արդյոք վերջինս ունի կառուցվածքային տարրեր, եթե այո, ապա ինչպիսիսն է դրանց բնույթը, ինչպես են դրանք փոխազդում միմյանց վրա և ինչպես են փոխապայմանավորում միմյանց:

Այս առումով գիտական գրականության մեջ հնարավոր է առանձնացնել երկու մոտեցում: Նշենք, որ գերակշռող է այն մոտեցումը, համաձայն որի՝ մարդու արժանապատվությունը դիտարկվում է որպես արտաքին պայմաններից անկախ, բոլոր անձանց համար հավասար և համընդհանուր արժեք: Այս համատեքստում, թեև հեղինակները, որպես կանոն, ուղիղ կերպով չեն ձևակերպում, որ արժանապատվությունը գուրկ է երկրորդային (սոցիալական, մշակութային և այլ) շերտից, այնուամենայնիվ, նրանց ներկայացրած տեսական կառուցակարգերը, ըստ էության, բացառում են նման շերտերի գոյությունը՝ արժանապատվությունը դիտարկելով որպես մարդկանց նույնակերպ ներհատուկ և ժամանակի ընթացքում չփոփոխվող հատկություն:

Երկրորդ մոտեցման մասին խոսելիս հիշատակման տեսանկյունից հատկապես նշանակալի է Գերմանական Սահմանադրական դոկտրինայում արժանապատվության կառուցվածքի վերաբերյալ առկա կոնցեպտը, որի շրջանակներում տարբերակվում են արժանապատվության «կորիզային» բովանդակությունն ու այն հարակից գործընթացները, որոնք ձևավորվում են այդ կորիզի շուրջ: Ըստ էության, Գերմանական դոկտրինում, որպես այդպիսին, ուղղակիորեն անդրադարձ չի կատարվում արժանապատվության կառուցվածքին, սակայն հարկ է նկատի ունենալ, որ այստեղ առկա տրամաբանությունը կարող է լինել ուղենշային: Արժանապատվության բնույթը քննարկելիս տարբերակվել են նաև «համընդհանուր և մշակութային չափումներ», որից առաջինը վերաբերում է բոլոր մարդկանց ներքին արժեքին, երկրորդը՝ մշակութային առումով վարքագծի արտաքին ասպեկտներին, առաջինը ձեռք է բերվում մարդու ծննդյան փաստի ուժով, երկրորդը՝ պայմանավորվում կոնկրետ սոցիալական միջավայրով:

Արժանապատվության վերաբերյալ միասնա-

կան հասկացության բացակայությունը պայմանավորված է տարբեր սոցիալական և մշակութային հարաբերություններով, գործնականում տարբեր մշակույթների, սոցիալական ընկալումների տարբերությունը պայմանավորում է տարբեր երկրներում արժանապատվության վերաբերյալ տարբեր պատկերացումների ձևավորում:

Համակարծիք լինելով երկրորդ մոտեցմանը՝ կարծում ենք, որ չնայած նրան, որ արժանապատվությունը բնորոշ է բոլորին, այնուամենայնիվ բոլորի համար նույնական է միայն դրա առաջին շերտը՝ այն է բացարձակ միջուկը: Արժանապատվությունը բոլորի համար չի կարող ընկալվել նույն կերպ, քանի որ մարդկանց մտածողության, ճանաչողության, ինքնահարգման և ինքնահրացման վրա ազդում են տարբեր սոցիալական միջավայրեր: Բոլորին ներհատուկ այս երևույթի՝ բացարձակ բնույթ ունենալը, կարծում ենք, պետք է ընկալվի արժանապատվության առաջին շերտի շրջանակներում:

Հենց սրա վրա հիմնվելով էլ առաջարկում ենք արժանապատվության կառուցվածքը դիտարկել որպես երկշերտ համակարգ, որը բաղկացած է բացարձակ միջուկից և վերջինիս երկրորդային շերտը կազմող հատկանիշներից, որոնք, միաժամանակ միմյանց հետ փոխգործակցելով, պայմանավորում են մեր բոլոր իրավունքների և ազատությունների բազան:

Արժանապատվության բացարձակ միջուկի բովանդակությունը կազմող կառուցվածքային տարրերի վերհանումը

Հաջորդիվ անհրաժեշտ է միտվել միջուկային տարրերի բացահայտմանը, որպիսի գործընթացը պետք է հիմնված լինի այնպիսի չափանիշների վրա, որոնք հնարավորություն կտան բացահայտել այնպիսի հատկանիշներ, որոնք համարվում են արժանապատվության գաղափարի անհրաժեշտ և համընդհանուր նախադրյալներ: Ընդ որում, այդ չափանիշների ընտրությունը պետք է պայմանավորված լինի այն գաղափարով, որ քննարկման առարկա երևույթի բովանդակության կառուցվածքը դիտարկվելու է ոչ միայն սպորող, այլև դեռևս չծնված և մահացած մարդկանց արժանապատվության առկայության հանգամանքը հիմքում ունենալով, ինչին մանրամասնորեն կանդրադառնանք հաջորդ գիտական աշխատանքների շրջանակներում:

Մասնավորապես, մեր կարծիքով արժանապատվության միջուկը կարող է ձևավորվել միայն այնպիսի չափանիշներ հիմքում ունենալով, ինչպիսիք են.

- մարդու էական տարբերությունը այլ կենդանի էակներից,
- համընդհանրությունն ու յուրաքանչյուր

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մարդու բնորոշ լինելը,

• մարդու՝ որպես ինքնուրույն արժեք ունեցող իրավական սուբյեկտ լինելը:

Այս չափանիշների կիրառումը թույլ է տալիս արժանապատվության միջուկում առանձնացնել այնպիսի հատկանիշներ, որոնք արտահայտում են մարդու գոյաբանական առանձնահատկությունները:

Արժանապատվության գաղափարի դասական հիմնավորումը առաջնահերթ հիմնված է մարդու գոյաբանական արժեքի վրա: Այսինքն, անկախ նրանից ում հետ գործ ունենք, միայն այն փաստը, որ վերջինս մարդկային ցեղին է պատկանում, պայմանավորում է վերջինիս բացառիկությունը: Սա ստատիկ տարր է, չի պահանջում որևէ գործողություն կամ գործունեություն:

Մարդկային ցեղին պատկանելու փաստի առկայությունից հետո կարևորագույն հանգամանքը վերջինիս բանական բնույթի ճանաչումն է: Այս մոտեցումը համակարգված ձևով ձևակերպվել է Իմանուել Կանտի կողմից, որի փիլիսոփայության մեջ մարդու արժանապատվությունը բխում է այն հանգամանքից, որ մարդը հանդիսանում է բանական էակ, որն ունակ է ինքնուրույն սահմանել իր վարքագծի կանոնները և առաջնորդվել բարոյական օրենքով: Կանտի ձևակերպմամբ՝ բանական էակները ունեն արժանապատվություն, և այդ պատճառով մարդը պետք է դիտարկվի որպես նպատակ ինքնին, այլ ոչ թե որպես միջոց՝: Ընդ որում, վերլուծելով Կանտի գաղափարը՝ տեսնում ենք, որ Կանտը բանականության առկայությամբ պայմանավորում է կամքի առկայությունն ու իրացումը, և հատկապես հատկանշական է այն, որ նա կամքի իրացումը պայմանավորում է բարոյական օրենքներով առաջնորդվելով՝ այսինքն, նա ցույց է տալիս, թե ազատ կամքն, իր հերթին, ինչ տրամաբանությամբ պետք է ընկալվի և իրացվի:

Ժամանակակից իրավափիլիսոփայության ամենաազդեցիկ ներկայացուցիչներից Ռոնալդ Դվորկինը ևս մարդու արժանապատվությունը կապում է անձի ինքնավարության և իր կյանքի գիտակցված ձևավորման պատասխանատվության հետ: Այս մոտեցումն իր հիմքում ենթադրում է մարդու բանական բնույթը, քանի որ միայն բանական էակն է ունակ ինքնուրույն ընտրություններ կատարել և ձևավորել իր կյանքի ուղղությունը՝: Լինելով բանական էակ՝ մարդն ունի ազատ կամք, որով էլ պայմանավորում է իր ընտրությունները: Ամերիկացի փիլիսոփա Հարրի Ֆրանկֆուրտն իրավացիորեն նշում է, որ մարդու ազատ կամքի բացառիկությունը դրսևորվում է նրանում, որ, ի տարբերություն այլ կենդանի օրգանիզմների, մարդն ի վիճակի է ունենալ ոչ միայն առաջնային մակարդակի ցանկություններ, այլև առավել բարդ՝ երկրորդ շերտ ենթադրող ցանկություններ, որոնցով էլ տարբերվում է

մնացած կենդանիներից¹³: Վերլուծության առարկա դարձնելով այս գաղափարը՝ հարկ է ընդգծել, որ առավել բարդ, առաջնային մակարդակից վեր կանգնած ցանկությունների առկայությունը պայմանավորված է բանականությամբ, իսկ բանականությունը ենթադրում է այնպիսի կամք, որն իրացվում է բարոյականության սահմաններում, ինչը մեր կարծիքով անձի այնպիսի գործունեությունն է, ինչը չի հակասում և չի վնասում իրեն և սոցիումի մնացյալ ներկայացուցիչներին:

Այս գաղափարի տրամաբանության կրող է նաև մեկ այլ ամերիկացի փիլիսոփա՝ Ռոբերտ Հ. Քեյնը, ով նշում է, որ չնայած այլ կենդանիներ ևս ունեն ցանկություններ, այնուամենայնիվ մենք տարբերվում ենք նրանով, որ կարող ենք մտածել, թե ինչպիսի ցանկություններ և նպատակներ կարող ենք կամ պետք է ունենանք¹⁴:

Համաձայնելով ներկայացված դիրքորոշումներին՝ այնուամենայնիվ կարծում ենք, որ ազատ կամքի իրացումը չի կարելի հասկանալ այնպես, որ այն հակադրության մեջ մտնի արժանապատվության միջուկի առանցքային, այն է՝ միայն մարդուն ներհատուկ բնական արժեքի հետ՝ այսինքն, յուրաքանչյուր դեպքում իր կամքը իրացնելիս մարդը պետք է ունենա բարոյական պատասխանատվության զգացում:

Իր կամքով կոնկրետ վարքագիծ ընտրելիս մարդը պետք է բարոյական պատասխանատվություն ստանձնի առաջին հերթին իր, այնուհետ այն հասարակական միջավայրի հանդեպ, որտեղ ապրում է:

Այսպիսով, հիմքում ունենալով վերոգրյալում նշված չափանիշներն ու դրանց հիման վրա կատարված վերլուծությունները՝ կարող ենք գալ այն հետևությանը, որ արժանապատվության բացարձակ միջուկի տարրերն են.

1. մարդկային ցեղին պատկանելը,
2. մարդու բանական բնույթը,
3. ազատ կամքը,
4. բարոյական պատասխանատվության ունակությունը,

Ընդ որում, եթե փորձենք պատճառահետևանքային կապի տեսանկյունից վերլուծել միջուկային տարրերը, կտեսնենք, որ յուրաքանչյուր տարրի հիմքում իրեն նախորդած տարրն է. մարդկային ցեղին պատկանելու փաստը պայմանավորում է բանական բնույթի դիտարկումը, ինչն իր հերթին պայմանավորում է մարդու ինքնագիտակցությունը, գիտակցությունն՝ ազատ կամք ունենալը, իսկ ազատ կամքը՝ բարոյական պատասխանատվությունը:

Վերոգրյալից կարող ենք ենթադրել, որ արժանապատվության առաջին շերտը՝ բացարձակ միջուկն իր հերթին ունի երկու շերտ՝ գոյաբանական, որը նկարագրում է մարդու՝ մարդկային ցեղին

պատկանելու ուժով բացառիկ արժեք լինելու գաղափարը, և գործառնական, որն իրենում ներառում է բանականությունը, ազատ կամքն ու բարոյական պատասխանատվության ունակությունը: Բանականությունը, ազատ կամքը և բարոյական պատասխանատվության ունակությունը բնութագրվում են որպես արժանապատվության միջուկի գործառնական տարրեր, քանի որ դրանք չեն սահմանափակվում մարդու գոյաբանական բնութագրումով, այլ արտահայտում են այն կարողությունները, որոնց միջոցով մարդը դրսևորվում է որպես ինքնուրույն արժեք ունեցող սուբյեկտ: Ի տարբերություն գոյաբանական տարրի, որը նկարագրում է մարդու «լինելը», գործառնական տարրերը վերաբերում են մարդու «գործելու ունակությանն ու դրա իրացմանը» որպես բանական և ինքնավար էակ: Հենց այս կարողությունների միջոցով է մարդը իրականացնում իր ընտրությունները, ձևավորում իր վարքագիծը և կրում դրա համար բարոյական պատասխանատվություն, ինչն էլ ապահովում է արժանապատվության գաղափարի գործնական արտահայտությունը իրավական հարաբերություններում:

Արժանապատվության բացարձակ միջուկը չի ճանաչում սեռ, կրոն, անձնական հատկանիշներ, սոցիալական կարգավիճակ և այլն, այն չի փոփոխվում ժամանակի և տարածության մեջ: Առաջնահերթ հենց այդ բացարձակ միջուկն է, որ պետք է պայմանավորի ամբողջ իրավական համակարգի հնարավոր իրավաչափությունն ու դրանում իրավունքի, այլ ոչ սոսկ օրենքի գերակայությունը: Բացարձակ միջուկի վրա որպես շերտեր հետագայում ավելանում են էթնո-մշակութային, սոցիալական, կրոնական և կոնկրետ սոցիումի առանձնահատկություններով պայմանավորված այլ հատկանիշներ: Միջուկը կարող է, ավելին՝ պետք է ներգործություն ունենա արժանապատվության ընկալման երկրորդային շերտը կազմող գործոնների վրա, սակայն երկրորդային գործոնները չեն կարող փոխել կամ ժխտել միջուկային հատկանիշները:

Արժանապատվության բովանդակության երկրորդային շերտի առանձնահատկությունների քննարկումը՝ որոշ գործնական օրինակների լույսի ներքո

Քննարկման առարկա դարձնելով երկրորդային հատկանիշները՝ կտեսնենք, որ դրանք ձևավորվում և փոփոխվում են ժամանակի և տարածության մեջ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե որտեղ է կոնկրետ անձը ծնվել, մեծացել, կենսագործունեություն ծավալել:

Մարդը սոցիումի անբաժան մաս է: Հենց այս գաղափարն է առաջ քաշում Էմիլ Դյուրքհեյմը, ով իր «Երկրորդական սոցիոլոգիայի սկզբունքները» աշխատության մեջ ասում է, որ մարդը սոցիալական էակ է, և նրա բարոյական պատասխանատ-

վությունը ձևավորվում է հասարակության պահանջներից¹⁵:

Արժանապատվության երկրորդային շերտին անդրադառնալով՝ որպես օրինակ նշենք բրիտանացի Նադիա Էվեյդայի գործը՝: Վերջինս աշխատում էր «Բրիթիշ Էյրվեյզե ընկերությունում որպես ուղևորներին գրանցող աշխատակից: Էվեյդան աշխատանքի ընթացքում կրում էր փոքր քրիստոնեական խաչ, որը տեսանելի էր աշխատանքի ընթացքում: Սակայն ընկերության համազգեստի կանոնները պահանջում էին, որ աշխատակիցները տեսանելի կրոնական խորհրդանիշներ չկրեն: Էվեյդան հրաժարվեց թաքցնել խաչը՝ նշելով, որ դա իր համար կրոնական ինքնության կարևոր արտահայտություն է: Արդյունքում նա ժամանակավորապես հեռացվեց աշխատանքից: Սպառելով ներպետական դատական ատյանները՝ Էվեյդան դիմեց Եվրոպական դատարան: Եվրոպական դատարանն ընդգծեց, որ խաչ կրելը հանդիսանում է կրոնական համոզմունքի դրսևորում: Սույն գործով դատարանն արձանագրեց, որ անձի կրոնական համոզմունքների արտահայտումը հանդիսանում է նրա ինքնության և անձնական ամբողջականության կարևոր բաղադրիչ և պետությունը պարտավոր է հարգել այդ ինքնությունը: Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ եվրոպական իրավական դոկտրինայում անձի ինքնության և ինքնարտահայտման պաշտպանությունը դիտարկվում է որպես մարդու արժանապատվության դրսևորում: Դատարանն այս դիրքորոշմամբ ցույց տվեց, որ մարդու կրոնական ինքնությունը կարող է լինել նրա արժանապատվության սոցիալ-մշակութային շերտի մաս և իրավական գնահատական տալիս դատարանը պետք է հաշվի առնի այդ հանգամանքը:

Ինչպես նշել էինք նախորդիվ, մարդու արժանապատվության ընկալումը կարող է պայմանավորված լինել մշակութային միջավայրով: Մշակութային առումով արժանապատվության երկրորդային շերտի առանձնահատկություններին անդրադառնալիս կցանկանանք ներկայացնել Չափմանն ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործը՝: Սույն գործի շրջանակներում Եվրոպական դատարան էր դիմել Սալի Չեփմանը, ով պատկանում էր Միացյալ Թագավորության գնչուական համայնքին: Այդ համայնքի մշակութային առանձնահատկություններից մեկը պատմականորեն ձևավորված քոչվոր կամ կիսաքոչվոր ապրելակերպն է, որի շրջանակում ընտանիքները հաճախ բնակվում են շարժական տներում: Չեփմանը գնել էր հողատարածք Անգլիայի գյուղական տարածքներից մեկում և այնտեղ տեղադրել էր շարժական տուն՝ իր ընտանիքի հետ բնակվելու նպատակով: Սակայն տեղական իշխանությունները հրաժարվել էին նրան տրամադրել համապատասխան կառուցապատ-

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ման թույլտվություն, քանի որ տվյալ տարածքը, ըստ քաղաքաշինական կանոնակարգերի, նախատեսված չէր բնակության համար: Հետագայում իշխանությունները պարտավորեցրին նրան հեռացնել իր շարժական տունը տվյալ տարածքից: Չնայած այն հանգամանքին, որ սույն գործով Եվրոպական դատարանը չբավարարեց դիմումատուի պահանջը, այնուամենայնիվ հատուկ արձանագրեց, որ գնչուների ավանդական ապրելակերպը՝ ներառյալ շարժական տներում բնակվելը և որոշ դեպքերում շարժական կյանք վարելը, հանդիսանում է նրանց մշակութային ինքնության կարևոր բաղադրիչ: Դատարանը ճանաչեց, որ գնչուական համայնքի ավանդական ապրելակերպը հանդիսանում է նրանց մշակութային ինքնության էական տարր, և այդ ինքնությունը պետք է հաշվի առնվի իրավական գնահատական տալու ժամանակ: Այս մոտեցումը ցույց է տալիս, որ անձի մշակութային ինքնությունը կարող է հանդիսանալ նրա անձնական կյանքի և ինքնության կարևոր բաղադրիչ: Մշակութային ինքնության պաշտպանությունն, իր հերթին, ևս եվրոպական իրավական դոկտրինայում հաճախ դիտարկվում է որպես մարդու արժանապատվության սոցիալական և մշակութային շերտի դրսևորում:

Մշակութային գործոնով պայմանավորված անձի արժանապատվության երկրորդային շերտի վնասումը ակնհայտ երևում է նաև Մանդլան ընդդեմ Դատել Լիի գործի շրջանակներում: Այսպես, մի սիկի երեխայի հրաժարվել էին ընդունել դպրոց այն պատճառաբանությամբ, որ վերջինս, առաջնորդվելով իր էթնո-մշակութային առանձնահատկություններով, չէր կտրում մագերն ու կրում էր տուրբան: Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատը սույն գործով արձանագրեց, որ սիկիերը հանդիսանում են էթնիկ խումբ, այնուհետ նշվեց, որ անձի էթնիկ ինքնությունը պետք է պաշտպանվի՝ հիմքում ունենալով տվյալ էթնո-խմբի արժանապատվության պաշտպանության գաղափարը:

Ըստ էության, վերոգրյալում ներկայացված օրինակները ևս փաստում են այն մտքի ընդունելիությունը, որ նվազագույն միջուկից այն կողմ հնարավոր չէ սահմանել արժանապատվության մյուս շերտերը և որ դա պետք է արվի յուրաքանչյուր պետության կողմից՝ մասնավորապես, յուրաքանչյուր պետություն պետք է ընտրի այնպիսի սահմանում, որն առավելագույնս հարգում է իրենց ավանդական սահմանադրական արժեքները՝ անկախ նրանից, թե տվյալ արժեքները այլ հասարակություններում ինչ ընկալում ունենան¹⁸:

ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ սույն աշխատանքի շրջանակներում կատարված վերլուծությունների արդյունքում հանգում ենք հետևյալին.

1. Սույն աշխատանքի շրջանակներում առաջարկվում է արժանապատվության կառուցվածքը դիտարկել որպես երկշերտ համակարգ, որը բաղկացած է բացարձակ միջուկից, որն, իր հերթին, ունի երկշերտ կառուցվածք, ինչպես նաև հարաբերական երկրորդային շերտից,

2. Բացարձակ միջուկը ձևավորում են գոյաբանական ու գործառնական տարրերը, գոյաբանական տարրը բնորոշում է մարդու՝ մարդկային ցեղին պատկանելու փաստը, գործառնականը՝ իրենում ներառում բանականությունը, ազատ կամքն ու բարոյական պատասխանատվության ունակությունը,

3. Բացարձակ միջուկի էությունն անխախտելի է, ինչը ենթադրում է, որ այն անհաղթահարելի է՝ այսինքն, չի կարող ենթարկվել որևէ սահմանափակման, երկրորդային շերտն, իր հերթին, պետք է բխի բացարձակ միջուկից և չհակասի դրան. բացարձակ միջուկին չհակասելու տրամաբանության մեջ այն կարող է նաև ժամանակի ընթացքում փոփոխվել,

4. Բացարձակ միջուկը պետք է լինի իրավունքի գերակայության վրա ձևավորված իրավակարգի կայուն երաշխավորը,

5. Արժանապատվության երկրորդային շերտն է պայմանավորում վերջինիս վերաբերյալ միասնական հասկացության բացակայության հանգամանքը, քանի որ այն պայմանավորված է տարբեր սոցիալ-մշակութային գործոններով, որոնք ներհատուկ են կոնկրետ միջավայրերի և ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել:

¹ Տե՛ս Universal Declaration of Human Rights, adopted on 10.12.1948, Resolution No. 217 A (III), adopted by the United Nations General Assembly, հղումը՝ <https://www.arlis.am/hy/acts/1896/huսսանելի է՝ 05.04.2026թ. դրությամբ/>

² Տե՛ս International Covenant on Civil and Political Rights, adopted on 16.12.1966, entered into force on 23.03.1976, Resolution No. 2200 A (XXI), adopted by the United Nations General Assembly, հղումը՝ <https://www.arlis.am/hy/acts/18500/huսսանելի է՝ 05.04.2026թ. դրությամբ/>,

³ Տե՛ս International Covenant on Economic, Social and Cultural Rights, adopted on 16.12.1966, entered into force on 03.01.1976, Resolution No. 2200 A (XXI), adopted by the United Nations General Assembly, հղումը՝ <https://www.arlis.am/hy/acts/18501/huսսանելի է՝ 05.04.2026թ. դրությամբ/>,

⁴ Տե՛ս International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination, date of adoption: 21.12.1965, original source: RA MFA PA 2004.12.20/4(12), adopting body: United Nations General Assembly, հղումը՝ <https://www.arlis.am/hy/acts/75843/huսսանելի է՝ 05.04.2026թ. դրությամբ/>,

⁵ Տե՛ս Kate Karklina, Why human dignity is not an essentially contested concept, p. 3, հղումը՝ https://wp.ufpel.edu.br/ghdp/files/2022/09/GHDP_Karklina.pdf/huսսանելի է՝ 05.04.2026թ. դրությամբ/,

⁶ Տե՛ս օրինակ Lukgw, P., A Difficult Legacy: Human Dignity as the Founding Value of Human Rights, Human Rights Review 19 (2018): pp. 313–329, Buribayev, Y., et al., Human dignity — the basis of human rights to social protection, WISDOM 16, no. 3 (2020): pp. 143–155,

⁷ Տե՛ս Grimm, D., Kemmerer, A., & Mϕllers, C. (eds.), Human Dignity in Context: Explorations of a Contested Concept, Nomos/Hart, 2018, pp. 13–22,

⁸ Տե՛ս Staffen, M.R. and Arshakyan, M., About the Principle of Dignity: Philosophical Foundations and Legal Aspects, SeqՖUncia (Floriangpolis), Vol. 38, No. 75, 2017, pp. 43–62, հղումը՝ <https://periodicos.ufsc.br/index.php/sequencia/arti-cle/view/2177-7055.2017v38n75p43/huսսանելի է՝ 05.04.2026թ. դրությամբ/>,

⁹ Տե՛ս Adeno Addis, Human dignity in comparative constitutional context: In search of an overlapping consensus, p. 25, հղումը՝ <https://www.jicl.org.uk/storage/journals/November2020/g6FU870ZXmZm95wO3mMd.pdf/huսսանելի է՝ 10.03.2026թ. դրությամբ/>, Viviana Bohgrquez Monsalve and Javier Aguirre Romnn, Tensions of human dignity: Conceptualization and application to international human rights law, International Journal on Human Rights, Dec. 2009, p. 11, հղումը՝ <https://sur.conectas.org/wp-content/uploads/2017/11/sur11-eng-viviana-bohorquez-monsalve-and-javier-aguirre-roman.pdf/huսսանելի է՝ 05.04.2026թ. դրությամբ/>,

¹⁰ Տե՛ս Maitner A.T., DeCoster J., Andersson P.A., Eriksson K. Sherbaji S., Perceptions of emotional functionality: Similarities and differences among dignity, face, and honor cultures, 2022, Singapore Management University, Research Collection, School of Social Sciences, 28p., հղումը՝ https://ink.library.smu.edu.sg/cgi/viewcontent.cgi?article=4801&context=soss_research/huսսանելի է՝ 05.04.2026թ. դրությամբ/,

¹¹ Տե՛ս Kant, I., Groundwork of the Metaphysics of Morals, trans. Mary Gregor, Cambridge University Press, 1998, 120 p., <https://cpb-us-w2.wpmucdn.com/blog.nus.edu.sg/dist/c/1868/files/2012/12/Kant-Groundwork-ng0pby.pdf/huսսանելի է՝ 05.04.2026թ. դրությամբ/>,

¹² Տե՛ս Dworkin, R., Justice for Hedgehogs, Belknap Press of Harvard University Press, 2011, pp. 191–218, հղումը՝ https://www.academia.edu/9683075/Justice_for_Hedgehogs/huսսանելի է՝ 05.04.2026թ. դրությամբ/,

¹³ Տե՛ս Frankfurt, H.G., Freedom of the Will and the Concept of a Person, The Journal of Philosophy, Vol. 68, No. 1, 1971, pp. 5–20, հղումը՝ <https://www.sci.brooklyn.cuny.edu/~schopra/Persons/Frankfurt.pdf/huսսանելի է՝ 05.04.2026թ. դրությամբ/>,

¹⁴ Kane, R., A Contemporary Introduction to Free Will, Oxford: Oxford University Press, 2005, at p. 82, հղումը՝ <https://cdn.bookeekey.com/files/pdf/book/en/a-contemporary-introduction-to-free-will.pdf/huսսանելի է՝ 05.04.2026թ. դրությամբ/>,

¹⁵ Տե՛ս Durkheim, I., The Rules of Sociological Method, trans. W.D. Halls, New York: Free Press, 1982, pp. 50–55, հղումը՝ https://monoskop.org/images/1/1e/Durkheim_Emile_The_Rules_of_Sociological_Method_1982.pdf/huսսանելի է՝ 05.04.2026թ. դրությամբ/,

¹⁶ Տե՛ս Eweida and Others v United Kingdom, Apps nos 48420/10, 59842/10, 51671/10 and 36516/10, Judgment of 15 January 2013, European Court of Human Rights, հղումը՝ <https://hudoc.echr.coe.int/huսսանելի է՝ 05.04.2026թ. դրությամբ/>,

¹⁷ Տե՛ս Chapman v United Kingdom, Application no. 27238/95, Judgment of 18 January 2001, Grand Chamber, European Court of Human Rights, հղումը՝ <https://hudoc.echr.coe.int/?i=001-59154/huսսանելի է՝ 05.04.2026թ. դրությամբ/>,

¹⁸ Տե՛ս Mandla (Sewa Singh) v Dowell Lee [1983] 2 AC 548 (HL), հղումը՝ <https://www.bailii.org/uk/cases/UKHL/1983/7.html/huսսանելի է՝ 05.04.2026թ. դրությամբ/>,

¹⁹ Տե՛ս Fernandez Burgueo, B., The Usefulness of the Legal Concept of Human Dignity in the Human Rights Discourse: Literature Review, Oxլmora. Revista Internacional de łtica y Polłtica, No. 8, 2016, pp. 9–19, հղումը՝ <https://revistes.ub.edu/index.php/oximora/article/view/15472/huսսանելի է՝ 05.04.2026թ. դրությամբ/>:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1) Adeno Addis, Human dignity in comparative constitutional context: In search of an overlapping consensus, հղումը՝

- <https://www.jicl.org.uk/storage/journals/November2020/g6FU870ZXmZm95wO3mMd.pdf>, վերջին այցելության ամսաթիվ՝ 10.03.2026թ.,
- 2) Bohgrquez Monsalve, V. and Aguirre Romnn, J., Tensions of human dignity: Conceptualization and application to international human rights law, *International Journal on Human Rights*, Dec. 2009, p. 11, հղումը՝ <https://sur.conectas.org/wp-content/uploads/2017/11/sur11-eng-viviana-bohorquez-monsalve-and-javier-aguirre-roman.pdf>, վերջին այցելության ամսաթիվ՝ 05.04.2026թ.,
- 3) Durkheim, L., *The Rules of Sociological Method*, trans. W.D. Halls, New York: Free Press, 1982, pp. 50–55, հղումը՝ https://monoskop.org/images/1/1e/Durkheim_Emile_The_Rules_of_Sociological_Method_1982.pdf, վերջին այցելության ամսաթիվ՝ 05.04.2026թ.,
- 4) Dworkin, R., *Justice for Hedgehogs*, Belknap Press of Harvard University Press, 2011, pp. 191–218, հղումը՝ https://www.academia.edu/9683075/Justice_for_Hedgehogs, վերջին այցելության ամսաթիվ՝ 05.04.2026թ.,
- 5) *Eweida and Others v United Kingdom*, European Court of Human Rights, Apps nos 48420/10, 59842/10, 51671/10 and 36516/10, Judgment of 15 January 2013, հղումը՝ <https://hudoc.echr.coe.int>, վերջին այցելության ամսաթիվ՝ 05.04.2026թ.,
- 6) Fernndez Burgueo, B., The Usefulness of the Legal Concept of Human Dignity in the Human Rights Discourse: Literature Review, *Oxlmora. Revista Internacional de tica y Poltica*, No. 8, 2016, pp. 9–19, հղումը՝ <https://revistes.ub.edu/index.php/oximora/article/view/15472>, վերջին այցելության ամսաթիվ՝ 05.04.2026թ.,
- 7) Frankfurt, H.G., Freedom of the Will and the Concept of a Person, *The Journal of Philosophy*, Vol. 68, No. 1, 1971, pp. 5–20, հղումը՝ <https://www.sci.brooklyn.cuny.edu/~schopra/Persons/Frankfurt.pdf>, վերջին այցելության ամսաթիվ՝ 05.04.2026թ.,
- 8) Grimm, D., Kemmerer, A., & Mϕllers, C. (eds.), *Human Dignity in Context: Explorations of a Contested Concept*, Nomos/Hart, 2018, pp. 13–22.
- 9) Kane, R., *A Contemporary Introduction to Free Will*, Oxford: Oxford University Press, 2005, p. 82, հղումը՝ <https://cdn.bookey.app/files/pdf/book/en/a-contemporary-introduction-to-free-will.pdf>, վերջին այցելության ամսաթիվ՝ 05.04.2026թ.,
- 10) Kate Karklina, Why human dignity is not an essentially contested concept, p. 3, հղումը՝ https://wp.ufpel.edu.br/ghdp/files/2022/09/GHDP_Karklina.pdf, վերջին այցելության ամսաթիվ՝ 05.04.2026թ.,
- 11) Kant, I., *Groundwork of the Metaphysics of Morals*, trans. Mary Gregor, Cambridge University Press, 1998, 120 p., հղումը՝ <https://cpb-us-w2.wpmucdn.com/blog.nus.edu.sg/dist/c/1868/files/2012/12/Kant-Groundwork-ng0pby.pdf>, վերջին այցելության ամսաթիվ՝ 05.04.2026թ.,
- 12) Lukgw, P., A Difficult Legacy: Human Dignity as the Founding Value of Human Rights, *Human Rights Review* 19 (2018): 313–329,
- 13) Maitner, A.T., DeCoster, J., Andersson, P.A., Eriksson, K., Sherbaji, S., Perceptions of emotional functionality: Similarities and differences among dignity, face, and honor cultures, Singapore Management University, Research Collection, School of Social Sciences, 2022, 28 p., հղումը՝ https://ink.library.smu.edu.sg/cgi/viewcontent.cgi?article=4801&context=soss_research, վերջին այցելության ամսաթիվ՝ 05.04.2026թ.,
- 14) Staffen, M.R. and Arshakyan, M., About the Principle of Dignity: Philosophical Foundations and Legal Aspects, *Seq̄ũUncia (Floriangpolis)*, Vol. 38, No. 75, 2017, pp. 43–62, հղումը՝ <https://periodicos.ufsc.br/index.php/sequencia/article/view/2177-7055.2017v38n75p43>, վերջին այցելության ամսաթիվ՝ 05.04.2026թ.,
- 15) Universal Declaration of Human Rights, adopted on 10.12.1948, Resolution No. 217 A (III), adopted by the United Nations General Assembly, հղումը՝ <https://www.arlis.am/hy/acts/1896>, վերջին այցելության ամսաթիվ՝ 05.04.2026թ.,
- 16) International Covenant on Civil and Political Rights, adopted on 16.12.1966, entered into force on 23.03.1976, Resolution No. 2200 A (XXI), adopted by the United Nations General Assembly, հղումը՝ <https://www.arlis.am/hy/acts/18500>, վերջին այցելության ամսաթիվ՝ 05.04.2026թ.,
- 17) International Covenant on Economic, Social and Cultural Rights, adopted on 16.12.1966, entered into force on 03.01.1976, Resolution No. 2200 A (XXI), adopted by the United Nations General Assembly, հղումը՝ <https://www.arlis.am/hy/acts/18501>, վերջին այցելության ամսաթիվ՝ 05.04.2026թ.,
- 18) International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination, date of adoption: 21.12.1965, original source: RA MFA PA 2004.12.20/4(12), adopting body: United Nations General Assembly, հղումը՝ <https://www.arlis.am/hy/acts/75843>, վերջին այցելության ամսաթիվ՝ 05.04.2026թ.,
- 19) *Chapman v United Kingdom*, Application no. 27238/95, Judgment of 18 January 2001, Grand Chamber, European Court of Human Rights, հղումը՝ <https://hudoc.echr.coe.int/?i=001-59154>, վերջին այցելության ամսաթիվ՝ 05.04.2026թ.,
- 20) *Mandla (Sewa Singh) v Dowell Lee* [1983] 2 AC 548 (HL), հղումը՝ <https://www.bailii.org/uk/cases/UKHL/1983/7.html>, վերջին այցելության ամսաթիվ՝ 05.04.2026թ.:

Анна Степанян

Юрисконсульт юридического управления ОАО “Ардшинбанк”,
Аспирант кафедры конституционного права ЕГУ

РЕЗЮМЕ

*Понимание структурных элементов содержания человеческого достоинства
в контексте защиты конституционных прав и свобод*

В рамках данной научной работы были рассмотрены структурные особенности содержания достоинства: представлены слои достоинства, элементы, составляющие содержание слоев, и их взаимодействие. В результате были представлены предложения, применение которых может определить внедрение эффективных механизмов защиты конституционно-правового содержания достоинства и конституционных прав и свобод, сформированных на его основе.

Ключевые слова: двухуровневая система достоинства, абсолютное ядро, вторичный уровень, взаимодействие, конституционная защита,

Anna Stepanyan

Legal Advisor, Legal Department, Ardshinbank OJSC,
Postgraduate Student, Department of Constitutional Law, Yerevan State University

SUMMARY

*Understanding the structural elements of the content of human dignity in the context
of the protection of constitutional rights and freedoms*

In the framework of this scientific work, the structural features of the content of dignity were considered: layers of dignity, elements that make up the content of the layers, and their interaction are presented. As a result, proposals were presented, the application of which can determine the implementation of effective mechanisms for the protection of the constitutional-legal content of dignity and constitutional rights and freedoms formed on its basis.

Key words: two-layer system of dignity, absolute core, secondary layer, interaction, constitutional protection.

Բնագիրը ներկայացվել է 15.04.2026թ.
Ընդունվել է տպագրության 27.04.26թ.

ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

**ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐԱՎՍԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Սույն հոդվածը նվիրված է հասարակության ներգրավման դերին շրջակա միջավայրի իրավունքի արդյունավետ իրացման գործում: Հետազոտության շրջանակում վերլուծվում է հասարակական մասնակցության սահմանադրաիրավական նշանակությունը՝ որպես ժողովրդավարական կառավարման և մարդու իրավունքների պաշտպանության կարևոր բաղադրիչ, ինչպես նաև Օրհուսյան կոնվենցիայի երեք սյուների՝ տեղեկատվության մատչելիության, հանրային մասնակցության և արդարադատության հասանելիության գործնական կիրառելիությունը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող մոնիթորինգին՝ որպես անկախ վերահսկողության և ապացուցողական հիմքի ձևավորման գործիքի, ինչպես նաև այլընտրանքային զեկույցների դերին միջազգային և ներպետական վերահսկողական մեխանիզմներում:

Հոդվածում քննարկվում են նաև ռազմավարական դատավարությունները՝ որպես շրջակա միջավայրի պաշտպանության ժամանակակից և ազդեցիկ գործիք, վերլուծվում են միջազգային և ներպետական օրինակներ, ինչպես նաև առաջարկվում է դրանց արդյունավետության բարձրացման նպատակով ներդրել ինստիտուցիոնալ մեխանիզմներ, այդ թվում՝ դատարաններին անկախ մարմնի կողմից ընկերական կարծիք (amicus curiae) ներկայացնելու ինստիտուտը: Միաժամանակ անդրադարձ է կատարվում բնապահպանական ակտիվիստների պաշտպանության խնդիրներին՝ Էսկասուի համաձայնագրի² և ՄԱԿ-ի «Իրավապաշտպանների պաշտպանության մասին հռչակագրի»³ լույսի ներքո՝ հիմնավորելով, որ նրանց գործունեությունը հանդիսանում է հանրային շահի պաշտպանության կարևոր տարր և ենթակա է իրավական պաշտպանության:

Հոդվածում հիմնավորվում է, որ հասարակության ներգրավումը շրջակա միջավայրի իրավունքի պաշտպանության համակարգում հանդիսանում է դրա անբաժանելի և համակարգատեղծ բաղադրիչը, իսկ դրա բացակայության պայմաններում շրջակա միջավայրի իրավունքի իրացման երաշխիքները կորցնում են իրենց գործնական նշանակությունը:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ հասարակական մասնակցությունը ներկայացվում է ոչ միայն որպես ընթացակարգային իրավունք, այլ նաև որպես ինքնուրույն սահմանադրաիրավական ինստիտուտ՝ իր ինստիտուցիոնալ ապահովման պահանջներով, ներառյալ՝ անկախ մոնիթորինգի, ռազմավարական դատավարության և հանրային շահի դատական պաշտպանության նոր մեխանիզմների համակցված կիրառմամբ:

Հիմնաբառեր - շրջակա միջավայրի իրավունք, հասարակական մասնակցություն, Օրհուսյան կոնվենցիա, ռազմավարական դատավարություն, հասարակական մոնիթորինգ, հանրային շահի պաշտպանություն, amicus curiae, բնապահպանական ակտիվիստներ, մարդու իրավունքներ:

Մեթոդներ. Հետազոտությունը ներառել է սահմանադրական և ներպետական իրավական նորմերի, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, միջազգային այլ փաստաթղթերի և շրջակա միջավայրի քաղաքականությունն ու մարդու իրավունքների պաշտպանությունը կարգավորող փաստաթղթերի վերլուծություն: Օգտագործվել են համեմատական իրավական մեթոդ, համակարգային մոտեցում և նկարագրության ու մեկնաբանության վերլուծական մեթոդներ:

Ներածություն

Շրջակա միջավայրի իրավունքի ապահովման համակարգում հասարակության մասնակցությունը ներկայումս դիտարկվում է ոչ միայն որպես օժանդակ կամ լրացնող գործոն, այլ նաև որպես ինքնուրույն սահմանադրաիրավական արժեք և ժողովրդավարական կառավարման էական բա-

ղադրիչ: Ժամանակակից իրավական դոկտրինայում ձևավորվել է այն մոտեցումը, ըստ որի՝ շրջակա միջավայրի արդյունավետ պաշտպանությունը հնարավոր չէ ապահովել բացառապես պետական ինստիտուտների միջոցով՝ առանց հանրության ակտիվ և բովանդակային ներգրավվածության: Այս համատեքստում հասարակական մասնակցությունը հանդես է գալիս որպես գործոն, որը լրացնում և հավասարակշռում է պետական իշխանության գործունեությունը՝ սահմանափակելով դրա կամայական դրսևորումները և կանխելով փակ ու ոչ թափանցիկ որոշումների ընդունումը^{4,5}:

Հասարակական մասնակցությունը պետք է դիտարկել ոչ թե որպես ձևական ընթացակարգային պահանջ կամ քաղաքական հռչակագիր, այլ որպես մարդու հիմնարար իրավունքների իրականացման կարևոր գործիք: Քաղաքացիների և հա-

սարակական կազմակերպությունների ներգրավվածությունը բնապահպանական որոշումների ընդունման գործընթացում նպաստում է իրավական քափանցիկության բարձրացմանը, հանրային վերահսկողության ամրապնդմանը և պետական գործողությունների լեգիտիմության ապահովմանը: Այս իմաստով այն հանդես է գալիս որպես իրավական մեխանիզմ, որը ապահովում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռումը՝ հատկապես այն պայմաններում, երբ բնապահպանական ռիսկերը կրում են հանրային բնույթ և կարող են ազդել ոչ միայն առանձին անձանց, այլև ամբողջ համայնքների և ապագա սերունդների վրա:

Սահմանադրաիրավական տեսանկյունից հասարակական մասնակցության նշանակությունը պայմանավորված է նաև շրջակա միջավայրի իրավունքի առանձնահատկությամբ՝ որպես համընդհանուր շահի վրա հիմնված իրավունք, որի իրացումը պահանջում է բազմասուբյեկտային ներգրավվածություն և վերահսկողության բազմամակարդակ մեխանիզմներ: Այս համատեքստում հասարակական մասնակցությունը հանդես է գալիս որպես պետության պոզիտիվ պարտավորությունների իրականացման գործիք՝ ուղղված մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությանը և շրջակա միջավայրի պահպանության կանխարգելիչ բնույթի ապահովմանը:

Հոդվածի նպատակն է իրականացնել հասարակական մասնակցության դերի համակարգային և համակողմանի վերլուծություն՝ որպես շրջակա միջավայրի իրավունքի արդյունավետ իրացման առանցքային մեխանիզմ՝ բացահայտելով դրա սահմանադրաիրավական հիմքերը, գործնական դրսևորումները և ինստիտուցիոնալ զարգացման հնարավորությունները:

Շրջակա միջավայրի պահպանության հանրային գործիքակազմը

Հասարակական մասնակցության ինստիտուտի ձևավորումը շրջակա միջավայրի պահպանության ոլորտում հանդիսանում է միջազգային իրավունքի և սահմանադրաիրավական մտածողության համատեղ զարգացման արդյունք, որը պայմանավորված է բնապահպանական խնդիրների աճող բարդությամբ և դրանց ազդեցությամբ մարդու հիմնարար իրավունքների վրա: XX դարի երկրորդ կեսից ձևավորվեց այն դոկտրինալ մոտեցումը, ըստ որի շրջակա միջավայրի արդյունավետ պաշտպանությունը հնարավոր չէ ապահովել բացառապես պետական մարմինների միջոցով՝ առանց հանրության ակտիվ ներգրավվածության: Այս գաղափարական հիմքը իր նորմատիվ արտահայտությունը ստացավ 1998 թվականին ընդունված Օրհուսյան կոնվենցիայում, որը մշակվել է Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի շրջանակում՝

Դանիայի Օրհուս քաղաքում⁶:

Կոնվենցիայի ընդունումը պայմանավորված էր այն իրողությամբ, որ բնապահպանական որոշումները հաճախ ունեն անմիջական ազդեցություն անձանց կյանքի, առողջության և բարեկեցության վրա, սակայն դրանց ընդունման գործընթացը երկար ժամանակ մնացել էր փակ և կենտրոնացված: Այս համատեքստում Օրհուսյան կոնվենցիան ձևավորեց նոր՝ «բնապահպանական ժողովրդավարության» մոդել, որը հիմնված է երեք փոխկապակցված սկզբունքների վրա՝ տեղեկատվության մատչելիության, հանրության մասնակցության որոշումների կայացմանը և արդարադատության մատչելիության բնապահպանական հարցերում:

Օրհուսյան կոնվենցիայի տրամաբանությունը սերտորեն կապված է «լավ վարչարարության» (good administration) սկզբունքի հետ, որի համաձայն պետական մարմինները պարտավոր են ապահովել որոշումների քափանցիկությունը, հիմնավորվածությունը և հանրության արդյունավետ ներգրավվածությունը: Այս համատեքստում հասարակական մասնակցությունը հանդես է գալիս ոչ միայն որպես ընթացակարգային երաշխիք, այլ նաև որպես պետության պոզիտիվ պարտավորություն՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանության ապահովմանը:

Այս մոտեցումը հաստատվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում, որտեղ ընդգծվում է, որ պետությունները պարտավոր են ապահովել շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը և արդյունավետ մասնակցության մեխանիզմներ՝ որպես Կոնվենցիայի 8-րդ հոդվածից բխող պարտավորությունների բաղադրիչ:

Այս սկզբունքները նպատակ ունեն ապահովելու հանրային վերահսկողությունը, բարձրացնելու պետական մարմինների հաշվետվողականությունը և կանխելու շրջակա միջավայրին վնաս պատճառող որոշումների ընդունումը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավորումները ևս ապահովում են հասարակական գործունեության և հանրային մասնակցության իրավական հիմքերը: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվում է միավորումների ազատությունը, որի շրջանակում յուրաքանչյուր անձ իրավունք ունի ստեղծելու և մասնակցելու հասարակական կազմակերպությունների գործունեությանը՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով: Բացի այդ, Սահմանադրության դրույթներից բխում է նաև հանրային կյանքի հարցերին մասնակցելու և պետական մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավունքը, որը բնապահպանական ոլորտում ստանում է առանձնահատուկ նշանակու-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյուն՝ որպես պետության պոզիտիվ պարտավորությունների իրականացման գործիք:

Միևնույն ժամանակ, «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքը սահմանում է, որ հասարակական կազմակերպությունները կարող են իրականացնել հանրային շահի պաշտպանություն, մասնակցել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների քննարկմանը, իրականացնել մոնիթորինգ և ներկայացնել առաջարկություններ, ինչպես նաև դատարաններում հանդես գալ՝ պաշտպանելով իրենց անդամների կամ հանրության շահերը¹⁰: Նշված կարգավորումները ստեղծում են իրավական հիմք հասարակական մասնակցության ինստիտուցիոնալացման համար, սակայն դրանց արդյունավետ իրացումը պահանջում է գործնական մեխանիզմների շարունակական զարգացում:

Սահմանադրաիրավական տեսանկյունից Օրհուսյան կոնվենցիայի նշանակությունը պայմանավորված է նրանով, որ այն ընդլայնում է մարդու իրավունքների ավանդական շրջանակը՝ ներառելով շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության, մասնակցության և իրավական պաշտպանության իրավունքները որպես ժողովրդավարական պետության գործառնական տարրեր: Այսպիսով, հասարակական մասնակցությունը դուրս է գալիս գուտ ընթացակարգային երաշխիք լինելու շրջանակից և վերածվում է սահմանադրական արժեքների՝ ժողովրդավարության, իրավական պետության, թափանցիկության և հանրային վերահսկողության իրականացման մեխանիզմի¹¹:

Հայաստանի Հանրապետության իրավակարգում այս մոտեցումը արտահայտվում է մի կողմից՝ Սահմանադրությամբ ամրագրված ժողովրդավարության, իրավական պետության և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներով¹², իսկ մյուս կողմից՝ Օրհուսյան կոնվենցիայի միջազգային պարտավորություններով (ՀՀ՝ վավերացում 2001թ.)¹³: Սակայն սահմանադրաիրավական համակարգում հասարակական մասնակցության ինստիտուտի ամբողջական իրացումը դեռևս պահանջում է համակարգային զարգացում՝ հատկապես կանխարգելիչ մոտեցման, տեղեկատվության նախաձեռնողական բացահայտման և հանրային շահի արդյունավետ դատական պաշտպանության ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետությունում հասարակական մասնակցության ինստիտուտի գործնական իրացմանը խոչընդոտում են մի շարք համակարգային խնդիրներ, մասնավորապես՝ տեղեկատվության ոչ լիարժեք մատչելիությունը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացների ձևականացումը, ինչպես նաև դատական պաշտպանության սահմանափակ արդյունավետությունը: Բացի այդ, վարչական մարմինների

կողմից ընդունվող որոշումները հաճախ չեն պարունակում հանրային մասնակցության արդյունքների պատշաճ վերլուծություն, ինչը նվազեցնում է մասնակցության իրական ազդեցությունը որոշումների վրա¹⁴:

Այսպիսով, հասարակական մասնակցությունը շրջակա միջավայրի պահպանության ոլորտում պետք է դիտարկել ոչ միայն որպես միջազգային պայմանագրային պարտավորության կատարում, այլ նաև որպես սահմանադրական կարգի բաղադրիչ, որը ապահովում է հանրային իշխանության լեգիտիմությունը, մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը և շրջակա միջավայրի պահպանության կանխարգելիչ բնույթը:

Հասարակության մասնակցության մեխանիզմների գործնական կիրառումը տարբեր երկրներում ցույց է տվել դրանց էական նշանակությունը շրջակա միջավայրի իրավունքի արդյունավետ իրացման համար: Միջազգային փորձը վկայում է, որ ամենից արդյունավետ են համարվում այն համակարգերը, որոնք ապահովում են ոչ միայն տեղեկատվության հասանելիություն, այլև հասարակության իրական ներգրավվածություն որոշումների ընդունման գործընթացում և պաշտպանության մեխանիզմների մատչելիությունը:

Եվրոպական երկրների փորձը ցույց է տվել, որ Օրհուսյան կոնվենցիայի ամբողջական ներդրումը հանգեցրել է շրջակա միջավայրի պաշտպանության էական բարելավման: Օրինակ, Չեխիայում Արնիկա հասարակական կազմակերպությունը 2015-2020թթ. ժամանակահատվածում 47 դեպքում օգտագործել է Օրհուսյան կոնվենցիայի առաջին սկզբունքը՝ ստանալով տեղեկատվություն արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումների մասին, որի հիման վրա կազմվել են հանրային զեկույցներ, և 12 դեպքում հասարակությունը կարողացել է արգելափակել կամ փոփոխել շրջակա միջավայրի համար վտանգավոր ներդրումային նախագծերը^{15,16}:

Լեհաստանում ClientEarth («Զլայենթերթ») իրավաբանական կազմակերպությունը դատական ճանապարհով 2016-2019թթ. հասավ նրան, որ կառավարությունը վերանայեց Բելչատովի ածխային էլեկտրակայանի թույլտվությունները, որի արդյունքում ձեռնարկությունը պարտավորվեց 2030թ. կրճատել CO2 արտանետումները 30%-ով: Այս դեպքը ցույց տվեց, թե ինչպես են քաղաքացիական հասարակության կառույցները օգտագործել արդարադատության մատչելիության մեխանիզմները՝ պաշտպանելու հանրային բնապահպանական շահերը¹⁷:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (ՇՄԱԳ) հանդիսանում է հասարակական մասնակցության ամենակարևոր պլատֆորմներից մեկը: Կանադայում ՇՄԱԳ-ի գործընթացը

www.aradaradatuynjournal.com

պահանջում է հանրային լուսնների կազմակերպում և բնակիչների, հատկապես տեղաբնիկ ժողովուրդների կարծիքի հաշվառում: 2016թ. Trans Mountain (Թրանս Մաունթեյն) խողովակաշարի ընդլայնման նախագծի ՇՄԱԳ-ը ներառեց 1,500-ից ավելի հանրային միջոցառումներ և արդյունքում Ֆեդերալ դատարանը 2018թ. և 2020թ. երկու անգամ կասեցրեց նախագծի գործարկումը՝ պահանջելով լրացուցիչ խորհրդակցություններ տեղաբնիկ ազգերի հետ և ծովային կյանքի վրա ազդեցության ավելի մանրամասն գնահատում՝:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և հանրային լուսնները

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (ՇՄԱԳ) պետք է դիտարկել որպես ոչ միայն վարչական ընթացակարգ, այլև որպես պետության պոզիտիվ պարտավորության իրացման առանցքային գործիք¹⁹: Այն ապահովում է կանխարգելիչ մոտեցման (precautionary principle) կիրառումը և հնարավորություն է տալիս բացահայտել և գնահատել հնարավոր ռիսկերը մինչև դրանց նյութականացումը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան ևս ընդգծում է, որ շրջակա միջավայրի ազդեցության պատշաճ գնահատման բացակայությունը կարող է հանգեցնել Կոնվենցիայի 2-րդ և 8-րդ հոդվածների խախտման՝ հատկապես այն դեպքերում, երբ առկա են առողջության կամ կյանքի համար ռիսկեր:

Նոր Զելանդիայում ՇՄԱԳ-ի գործընթացը ներառում է մատրի համայնքների մշակութային ազդեցության գնահատում (Cultural Impact Assessment): 2019թ. Ռուատանիուա (Ruatanuiwha) ջրամբարի նախագծի դեմ մատրի համայնքների բողոքի արդյունքում ներդրողները հրաժարվեցին նախագծից, քանի որ ՇՄԱԳ-ը բացահայտեց անդառնալի ազդեցություն սուրբ տարածքների և կենսաբազմազանության վրա: Այս դեպքը ցույց տվեց տեղական համայնքների և բնիկ ժողովուրդների մասնակցության կարևորությունը բնապահպանական որոշումներում²⁰:

Միևնույն ժամանակ, հասարակական մասնակցության արդյունավետությունը կախված է դրա ինստիտուցիոնալացված լինելուց: Մասնակցությունը չպետք է սահմանափակվի ձևական խորհրդակցություններով կամ տեղեկատվության միակողմանի տրամադրմամբ: Այն պետք է ներառի իրական ազդեցություն որոշումների ընդունման վրա, ներառյալ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացները, քաղաքաշինական ծրագրերի քննարկումները և բնապահպանական ռազմավարության պլանավորումը²¹:

Բարենպաստ շրջակա միջավայրի իրավունքի արդյունավետ ապահովումը ենթադրում է նաև իրավունքի պաշտպանության բազմամակարդակ և փոխկապակցված միջոցների առկայություն: Իրա-

վական պաշտպանության մեխանիզմները ներառում են ինչպես ոչ ընթացակարգային, այնպես էլ ընթացակարգային միջոցներ, որոնք պետք է դիտարկել ոչ թե որպես միմյանցից անկախ կամ մրցակցող, այլ որպես փոխլրացնող համակարգ²²:

Ոչ ընթացակարգային պաշտպանության միջոցները ներառում են վարչական բողոքարկման ընթացակարգերը, վերահսկողական և տեսչական մարմիններին դիմելու հնարավորությունը, օմբուդսմենական և հանրային վերահսկողության մեխանիզմները, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների միջոցով իրականացվող պաշտպանությունը: Այս գործիքները կարևոր են հատկապես կանխարգելիչ փուլում, քանի որ հնարավորություն են տալիս արձագանքել իրավախախտումներին նախքան դրանք կհանգեցնեն անդառնալի էկոլոգիական հետևանքների:

Մոնիթորինգը որպես շրջակա միջավայրի պահպանության գործիք

Հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող մոնիթորինգը հանդիսանում է շրջակա միջավայրի պահպանության առանցքային նշանակության գործիք: Ի տարբերություն պետական վերահսկողությունից, հասարակական մոնիթորինգը օգտվում է յուրահատուկ մոտեցումով, քանի որ կազմակերպությունները կարող են իրականացնել անկախ վերահսկողություն, գիտական մեթոդաբանությամբ տվյալներ հավաքել և ապացուցել շրջակա միջավայրի իրական վիճակը:

Հասարակական մոնիթորինգը կատարում է մի քանի հիմնարար գործառնություններ: Նախ՝ այն ապահովում է պետական վերահսկողության լրացումը՝ վեր հանելով անկախ, մասնագիտական մեթոդաբանությամբ հիմնավորված տեղեկատվություն: Երկրորդ՝ այն գործում է որպես վաղ նախագուշացման համակարգ՝ բացահայտելով իրավախախտումները նախքան դրանց լուրջ հետևանքներին հանգեցնելը: Երրորդ՝ հասարակական կազմակերպությունների մոնիթորինգի արդյունքները կարող են ծառայել որպես ապացուցողական հիմք, ներառյալ՝ դատավարական վարույթներում²³:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ մոնիթորինգը կրում է ոչ միայն դիտարկողական, այլև ազդեցության ուղղվածություն՝ նպատակ ունենալով նպաստել առկա իրավիճակի փոփոխմանը և բարելավմանը:

ԱՄՆ-ում 2022 թվականին շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գեկույցների 40%-ը արդեն ընդգրկում էր քաղաքացիական գիտության տվյալներ, 2012թ.-ին ընդամենը 3%-ի դիմաց: Չեխիայում Արևիկա կազմակերպությունը համակարգային կերպով վերահսկում է արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումները, իսկ Նիդերլանդներում հասարակական կազ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մակերպությունները ակտիվորեն մասնակցում են ջրային որակի մոնիթորինգին: Հարավային Ամերիկայում համայնքները մոնիթորինգը օգտագործում են տարածքային պաշտպանության և արդյունաբերական գործունեությունների գնահատման նպատակով^{24,25,26,27}:

Սակայն հասարակական կազմակերպության մոնիթորինգի իրավական ճանաչումը կապված է մի շարք մարտահրավերների հետ: ԱՄՆ-ի Լուիզիանա նահանգը 2024 թվականին ընդունեց համայնքային օդի մոնիթորինգի հուսալիության մասին օրենք, որը խիստ որակային չափանիշներ է սահմանում համայնքային օդի մոնիթորինգի համար, որպեսզի դրանք կիրառելի լինեն կարգավորման նպատակներով: Այս օրենքը ցույց է տալիս այն լարվածությունը, որը գոյություն ունի հասարակական մոնիթորինգի և դրա իրավական ճանաչման միջև:

Մոնիթորինգի արդյունքում կազմված զեկույցները հնարավորություն են տալիս հասարակությանը՝ պետական մարմինների կողմից ներկայացվող պաշտոնական հրապարակումներին ալյընտրանքային տեսանկյուն ապահովելը: 2021 թվականին Վրաստանի Հանրային պաշտպանը Օրիուսի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ալյընտրանքային զեկույց ներկայացրեց ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովին: Այդ զեկույցը ընդգրկում էր 2017-2020թթ. ժամանակաշրջանի բնապահպանական տեղեկատվության հավաքակցման, տարածաշրջանային պլանավորման և հանրային լուսմների հետ կապված մարտահրավերներ: Նմանատիպ զեկույցներ ներկայացվում են նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեին, կլիմայի փոփոխության պայմանագրերի վերահսկման մարմիններին և այլ միջազգային հաստատություններին:

Ռազմավարական դատավարությունները որպես շրջակա միջավայրի պահպանության գործիք

Ռազմավարական դատավարությունները հանդիսանում են շրջակա միջավայրի իրավունքի պահպանության ժամանակակից արդյունավետ գործիքներից մեկը: 2024 թվականին համաշխարհային մակարդակով հարուցվել է առնվազն 226 նոր կլիմայական դատական գործ, ինչի արդյունքում նման գործերի ընդհանուր թիվը աշխարհում հասել է 2967-ի, ընդ որում դրանցից ավելի քան 80%-ը դասակարգվում են որպես ռազմավարական դատավարություն (ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր (UNEP), «Կլիմայական դատավարությունների գլոբալ զեկույց», 2024): Դրանց նպատակն է ոչ միայն կոնկրետ վեճի լուծումը, այլև նախադեպի ձևավորումը, որը ազդեցություն կունենա իրավական համակարգի, քաղաքականության և հասարակական իրազեկության փոփոխության վրա²⁸:

2024 թվականի ապրիլին Եվրոպական դատա-

րանի Սեծ պալատը կայացրեց պատմական վճիռ Verein KlimaSeniorinnen Schweiz կազմակերպության գործով ըննդդեմ Շվեյցարիայի, արձանագրելով Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտումը՝ կլիմայի փոփոխության դեմ բավարար միջոցներ չձեռնարկելով: Սա առաջին դեպքն էր, երբ միջազգային դատարանը կլիմայի հարցերում պետության անգործությունը ճանաչեց որպես մարդու իրավունքների խախտում: Սա վերաբերում էր 2500-ից ավելի տարեց կանանց ներկայացնող կազմակերպությանը, որը պնդում էր, որ կլիմայի փոփոխության հետևանքով վտանգվում է իր անդամների առողջությունը²⁹:

Նիդերլանդների Urgenda («Ուրգենդա») գործով Գերագույն դատարանը պարտավորեցրեց կառավարությանը նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները առնվազն 25%-ով՝ հիմնվելով Կոնվենցիայի 2-րդ և 8-րդ հոդվածների վրա³⁰:

Գերմանիայի Neubauer գործով (2021թ.) Գաշնային սահմանադրական դատարանը ճանաչեց, որ կլիմայական օրենքը թերի պաշտպանում է ապագա սերունդների իրավունքները: Անգլիայի Finch v. Surrey County Council գործով (2024թ.) Գերագույն դատարանը որոշեց, որ վառելիքի նախագծերի շրջակա միջավայրի վրա իրական ազդեցությունը պետք է ներառի պլանավորման որոշումներում³¹:

Պատմությանը հայտնի են ռազմավարական դատավարությունների այնպիսի օրինակներ, որոնք ունեցել են էական ազդեցություն ոչ միայն կոնկրետ վեճերի լուծման, այլև շրջակա միջավայրի պաշտպանության քաղաքականության և կորպորատիվ պատասխանատվության զարգացման վրա: Այդպիսի դասական օրինակներից է Anderson v. Pacific Gas and Electric Co. գործը (հաճախ հիշատակվում է որպես «Էրին Բրոկովիչի գործ»), որը վերաբերում էր ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Հինքլի համայնքում ստորգետնյա ջրերի աղտոտմանը: Գործի նյութերից պարզ է դառնում, որ «Փասիֆիկ Գազ ընդ Էլեկտրիկ Բանվինի» ընկերությունը (Pacific Gas and Electric Company) երկար ժամանակ օգտագործել է շրջակա միջավայր է արտահոսել վեցավալենտ քրոմ (hexavalent chromium) վտանգավոր քիմիական նյութը, ինչի հետևանքով աղտոտվել են խմելու ջրի աղբյուրները և առաջացել են բնակչության առողջության վրա բացասական ազդեցություններ, այդ թվում՝ քաղցկեղային հիվանդությունների բարձր ռիսկ^{32,33}:

Գործը նախաձեռնվել է փաստացիորեն առաջ է մղվել Էրին Բրոկովիչի կողմից (Erin Brockovich), ով իրավաբանական ներկայացուցչության հետ համատեղ իրականացրել է ապացույցների հավաքագրում և համակարգել տուժած անձանց հավաքական հայցը: 1996 թվականին գործն ավարտվել է հաշտությամբ (settlement), որի շրջա-

www.aradaradailyjournal.com

նակում պատասխանող ընկերությունը պարտավորվել է վճարել 333 միլիոն ԱՄՆ դոլար փոխհատուցում, ինչը տվյալ ժամանակահատվածում համարվել է ԱՄՆ-ում բնապահպանական ոլորտի խոշորագույն փոխհատուցումներից մեկը^{34,35}:

Տվյալ գործը իրավաբանական գրականության մեջ լայնորեն դիտարկվում է որպես ռազմավարական դատավարության օրինակ, քանի որ այն դուրս է գալիս կոնկրետ իրավախախտման շրջանակներից և ունի համակարգային ազդեցություն՝ նպաստելով շրջակա միջավայրի պաշտպանության իրավական մեխանիզմների կատարելագործմանը, կորպորատիվ վարքագծի խստացմանը և հանրային իրազեկվածության:

Հայաստանի Հանրապետությունում ևս կարելի է առանձնացնել ռազմավարական բնապահպանական դատավարության տարրեր պարունակող գործեր, որոնցից է Լոռու մարզում բնակիչների կողմից Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի դեմ հարուցված գործը: Սույն գործը վերաբերում էր արդյունաբերական գործունեության հետևանքով շրջակա միջավայրի աղտոտման և դրա ազդեցության՝ բնակիչների առողջության ու անձնական կյանքի իրավունքի վրա, և իր բնույթով դուրս էր գալիս զուտ մասնավոր վեճի շրջանակներից՝ բարձրացնելով հանրային նշանակության հարցեր:

Դիմողները պնդում էին, որ ծանր մետաղներով աղտոտվածությունը ստեղծում է իրենց կյանքի և առողջության համար իրական վտանգ, և փորձ էին անում իրավական հարթությունում հիմնավորել շրջակա միջավայրի գործոնների և մարդու հիմնարար իրավունքների փոխկապակցվածությունը: Չնայած այն հանգամանքին, որ գործը չհանգեցրեց համակարգային փոփոխությունների կամ կայուն նախադեպի ձևավորման, այն այնուամենայնիվ կարևոր է ռազմավարական դատավարության տեսանկյունից, քանի որ նպաստեց շրջակա միջավայրի խնդիրների հանրայնացմանը, բացահայտեց ապացուցման և պատճառահետևանքային կապի հաստատման բարդությունները, ինչպես նաև ընդգծեց գործող իրավական մեխանիզմների սահմանափակումները:

Ռազմավարական դատավարությունների արդյունավետության բարձրացման տեսանկյունից նպատակահարմար է ներդնել այնպիսի ինստիտուցիոնալ մեխանիզմ, որով շրջակա միջավայրի գործերով որևէ անկախ մարմին, մասնավորապես՝ շրջակա միջավայրի անկախ խորհուրդը, իրավասություն կունենա դատարաններին տրամադրելու ընկերական կարծիք (amicus curiae): Վերջինս հանդիսանում է դատավարությանը կողմ չհանդիսացող, սակայն մասնագիտական գիտելիք և հանրային շահ ներկայացնող սուբյեկտի կողմից ներկայացվող իրավական կամ փաստական դիրքորոշում, որի նպատակը դատարանին աջակցելն է՝ գործի հանգամանքների առավել ամբողջական և խորքային գնահատման հարցում:

Հաշվի առնելով, որ բնապահպանական գործերը հաճախ ունեն բարձր մասնագիտական բարդություն և առնչվում են հանրային լայն շահերին, նման ինստիտուտի ներդրումը կարող է էապես նպաստել դատական պաշտպանության արդյունավետությանը՝ ապահովելով գիտականորեն հիմնավորված դիրքորոշումների ներկայացում, ապացուցողական բազայի ամրապնդում և իրավակիրառ պրակտիկայի զարգացման վրա համակարգային ազդեցություն: Միաժամանակ, անկախ խորհրդի մասնակցությունը որպես amicus curiae կնպաստի դատավարությունում տեղեկատվական անհավասարության նվազեցմանը՝ ապահովելով մասնագիտացված և օբյեկտիվ տեղեկատվության ներկայացում, ինչպես նաև կուժեղացնի հանրային շահի պատշաճ ներկայացվածությունը, ինչը առանձնահատուկ նշանակություն ունի ռազմավարական դատավարությունների շրջանակում^{36,37,38,39,40}:

Բնապահպանական ակտիվիստների իրավունքների պաշտպանությունը

2018 թվականին ընդունված Էսկասուի համաձայնագիրը Լատինական Ամերիկայի և Կարիբյան տարածաշրջանի առաջին տարածաշրջանային բնապահպանական պայմանագիրն է, որը ուժի մեջ է մտել 2021 թվականին և մինչ այժմ վավերացվել է 18 երկրների կողմից: Համաձայնագրի առանձնահատկությունն այն է, որ այն չի սահմանափակվում միայն շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, հանրային մասնակցության և արդարադատության հասանելիության ապահովմամբ, այլ նաև նախատեսում է բնապահպանական իրավունքների պաշտպանների անվտանգության երաշխիքներ (հոդված 9)⁴¹:

Այս դրույթների կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ, ըստ «Գլոբալ Ուիթնես» միջազգային կազմակերպության տվյալների, միայն 2024 թվականին սպանվել կամ անհետացել է 146 բնապահպանական ակտիվիստ, իսկ վերջին տասնամյակում այդ թիվը գերազանցել է 2000-ը, որոնցից շուրջ երեք քառորդը բաժին է ընկնում Լատինական Ամերիկայի և Կարիբյան տարածաշրջանին: Այս համատեքստում 2024 թվականի ապրիլին Չիլիի Սանտյագո քաղաքում կայացած Էսկասուի համաձայնագրի մասնակիցների համաժողովում (COP3) ընդունվել է 2024–2030 թվականների գործողությունների պլանը, որը ուղղված է գիտելիքի զարգացմանը, ճանաչման բարձրացմանը, կարողությունների ամրապնդմանը և իրականացվող միջոցառումների գնահատմանը:

Նշված համաձայնագիրը չունի համընդհանուր կիրառություն և տարածվում է բացառապես

www.aradaradutyjournal.com

Լատինական Ամերիկայի և Կարիբյան տարածաշրջանի երկրների վրա, ինչի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը չի հանդիսանում դրա մասնակից և չի կարող միանալ դրան, սակայն դրա դրույթները կարող են դիտարկվել որպես օրինակելի մոդել՝ շրջակա միջավայրի իրավունքների պաշտպանության և մասնավորապես, բնապահպանական ակտիվիստների անվտանգության ապահովման ոլորտում:

Բացի այդ, բնապահպանական ակտիվիստների պաշտպանության հարցը կարող է դիտարկել նաև ՄԱԿ-ի «Իրավապաշտպանների պաշտպանության մասին հռչակագրի» (Declaration on Human Rights Defenders, 1998) լույսի ներքո, որը, թեև չունի կոնվենցիոն պարտադիր ուժ, սակայն ձևավորում է միջազգային իրավական կարևոր չափանիշներ՝ մարդու իրավունքների պաշտպանությանը ցրադվող անձանց պաշտպանության վերաբերյալ:

Հռչակագրի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի անհատապես կամ համատեղ պաշտպանելու մարդու իրավունքները, այդ թվում՝ շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված իրավունքները, իսկ պետությունները պարտավոր են ապահովել նման անձանց անվտանգությունը, պաշտպանել նրանց բռնությունից, սպառնալիքներից և հետապնդումներից: Այս դրույթները լիարժեք կիրառելի են նաև բնապահպանական ակտիվիստների նկատմամբ, որոնք իրենց գործունեությանը իրականացնում են հանրային շահի պաշտպանություն՝ բարձրացնելով շրջակա միջավայրի վտանգների վերաբերյալ իրազեկումը և նպաստելով պետության պոզիտիվ պարտավորությունների իրականացմանը:

Հետևաբար, Էսկաստի համաձայնագրում ամրագրված հատուկ երաշխիքները կարող են դիտարկվել որպես տարածաշրջանային զարգացում՝ հիմնված արդեն իսկ ձևավորված համընդհանուր միջազգային մոտեցումների վրա, որոնք պահանջում են բնապահպանական իրավունքների պաշտպանների անվտանգության արդյունավետ ապահովում:

Եզրակացություն և գիտական առաջարկներ

Վերլուծությունը ցույց է տալիս, որ շրջակա միջավայրի իրավունքի ապահովման համակարգում հասարակության մասնակցությունը պետք է դիտարկվել որպես սահմանադրաիրավական նշանակություն ունեցող ինքնուրույն ինստիտուտ: Հանրային մասնակցությունը, տեղեկատվության մատչելիությունը, արդարադատության հասանելիությունը, հասարակական մոնիթորինգը և ռազմավարական դատավարությունը ձևավորում են փոխկապակցված մեխանիզմ, որը ապահովում է բնապահպանական իրավունքների իրական և արդյունավետ իրացումը: Դրանք լրացնում են պետական

վերահսկողությունը, բարձրացնում հաշվետվողականությունը և նպաստում որոշումների լեգիտիմությանը:

Հետազոտությունը հաստատում է, որ առավել արդյունավետ են այն համակարգերը, որտեղ հասարակական մասնակցությունը ինստիտուցիոնալացված է և չի սահմանափակվում ձևական ընթացակարգերով: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ բնապահպանական ժողովրդավարության համար անհրաժեշտ է ապահովել ամբողջական տեղեկատվություն, իրական մասնակցություն որոշումների ընդունման գործընթացում, անկախ մոնիթորինգ, ինչպես նաև մատչելի և արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ:

Կարևոր է նաև ռազմավարական դատավարության և հասարակական մոնիթորինգի փոխլրացնող դերը. առաջինը ապահովում է իրավական ազդեցություն, երկրորդը՝ ապացուցողական հիմք: Դրանց համակցումը թույլ է տալիս ոչ միայն արձագանքել խախտումներին, այլև կանխարգելել դրանք և խթանել համակարգային փոփոխություններ:

Հայաստանի Հանրապետությունում, չնայած իրավական հիմքերի առկայությանը, այս մեխանիզմները դեռևս լիարժեք ինստիտուցիոնալացված չեն: Գործնականում առկա են մասնակցության ձևականացման, տեղեկատվության սահմանափակ մատչելիության և դատական պաշտպանության բարդությունների խնդիրներ: Ուստի անհրաժեշտ է ոչ միայն նորմերի հռչակում, այլև դրանց արդյունավետ գործարկման համար հստակ իրավական և ինստիտուցիոնալ լուծումներ:

Այսպիսով, հասարակական մասնակցությունը պետք է դիտարկվել որպես պետության պոզիտիվ պարտավորություն՝ բխող սահմանադրական արժեքներից և միջազգային իրավական պարտավորություններից: Դրա արդյունավետ իրացումը պահանջում է ոչ միայն նորմատիվ ամրագրում, այլև համապատասխան ինստիտուցիոնալ կառուցակարգերի ձևավորում, որոնք կապահովեն մասնակցության իրական ազդեցությունը որոշումների ընդունման գործընթացում:

Գիտական առաջարկներ

1. Հանրային մասնակցության արդյունքների պարտադիր ներառման և «պատճառաբանված մերժման» իրավական ինստիտուտի ներդրում:

Առաջարկվում է շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող վարչական վարույթներում (մասնավորապես՝ ՇՄԱԳ, հանքարդյունաբերական թույլտվություններ, տարածքային պլանավորում) օրենսդրորեն ամրագրել ոչ թե ընդհանրական «մասնակցության» պահանջ, այլ հանրային մասնակցության արդյունքների պարտադիր ներառման և պատճառաբանված մերժման իրավական ինստիտուտ:

Այս նպատակով անհրաժեշտ է սահմանել, որ՝ վարչական մարմինը պարտավոր է իրավական ուժ ունեցող փաստաթղթով (օրինակ՝ որոշման հիմնավորում կամ առանձին հավելված) ամփոփել հանրային քննարկումների արդյունքները: Փաստաթղթը նախ՝ պետք է լինի պատճառաբանված, և հնարավոր լինի վիճարկել դատարանում:

Սույն մոտեցումը հիմնված է եվրոպական վարչական իրավունքի «պատճառաբանման պարտականության» դոկտրինի վրա և համահունչ է Օրհուսի կոնվենցիայի և ՄԻԵԴ նախադեպային իրավունքում ձևավորված այն չափանիշին, ըստ որի՝ մասնակցությունը պետք է լինի ոչ միայն հասանելի, այլ նաև ազդեցություն ունեցող:

2. Շրջակա միջավայրի անկախ խորհրդի կողմից հասարակական մոնիթորինգի արդյունքների գնահատման լիազորության սահմանում:

Առաջարկվում է շրջակա միջավայրի անկախ խորհրդին վերապահել լիազորություն՝ ուսումնասիրելու հասարակական կազմակերպությունների կողմից շրջակա միջավայրի վերաբերյալ իրականացված մոնիթորինգի արդյունքները և դրանց հիման վրա կազմված զեկույցները՝ գնահատելով դրանց գիտական հիմնավորվածությունը, մեթոդաբանական հուսալիությունը և փաստական արժանահավատությունը: Նման գնահատման արդյունքում խորհուրդը պետք է ունենա իրավասություն ձևակերպելու համապատասխան եզրակացություններ և ներկայացնելու դրանք պետական մարմիններին՝ որպես պարտադիր քննարկման ենթա-

կա առաջարկություններ կամ հանձնարարականներ: Այս մոտեցումը կապահովի հասարակական մոնիթորինգի արդյունքների ինստիտուցիոնալ ճանաչում և դրանց ինտեգրում պետական որոշումների կայացման գործընթացում:

3. Շրջակա միջավայրի անկախ խորհրդի փորձագիտական և դատավարական աջակցման լիազորությունների սահմանում:

Առաջարկվում է շրջակա միջավայրի անկախ խորհրդին վերապահել լիազորություն՝ շրջակա միջավայրի գործերով տրամադրելու մասնագիտական փորձագիտական եզրակացություններ, ինչպես նաև հանդես գալու դատարաններում որպես ընկերական կարծիք ներկայացնող սուբյեկտ (amicus curiae): Խորհրդի նման լիազորությունները կնպաստեն շրջակա միջավայրի գործերով ապացուցողական բազայի ամրապնդմանը, գիտական հիմնավորվածության բարձրացմանը և դատարանների կողմից բարդ բնապահպանական հարցերի առավել խորքային գնահատմանը: Միաժամանակ, amicus curiae գործառույթի իրականացումը հնարավորություն կտա խորհրդին ազդել իրավակիրառ պրակտիկայի զարգացման վրա՝ ապահովելով հանրային շահի առավել արդյունավետ պաշտպանությունը:

www.ardadatutyunjournal.com

¹ Տե՛ս Օրհուսի կոնվենցիան (Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters), 1998
² Տե՛ս Էսկասուտի համաձայնագիրը (Regional Agreement on Access to Information, Public Participation and Justice in Environmental Matters in Latin America and the Caribbean), 2018
³ Տե՛ս ՄԱԿ-ի «Իրավապաշտպանների պաշտպանության մասին հռչակագիր» (Declaration on the Right and Responsibility of Individuals, Groups and Organs of Society to Promote and Protect Universally Recognized Human Rights and Fundamental Freedoms), 1998
⁴ Տե՛ս Բոյդ, Դ. Ռ. (Boyd, D. R.), «Շրջակա միջավայրի իրավունքների հեղափոխություն» (The Environmental Rights Revolution), Vancouver: UBC Press, 2012 թ.
⁵ Տե՛ս Շելթոն, Դ. (Shelton, D.), «Մարդու իրավունքները և շրջակա միջավայրը» (Human Rights and the Environment), Cheltenham: Edward Elgar Publishing, 2015 թ.
⁶ Տե՛ս Օրհուսի կոնվենցիան
⁷ Տե՛ս Շելթոն, Դ. (Shelton, D.), «Մարդու իրավունքները և շրջակա միջավայրը» (Human Rights and the Environment), Cheltenham: Edward Elgar Publishing, 2015 թ.
⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, 1950
⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը,
¹⁰ Տե՛ս «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, 2016
¹¹ Տե՛ս Բոյդ, Դ. Ռ. (Boyd, D. R.), «Շրջակա միջավայրի իրավունքների հեղափոխություն» (The Environmental

Rights Revolution), Vancouver: UBC Press, 2012 թ.

¹² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015

¹³ Տե՛ս «Էրին Բրոկովիչի գործ» (Erin Brockovich case, PG&E), ԱՄՆ, 1996

¹⁴ Տե՛ս «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք

¹⁵ Տե՛ս ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով (UNECE), «Օրհուսի կոնվենցիայի իրականացման ակտիվացման զեկույց. Հայաստան» (National Implementation Report: Armenia), Geneva: UNECE, 2021 թ.

¹⁶ Տե՛ս «Արնիկա» ՀԿ զեկույցներ, 2015–2020 թթ.

¹⁷ Տե՛ս «Քլայենթերթ» կազմակերպություն, Լեհաստանում ածխային էլեկտրակայանների գործունեության վերաբերյալ դատական գործեր (2016–2019 թթ.)

¹⁸ Տե՛ս Կանադայի Դաշնային վերաքննիչ դատարան, Trans Mountain խողովակաշարի ընդլայնման նախագծի վերաբերյալ դատական որոշումներ, 2018 և 2020 թթ.

¹⁹ Տե՛ս «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք

²⁰ Տե՛ս Նոր Զելանդիայի Գերագույն դատարան, Ruataniwha ջրամբարի նախագծի վերաբերյալ դատական գործ (Environmental Defence Society Inc v. Hawke’s Bay Regional Council, 2017)

²¹ Տե՛ս Բոյդ, Դ. Ռ. (Boyd, D. R.), «Շրջակա միջավայրի իրավունքների հեղափոխություն» (The Environmental Rights Revolution), Vancouver: UBC Press, 2012 թ.

²² Տե՛ս Շելթոն, Դ. (Shelton, D.), «Մարդու իրավունքները և շրջակա միջավայրը» (Human Rights and the Environment), Cheltenham: Edward Elgar Publishing, 2015 թ.

²³ Տե՛ս «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, 2016

²⁴ Տե՛ս Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD), «Շրջակա միջավայրի կառավարման և հանրային մասնակցության վերաբերյալ քաղաքականության զեկույցներ» (Policy Reports on Environmental Governance and Public Participation), Paris: OECD Publishing, 2022 թ.

²⁵ Տե՛ս «Արնիկա» հասարակական կազմակերպություն, արդյունաբերական աղտոտման մոնիթորինգի վերաբերյալ զեկույցներ (2015–2020 թթ.)

²⁶ Եվրոպական շրջակա միջավայրի գործակալություն (EEA), «Քաղաքացիական գիտության և շրջակա միջավայրի մոնիթորինգի վերաբերյալ զեկույցներ» (Reports on Citizen Science and Environmental Monitoring), Copenhagen: EEA, 2020 թ.

²⁷ Տե՛ս ԱՄՆ շրջակա միջավայրի պահպանության գործակալություն (EPA), «Քաղաքացիական գիտություն և համայնքային մոնիթորինգի ծրագրեր» (Citizen Science and Community Monitoring Programs), Washington, D.C.: EPA, 2023 թ.

²⁸ Տե՛ս ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր (United Nations Environment Programme, UNEP), «Կլիմայական դատավարությունների գլոբալ զեկույց. 2023 թվականի վիճակագրական վերանայում» (Global Climate Litigation Report: 2023 Status Review)

²⁹ Տե՛ս Verein KlimaSeniorinnen Schweiz և այլք ընդդեմ Շվեյցարիայի, դիմում № 53600/20, ՄԵԿԴ (Մեծ պալատ), 9 ապրիլի 2024 թ. (Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland, Application no. 53600/20, ECHR (Grand Chamber), 9 April 2024)

³⁰ Տե՛ս «Ուրգենդա» հիմնադրամն ընդդեմ Նիդերլանդների (Urgenda Foundation v. The Netherlands), Գերագույն դատարանի որոշումը, 2019

³¹ Տե՛ս Նոյբաուեր և այլք ընդդեմ Գերմանիայի, Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի որոշումը, 2021 թ. (Neubauer et al. v. Germany, Federal Constitutional Court, 2021)

³² Տե՛ս Anderson v. Pacific Gas and Electric Co. - Անդերսոնն ընդդեմ «Փասիֆիկ Գազ ընդ Էլեկտրիկ Բանվմի» ընկերության (Anderson v. Pacific Gas and Electric Co.): (1996): Կալիֆոռնիայի գերագույն դատարան (Superior Court of California), հաշտություն (settlement):

³³ Տե՛ս ԱՄՆ շրջակա միջավայրի պահպանության գործակալություն (United States Environmental Protection Agency, EPA), «Քրոմիում աղտոտում Հինքլիում, Կալիֆոռնիա» (Chromium Contamination in Hinkley, California), Washington, D.C.: EPA, առանց տարեթվի, պաշտոնական առցանց նյութեր, հասանելի է՝ <https://www.epa.gov/ground-water-and-drinking-water/chromium-drinking-water>

³⁴ Տե՛ս Erin Brockovich - Բրոկովիչ, Է. (Brockovich, E.): (2001): Էրին Բրոկովիչ. Իմ պատմությունը (Erin Brockovich: My Story): Նյու Յորք (New York):

³⁵ Տե՛ս David R. Boyd - Բոյդ, Դ. Ռ. (Boyd, D. R.): (2012): Շրջակա միջավայրի իրավունքների հեղափոխություն (The Environmental Rights Revolution): Վանկուվեր (Vancouver): UBC Press:

³⁶ Տե՛ս Քրիսլով, Ս. (Krislov, S.): (1963): Ընկերական կարծիքի (amicus curiae) ինստիտուտը (The Amicus Curiae Brief: From Friendship to Advocacy): Յեյլի իրավաբանական հանդես (Yale Law Journal), հատոր 72, էջեր 694–721:

³⁷ Տե՛ս Դաֆֆի, Հ. (Duffy, H.): (2018): Ռազմավարական դատավարություն. ազդեցություններ և արդյունքներ (Strategic Litigation: Impacts and Outcomes): Օքսֆորդ (Oxford): Hart Publishing (Bloomsbury):

³⁸ Տե՛ս Բոլինգ, Փ. Մ. (Collins, P. M.): (2008): Ընկերական կարծիքներ և ԱՄՆ Գերագույն դատարանը (Friends of the Supreme Court: Interest Groups and Judicial Decision Making): Նյու Յորք (New York): Oxford University Press:

³⁹ Տե՛ս Բոլինգ, Փ. Մ. (Collins, P. M.): (2004): Ընկերական կարծիքների ազդեցությունը ԱՄՆ Գերագույն դատարանի որոշումների վրա (Friends of the Court: Examining the Influence of Amicus Curiae Participation in U.S.

Supreme Court Litigation): Քաղաքականության հանդես (Political Research Quarterly), հատոր 57(1), էջեր 55–64:
⁴⁰ Տե՛ս Կիրնի, Ջ. Դ., Մերիլ, Թ. Վ. (Kearney, J. D., Merrill, T. W.): (2000): Ընկերական կարծիքների ազդեցությունը ԱՄՆ Գերագույն դատարանում (The Influence of Amicus Curiae Briefs on the Supreme Court): Փենսիլվանիայի իրավաբանական հանդես (University of Pennsylvania Law Review), հատոր 148(3), էջեր 743–855:
⁴¹ Տե՛ս Էսկասուի համաձայնագիր (Regional Agreement on Access to Information, Public Participation and Justice in Environmental Matters in Latin America and the Caribbean), 2018
⁴² Տե՛ս ՄԱԿ-ի «Իրավապաշտպանների պաշտպանության մասին հռչակագիր» (Declaration on the Right and Responsibility of Individuals, Groups and Organs of Society to Promote and Protect Universally Recognized Human Rights and Fundamental Freedoms), 1998

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- I. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԴԲՅՈՒՐՆԵՐ
 1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015 թ.
 2. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
 3. «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 2016 թ.
- II. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱԳԻՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԴԲՅՈՒՐՆԵՐ
 4. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (European Convention on Human Rights), 1950 թ.
 5. Օրինուի կոնվենցիա (Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters), 1998 թ.
 6. Էսկասուի համաձայնագիր (Regional Agreement on Access to Information, Public Participation and Justice in Environmental Matters in Latin America and the Caribbean), 2018 թ.
- III. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՓՈՒԿ ԻՐԱՎՈՒՆՔԵ (SOFT LAW) ԵՎ ՀՈՉԱԿԱԳՐԵՐ
 7. ՄԱԿ-ի «Իրավապաշտպանների պաշտպանության մասին հռչակագիր» (Declaration on the Right and Responsibility of Individuals, Groups and Organs of Society to Promote and Protect Universally Recognized Human Rights and Fundamental Freedoms), 1998 թ.
- IV. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱԴԲՅՈՒՐՆԵՐ
 8. ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր (United Nations Environment Programme, UNEP), «Կլիմայական դատավարությունների գլոբալ զեկույց. 2025 թվականի իրավիճակային վերանայում» (Global Climate Litigation Report: 2025 Status Review), Nairobi: UNEP, 2025 թ.
 9. «Գլոբալ Ուիթնես» (Global Witness), «Հողի և շրջակա միջավայրի պաշտպանների դեմ բռնությունների մասին զեկույց» (Standing Firm: The Land and Environmental Defenders Report), London: Global Witness, 2024 թ.
 10. ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով (United Nations Economic Commission for Europe, UNECE), Օրինուի կոնվենցիայի իրականացման ազգային զեկույցներ (National Implementation Reports under the Aarhus Convention), Geneva: UNECE, պարբերական հրատարակում
 11. Եվրոպական շրջակա միջավայրի գործակալություն (European Environment Agency, EEA), քաղաքացիական գիտության և շրջակա միջավայրի մոնիթորինգի վերաբերյալ զեկույցներ, Copenhagen: EEA, պարբերական հրատարակումներ
 12. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (Organisation for Economic Co-operation and Development, OECD), շրջակա միջավայրի կառավարման և հանրային մասնակցության վերաբերյալ զեկույցներ, Paris: OECD Publishing, պարբերական հրատարակումներ
 13. Միացյալ Նահանգների շրջակա միջավայրի պաշտպանության գործակալություն (U.S. Environmental Protection Agency, EPA), քաղաքացիական գիտության և համայնքային մոնիթորինգի ծրագրեր, Washington, D.C.: EPA, պարբերական հրատարակումներ
 14. «Արնիկա» հասարակական կազմակերպություն (Arnika NGO), արդյունաբերական աղտոտման մոնիթորինգի վերաբերյալ զեկույցներ, Prague: Arnika, 2015–2020 թթ.
- V. ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ (ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ)
 15. «Կլիմա Սենիորինեն Շվեյցարիա» և այլք ընդդեմ Շվեյցարիայի (Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland), դիմում № 53600/20, Մարդու իրավունքների եվրոպական դատարան (Մեծ պալատ), 9 ապրիլի 2024 թ.
 16. «Ուրգենդա» հիմնադրամն ընդդեմ Նիդերլանդների (Urgenda Foundation v. The Netherlands), Նիդերլանդների Գերագույն դատարան, 20 դեկտեմբերի 2019 թ.
 17. Նոյբաուեր և այլք ընդդեմ Գերմանիայի (Neubauer et al. v. Germany), Գերմանիայի Գաշնային սահմանադրական դատարան, 24 մարտի 2021 թ.
 18. Ֆինչ ընդդեմ Մարի շրջանի խորհրդի (Finch v. Surrey County Council), Միացյալ Թագավորության Գերագույն դատարան, 20 հունիսի 2024 թ.
 19. Anderson v. Pacific Gas and Electric Company, Կալիֆոռնիայի նահանգի դատարանի որոշում, 1996 թ. (գործն ավարտվել է հաշտության համաձայնությամբ)
- VI. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՍԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
 20. Բոյդ, Դ. Ռ. (Boyd, D. R.), «Շրջակա միջավայրի իրավունքների հեղափոխություն» (The Environmental Rights

www.aradaradutyjournal.com

- Revolution), Vancouver: UBC Press, 2012 p.
21. Շելթոն, Դ. (Shelton, D.), «Մարդու իրավունքները և շրջակա միջավայրը» (Human Rights and the Environment), Cheltenham: Edward Elgar Publishing, 2015 p.
22. Դաֆֆի, Հ. (Duffy, H.), «Ռազմավարական մարդու իրավունքների դատավարություն. ազդեցության ընթացում և առավելագույնի հասցում» (Strategic Human Rights Litigation: Understanding and Maximising Impact), Oxford: Hart Publishing, 2018 p.
23. Քրիսլով, Ս. (Krislov, S.), «Ընկերական կարծիքի ինստիտուտը. ընկերությունից դեպի շահերի պաշտպանություն» (The Amicus Curiae Brief: From Friendship to Advocacy), Yale Law Journal, Vol. 72, 1963 p.
24. Քոլինզ, Փ. Մ. (Collins, P. M.), «Գերագույն դատարանի ընկերները. շահագրգիռ խմբերը և դատական որոշումների կայացումը» (Friends of the Supreme Court: Interest Groups and Judicial Decision Making), New York: Oxford University Press, 2008 p.
25. Քոլինզ, Փ. Մ. (Collins, P. M.), «Գերագույն դատարանի ընկերները. amicus curiae մասնակցության ազդեցության ուսումնասիրություն» (Friends of the Court: Examining the Influence of Amicus Curiae Participation in U.S. Supreme Court Litigation), Law & Society Review, Vol. 38(4), 2004 p.
26. Գիրնի, Ջ. Դ., Մերիլ, Թ. Վ. (Kearney, J. D., Merrill, T. W.), «Ընկերական կարծիքների ազդեցությունը ԱՄՆ Գերագույն դատարանում» (The Influence of Amicus Curiae Briefs on the Supreme Court), University of Pennsylvania Law Review, Vol. 148(3), 2000 p.
27. Բրոկովիչ, Է. (Brockovich, E.), «Էրին Բրոկովիչ. Իմ պատմությունը» (Erin Brockovich: My Story), New York: Ballantine Books, 2001 p.

Карен Туманян

РЕЗЮМЕ

Защита права на окружающую среду посредством механизмов общественного участия

Настоящая статья посвящена роли вовлечения общества в обеспечении эффективной реализации права на благоприятную окружающую среду. В рамках исследования анализируется конституционно-правовое значение общественного участия как важного компонента демократического управления и защиты прав человека, а также практическая применимость трёх «столпов» Орхусской конвенции - доступа к информации, участия общественности в принятии решений и доступа к правосудию.

Особое внимание уделяется мониторингу, осуществляемому общественными организациями, как инструменту независимого контроля и формирования доказательной базы, а также роли альтернативных докладов в международных и национальных механизмах надзора.

В статье также рассматриваются стратегические судебные разбирательства как современный и эффективный инструмент защиты окружающей среды; анализируются международные и национальные примеры, а также предлагается внедрение институциональных механизмов повышения их эффективности, включая институт представления суду заключений независимого органа в форме amicus curiae.

Одновременно затрагиваются вопросы защиты экологических активистов в свете Соглашения Эскасу и Декларации ООН о правозащитниках, обосновывая, что их деятельность является важным элементом защиты общественного интереса и подлежит правовой защите.

В статье обосновывается, что вовлечение общества в систему защиты права на окружающую среду является её неотъемлемым и системообразующим элементом, а при его отсутствии гарантии реализации данного права утрачивают своё практическое значение.

Научная новизна исследования заключается в том, что общественное участие рассматривается не только как процедурное право, но и как самостоятельный конституционно-правовой институт, требующий институционального обеспечения, включая механизмы независимого мониторинга, стратегической судебной защиты и новые формы судебной защиты общественного интереса.

Ключевые слова: право на окружающую среду, общественное участие, Орхусская конвенция, стратегические судебные разбирательства, общественный мониторинг, защита общественного интереса, amicus curiae, экологические активисты, права человека.

SUMMARY

Protection of the right to a healthy environment through mechanisms of public participation

This article examines the role of public participation in ensuring the effective realization of the right to a healthy environment. The study analyzes the constitutional and legal significance of public participation as an essential component of democratic governance and human rights protection, as well as the practical implementation of the three pillars of the Aarhus Convention: access to information, public participation in decision-making, and access to justice.

Particular attention is given to monitoring conducted by non-governmental organizations as a tool of independent oversight and as a means of generating an evidentiary basis, as well as to the role of alternative reports within international and domestic supervisory mechanisms.

The article also explores strategic litigation as a modern and effective instrument for environmental protection, analyzing both international and national case studies. It further proposes the introduction of institutional mechanisms aimed at enhancing the effectiveness of such litigation, including the use of amicus curiae submissions by independent bodies.

At the same time, the article addresses the protection of environmental activists in light of the Escazú Agreement and the United Nations Declaration on Human Rights Defenders, substantiating that their activities constitute an important element of the protection of the public interest and should be afforded legal protection.

The article argues that public participation is an integral and system-forming component of the environmental protection framework, and that in its absence, the guarantees for the realization of environmental rights lose their practical effectiveness.

The scientific novelty of the research lies in conceptualizing public participation not merely as a procedural right, but as an independent constitutional-legal institution requiring institutional support, including mechanisms of independent monitoring, strategic litigation, and new forms of judicial protection of the public interest.

Key words: environmental rights, public participation, Aarhus Convention, strategic litigation, public monitoring, protection of the public interest, amicus curiae, environmental activists, human rights.

Բնագիրը ներկայացվել է 15.04.2026թ.
Ընդունվել է տպագրության 27.04.26թ.

JUSTICE
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829 1252

